



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

2363

84

7-55

2011



8

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

1921

1858

64

UNIVERSITY OF TORONTO

4

0-55

ՊԻՌՈՊԷԻ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ի

ՅՈՎԱՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ԹԱՐԳՄԱՆԵՅ

Հ. ՎԱՐԴԱՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Ի ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

ՌՅԶ-1857

2003

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

Մ Ա Ն Ո Ի Կ Պ Է Յ Ի

ԱՍՏՈՒԱԾԱՏԵԱՆ

46472-սհ



31595-64

9

5003

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Յովսէփ Գեղեցիկին պատմութիւնը՝ տարակոյս չկայ որ Աստուածաշնչի սրտաշարժ և օրինակ առնելու դիպուածներէն մէկն է : Աս սուրբ նահապետը իրեն կենացը դէմընդդէմ դէպքերու մէջ ալ՝ կատարեալ օրինակ մըն է համակերպութեան, աստուածապաշտութեան, խոհեմութեան և Աստուծոյ կամացը հպատակութեան ամէն հասակի և ամէն տեսակ վիճակի մարդկանց : Իրեն կեանքը՝ առաքինութեանց սրանչելի վարժարան մըն է :

Ո՛րչափ մատենագիրներ ետեւէ եղեր են արձակ կամ ոտանաւոր գրուածքներով պարզաբանելու սրբազան գրոց այն երեսները՝ ուր որ նկարագրուած է Յակովբ նահապետին աս ընտիր զաւակին և Բենիամինի

ազնուասիրտ եղբօրը վարրը : Ո՛րչափ խաղեր , ո՛րչափ ողբերգութիւններ և բանասանդծութիւններ գրուեր են ամէն լեզուով :

Բոլոր այս գրուածքներուն մէջ մենք աւելի նախապատիւ սեպեցինք Պիղոպէ գաղղիացւոյն վիպասանական բանաստեղծութիւնը , տեսնելով որ քիչ մը փոփոխութեամբ կրնայ ամենուն շահաւոր և օգտակարագոյն գործք մը ընծայուիլ թէ նիւթոյն և թէ գրուածքին նկատմամբ :

Տեղ տեղ ծանօթութեան պէս գրինք ևրեսներուն տակը Մենդոց գրքին պարզ և անզարդ վկայութիւններն , որոնք աս վիպասանութեան նիւթերն էին . և որոնք Շաթոպրիանի ըսածին պէս , այնպիսի հրաշալի դէպքեր են՝ որոնց գաղանխքը՝ զիրք մըն ալ չկայ որ թափանցած ըլլայ . և որոնց քով Հոմերոսի ամենէն աւելի հոչակաւոր նկարագրութիւններն ալ՝ աչքի չեն տեսնուիր : Վստահութեամբ կը յուսանք որ աս կտորներէն շարժած՝ յորդորուին ընթերցողք՝ ամբողջ Աստուածաշունչը մտադրութեամբ կարդալու , որուն ամէն կտորներուն մէջ ալ կը փայլի հիանալի վսեմութիւն մը :

Հարկ կը սեպենք զնելու հոս Պիղոպէի յառաջաբանական ճառին այս համառօտութիւնը :

« Այս նիւթիս վրայ գրելովս , կ'ըսէ Պի-

գոպէ, ամենեկին պահանջմունք մը չունիմ իբրև բանաստեղծութիւն մը հրատարակելու : Այն զգացմունքներն որ այս պատմութիւնս կ'ազդեն սրտի՝ բանաստեղծական գրուածքի կերպ մը բռնել տուին զըրչիս՝ բանաստեղծութեան գոյներովը ծածկուած արձակ ոճ մը գործածելով : Արձակ ոճը կարծես թէ աւելի բնական կերպ մը ունի պարզ նիւթերը բացատրելու, ինչպէս այս նիւթս է, որ գիւղական տեսարանները կը նկարագրէ և նահապետական սովորութիւնները :

» Գրուածքիս էական կտորներուն մէջ ամենեկին Աստուածաշնչի խօսքերէն զուրս չեմ ելած . իսկ թեթև փոփոխութիւններու համար ալ որ ըրեր եմ, չեմ կարծեր որ խելացի մարդիկ զիս մեղադրեն, վասն զի եթէ հարկ սեպուէր այս կողմանէ ալ բուրովին ճիշդ գտնուիլ, անհնարին էր այս տեսակ գրուածք մը ձևացընել :

» Գրուածքս աւելի օգտակար ընելու համար, պատմութիւնը ամփոփեր եմ իբրև աւելի կարճ ժամանակի մէջ հանդիպած . որով և բուն նիւթն է ՅՈՎԱՍԷՓ ԻՐ ԵՂԻՍՅԱՅԵՐԷՆ ԿԸ ԾԱԽՈՒԻ, ԵՒ ՆՈՐԷՆ ԻՐ ԸՆՏԱՆԻՒԹԸ ԿԸ ՔՏՆԷ . մէկալ բոլոր կտորներն իբրև ասոր մասունք կը սեպուին, վիարասանութեան կապերը կը

ձեացրնեն , կամ իբրև անակնկալ զէպրե-
րու տեղ կը ծառայեն :

» Վեցերորդ զրբին մէջ տեսնուած Ազիա-
տոսի նկարագրութիւնը՝ ընտիր ճանապարհ-
հորդներու յիշատակարաններէ առած եմ .
անոնցմէ հաներ եմ ինչ որ բուրգերու ներ-
քին ստորագրութիւններն ալ ըրեր եմ : Ա-
րաբացուց մէջ մնացած մէկ հին աւանդու-
թիւն մըն ալ , զորն որ Քիրքէր իմաստուն
անձը կը յիշատակէ , Յովսէփ Գեղեցիկին
կ'ընծայէ այն երկրին մէկ մեծ մասին ջուրե-
րը ցամքեցընելուն արդիւնքը . այս աւան-
դութիւնն ալ զրուածքիս նիւթ առեր եմ :

» Թէպէտ արձակ զրութեան ո՞՞ մը բըռ-
ներ էի աշխատութեանս մէջ , բայց այսու
ամենայնիւ իմ զրուածքիս զարդարանք մը
տալու համար՝ ետ չկեցայ բանաստեղծա-
կան վսեմ տեսարաններ ալ մէջը խառնե-
լու :

» Սակայն բանիրուն մարդիկ զրուածքիս
երրորդ զիրբը աչքէ անցընելով՝ գեռ ես
տպագրութեան չտուած՝ ինձի մեծ առար-
կութիւն մը ըրին , որոնց չեմ ուզեր հոս
պատասխանը չտալ : Լուսինը օգնութեան
կանչելը , ըսին , և Արեսի ու Աստղկան յի-
շատակութիւնները՝ զրուածքիդ տեսարան-
ներուն զարդերն են , բայց Ազիապտացուց
սովորութեանցը հակառակ կ'ելլան , որով-

Հետև հոն աս աստուածները ծանուցեալ չէին :

» Այս առարկութեան դէմ պատասխանի տեղ կը դնեմ՝ հոս Հերոդատոսի մէկ երկու վկայութիւնները, որոնք բաւական կը ստուգեն իմ ստեղծաբանութիւններս :

» Եզրիպտացիք գտան առջի տասուերկու աստուածներուն անունները, և Յոյնք ալ Եզրիպտացւոցմէ առին. իրենք դարձեալ առաջինը եղան որ արձաններ կանգնեցին աստուածներուն և մեհեաններ շինեցին :

» Գրեթէ բոլոր աստուածոց անունները Եզրիպտոսէ եկած են Յունաստան: Ես լսելով որ Բարբարոսներէն եկած է՝ քննելով ստուգեցի ըսածիս ճշմարտութիւնը :

» Եզրիպտացիք՝ Հերակղեսի, Ապոդոնի, Անահտայ, Արեսի, Արամազդայ, Լատոնայ պատգամները ունին :

» Սայիս քաղքին մէջ Աթենասայ տօնը կը կատարուէր. Հեղիուպոլսոյ մէջ՝ Արեղական, և Պապիմի մէջ՝ Արեսի » :

» Եթէ աստուածներուն անունները Եզրիպտոսէ եկած են, կրնայ ըսուիլ որ շատ առասպելներ ալ անկէց ելած ըլլան. մէկ այնպիսի ժամանակի հնութեան մը մէջ՝ շատ դժուար բան է անոնց ճշմարիտ ծագումը գտնելը :

ՊԻԴՈՊԵՒ ՎԱՐՔԸ

Պաւլոս Երեմիա Պիդոպէ 1732ին ծնաւ Քէօ նիկզպէրկ՝ Բրուսիոյ հին մայրաքաղաքին մէջ, ուր որ իրեն ծնողքը Նանդի հրովարտակին Էա կան չուէլուն օրերը իրենց հայրենիքէն քշուած ասպւփներ էին :

Ծնողքը զինքը նախ վաճառականութեան մէջ դրին, ետքը եկեղեցական վիճակի • բայց Պիդոպէ չուտով ձանձրացաւ առջի վիճակէն, և երկրորդն ալ ձգեց՝ աւելի ուզելով ինքզինքը բոլորովին դրահանութեան տալ : Ամենայն ջանքով աշխատեցաւ հին Ժամանակի մատենագրաց գեղեցկութիւնն ու յարգը տարածելու, և իր բոլոր կարողութիւնը Թափեց անոնց գլխաւոր գրուածքները հիմակուան լեզուներով ալ հրատարակելու, և ընտրեց Գաղղիոյ լեզուն, վասն զի իր ծնողացը հայրենեաց լեզուն էր, և ուսակից որ իր սիրան ալ չէր կրնար զատուիլ բոլորովին :

Այն ատենները հոմերոսի գրուածքներուն մէկ Թարգմանութիւն մը միայն կար, և էր Տասիէ տիկ

նոջ երկասիրածը • յունական լեզուն չգիտցող ուսումնական անձինք պարտաւորուած էին անոր [Թարգմանութեամբը գոհ ըլլալ : Գաղղիա՝ մէկ ուրիշ աւելի ճարտասան , և մանաւանդ [Թէ աւելի բանաստեղծ [Թարգմանչի մը կարօտ էր • Պիգուպէ յանձն առաւ այսպիսի դժուարին պարտք մը կատարել : Մեծ դժուարութիւն մը կար գիմացը՝ այն հին ատենուան կենաց տեսարանները բացատրելու , որոնք մեր ժամանակի սովորութեանց հետ այնչափ նմանութիւն չունին , առանց այլայլելու նոյն գաղափարները և առանց մերկացընելու յոյն բանաստեղծը իրեն եռանդնալից դարձուածքներէն , որոնց մէջ կը տեսնուին միանգամայն ոյժ և նախաախպ ոճ մը • երկրորդ դժուարութիւնն ալ իրեն համար այնպիսի լեզուով մը գրելն էր՝ որ պզտիկութենէն ի վեր խօսիլը լսած չունէր :

Բայց յաղթեց այս ամէն դժուարութեանց Պիգուպէի միտքն , որ գեղեցիկ գրուածքներ կարդալով և հին ատենուան երկասիրութեանց մէջ կըրթըւած էր • իրեն պարզ և գեղեցիկ ճաշակն ալ կ'օգնէր իրեն , զոր ստացեր էր այնպիսի փափուկ սովորութեանց մէջ կըթուելէն : Պիգուպէ քսանըջորս տարուան էր երբոր հրատարակեց Ելիականին մէկ քանի կտորներուն [Թարգմանութիւնը :

Պիգուպէի այս փորձը շատ ընդունելի եղաւ իմաստնոց • որով և [Թարգմանիչն ալ երկու տարի ետքը հրատարակեց նաև ամբողջ գրքին [Թարգմանութիւնն ալ , միայն քսանըջորս գիրքը՝ քսանուերկուքի մէջ ամփոփելով , Վասն զի իրեն շատ երկայն երեցեր էր հեղինակինը : Այս [Թարգմանութեան հրատարակումը մեծ տպաւորութիւն ըրաւ

ուսումնական անձանց վրայ, և ամէն գիտուններուն աչքը դարձուց այս նոր հեղինակին վրայ:

Պիղոսպէ առջև ճամբորդութիւնը գէպ ի Գաղղիա իր Տալամպէր բարեկամին հետ ըրաւ: Ելիականին թարգմանչին համբաւը արդէն տարածուէր էր Գաղղիոյ մայրաքաղաքին մէջ. բոլոր իմաստուններէն սիրով հիւրընկալութիւն մը գտաւ, և այն ատենէն որոշեց հաստատուելու այն երկրին մէջ, որ ազատութեան՝ գիտութեանց և գեղարուեստից կողմանէ մէկհատիկ էր: Թէպէտ Պեռլինի մէջ հարստութիւն և սպառիւ սպահաս չէր Պիղոսպէի, բայց իր սիրտը կտաւ Գաղղիոյ հետ, չկրցաւ իր հայրենիքէն զատուիլ հեռանալ: Քիչ ատենի մէջ ճանչուորեցաւ բոլոր համբաւաւոր գիտնական անձանց հետ. իր տունը ժողովարան մը դարձեր էր, ուր կը հաւաքուէին գաղղիացի և օտարազգի ուսումնականներ: Պիղոսպէ իր ազնիւ և բարի սրտովը շատ բազմաթիւ բարեկամներ ստացեր էր իրեն:

Ելիականին թարգմանութենէն ի զատ Պիղոսպէ քանի մը վիճաբանական գրուածքներ ալ գրեր էր, երբոր իր Յովսէփ Գեղեցիկ կոչուած բանաստեղծական վիպասանութիւնը հրատարակեց: Մէկ հերքումն մը Դասանոսի-ն հասարայ Սոսոյացի աագեբեցի-ն ըսուած գրուածքին, որ 1763ին տպուեցաւ Պեռլին: Ճառ գեղարուեստից և փիլիսոփայութեան աշտեցի-նէանց վրայ, 1767ին հրատարակուած. իսկ Գունէյլի վրայ յօրինած գովեստը՝ հեղինակին անունը համբաւոյն կնիքը դրաւ: Յովսէփ Գեղեցիկին վիպասանութիւնը հաղիւ թէ հրատարակուէր էր, մէկէն սպանիացւոց, գերմանացւոց և անգղիացւոց լեզուներով թարգմանուեցաւ. Գե-

ներոնի Տելեմաքէն ետև այս տեսակ երկասիրու-
թեանց մէջ դեռ ուրիշ մէկ գրուածք մըն ալ չէր
էլած, որ ասոր պէս հաճոյ անցնէր և ընդունելի
ըլար ամենուն :

Պիգոպէ սր հոմերոսի վրայ ըրած կրթութիւններու
վը հին ատենուան սովորութեց նկարագրութիւն
ներուն հմտացեր էր, զարմանալի կերպով մը յա-
ջողեցաւ Աստուածաշնչի այս սրտաշարժ պատ-
մութիւնը պարզ և փափուկ ոճի մը ամենայն գե-
ղեցկութիւններովը զարդարել: Յովսէփ Գեղեցիկին
վկայասանութեան մէջ առանձին մտադրութեան
արժանի են՝ մասնաւոր մատենագրութեան ոճ մը,
երկասիրութեան խոհական ընթացքը, վկայասա-
նութեան մասանց իրարու գեղեցիկ կապակցու-
թիւնը, պարզ և հանձարեղ ստեղծաբանութիւն
ները: Ամէն տեղ սրտաշարժ և կրօնական զգաց-
մունքներ խառն կը փայլին, որոնց փափուկ նկա-
րագրութիւնները ընթերցողին սիրտը կը թափան-
ցեն, և հեղինակին վրայ մեծ համարումն կ'ազդեն:
Այս գեղեցիկ վկայասանութիւնը մարդու սիրտը
կը շարժէ, հոգւոյն հետ կը խօսի, սիրոյ և գթու-
թեան զգացմունքներ վրան կը ձգէ, և կ'ազգէ սրբ-
տին երջանկութեան և առաքինութեան գեղեցիկ
եռանդը:

Ասկէց ետև հրատարակեց Պիգոպէ ուրիշ բա-
նաստեղծութի մըն ալ Կէյլեօժ ԳԸՆ, աստու- ըստուած-
եաքը նաև Ոգիսականին թարգմանութիւնը: Պի-
գոպէ իր այս գրաւոր երկասիրութեանց մէջ զբա-
ղած էր, երբոր Գաղղիոյ խռովութեան փոթորիկ
ները հասան իր գլուխն ալ:

Պիգոպէի մեծ հանձարը, ազնիւ բնաւորութիւ-

նը, հայրենասիրութեան և առաքինութեան զրացմունքները՝ բաւական սրատճառ սեպուեցան Գաղղիոյ անգութ զիկտատորին զխնացը զինքն ալ ի մահ զատապարտելու: Արդէն համբաւաւոր և երևելի իմաստուններու գլուխները գլտորեր էր բըռնաւոր Ռոպէսփիէոը, և կարգը հասեր էր նաև Հոմերոսի թարգմանչին և Յովսէփայ Գեղեցկին վերասանութեանը հեղինակին: Ռոզանտի և Պրիստոյի հետ ունեցած վերաբերութիւնները, գեղարուեստից և արձանագրութեանց ճեմարանին անդամ գտնուիլը՝ ասոնք էին ահա իր երկու ծանր յանցանքները:

Բռնուեցաւ Պիդոպէ 1793ին. իր ամուսինն ալ նոյն յանցանքներով ամբաստանուած՝ իրեն վիճակը ունեցաւ: Այս ազնուասիրտ և իմաստուն իսթունը անձամբ գրեց իր եղբարցը նամակի ձևով Ղիւքսանսպորի մէջ անցուցած գերութեան վիճակնին. մենք ալ անկէջ հաւաքեր ենք Պիդոպէի քաջած թշուառութեանց սրտաշարժ նկարագիրը:

Մէկ ցուրտ օր մը 1793ին նոյեմբերի 5ին կէս գիշերուան ատեն Պիդոպէի տանը դուռը զարնուեցաւ. Ղըբլէր անուշով ծերուկ ծառայ մը շփոթած վեր ելաւ իմացընելու թէ մարդիկ եկեր են քննելու տունը և թղթերը տեսնելու. և ահա մէկէն վեց զինեալ մարդիկ և տէրութեան սաշտօնեայ մըն ալ անկողիններնուն առջևը տնկուեցան, և թղթերու գզրոցին բանալին ուղեցին. Պիդոպէին ամուսինը տուաւ բանալին, բացին գզրոցը, և մէջը աննշան թուղթ մը միայն գտան՝ առին, և իրենց ալ ըսին որ պէտք է շուտով ելաք, հագուիք և մեզի հետ գտք: Այն աստիճանի անմեղ զերենք կը

տեսնային, որ Պիղոպէի ամուսինը կարծելով թէ սխալ հասկըցաւ ըսածնին՝ հանդարտ կէցեր էր․ բայց երբոր անիկայ կոպիտ կերպով մը կրկնեց նորէն թէ շուտ ելէք հագուեցէք, խեղճ կինը աչուրները բանալով ըսաւ իրեն․ « Բայց ես հիւանդ եմ, անկարելի է ինձի այդ բանդ․ տես որ յօգուածոց ցաւերէս ձեռուըներս ալ ոտուըներս ալ բռնուեր են բոլորովին » : Այլ երբոր դաժան պաշտօնեայն նորէն պոռաց, այն ատեն Պիղոպէին ամուսինը « Գուրս ելիր ուրեմն, ըսաւ, որ կարենամ հագուիլ » և մէկ զուարթ կտորճուածեամբ մը անկողնէն՝ ցատքերով զգեստները հագաւ․ իր էրիկն ալ նոյն պէս ըրաւ : Երկուքին ալ երազի պէս կու գար, և կարծէին թէ անշուշտ իրենց իրաւունքը և անմեղութիւնը ցուցնենուն պէս, մէկէն պիտի արդարանան և խաղտին․ բայց այս արդարանալը իրենցմէ շատ հեռու բան էր :

Աւերջապէս Պիղոպէն ալ իր ամուսինն ալ կապեցին․ բոլոր ծառաները յորդ արցունք կը թափէին, և իրենց վերջի բարևները շատ սրտաշարժ տեսարան մը ձևացաւ :

Գիշերը տխուր և անձրևոտ էր․ փողոցներուն մէջ տիրած ահաւոր ըուածիւնը, չորս կողմերնին պատած մարդիկներուն դաժան դէմքը, իրենց երկայն նիզակները, և ամէն բան՝ այս երկու կալանաւորներուն սիրտը տրտմութեամբ և սարսափով կը լեցնէին : Մասնաւոր պահապան զինուորաց ձեռք յանձնուեցան․ հոն Պիղոպէ մէկէն իրեն բարեկամներուն նամակներ գրեց, հասկըցնելով անոնց ինչ թշուառ վիճակի մէջ գտնուելնին․ և զի նուորներէն մէկը ասոնց խեղճութեանը վրայ գլխաւոր

լով՝ յանձն առաւ թղթերը տանելու, բայց հետեանք մը չունեցան :

Վալանաւորները Լիւքսանսպուր տարուեցան, և բնակութեան համար երկու պղտի խուցեր տուին իրենց իրարու կպած . պառկելու խուցերնին՝ ուր որ խեղճերուն ողորմելի անկողինները դրուած էին՝ Լիւքսանսպուրի պարտեզին վրայ կը նայէր, և թէպէտ պատուհանը վանդակապատ էր, բայց շատ գեղեցիկ տեսարան մը ունէր դիմացը, և օդն ալ առողջարար : Հոն գտնուող անձինքներէն սիրով վարմունք մը գտնելով՝ քիչ մը սրտերնին մտի-թարուեցաւ :

Ամէն օր իրենց թշուառութեանցը նոր ընկերներ կու գային իրենց պէս անմեղ, որոնց մէջ շատերն ալ կային իրենց ճանչուորներէն, ճեմարաններու ընկերներէն, ուսումնական անձինքներէ, և այլն . իբրև մէկ ընտանիք մը ձեացեր էին հոն . ամէն օր կը ժողվուէին մէկտեղ, և մէջերնէն մէկն ալ որ շատ հմուտ էր բնալուծութեան, բնական պատմութեան և աստղաբաշխութեան, իսկ առաքինութիւններովը շատ աւելի պատկառելի, իրենց ամէն օր այլ և այլ ուսմանց վրայ կը խօսէր : Մեծ մտադրութեամբ և սիրով կը լսէին ըսածները, մանաւանդ աստղաբաշխութեան գիտելիքները, վասն զի կարծես թէ երկնքի բաներուն հետ զբաղելով՝ կը մոռնային ինչ որ կ'անցնէր իրենց բնակած պրզտի և խեղճ մոլորակին վրայ :

Վէց ամիս այսպիսի վիճակի մէջ մնացին խեղճ բանտարգէալները : Պիգոպէ չէր դադրեր ինքզինքը արդարացընելու գրուածքներ տալէն, բայց բոլորն ալ անօգուտ եղան, մանաւանդ թէ ընդհակառակն՝

Երթալով վիճակնին խեղճցաւ . օրագիր կարգալը
 և պալատին մէջ շրջագայութիւնը արգիլուեցաւ .
 դասն գոյժեր կը պտըտէր մէջտեղը . տարագրու-
 թեան և արիւնհեղութեան սարսափը ամէն վայր-
 կեան ականջներնուն մէջ կը թնդար , անհնարին
 տազնապ մը պատեր էր զիրենք :

Բանտապանը փոխուեցաւ , և տեղը դրին անօրէն
 մարդուն մէկը որ Նիոնի կոտորածին մէջ ալ դա-
 հիճներէն մէկն եզեր էր : Գիշերները խեղճերուն
 խորունկ քնոյ ժամանակ՝ այս մարդը ծառաներ և
 երկու խոշոր շուներ հեան առած՝ աղաղակաւ մը
 դռները կը բանար նայելու թէ արդեօք անկողին
 ներնուն մէջն են թէ չէ . և սարսափելի ձայնով մըն
 ալ անուննին տալով կը պոռար՝ Հ՞՞ն է :

Վէրնէ անունով պահապան մըն ալ դրին վրա-
 նին : Օր մը Պիզոպէ տրամութեամբ քալելու ժա-
 մանակ՝ Վէրնէ հարցուց իրեն թէ « Գո՞ւն ես Յ՞՛ւ
 » է՞ Գեշեղիկն հեղինակը : — Այո՛ , պատասխան
 տուաւ Պիզոպէ սիրտը երած ձայնով մը : — Ուրեմն,
 վրայ բերաւ Վէրնէ , ես կը սիրեմ՝ զքեզ , որովհե-
 տե կարգացեր եմ այն դիրքը , և զիս լացուցեր է .
 կ'ուզեմ որ ինձի մէկ օրինակ մը տաս : — Ամենայն
 սիրով , պատասխանեց Պիզոպէ , երբոր ազատ ըլ-
 լամ : Բայց խեղճ մարդը չկրցաւ աւնուլ , որով-
 հետե Ռոպէսփիէսին մահուրնէ ետքը իր գլուխն
 ալ կտրուեցաւ :

Սարսափելի կոտորածը որ Գաղղիան անապատ
 կը գարձընէր՝ ահու գողի մէջ պաշարեր էր բան-
 տարգեալները : Հասարակաց սեղան մը դրուած
 էր կերակուրի համար , ուր որ երեք հարիւր հոգի
 մէկէն կը նստէին աղտոտ և անպիտան բաներ ու-

տելու: Երթալով թշուառութիւննին կ'աւելնար, վասն զի կտորածին մրրիկն իրենց ալ կը մօտենար. ամէն օր կու գային իրենց ընտիր բարեկամները զատելու քովերնէն և ուրիշ բանտ մը տանելու. հոն քիչ ատենի մէջ խռովարարներուն ատենէն իրենց մահապարտութեան վճիռը կ'ընդունէին, ուսկից որ անմեղձ հարուստ կամ հուշակաւոր քաղաքացիներէն խիստ քիչը կըցան խալըսիլ: Կը լսէին սրալատին մէջի բանտարդեալները բոլոր կատարելուն ձայները, որոնց մէջ լեցուցած խեղճ մահապարտները սարաննելու կը տանէին. փողերու ձայներէն բոլոր վայրագախիթները կը թնդային, և սարսափէն վերը բնակող խեղճերուն արիւնը կը սառէր:

Ասանկ տաղնապներու մէջ կ'անցընէին իրենց օրերը Պիգոպէն և իր ամուսինն ալ: Չորս կողմերնին լրտեսներ առած՝ և ոչ կը համարձակէին բան մը խօսելու. Պիգոպէին ամուսինը միշտ էրկանը քովէն կը քալէր, աչուրները գետին սկեռած, վասն զի ինչուան նայուածքնին ալ չարաչար կը մեկնէին: Նոյն զգուշութիւնները կ'ընէին բոլոր մեկալնոնք ալ, որով և մէկ ահաւոր լուծիւն մը պատեր էր ամէն տեղ:

Այսպիսի սարսափի մէջ էին՝ երբոր օր մը յանկարծ մեծ զանգակի ձայն մը լսուեցաւ, և աղաղակ մըն ալ փրթաւ քաղաքին մէջ թէ Կորս-Բընաւոր. — Ռոպէտիէն սպաննուեր էր: Այս հրէշին էյնալէն իրէք օր ետքը՝ Պիգոպէի բարեկամներէն մէկը եկաւ իրենց աւետելու տէրութեան ատենին կողմանէ թէ ազատ են:

Պիգոպէ Լիւքսանալուրի մէջ այնպիսի գերու-

Թեան մը արհաւիրաց ժամանակ ալ՝ իր Վիյլէօժ քը
 Նասասու բանաստեղծութիւնը սրբագրեր էր, զորն
 որ վերածելով Պարտանէրոս անուամբ երկասիրու-
 թիւն մը ձեացուց։ Այս գրուածքը մեծ սպառի-
 ըրաւ իր մտքին վսեմութեանը. իսկ մէջի գեղեցիկ
 խորհրդածութիւնները զարմացուց զամէնքը։ Ծե-
 րութեան ատենը գրաւոր վերջին գործքը եղաւ
 Հէրմանոս և Տորոլէա ըսուած Վեթէի երկասիրու-
 թեան Թարգմանութիւնը։

Պիղոսէ իր գրուածքներովը և իր հանձարովը
 ամենուն զիմացը մեծարոյ՝ և հասարակաց համար-
 մունքը ստացած, իր սրտին ազնուութեամբը գը-
 տած բարեկամներուն սիրելի, հանգիստ և երջա-
 նիկ օրերով անցուց ծերութիւնը իր սիրելի ամուս-
 նոյն հետ մեկտեղ։ Երկուքն ալ մեկտեղ կեանքեր-
 նին անցուցած՝ գրեթէ մեկտեղ ալ իրենց ընթաց-
 քը լմացուցին։ Պիղոսէ հանգիստ մահուամբ մը
 մեռաւ իր բարեկամներուն գիրկը 1808ին նոյեմ-
 բերի 22ին. քանի մը շաբաթ վերջն ալ մեռաւ իր
 ամուսինը՝ գեղեցիկ հանձարոյ յիշատակ մը Թող-
 լով։



ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՅԻԿ

ԵՐԳ. ԱՌԱՋԻՆ



Handwritten text in Armenian script, likely a signature or name, written in a cursive style.

Imp. Lemercier, Paris.

ՅՈՎՍԵՓ ԳԵՂԵՅԻԿ



ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Երկար ատեն կը յանդգնէի այն բանաստեղծին սրատերազմական ներդաշնակ արձագանգները կրկնելու, որն որ Հելլիկոնի դապաթէն՝ ուր հին դարերու դափնիներով պսակուած կը թագաւորէ, նոր կենդանութեան ոգի մը կ'ազդէ սրատերազմող զինուորին սիրաբ, և անոր ալ որ զինքը կ'երգէ : Իսկ այսօր նոր յանդգնութեամբ մը վառուած՝ ալ չեմ շնորհեր իրեն իմ գրիչս . մէկ աւելի փափուկ նիւթ մը, բայց ոչ ինչ նուազ անուշահամ ինծի հրաւերք կը կարգայ և սիրտս կը քաշէ :

Այն առաքինի անձը երգել կը սկսիմ որ իր եղբայրներէն ծախուելով, թշուառութենէ թշուառութեանց մէջ գլորտըկելով, և վերջապէս խեղճութեանց անդունդէն՝ փառաց և իշխանութեան հանդէսներու մէջ բարձրանալով, բարերար գրտնուելով այն աշխարհքին՝ ուր գերութեան շղթաները կրեր էր, դեռ մատղաշ հասակին մէջ ինքզինքը մէկ կատարեալ օրինակ մը հանդիսացուց

խնայողութեան՝ երկու իրարու հակառակ կենաց
փնտռանքներուն մէջ ալ :

Ո՛վ մահկանացուք , այդչափ ուրեմն նուազ մե-
ծարանք կուտաք առաքինութեան , որ այսպիսի
նիւթ մը ձեզի խիստ ու դժնդակ երևնայ : Գուք
որ դիւցազուններու պատերազմական փողին ար-
ձագանդներովը կը վառիք կը բորբոքիք՝ որ ձեր ա-
կանջներուն մէջը ուրիշ ձայն մը չի թնդացընէր ,
բայց միայն զէնքերու շփոթ աղաղակ մը , գոռում
գոչում մը , պատերազմ մը , որոնց որ շատերնիդ և
ոչ իսկ ահանատես եղեր էք . ձեր սիրտը կ'ըսեմ
կարելի է որ խաղաղ առաքինութեան անոյշ ու
սրտաշարժ ձայնին անողգայ գոնուի , որ ձեր ժա-
ռանգութեան մասը կրնար ըլլալ :

Ո՛վ դու սրբազան բանաստեղծ , դուն որ այս
գորովաշարժ պատմութիւնը աւանդեցիր մեզի , նը-
կարագրելով նախ մեզի արարչագործութիւնը , ան-
կերպարան աշխարհքս՝ որ օրինաց կը հարատակի ,
արևը երկնից հաստատութեան մէջ մէկ խօսքով
մը միայն ստեղծուած , աստղներու բանակ մը՝ որ
իրենց հիանալի արշաւանքը կը սկսին , այս հո-
ղագունտ աշխարհս որ դալար խոտերով բոյսե-
լով ու ծաղկընէրով կը ծածկուի , ծառերը որ
իրենց ճիւղերը կը տարածեն , լեռները՝ ինչուան
ամպերը գլուխնին երկնցուցած՝ մինչգեռ գետե-
րը իրենց խորունկ ճամբաներուն մէջէն կը վա-
զեն . ջուրը՝ օդն ու ցամաք երկիրը բնակիչներով
զարդարուած . և ետքը ետքը մարդս՝ որ անոնց մէ-
ջէն կ'ելլէ կը կանգնի իբրև թագաւոր մը ասոնց ա-
մենուն և բովանդակ բնութեան : Դո՛ւն , որ Միւ-
տովնի և Վեաների ոգիքը վառեցիր բուրնկցուցիր ,
դո՛ւն՝ որ քու ժողովուրդդ խալըսելով՝ իրեն ազա-
տութիւնը կ'երգես , դուն այսօր ինձի ալ անցիր
սառաջնորդ . որպէս զի այն հուրը որով վառուած
էիր՝ բուրնկցընէ իմ սիրտս ալ՝ իմ ոգիքս ալ . և այն

ազնուականն պարզութիւնը՝ որ քու գրչիդ վսեմութեան ծնունդ էր՝ իմ վկայասանութեանս մէջ ալ փայլի անայլայլակ :

Յովսէփ իր կենացը գեղեցիկ օրերուն մէջ, դերութեան վիճակի մէջ ինկած էր : Յափշտակուած էր ծննդեան տեղերէն, Յակովբ նահապետէն՝ այնպիսի գորովագութ հօրէ մը, իր բազմութիւ ընտանիքէն և Սելլնա առաքինի օրիորդէն՝ այն օրերուն մէջ որ հարսանեաց հանդէսը իրենց փոխադարձ սէրը պսակեր էր, օտար հեռու աշխարհք մը ձգուած կեցեր էր . ինչպէս մէկ սիրուն ծաղիկ մը դալար դաշտի մէջ իր նմաններէն շրջապատեալ կեցած ժամանակ, տկար ցօլունը անոնց վրայ կըրթընցուցած, անոնց քաղցրահոտ բուրմունքներէն անոյշ ազդեցութիւն մը ընդունելու վայրկենին և ակորժ զեփիւռին դգուանքներն վայելելու ժամանակ, մէյմըն ալ յանկարծ կը հասնի հիւսիսային քամին, կը յարձրկի կը խէ զանիկայ իր ընկերներէն, զեփիւռէն՝ և այն դալարներէն որոնք իրեն օրորոցն եղեր էին . նոյնպիսի հարուածով մը հեռացեր էր Յովսէփ ալ իր հօրը գերդաստանէն :

Ամէն օր միայնութիւն վիտտելով՝ կը քշէր իր հօտը Նեղոսի եղերքները, ու հոն առանձին տեղ մը կը քաշուէր : Նեղոսի ջրերուն վսեմ՝ և փառաւոր ընթացքը, չորս կողմի դաշտերը՝ իրեն համար նօր տեսակ ծառերով բոյսերով և ծաղկըններով զարգարուած՝ որոնց մէջ կ'արածէին իրեն սչխարները, գեղեցկութեան կողմանէ անհամեմատ վեր ուրիշ երկիրներու սչխարներէն, պաշտօնները՝ բուրաստանները և Մեմփիսի հրաշալի երևոյթը, բուրգերուն տեսիլը՝ որոնք քաղքին աշտարակներուն հետ կը խառնուէին, բոլոր այս գեղեցիկ տեսարանները Յովսէփայ մտադրութիւնը չէին կրնար ձգել իրենց վրայ, և իրեն ցաւերը փարատել սրտէն .

բոլոր այս երևոյթները՝ թե՛ թե երազներու պէս
աչքին առջևը կը ստորոտէին՝ սրաին վրայէն սահե-
լով կ'անցնէին՝ առանց տպաւորութիւն մը վրան
ազդելու:

Բայց սակայն այս ամէն դժնդակ տաղնասնները
իր բնաւորութեան անուշութիւնը ամենեւին չէին
կրցած այլայլել. չէր թողուր որ հոգւոյն յուսա-
հատութիւնը յաղթանակէ վրան, ինչուան սրտէն
եւած հառաչանքներուն ալ չափ մը՝ սահման մը
գրեր էր: Գեաեղերբը հողին վրայ տարածուած՝
գրեթէ ինքիբմէ դուրս ելած, աչուրները անթարթ՝
գետին ջրերուն վրայ տնկած՝ որուն միակերպ ըն-
թացքը կարծես թէ իրեն տխուր մտածութիւննե-
րը կը զբաղեցնէին. Ո՛վ Տէր, հառաչեց դէպ ՚ի
երկինք, — և ասոնք առաջին հառաչանքներն էին որ
բերնէն կ'ելլէին գերութեան շղթաներու մէջ իւ-
նալէն ետեւ, — ո՛վ Տէր, հո՞ս ուրեմն պիտի լմննան
եղեր իմ օրերս... Սիրելի՛ ազատութիւն, ինձմէ
յափշտակուեցա՛ր... Այո՛. այդպէս է, ինձի հա-
մար մէյո՛ւ ալ չկայ տեսնալիք իմ հայրս... ալ եր-
բէք պիտի չտեսնեմ զինքը. պիտի չկարենամ իրեն
ծերութեանը միսթարանքն ըլլալ... Եւ դուն,
ո՛հ սիրեցեալդ Սելիմա, դուն ալ որ մեր ամուսնու-
թեան տնակը բարձրանալու ժամանակ, այն ան-
մոռանալի օրերուն մէջ որ քու ձեռքդ զիս ծաղկը-
ներով պսակելու վրայ էր...: Սրաին դառն հա-
ռաչանքները բերնէն խօսքը կտրեցին, և անմխի-
թար տխրութեան մը մէջ ընկաւ գլորեցաւ:

Ետքը երեակայուցութեամբը՝ արցունքներով ծանրը
ցած աչուրները դարձնելով իր ոչխարներուն հօ-
տին վրայ. Դուք ալ իմ ոչխարներս, ըսաւ, որ
հայրս ինձի յանձնէր էր, սիրելի՛ ոչխարներ, որ
իմ չորս դիս կը ցտաբրտէիք երբոր ես զՆստուած՝
բնութեան տէրը կ'օրհնէի, դուք որ իմ ուրախու-
թեանս մասնակից էիք, ո՛ւր էք հիմա... Ի՛նչ ձեռ-

քեր արդեօք զձեզ կ'արածեն, չըլլայ թէ արդեօք
դուք ալ ինծի պէս զոհ եղաք եղբայրներուս...
Այս տխուր խօսքերը տկար և ցաւագին ձայնով
մը կը հնչէին Յովսէփայ շրթունքները:

Եթէ իրեն թշուառութիւնները դէմքին գեղեց-
կութեան պայծառութիւնը նուազեցուցեր էին,
բայց շատ աւելի սրտաշարժ եւ ազդու երեւոյթ
մը ձգեր էին վրան: Փառփրուն օսկեգոյն մազե-
րը՝ բնական խոստովեքներու ընթացքով մը ու-
սերուն վրայ ինչպէս կը ծածափէին, աչուրները
զուարթ կապտագոյն գունով մը կը շողային, և այն
արցունքները որ հիմայ լեցուեր էին՝ կարծես թէ
իրենց նայուածքին բնական անուշութիւնը կ'ա-
ւելցրնէին: Սրտին արտօնութիւնը որ երեսին վար-
դի նման գոյնը մթննցուցեր էր, աւելի սրտաշարժ
աւսիլ մը տպաւորեր էր դէմքին վրայ: Բայց իրեն
աղնուական կերպը ամենեւին փոխուած չէր՝ թէ-
պէս շատ զգայուն ու փափուկ էր սիրտը. և թը-
շուառութիւնները աւելի կերպով մը դուրս կը
ցատքեցրնէին իրեն վրայ առաքինութեան ու անմե-
ղութեան պատկերները:

Պութոփիս՝ Պետափրեսի դերիներուն վերակա-
ցուն՝ Եթովպիոյ տաք անապատներուն մէջ ծնած
էր. առիւծը՝ որ այն անապատներուն վրայ թա-
փուած արեգական բոլոր հուրը հնչելով՝ կրակ կըս-
րած կը մոմնայ այն չորացեալ աւազներուն մէջ
տեղը կեցած՝ այնչափ ահաւոր չերկնար ճանա-
պարհորդին աչքին, ինչպէս որ էր այս դաժան Ե-
թովպացին իր դերիներուն: Գիշերուան մութ
խաւարին գոյնը ունէին իրեն մարմնոյն կաշին ալ՝
իրեն մազերն ալ. կատաղութեան կրակ մը աչուր-
ներուն մէջ կը վառէր՝ ինչպէս որ փայլակը մթու-
թեան մէջ ըլլա մը կը ծագէ. իրեն ահաւելի ձայնը՝
միայն սպառնալէք ու նախատինք կը յօգէին. իրեն
վրայ ամէն բան՝ ինչուան գոյնն ալ՝ Յովսէփայ աչ-

քին նոր երևայթ մը ըլլալով, թշուառ երիտասարդին սիրտը ահով գողով կը լեցընէր :

Իր ցաւերուն մէջ ընկղմած՝ կ'երթար կը քաշուէր անբնակ քարաժայռներու տակ, որոնք կարծես թէ կը սպառնային միշտ՝ առանց կարենալու վախ մը ձգել սիրտը՝ իրենց աւերակներուն տակը թաղել զինքը : Հոն իր ներկայ թշուառութիւնը՝ իր կորսնցուցած երջանկութիւնը առջևը կը բերէր՝ կը յիշէր այն երջանիկ օրերը՝ երբոր սիրտը ուրախութեամբ լեցուն, բնութեան հանգարտութեանը մասնակից՝ իրիկուան ժամերը հասած տեսալով՝ կը փութար ժողովելու իր հօտը՝ երթալու տեսնալու իր հայրը, և հեռուէն հազիւ տեսած չը տեսած զծերունին որ իր հիւզին դրանը մէջ կը սպասէր իրեն՝ կը վազէր կ'իյնար հօրը գիրկը . թևերը բացած կը գրկէր զինքը Յակովբ, և Սելմա իր երջանկութեանը մասնակից էր : Եւ հիմա՝ այն քաղցր դրկախառնութեանց և փափուկ սիրոյ զգացմանց տեղը՝ կը տեսնէր գիմացը ահաւել սպահապան մը՝ որուն տեսութիւնը զինքը կը սարսափեցընէր, և որն որ խիստ նայուածքով մը կը գիտէր ոչխարները : Իր գերութեանը ընկեր անձանց մէջ ուրիշ մարդիկ չէր տեսներ՝ բայց եթէ դաժան և կատաղի անձինք . փուճ՝ տեղը անոնց թշուառութենէն ըզդացուած գթալից աչքով մը կը նայի վրանին, վասն զի անանկ անդգայացած սրտերը՝ այս սիրոյ ձայնը չեն լսեր : Կարծես թէ ամէն բան իրեն դէմ գէնք աուեր էր . բնութիւնը ամբողջ մահագուշակ տեսարան մը միայն բացած էր աչքին գիմացը, ատեն մը՝ երկնքի թռչուններէն առաջ կը փութար իր երգերովը՝ արևուն դարձը շնորհաւորելու . իսկ այսօրուան օրս նոյն տեսարանը՝ տրամութեան միայն զգացմունք իր սրտին մէջ կ'արթնցնէր . և անուշահոտ ծաղկանց իրիկուան բուրմունքը՝ իրեն վտերը չէին կրնար մեղմացընել :

Երբոր Յովսէփ այս ցաւագին խորհրդածու-
թեանց մէջ ընկղմած էր, գիշերուան մուծը կու-
խեց առանց իրեն գիտնալուն: Ընկերները քա-
շուէր էին տեղերնին իրենց ոչխարներովը. իսկ իր
ոչխարները անհամբեր չորս դին կը պարտէին, կը
մտենային իրեն, և ամէնքը մէկտեղ ձայներնին
ձգած՝ վերջապէս զինքն իրեն խոր մտածմունքնե-
րէն արթնցուցին: Մուծ ատեն դարձաւ իր տեղը,
ելաւ խիստ տիրոջ մը առջև, որ դառն կերպով
յանդիմանեց զինքը՝ այս ակամայ ուշանալուն հա-
մար:

Սակայն այն մտադրութիւնը որով ճիշդ իր ա-
մէն պարտքերը կը կատարէր, այն անմեղութիւնը
որ իր ճակտին վրայ կը փայլէր, և այն ցաւը՝ որ
որչափ ալ լսիկ էր և հանդարտ՝ բայց աւելի ևս
ազդող դիմացիներուն, սկսան կամաց կամաց Պու-
ծոփիս սիրտը վասարկիլ, և քիչ ատենէն մէկ դի-
պուած մը աւելի յայտնի ըրաւ Պուծոփիսի վրայ
եղած ազդեցութիւնը:

Բոլոր գերիներուն մէջէն Նթուպալ՝ Յովսէփայ
մտադրութիւնը կը քաշէր իրեն. երկուքն ալ հա-
սակակից էին իրարու. Յովսէփայ պէս ինքն ալ
ազնուական ցեղի ծնունդ էր, զինուորական վի-
ճակի մէջ ալ մտեր էր, և պատերազմի մը մէջ էր
որ իր քաջութիւնը ցուցնելէն ետև՝ չորս կողմէն
պաշարուած գերութեան մէջ ինկեր էր: Այն
ազնուական քաջութիւնը որով վառուած մտեր էր
պատերազմի մէջ հայրենեաց համար, աչքին աւե-
լի ատելի կը ցուցնէր այս գերութեան լուծը:

Օր մը թէթև յանցանքի մը համար ուզեց Պու-
ծոփիս բանտի մէջ շղթայի զարնել զանիկայ:
Չլրտ թևերը երկաթներով կապեցին. Նթուպալ
դողաց կատաղութենէն, և աջուրները յուսահատ
բարկութեան արցունքներ վաղցուցին: Գերիները
բազմութեամբ լեցուած մէկ ոչխարներու խումբէ

մը աւելի ապուշ՝ որոնք իրենցմէ մէկուն մորթու-
լը անգգայ կը տեսնեն, անտարբեր աչքով մը կը
նայէին այս տեսարանիս վրայ : Յովսէփ՝ Պուլթո-
փիսի իրեն վրայ տպաւորած սարսափը մէկդի ընե-
լով, կը պլլուի ոտքերուն և կը վերցընէ դէպ՛ի իրեն
ձեռուրները և արցունքներով ծածկուած դէմքը
աշխարհիս վրայ կարեկցութիւնը երբէք ասկից ա-
ւելի սրտաշարժ երեսի մը վրայ չէր տեսնուած :
Չարմանք մը պատեց Պուլթոփիսի դէմքը, չկրցաւ
դէմ կենալ այնպիսի գորովալից աղաչանքի մը
սրտին կատաղութիւնը թուլցաւ, զիջաւ վերջա-
պէս Յովսէփայ արտասուացը : Բոլոր գերիները
աալչած մնացին, և Ռթոպալ իր շղթաներէն ար-
ձըկուած՝ երախտագէտ սրտի նայուածք մըն էր որ
իր ազատարարին վրայ ձգելով՝ վաղեց գրկեց զին-
քը՝ ինքիրմէ դուրս ելած :

Այն օրէն ետև չէր կրնար Ռթոպալ Յովսէփայ
քովէն զատուիլ : Տեսնելով այն անվսիթար աըրտ
մուլթիւնը որուն մէջ ընկզմեր էր իր գերութեանը
երխտասարդ ընկերը՝ շատ անգամ կը վազէր իրեն
միայնութիւնը մխիթարելու, և իրեն թափած ար-
ցունքներուն հանդիպելով՝ գորովալից սիրով մը կը
նայէր երեսը, և կարեկից սրտէ բխած խօսքեր
էին որ անուշութեամբ մը բերնէն կ'ելլէին՝ իրեն
ախուր լուլթիւնը զուարթացընելու համար : Բա-
րեկամութեան մը քաղցր խօսքերը մխիթարու-
թեան նշոյլ մը ծագեցին Յովսէփայ հոգւոյն մէջ,
որ կարծես թէ բոլոր բնութեան ազդեցութեանցը
անգգայ դարձեր էր : Բայց իրաւցընէ թէպէտ Յով-
սէփ վշտաց անհնարին տագնապներու մէջ կը չար-
չարուէր՝ բայց իր սիրտը վայրենացած չէր, մարդ-
կային ընկերակցութենէ չէր կրնար բոլորովին զա-
տուիլ հեռանալ : Գնաց մտաւ իր ընկերակիցնե-
րուն մէջ, ձայնին ազդու անուշութիւնը զարմա-
յուց և քաշեց իրեն անոնց վայրենացած ահանջնե-

բը : Փափուկ և անոյշ խօսակցութիւն մը կը բխէր իրեն զգայուն և առաքինի սրտէն , նման գեղեցիկ առուակի մը՝ որ զառ ՚ի վայր տեղէ մը իջնալով էր ընթացքին անոյշ և մեղմ ձայնովը՝ կ'երթայ կը տարածուի դաշտերու ծաղկըները զուարթացընելու :

Մէկ գեղեցիկ օր մը արևը կասողտ երկնքին կա մարին մէջտեղը հասած՝ իր կրակ ցատքեցընող ճառագայթները չորս կողմը տարածեր էր , անոյշ գեփիւռ մը հազիւ թէ անշարժ տերևները կը ցնցէր , ծառերը կարծես թէ թուլցած՝ իրենց ճիւղերը երկնցուցած կեցեր էին , և օդին մէջի երգիչ թռուչ նիկները՝ սրունց զուարթ բնակարաններն էին այն ծառերը՝ քաշուած անոնց խիտ տերևներուն մէջ՝ իրենց անուշիկ ճրւճըւալու ձայներն ալ դազրեցուցեր էին . ուրիշ ձայն մը չէր լսուեր՝ բաց միայն ջրին այն սղտի շարժմունքին ձայներն՝ որոնք ոչ խարնբրուն ջուր խմելու ատեն կը լսուէին : Գերիները՝ այսպիսի տեսարանի մը մէջ , Յովսէփայ խօսքերն ալ լսելով՝ աւելի զօրաւոր զգացմունք մը սրտերնուն մէջ արթննալով՝ հառաչել սկսան իրենց թշուառ վիճակին վրայ , և աչուրնին դարձուցած իրենց ոչխարներուն հօտին վրայ՝ սրտերնէն արիւն կ'անցնէր , նախանձելով անոնց վիճակին վրայ՝ որոնք գոհ և հանգիստ դալար խոտերուն վրայ տարածուեր էին : Յովսէփայ խորունկ մտածմունքներու մէջ ընկզմած վերացած կեցեր էր :

Ի՞՞թողալ՝ յանկարծ այն լուռութեանը մէջ , Ի՞նչ օգուտ , աղաղակեց , ընդունայն հառաչելէն . մեր այս յաւիտենական գերութեանը մենք ենք որառ ճառ . ի՞նչ , միթէ մարդս ստեղծուեր է մարդու կամաց զո՞հ ըլլալու , ողորմելի բռնաւորի մը ուրբին տակը կոխկրուածելուն համար : Մեր աղատութիւնը , ո՞վ քոջեր , մեր թևերուն վրայ է . եթէ հայրենեացս համար որատե՛րազմեցայ՝ աւելի լաւ կըլլ

նամ կուսիլ մեր գերութեան շղթաները կտարելու համար. ձեռք տուէք միայն իմ կտրճութեանս. ինչ վտանգ կրնայ զձեզ արդիւիւն. կը վախնա՞ք արդեօք Պութոփիսի իշխանութենէն: Ինքը Պութոփիսը ուրեմն թող մեր կտրճութեանը առջի զոհն ըլլայ, Պութոփիսի վրայ առջի հարուածներս պիտի շտկեմ, և զձեզ ազատ ընելու փառքը ժառանգեմ:

Իթոպալի խօսքերը լսելով՝ ազատութեան ձայնը ամենուն ահանջը թնդացուց, ծափահարութեամբ Իթոպալին կտրճութիւնը դովեցին, և ամենքն ալ անհամբեր՝ յօժար են արիւն թափելու. և ահա Յովսէփ ոտք կ'ելլէ, երեսին վրայ նկարուած կը տեսնուի ինչ որ առաքիւնութիւնը իրեն բերնէն պիտի խօսէր.

Ձարմանք, աղաղակեց Յովսէփ, մարդասպանութիւնը աւելի կ'ընտրէք քան թէ գերութիւնը... Իթոպալ, ինչպէս յանդգնեցաւ սիրտդ այդպիսի առաջարկութեան մը ընելու. և դուք ալ չսոսկացիք ատանկ անօրէնութիւն մը լսելու ատեննիդ. ահ, հաւատացէք, ձեզմէ աւելի ես նախ կը փափագիմ ազատութեան. դուք շատերնիդ գերութեան մէջ ծնած՝ ձեր ընտանիքը քովերնիդ կը վայելէք միշտ, և ինչ աւելի միսթարանք կրնար ըլլալ ձեր վտացը. բայց ես դեռ քիչ օր է որ կորսրնցուցի այն երջանիկ ազատութիւնը՝ որն որ դուք կ'ողբաք. դուք իմ խեղճ՝ վիճակս քննեցէք, գերութիւնը՝ աչքիս առջև թշուառութեանցս ամենէն թեթեւը կ'երևնայ: Եւ սակայն ես զիս հնազանդ բաներ եմ իմ դառն ճակատագրիս. գիտեմ, ո՞վ Տէր, որ եթէ յանդգնիմ ձեռքս արեան մէջ թաթխած իմ հայրենի տունս մտնալ, անոնք բոլոր ուրոնք ինձմէ զրկուելուն համար տրամուտեամբ կը հալն, զիս իրենց գիրկը ընդունելու տեղ՝ կը մերժեն զիս՝ կը հարածեն սարսափած: Բայց ձեզի

այս վիճակիս մէջ ալ թեթեւ երջանկութիւն մը վայելելէ դժուար բան մը չէ : Առաքինութիւնը կարող է, սիրելիք, ինչուան ծառայութեան շղթաներու ալ ազնուականութիւն մը տալ : Ո՛վ հայր իմ, դեռ աչքիս առջևն է այն թշուառ անձին նկարագրութիւնը որ ըրեր ես ինձի, անոր՝ որ առաջին եղաւ աշխարհիս վրայ մարդու արիւն թափելու, արիւն մը՝ իր հարազատ եղբօրը : Մարդասպանը թշուառ օրեր աշխարհքիս վրայ կը գտնէ, ամէն տեղ գերութիւն, խղճի խայթերէն շղթայակապ՝ ահաւոր դատաւորի մը սարսափէն հալածուած միշտ ինքզինքը կը տեսնէ : Բնութիւնը կրնայ զձեզ մը խիթարել, այս զովութիւնը, այս ծաղկրնեւրուն տեսարանը կրնան ձեր վշտերը թեթևցրնել : Պութովիսը անողորբելի չէ բոլորովին, ձեր ոչխարներուն վրայ խնամքով նայելով կրնաք դուք իրեն սիրաբար շահիլ : Իթոպա՛ն՝ ես որ կրցայ Պութովիսի գութը շարժել վրագ՝ զքեզ խալսցրնելու, պիտի չկարենամ համոզել զքեզ ալ որ իրեն արիւնը չմտնես : Թէ որ իմ աղաչանքներս փուճը պիտի երթան՝ թողէք զիս, հեռացէք ինձմէ, քաշուեցէք մէկ թշուառ անձէ մը, ես մինակ պիտի կենամ այս տրխուր բնակարանիս մէջ

Քանի որ կը խօսէր Յովսէփ, գերիներուն կատաղութիւնը կը թուլնար, և երջանկութեան յոյս մը աչքերնուն կը տեսնուէր : Այն դազանի նման բռնկած Իթոպալը՝ վրէժխնդրութեան կիւրքը կը խղզէ սրտին մէջ, գլուխը կը ծռէ, սիրտը կը մեղմանայ, կ'իյնայ Յովսէփայ ոտքերուն, կը սլուռի գորովանօք :

Գերիներուն Յովսէփայ վրայ ունեցած անկեղծ բարեկամութիւննին կը յորդորէր զիրենք որ շատ անգամ երթան իրեն միայնութեանը արգելք բլլան : Ելաւ Յովսէփ փնտռելու և գտաւ իրեն համար մէկ բոլորովին անձանիթ տեղ մը, ուր որ իր

բարեկամներէն ծածկուած կրնար կենալ : Կը հասնի մէկ մուտք անտառ մը՝ մթութեան միայն և մալձոտութեան բնակարան մը, կանկ առաւ հոն, և այն տեղը մի միայն յարմար գտաւ իր ցաւերուն : Հոն աջքին զարկաւ հին տարիներէ մնացած երկու արմաւենիներու ծառեր, երկուքն ալ իրարու վրայ ծուած և ճիւղերնին իրարու սլուած, կարծես թէ երկուքն ալ զիրար գրկած մեծցեր էին : չորս կողմանէ երկընցուցած ճիւղերնին ինչուան գետին կը հասնէին, և իրենց բնական գրքին մէջ մէկ սիրուն խրճիթ մը կը ձևացնէին :

Ախոս, հառաչեց Յովսէփ, մէկ տխուր յիշատակ մը միտքը իյնալով, ասոնց պէս խառնուեր էին իրարու այն երկու արմաւենիներն ալ՝ որոնք սիրտս քաշեր էին՝ իրենց հովանին տակը իմ ամուսնութեանս տնակը բարձրացնելու : իմ ձեռուներս մեծցուցեր էին զանոնք, հոն պիտի անցընէի իմ օրերս ալ Սելիմային օրերուն հետ մէկ տեղ : Տեսիլ մահագուշակ, որ սրտիս տրամուտիւնը միայն կը ծառայէ չմոռցնելու : Կ'ուզեմ աս ճիւղերն ալ իրարու հետ կապելով ամբողջացնել այս խրճիթը : Եւ որովհետեւ վճռուած է ինձի հոս իմ թշուառ կեանքս լմնցնելու, այս սրբազան բնակարանը նուիրեմ իմ սրտիս, ամենէն աւելի սիրելի զգացմունքներէն մէկուն, հոս մենաւոր իմ արամութեանցս մէջ պիտի իյնամ թաղուիմ : գիտեմ որ հոս Սելիմայի հետ պիտի չապրիմ վայրկեան մըն ալ, բայց հոս իմ մտացս՝ իմ խորհուրդներուս առջևը ներկայ միշտ պիտի գլտնամ՝ պիտի տեսնում իմ մէկ հասիկ Սելիմա սիրելիս :

Կ'ելէ մէկէն ըսածը կը կատարէ : գիւրաւ կը կապէ իրարու հետ ճիւղերը՝ որ արդէն գէպի իրարու վրայ երկնցած էին, և կարծես թէ իրենք իրենցմէ կ'ուղէին կապուիլ : Ետքը կը ժողլէ ար-

մաւենիներուն չորս կողմը առատ բուսած ծաղկը-
ները և անոնցմով իր խրճիթը կը զարդարէ : Այս
աշխատութեանց մէջ կը յիշէ այն երջանիկ օրերը,
որ ասոր նման մէկ բնակարան մը ձևացընելով՝ նուի-
րեր էր զանիկայ չէ թէ արցունքներու, այլ նա-
խանձելի երջանկութեան : Այս որ յիշեց՝ կանկ
առաւ կեցած տեղը, հառաչեց դէպ ի երկինք, և
աչքէն արցունքները յորդ վազեցին ծաղիկներուն
վրայ : Աշխատանքն որ լմընցուց, գորովալից աչ-
քով մը դարձաւ նայեցաւ խրճիթին վրայ, և կար-
ծէր թէ իր ամուսնութեան հիւղը կը տեսնէր •
միայն անխնամ երևոյթ մը կար վրան, որ ցաւե-
րու բնակարան ըլլալուն նշանն էր :

Բայց մէկէն ինքնիրեն գալով և ուրիշ մտած-
մունքներ միտքը բերելով • Խնջու, ըսաւ, միայն
արամուսնութեան զգացմունքներու մէջ հոգիս մաշե-
ցընեմ սխտի • և այս բնակարանս իմ սիրելիներուս
նուիրելու առենս՝ կրնամ մի մտնալ իմ հարցս
Աստուածը :

Շուտ մը խրճիթին քովը սեղան մը ձևացուց,
նման այն սեղանոյն՝ որ իր ծննդեանը տեղը շինուած
կար • սարզ հողէ էր իր սեղանը, և ծաղկընէրու
հետ խառնուած գալար խոտ մը՝ սեղանը կը սլա-
տէր, բայց իր սարգութեանը մէջ շատ աւելի փա-
ռաւոր էր՝ և շատ աւելի սրբազան՝ քան բոլոր հիւ-
նալի տաճարներն կուսպաշա Եգիպտոսի :

Ամէն իրիկուն կ'երթար Յովսէփ կը քաշուէր
քիչ մը առեն այն հիւլին մէջ՝ իր ոչխարները ետ
գարձընելէն առաջ : Հոնկէց այն մենաւոր հիւլին
խորունկէն՝ տխուր և անյագ նայուածքը կը դարձը-
նէր երբեմն այն կողմերը ուսկից որ արևը կ'ելլէ
կը բարձրանայ, և ուր որ իր ընտանիքը անմխիթար
կ'ողբան զինքը, երբեմն ալ կը տնկէր աչուրները
Նեղոսի վրայ՝ որն որ անտառին ծառերուն մէջէն
կը տեսնուէր : Ո՛վ դեռ, հառաչեց սրտին խո-

բունկէն, ինչո՞ւ քու ջրերդ չեն վազեր դէպ ի այն երկիրներն ալ որ զիս ծնան. փայտի մը վրայ կը փորէի քանի մը նշաններ իմ գժբաղդ կենացս յայտարար, կը ձգէի քու ջրերուդ մէջ, կը յանձնէի գութ ունեցող մէկ այլեացդ ընթացքին. ո՞ գիտէ, թերևս ինչուան իմ հայրենեացս եզերքները կ'երթար կը հասնէր, ո՞ գիտէ թերևս Յակովբ և Սելմա գետեզերքը նստած, իմ կորսուիլս ողբալու ատեննին, ձեռուընին կ'անցնէր այդ փայտի կտորը իմ թշուառութեանցս տխուր գութկանը, և իրենց արցունքներովը փայտը թրջելով կ'ըսէին, Յովսէփ Եգիպտոսի մէջ գերի է. և ո՞ գիտէ անշուշտ կուգային միթարելու զիս իմ գժբաղդութեանցս մէջ: Այն ատեն ահա իմ գերութիւնս կ'անուշնար ինծի:

Ասոնք էին մտքին խորհուրդները որոնց մէջ յուսահատ կը պտըտէին իր ցաւերը: Վամաց կամաց միտքը բոլորովն ինքը իր մէջը ամփոփուած՝ իր բռնկած երևակայութեան տաքութեամբը կը սկսի աչքին զիմացը երևակայել այն պատկառելի ծերունոցն պատկերը՝ ուսկից իր կեանքն ունեցեր էր, Սելմայի դէմքը, Բենիամինը. անձկանօք մը սիրոյ խօսքեր կ'ուղղէր անոնց, և երբեմն այնպէս մը կուգար իրեն որ իրաւցընէ ահա կը տեսնայ զանոնք զիմացը, և կը լսէ ձայներնին: Բայց մէյմըն ալ որ յանկարծ այն երջանիկ երևակայութիւնը կը փարատէր, ինքզինքը գիշերուան ստուերներուն մէջ մինակ կը գտնէր, և չորս կողմը բնութիւն մը որ լուռ և համր պատեր է զինքը՝ յուսահատ հառաչանքներու ձայներով և սրտաճմլիկ ցաւագին աղաղակներով բոլոր անտառը թունդ կը հանէր: Խրճճէն դուրս ցատքեց, ինկաւ դեռնին՝ գլուխը սեղանին կաթնոլցած՝ արցունքներովը կը թրջէր բոլոր սեղանը: Վերցուց դէպ ի երկինք աչուրներն ալ, թևերն ալ. բայց իր շրթուներնն ալ չեն

գիտեր, ինչպէս բացատրել Աստուծոյ առջև իր տակնուվրայ եղած սրտին տաղնասպները: Այն սրտաշարժ դրքին մէջ երկար ատեն լռութեամբ մնալէն ետև՝ աղաղակեց առ Աստուած.

Աստուած՝ իմ հարցս ու պատերուս, ամէն բան կորսնցուցի, հայրս, ամուսինս, եղբայրներս. սէ, ունեի՛ ես ալ եղբայրներ իմ հօրս տանը մէջ: Գուն միայն մնացիր ինծի Աստուած իմ. դուն ես ասկէց ետև իմ մէկ հատիկ հայրս, գթա իմ յուսահատ կենացս վրայ: Ատեն մը իմ ընտանեացս հետ մէկտեղ՝ ուրախութեան երգեր միայն և խընդութեան արցունքներ քեզի կը նուիրէի. այսօր՝ մինակ մնացած, գերութեան շղթաներու մէջ, շատ անգամ բոլոր ըրած աղօթքներս հառաչանքներ միայն են, որ դէպ ի երկինք կ'արձըկեմ: Բայց աչխարհիս վրայ թշուառ՝ ես չեմ միայն, դուն միութարէ ս'լ Տէր, մէկ հայր մըն ալ, մէկ ամուսին մըն ալ, որ ինծի պէս արցունքներով կեանքերնին կը մաշեցընեն: Ո՛ւր էր թէ եղբայրներս կարենային սիրել մէկգմէկ այնչափ աւելի՝ որչափ որ զիս չսիրեցին, ո՛ւր էր թէ ինծմէ աւելի երջանիկ ըլլալով՝ կարենային Յակովբայ ծերութեանը մաշած տարիները միխթարել, և փարատել այն ցաւերը՝ որ իրեն կենացը վերջն տարիները կը սպառնան ըմպընել:

Գանի որ այս խօսքերս շրթունքներէն կ'ելլային, աչքերէն վազած արցունքներն ալ երթալով կը նուագէին, իր սրտին կարճութիւնը նոր ոգի մը կարծես թէ կը զգենուր. ելաւ քաշուելու այն ատեղերէն՝ աւելի անոյշ տրամութեան մը մէջ ընկըլմամբ:

Այն օրերը բոլոր Եգիպտոս՝ Ասիա կովուռն մահուան սուգին մէջն էր, և հասեր էր օրը որ նոր աստուածը իրեն փառքը պիտի սկսէր. Մեմփիսի փառաւոր տաճարը զարգարուած կը սպասէր զինքը

3/525.64



ընդունելու․ անցնելու ճամբան ալ Պետափրեաի երկիրներուն մէջը կ'իյնար: Առտուն կանուխ արշալուսոյն ճառագայթները արձըկուելուն պէս, ճամբայ ելաւ Ապիս, փառաւոր կառքի մը վրայ դրուած: Իրեն գեղեցկութիւնը ամենուն աչքը կ'առնէր․ բընութիւնը իրեն սևագոյն կաշին գեղեցիկ կարգի մը վրայ շարուած ձերմակ կէտերով զարդարած էր․ ոսկեզօծ եղջիւրներէն ծաղկէ պսակներ կախուած էին, չորս կողմը պատեր էին քուրմերը՝ ձեան պէս ձերմակ զգեստներ հագած, ետեւէն ալ անթիւ բազմութիւն մը ժողովրդեան կուգային: Ապիսը՝ երբեմն երբեմն երկայն մը կը բառաչէր, որն որ բոլոր բազմութիւնը երկիւղած սարսափով մը մըտիկ կ'ընէր․ մինչգեւ նոյն խտ անոնց տուած պատիւներն և օրհնութեանց աղաղակները՝ կը դողացնէին խեղճ Ապիս կովը: Սրբազան նուագարաններու ձայներուն հետ մէկտեղ՝ ամէնքը մէկ բերան օդը կը հնչեցնէին․ Տեսէք, ահա Եգիպտոսի աստուածը․ այս հանդիսին բոլոր դաշտերու գերիներն ալ երեսի վրայ խնկած երկրպագութիւն կ'ընէին:

Յովսէփ զարմանքի և ցաւու մէջ տազնապէալ, փախաւ ծածկուեցաւ այնպիսի անօրէն հանդիսէ մը, և քաշուեցաւ իր բնակարանը: Երբոր հասաւ գերագոյն Աստուծոյ նուիրուած սեղանոյն առջևը, Աստուած իմ, կանչեց, մինչգեւ բոլոր Եգիպտոս քու անունդ՝ դաշտերը արածող կովու մը կ'ընծայէ, ընդունէ հոս իմ սրտէս քեզի միայն վայելեղած պաշտօնը․ իմ շրթունքներս են միայն որ այս երկրէս կ'աղաղակեն քեզի, և որոնք կ'երդնուն միշտ հաւատարիմ մնալու քեզի:

Սրտանց այս սլաքական աղօթքն ընելէն ետեւ՝ միաքը դրաւ և ջանաց անկէց ետեւ իր ընկերներուն տգիտութիւնը լուսաւորելու: Հանդիսին երկրորդ օրը Իթուպալ մտերիմ սիրով մը շարժեալ՝ հե-

ուռանց Յովսէփին ետեւն գնաց դէպ ի անտառը . հոն որ մօտեցաւ խիտ տերեւներուն մէջէն տեսաւ Յովսէփը որ իր խրճիթին քովը կեցեր էր, լսեց իրենցաւալից հառաչանքներն ալ : Երբոր Իթոպալ ըզգածուած կեցեր կրնայէր, Յովսէփ սկսաւ այն հառաչալից աղօթքներէն մէկն ընել՝ զորն որ շատ անգամ իրեն առաքինի և դժբաղդ սիրտը հառաչէր էր առ Աստուած . Իթոպալի սիրտը՝ այն աղօթքն որ լսեց տակնուվրայ եղաւ՝ աղկբը կը կտորտէին . նման մարդու մը՝ որ ահաւոր անապատէ մը՝ ուր որ սառնապատ քարաժայռներէն զատ ուրիշ բան չիտեսնար, և վայրենի գազաններու ազաղակներէն զատ ուրիշ ձայն չլսէր, հասնելով զուարթ և խաղաղ երկիր մը՝ սիրտը խնդութեամբ և հիացմամբ մը կը լեցուի՝ դաւար տերեւներուն՝ ծաղկրներուն հետ խառնուած սիրուն տեսարանը աչքին գիմացը բացուելով, որոնցմէ օղին ծածանմամբը մէկ այնպիսի անոյշ ներդաշնակ ձայն մը կը ձևանայ՝ որ միտքը կը յափշտակէ . նոյնպէս ալ երիտասարդ գերին՝ աշուրները տնկած այն գեղեցիկ տեղւոյն վերայ՝ և Յովսէփայ աղօթքը լսելով՝ սիրտը ելաւ բուրրովին : Անշարժ կեցած երևակայութեանը մէջ կը նորոգէր այն սրտաշարժ տեսարանը նաև իր բարեկամին՝ անկէց ներս քաշուելով խրճիթին մէջ մտնալէն վերջն ալ :

Մէկ առաւօտ մը երբոր ոչխարները զով ժամանակ կանաչներուն մէջ տարածուած կ'արածէին, Յովսէփայ հետ քաշուեցաւ Իթոպալ առանձին տեղ մը, նստան երկուքն ալ բլրակի մը գլուխը . և քիչ մը ատեն ըուլթենէն վերջը, Իթոպալ սկսաւ խօսիլ .

Պէտք է որ իմ սիրաս բոլոր բանամքու գիմացդ, ըսաւ Յովսէփայ . դուն ինձի առաքինութեանը ազնուութիւնը ճանչցրնելէդ ետև, կարծես թէ ամէն բան աչքիս սաջիւր իր երևոյթը փոխեց . բնութեան

տեսարանները, որոնց վրայ անսարբեր աչքով մը նայեր էի միշտ, հիմայ սրտիս մէջ բիւր տեսակ նոր զգացմունքներ կը ծնանին՝ որոնք անհանգիստ կը տապնասեն զիս. կ'ուզէս որ քեզի մէկ ծածուկ ըրած հետաքրքրութիւնս ալ յայտնեմ. ես անհանգիստ սրտով քու տրամուծիւնդ տեսնելով՝ համարձակեցայ ետեւդ գալու ծածուկ ինչուան քու միայնութեանդ խրճիթը. բայց երբոր անտառը մտայ, քու հառաչանքներուդ ձայները սիրտս կտոր կտոր ըրին, և սրտաշարժ աղօթքիդ տեսարանն ալ՝ դեռ ինչուան այս վայրկեանս զգածուած սրտիս առջևն է: Սիրելիդ իմ Յովսէփ, բերնէդ ամէն ելած խօսքերն ալ սիրտս շարժեր էին, բայց այն վայրկեանին սէս դեռ սիրտս զգածուած չէր. վասն զի այնպէս մը կուգար ինձի որ հոգւոյս մէջը կը նորոգուէին այն տալանորութիւնները՝ որ բնութեան տեսարանները կ'ազդէին վրաս: Այս ինչ զգացմունք է հասկըցուր ինձի, սիրելի. ո՞վ է այդ էակը՝ որուն վրայ քու բոլոր վստահութիւնդ գրեր էս. և որով կամայ կամայ հառաչանքներդ կը մեղմանային:

Այս խօսքերս ըսելու ատենը՝ ուշադիր և երկիւղած կերպով մը Յովսէփայ երեսը կը նայեր, որն որ հաճութեամբ մը ինքն ալ անոր կը նայեր. Ո՞վ սիրելի բարեկամ, սրտասխանեց Յովսէփ Իթոպալի վիզը սլուելով, բնութիւնը քու սրտիդ մէջ խօսիլ սկսեր է. դեռ ինչ կարօտութիւն ունիս ուսուցիչներու: Գարձուր աչուրներդ չորս դին. տես սա գեղեցիկ տեսարանը, ըսէ Իթոպալ ամէն դիէն վսեմ դասեր չէս մի լսեր. և ինչ պէտք է որ բնութեան ձայնին մէջ՝ մահկանացու մըն ալ իր ձայնը խառնէ: Ա՛հ, բայց ափսոս ինձի, այս տեսարանները որ երբեմն իմ միտքս ալ կը հիացընէին, կը տեսնեմ որ հիմայ չեն կշտացրներ իմ սիրտս. բայց ինչ խեղճութիւն էր ինձի թէ որ

այս բնութեան վրայ ես ալ շտեմնէի նկարուած մէկ գերազանց և մխիթարիչ ճշմարտութիւն մը : Նոյն վայրկենին ցրցուց իթողալին այն հրաշալի տեսարանն՝ որ իրենց աչքին առջևը կը բացուէր :

Փառահէղ կերպով մը ճառագայթներ արձրկելով կը բարձրանար հորիզոնէն արևուն գունար , երբոր երկնքին երեսը տարածուած բիւրաւոր աստղերն՝ որոնք բոլոր գիշերը լուսազարդ փայլեր էին՝ կամաց կամաց կը մթըննային , և բոլորովին մարելու ատենին կարծես թէ կը հեռանային՝ քաշուելու ծածկուելու երկնից անասհման ընդարձակութեանը մէջ : Այնպէս մը կ'երևնար իբր թէ բոլոր բնութիւնն ալ իբրև մէկ խոր քնէ մը կ'արթննար , մարդն ալ կ'ելլար վայելելու երկնից հետ այն կենսատու բուրմունքն որ՝ նոր ոգի առած երկիրը կը շնչէր : Արևուն երազընթաց ճառագայթները՝ կը փալփէին լեռներուն գագաթներուն վրայ , և անկէց տարածուելով՝ դալար դաշտերու երեսը կը շողային , և մանեւ լով անտառներուն մութ արհաւիրքներուն մէջ՝ գիշերուան վերջին բնակարաններուն մէջ՝ ներդաշնակ երգերու ձայները նորէն կ'արթնցընէին : Ոչխարներուն մեղմ մայելներուն ձայները՝ որոնք բոլոր ձորերը կը բռնէին՝ անտառներու ներդաշնակութեանը հետ միանալով աւելի քաղցր և աւելի ազդու կերպով մը կը սրտէին բոլոր բնութիւնը :

Երկու երիտասարդ գերիները , խոր լուծեան մը մէջ զարմացած ահանջ կը դնէին , և աչուլնին տնկած այս միտք յափշտակող տեսարաններուն վրայ կը նայէին : Յովակի երբեմն երբեմն կը դառնար իր բարեկամին երեսը կը նայէր , և սիրտը կը զուարթանար՝ տեսնելով երեսին վրայ իրեն սրտին զգացմունքներն որոնց մէջ բոլորովին ընկզմեր էր :

Երբոր իթողալ ինքիրմէ դուրս ելած կը գիտէր արևուն փառաւոր ընթացքը՝ և ահա Աստուծոյ

գաղափարը իբրև բովանդակ տիեզերաց արևու մը պէս ելաւ ծագեցաւ իր հոգւոյն տեսութեանը առջև իբրև մէկ խորունկ գիշերուան մը մթութենէն : Այս, ահա այս վայրկենիս, սուրբ Ռթոպալ, ուրախութենէն ինքզինքը մոռցած, և աչուրներն ալ միշտ բնութեան տեսարաններուն վրայ պտըտցընելով, մէկ նոր լոյս մը վերջապէս իմ միտքս լուսաւորեց, մէկ զօրաւոր և ազդու ձայն մը իմ սրբտիս մէջ յայտնապէս կը խօսի : Այս մէկ էութիւն մը որ այս արևս և բոլոր աստղները ստեղծեց, որ անոնց ընթացքը կարգի դրաւ, որ զաշխարհքս իր ամէն բարեքներովը լեցուց, որ զիս դրաւ մէջը . . . Աստուած՝ որուն որ իմ բարեկամս կ'աղաղակէ միշտ, ահա կը տեսնամ որ այս վայրկենիս բոլոր բնութեամբը զքեզ կը փառաւորէ, և ես դեռ կը անանամ իմ առջի սարսուտառաջաճ պարտքս նուիրելու քեզի՛. ըսաւ և երեսի վրայ ինկաւ գետին երկրպագութիւն ըրաւ :

Վազեց Յովսէփ, ինկաւ սլլուեցաւ իր բարեկամին վիզը . Սիրելի՛ բարեկամ, ըսաւ անոր՝ աչուրները լեցուած, գերութեան օրէս ետև ահա ասոնք առջի խնդութեան արցունքներն են որ աչքերէս կը վազեն : Քեզի նմանները, Ռթոպալ, քեզի տէր կը ճանչնաս, և անբան անասունները Աստուծոյ տեղ կը պաշտէիր, ահա հիմակ մէկ ամօթալի լուծէ մը խալըսեցար . ասկէց ետև աւելի արժանաւոր ես մէկ առաքինի բարեկամութեան մը :

Մէկէն ելաւ, բռնեց ձեռքէն և իր խրճիթը բերաւ զինքը : Հոն ցուցընելով անոր իր հիւլը, Ահա հոս է, ըսաւ, իմ սիրելի բնակութիւնս՝ այս տխուր երկրիս մէջ, ահա այս է այն սեղանը՝ զորն որ նուիրեր եմ այն Աստուծոյ որ դուն այսօր ճանչցար : Աստուծոյ ձեռքէն ստեղծուած առաջին մարդը՝ ասոր նման սեղան մըն էր որ շինեց իրեն, և հոն անկեղծ ու մեծամեծ ուխտեր ըրաւ Աստու-

ծոյ, երբեմն ալ ինչուան իրեն ձայնը կը լսէր հոն : Այս ճշմարիտ աստուածապաշտութիւնը՝ որ աշխարհիս հետ մէկտեղ սկսած է, և սխտի տեւ քանի որ լեռներն ու դաշտեր աշխարհքիս վրայ կը տեսնուին, խիստ շուտով մտցուեցաւ մարդկային ցեղին չարութեանց և անօրէնութեանց շատնալուն հետ միատեղ : Իմ պապս հաստատեց նորէն այն աստուածապաշտութիւնը, ես ալ իմ հարցս ճամբէն երթալով՝ այս երկիրներու մէջ ալ կը պաշտեմ միայն բնութեան հայրը, ճշմարիտ աստուածը :

Խօսքը լմնցուց Յովսէփ, և Իթոպալ նոր պատկառանքով մը լցուած՝ երկրպագութիւն ըրաւ սէղանոյն առջևը, և հոն նորոգեց դարձեալ այն ուխտերն՝ որ վայրկեան մը առաջ ըրեր էր Աստուծոյ առջևը :

Եւան երկուքն ալ խրճիթէն դուրս, և ձեռք ձեռքի տուած կը դառնային մեծ լուծեամբ մը իւրաքանչիւրը իրեն մտքին խորհրդածութեանցը մէջ ընկզմած : Եւ երբոր Յովսէփ ինքն ալ զարմացած էր՝ թէ ինչպէս իր սիրտը ուրախութեան զգացմունքներու մէջ ինկեր էր՝ ահա նորէն իր ցաւերուն տապնապները պաշարեցին զինքը . Իթոպալ՝ իր բարեկամը հազարումէկ տեսակ նոր մտածութեանց մէջ մտքովը կը պտրտէր : Առաքինութիւնը աչքին աւելի սիրելի կ'երենար, գերութիւնը՝ ոչ այնչափ ծանր . բարեկամութիւնը աւելի քաղցր, նոյն իսկ բնութեան տեսարանն ալ աւելի զարմանալի : Ինչպէս մէկ ճանապարհորդ մը որ գեղեցիկ համբաւէ մը շարժած կ'ելլայ երթալու մօտէն տեսալու այնպիսի համբաւի մը արժանաւոր թագաւոր մը, որուն որ ըրած բարերարութիւնները, պողպէր գետի մը նման, իրեն թագաւորական բարձր աթուէն կ'ինջնան կը լեցընեն իր տերութեանը ընդարձակ սահմանները, և ինքը այնպիսի երջանիկ թագաւորութեան մը սահմանները ոտք

կոխածին սէս, կը զգայ սրտին մէջ սրատկառանք մը անանկ ժողովրդեան մը և անանկ տերութեան մը՝ որ այնպիսի թագաւորէ մը կառավարուի, ասանկ ալ երիտասարդ գերին կը տեսնէր բնութիւնը զարդարուած աստուածային մեծ վայելչութեամբ մը՝ որուն արդէն արարածն էր :

Քիչ ատենուան մէջ նոյն մտաց լոյսը տարածուեցաւ բոլոր այն դաշտերուն մէջ ալ, ամենուն սիրտը բնութեան ձայնին սրտրաստ էր. սկսաւ իրենց բնաւորութեան վայրենութիւնը կակըղնալ. զարմանալի ճշգուծեամբ մը ամէն սրտուքեր կը կատարուէին, և նոյն իսկ Պութոփիա օրէ օր իրեն դաժանութիւնը մեղմացուց : Յովսէփայ լքեալ սիրտը միտիթարութեամբ կը լեցուէր՝ երբոր Եգիպտացուց հանդիսի օրեր՝ կը տեսնէր իր ձեռքովը շինած սեղանոյն չորս կողմը սրտած իր գերութեանը ընկերակիցները, որոնք մէկ բերան տիեզերաց ճշմարիտ Աստուծոյն սրտանց կ'աղօթէին : Երբոր բոլոր Եգիպտոս աւելորդասպաշտութեանց մէջ գլորած, և բոլոր մեծամեծներն ու իշխաններն անարդ կենդանիներու առջևնին ինկած երկրպագութիւն կ'ընէին, գերիներ՝ այն անձանօթ տեղոյն մէջ՝ մարդու վայել սրտի ուխտերն դէպ 'ի երկինք առ Աստուած կ'ուղղէին : Պահապան հրեշտակներն՝ որոնք աստուածային հրամանաւ մը աշխարհքիս երեսը կը պարտին՝ այն անտառին մէջ կանկ կ'առնէին, և այնպիսի կռասպաշտ երկրի մը մէջ մէկ անձանօթ ձայնէ մը շարժած՝ կը դարձընէին աշուրնին սղծեալ քաղաքներու և տաճարներու վրայէն այս սեղանոյն վրայ, որուն չորս բոլորախօքը առաքինի գերիներ շարուած կ'աղօթէին :

Երջանկութիւնը և առաքինութիւնը այս բնակարանին մէջ կը հնչեցընէին երգերու ներդաշնակ ձայն մը, երգերը՝ որ դաշտերու մէջ ծնած և բրնութեան բնական տեսարաններու մէջ առաջին

անգամ լուծած են, հոս իրենց սրասաշարժ սլար-
զուծեանը մէջ արձագանդներ կուտային. նոյն հո-
վել գերիները անզարդ քնարները ձեռք առին՝ ու-
րոնց հետ իրենց մեղմ ձայներն ալ կը խառնէին,
և այն ծաղկըներն որ քիչ օր առաջ դաշտերն միայն
կը զարդարէին, հիմայ հովիւներուն ու հովուուհի-
ներուն ալ զարդարանքներն եղան:

Միայն Յովսէփայ քնարը մէկդի ձգուած մնա-
ցեր էր, և ծաղկըներն ալ զինքը միայն անզարդ
թողուցեր էին. առանց ինքը երջանիկ ըլլալու, իր
ընկերներուն երջանկուծեանը կ'ուզէր մասնակից
տեսնուիլ: Երբոր այն գերիներուն խուսմբը կը տես-
նար՝ զուարթ և անմեղ ուրախութեան մը մէջ
յափշտակուած, արիւն կ'անցնէր Յովսէփայ սըր-
տէն, սիրտը կտոր կտոր ըլլալով կը յիշէր այն
թուած գացած օրերն՝ որ այսպիսի երջանկութեամբ
մը կ'անցընէր իր հօրը տանը մէջ: Սրտին տագնապը
որչափ ալ ծածկել կը ջանար՝ երեսին վրայ կը տես-
նուէր. ընկերները իր տրամուծիւնը տեսնելով՝
ուրախութեան երգերը կը դադրեցընէին, և չորս
դին սրտած իրեն սրտին ցաւերուն յարմար տը-
խուր երգեր կը հնչեցընէին. Յովսէփ աւելի հա-
ճութեամբ այն տխուր երգերու ձայներուն մէջ
կ'ընկղմէր, և ինքիւրմէ դուրս ելած յորդ արցունք-
ներ կը թափէր. բայց յանկարծ այն քաղցր զմայլ-
մունքէն կ'արթըննար, և երեսներն ու ձեռուրները
արցունքներով թրջած գտնելով՝ ինքզինքը կ'ուտէր
տագնապէն՝ որ ընկերներուն ուրախութիւնը տակ-
նուվրայ կ'ընէ. վերջապէս ոտք ելաւ՝ գնաց քաշուե-
ցաւ առանձին տեղ մը:

Չալիւքա, Պետափրեսի կինը՝ փառաւոր կառք
մը հեծած ելաւ Մեմփիս քաղաքէն դուրս: Հանդի-
սի օրեր իր էրկանը պատճառաւ պալատը լեցուող
բազմութեան շփոթութենէն հանգչելու համար
չատ անգամ սովորութիւն ըրեր էր դաշտերը

քաշուելու զուարճանալու համար : Պետափրեսի գաշտերն որ հասաւ՝ մէկ անոյշ երգերու ձայն մը ականջը զարկաւ . սկսաւ մօտենալ ձայնին , և հեռուանց տեսաւ որ հովիւներ ու հովուուհիներ ծաղիկներու պսակներով զարդարուած՝ քնարներ հնչեցրնելով անոյշ կ'երգէին . Չարմա՛նք բան , ըսաւ ինքնիրեն , միթէ ասո՛նք են այն գերիներն՝ զորոնք ինծի վայրենի մարդկանց սէս նկարագրեր էին , որոնց խեղճ վիճակը ես ալ միաքս դրեր էի թէթեցրնելու . ա՛հ , ասոնք ինծմէ շատ աւելի երջանիկ են : Այս խօսքերս ըսելով՝ մէյմըն ալ նայեցաւ անոնց , աչուրները լեցուեցան . և հառաչելով մը հեռացաւ անկէջ :

Իմացը մէկ մութ և անընակ անտառ մը տեսաւ . յուսալով որ հոն առանձնութեան մէջ կարենայ քիչ մը հանգչիլ՝ մտաւ հոն , իր մտքին խորհուրդներուն մէջ ընկզմած՝ անտառին խորերը գնաց , մէյմըն՝ ալ յանկարծ աչքին զարկաւ մէկ սզտի խրճիթ մը անուշահոտ ծաղիկներով զարդարուած , դրանը մէջ նստեր էր հիանալի գեղեցկութեամբ զարդարուած երիտասարդ մը . և էր ինքն Յովսէփ : Ոսկեփայլ գեղնագոյն մազերը ինչուան խտերուն վրայ կ'ինչնային , արցունքով լեցուած աչուրները գէպ ի երկինք վերուցած՝ կը հառաչէր ըրիկ , իր չորս դին ալ ոչխարները սրտեր էին :

Յովսէփայ գեղեցկութիւնը և իրեն սրտաշարժ տեսարանը՝ տակնուվրայ ըրին Չալիւքայի սիրտը . հասած տեղը անշարժ կեցած՝ երկայն ատեն յափրշտակուած մը Յովսէփայ երեսը կը նայէր , և քանի որ կը նայէր , այնչափ ալ սիրտը կարեկցութեամբ կը լեցուէր :

Նոյն իրիկունը Յովսէփ իր ընկերներուն ընելու ուրախութեան հանգիսէն քաշուած՝ իր միայնարանը փակուած մնացեր էր . ընդունայն տեղը իր բարեկամները ստիպէր էին զինքը արցունքները

սրբել, և իրեն անոյշ ձայնովը իրենց երգերուն մէջ մտնել, բայց սրտին տրտմութեանը չէին կրցած յաղթել: Ոտքին քովը քնար մը կեցեր էր, զորն որ Խթողալ բերեր էր հոն իբրև իրեն համար. նայեցաւ մէյմը Յովսէփ քնարին վրայ, երկնցուց ձեռքը առաւ գետնէն և սկսաւ այս ցաւագին հառաչանքներն ընել քնարովը երգելով.

Վ'ուզեն, սիրելիք, որ պսակուիմ՝ ծաղկընէրով, ուրախութեան երգեր շրթունքներս արձրկեն, անոյշ ներդաշնակ ձայներ մատուըներս զարնեն. ահ, այս երջանկութեան ձայները ի՛նչ մխիթարանք են թշուառ սրտի... սիրելի՛ արձագանգներ, որ իմ ծննդեան տեղերուս չորս կողմը դեռ կը թնդացնէք, դուք լսեր էք այն իմ երջանկութեանս ձայները, սիրելի էր ձեզի բիւր անգամ այն ձայները կրկնել... Բայց այս հեռաւոր սահմաններու մէջ, սիրտ իմ, ի՛նչ զգացմունքներու երգեր կ'ուզես որ երգեմ. երգե՛լ արդեօք որդիական անոյշ սիրոյն քաղցրութիւնը. ո՞վ սիրելի՛ և սրբազան անուններ՝ որ այսօր իմ ցաւերս արթնցնելու միայն կը ծառայէք... երգե՛լ արդեօք բնութեան այս գեղեցկութիւնը, այս ախորժելի հովանիներն, սիրուն ծաղկըններն, զուարթ ջրի ընթացքներն, որոնք ինծի համար բոլոր իրենց գեղեցկութիւնը կորսնցուցեր են, և որոնք ատենօք վայլած երջանկութեանս այսօր յիշատակարաններն են միայն աչխարհիս վրայ... Քեզի ալ, ո՞վ ամենակալ Աստուած, որ բոլոր տիեզերաց վրայ կը թագաւորես, քեզի՛ որուն շատ անգամ՝ թշուառացած սրտէս հառաչանքներ հաներ եմ, քեզի վայելուչ ի՛նչ երգեր շրթունքներս կրնան հիւսել. դժբանք քնար. համբացեր է բոլորովին, կամ հառաչանքներու միայն ձայներ կ'արձրկէ... ահա այս երգերս միայն պիտի երգէ բերանս, ինչուան որ ահաւոր դամբան մը յափշտակէ ծածկէ զիս աչխարհէս... վաղեցէք

դառն արցունքներ, մխիթարեցէք թէ որ կրնաք մէկ ջարդուբուրդ եղած սիրտ մը... Ո՞ւր էր թէ այս վայրկենիս մէջ կարենայի վերջին հառաչանքս հառաչել, և արտասուացս ետքի կաթիլը թափել:

Վ՛ուզէր դեռ շարունակել, բայց քնարին թեւերը արցունքներէն թրջած՝ ալ ձայն չէին հաներ. ձայնը տաղնապէն բռնուեր էր, և դողդոջուն մատուռները սրտին զգացմունքներուն հետ թուլցած՝ քնարին թեւերը չէին կրնար շարժել:

Ձալիւքա լսելով այս անոյշ և սրտաշարժ ձայնը, այս գեղեցիկ ներդաշնակութիւնը՝ որուն մէջ երգեցողին սրտին բոլոր ցաւերը ճիշդ կը տեսնուէին, այս խոր հառաչանքներն և այս վերջին՝ աւելի սրտաշարժ լուռութիւնը, Ձալիւքա բոլորովին սիրաբեւոյժ, չկրցաւ արցունքները բռնել. բոլոր անտառին թուզումներն ալ կարծես դիտմամբ լսեր էին, և հիւզին չորս կողմը ցրուած ոչխարներն ալ ամփոփուած կեցեր էին անշարժ: Ասոր նման Փիլոմել երբոր իր էրկանը մահը տեսաւ, երկար ատեն կը հառաչէր սրտէն միայն առանց ձայնի, և իրեն ամենէն աւելի տխուր երգերն ալ իր ցաւերուն դիմացը թեթև էին, բայց երբոր լուռութիւնը կոտորեց, առաջին հառաչանքներն այնպիսի ցաւալից կերպով մը արձըկեց՝ որ իր ընկերները բոլորովին ըզգածուած՝ իրենց երգերը լսեցուցին: Երբոր թըշուսուացած անձ մը իր յուսահատ ընթացքը դէպ ՚ի անտառը կ'ուղղէ, կարծես թէ անտառը դիմացէն իր տխուր հառաչանքները կը դադրեցնէ, որպէս զի ինքը իր սրտին ցաւերը խօսեցնէ:

Ձալիւքա դեռ հոն կեցած աչուրները Յովսէփայ վրայ էր, կ'ուզէր մօտենալ իրեն, և իր արցունքներուն պատճառն իմանալ, բայց մէկ ներքին անյայտ զգացմունք մը զինքը ետ ետ կը հրէր. վերջապէս թողուց ետ քաշուեցաւ անկէց՝ սաստիկ զգածուած Յովսէփայ տեսարանէն:

Երկրորդ առտու ելաւ կանուխ՝ հարցուց Չալիւ, քա թէ ո՞վ է այն երիտասարդ հովիւը՝ որ անտառին խորերը կը քաշուի արցունքներ թափելու : Ըսին իրեն որ Պետափրեսի գերիներէն մէկն է, որուն վրայ մասնաւոր սէր մը ունի • գովեցին իրեն ալէկուլթիւնը, անոյշ բնաւորուլթիւնը, և սաաքինուլթիւնները ^(*) :

Իրեն իմացուցին որ Յովսէփ իր ընկերներուն ինչուան ամենէն աւելի կատաղիներուն սիրտը գիտցեր էր շահիլ, ինչուան նոյն իսկ դաժան Պուլթուփիսին սիրտն ալ • և թէ իրեն հետ այն դաշտերուն մէջ երջանկուլթիւնն ալ մտեր էր, և թէ ափսոս որ ուրիշներուն երջանկուլթիւն պարգևելու ատեն՝ ինքը միայն բոլորովին զրկուած էր անկէ, և մէկ անմխիթար մաղձոտուլթեան մը մէջ կը չարչարուէր • և թէ բան մըն ալ չգտնուեցաւ ինչուան այն վայրկեանը որ իրեն սիրտը քաշէ, և թէ իրեն սիրելի բարեկամներն ալ չկրցան իր թշուառուլթեանցը գալտնիքը բերնէն առնել :

Հաճուլթեամբ մը մտիկ ըրաւ Չալիւքա Յովսէփայ վրայ արուած գովեստները • բայց երբոր անոր ցաւերուն վրայ խօսքը հասաւ՝ բոլորովին սիրտը այլայլեցաւ՝ կարգէ դուրս գուլթ մը վրան զգալով •

(*) ԾՆՆ • ԼԹ • 1-6 • — Եւ զՅովսէփ իջուցին յԵգիպտոս, և զնեաց զնա Պետափրէս ներքինի Փարաւոնի դահճապետ, այր եգիպտացի ի ձեռաց իմայելացուոցն որք իջուցին զնա անգր : Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, և էր այր յաջողակ. և եղև ի տան տեառն իւրոյ յԵգիպտոս : Իբրև գիտաց տէրն նորա՝ թէ Տէր ընդ նմա է, և զամենայն զինչ և առնէր՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա. և եգիտ Յովսէփ շնորհս առաջի տեառն իւրոյ, զի հաճոյ էր նմա : Եւ կացոյց զնա ի վերայ տան իւրոյ, և զամենայն ինչ որ իւր էր ետ ի ձեռս Յովսեփայ. և եղև յետ կացուցանելոյ զնա ի վերայ տան իւրոյ, և ի վերայ ամենայն իրիք որ ինչ էր նորա, և օրհնեաց Տէր զտուն և գիպտացւոյն վանն Յովսեփայ, և եղև օրհնուլթիւն Տեառն ի վերայ ամենայն ընչից նորա ի տան և յանգի. և եթող զամենայն որ ինչ իւր էր՝ ի ձեռս Յովսեփայ. և ոչ գիտէր զամենայն որ ինչ կայր ի տան իւրում, բայց միայն զհացն զոր ուտէր : Եւ էր Յովսէփ ազնիւ երեսօք և քեղեցիկ տեսեամբ յոյժ :

Թշուան երիտասարդ, ըսաւ ինքնիրեն, որ սիրա կրնայ քու ցաւերուդ անզգայ գտնուիլ: Իր ծաղիկ հասակին մէջ, իր անհնարին ցաւերուն մէջ՝ լուծիւնը զոհ եղած պիտի մեռնի... Մշուշտ փառաւոր ցեղի մը ծնունդ է, իրեն բնաւորութեան փափկութիւնը՝ ազնուականութեանը մեծ նշանն է. զարմանք չէ, ինչուան աստուածոց վրայ ալ կը պատմուի որ գերութեան վիճակի հասեր են: Պէտք է որ Յովսէփ իր սիրտը բանայ ինծի, իրեն ծաղիկ հասակը խալըսեմ պիտի թշուառութենէն:

Ըսաւ՝ և դեռ արևը իր ընթացքը չմնացած միայնակ ելաւ սալատէն և շիտակ դէպ ի անտառը ուղղեց ճամբան: Յովսէփ մինակ իր խրճիթին մէջ նստած՝ իր սովորական ցաւերուն մէջ թաղուած յորդ կ'արտասուէր, մէյմըն ալ աչքը վեր որ վերցուց՝ Զալիւքա գրան առջևը կեցած տեսաւ: Շփոթած ոտք ելաւ, սրաին հառաչանքները բռնեց, և կը ջանար արցունքները սրբել:


Իժբանդդ երիտասարդ, մի շփոթիր, զգածուած ձայնով մը ըսաւ իրեն Զալիւքա, Պետափրեսի ամուսինը եկեր է քու թշուառ օրերդ լմնցընելու: Ինչ է պատճառը որ զքեզ կը ստիպէ հեռանալ քու հասակիդ պատշաճ անմեղ գուարճութիւններէն: Ար վախնաս արդեօք վստահելու ինծի սրտիդ գաղտնիքները: Թշուառ սրտի մը տագնապները ծանօթ են ինծի, և որչափ ալ երջանիկ վիճակի մէջ զիս կարծես, բայց ներսի դիս անզգայ սիրտ մը չես գտներ քու ցաւերուդ:

Քու արցունքներդ սիրտս գրաւեցին, երեսիդ գծագրութեանը վրայ կը տեսնեմ որ այսպիսի անարդ վիճակէ մը շատ վեր վիճակի մէջ ծնած ես. որ բարբարոս սիրտը զքեզ գերութեան շղթաներու հասցուց. խօսէ անկեղծ. անվայել քեզի հառաչանքներն են որ կը հանես: Այս վայրկենէս՝ ազատ ես գերութենէ, և այս ազատութիւնը քեզի

արժանաւոր բարիքներուն թեթևն է . թող որ ես խմ՝ ձեռքովս սրբեմ՝ այս արցունքներդ, որ վերջին կաթիլներն պիտի ըլլան աչքերուդ թափած արտասուացր :

Այս խօսքերս լսելով Յովսէփ՝ անահնկալ ըզգացմունք մը պատեց զինքը . և իր թշուառութիւնները լմննալուն յոյսը՝ սիրտ տուաւ իրեն բանալու Չալիւքայի մէկ սարսափելի անօրէնութեան դէպք մը՝ զորն որ կ'ուզէր յաւիտենական լուծեան մը մէջ թաղել անհետացընել :

Արևը կարմիր կրակ դարձած իր խրճիթի ետևէն ծառերուն խիտ ճիւղերուն մէջէն կ'երևնար՝ երբոր լուսինն ալ զիմացէն արծըթի պէս փալիւրլուն երկընքի երեսը կը շողար և Նեղոսի շարժուն ջրերուն վրայ կը ցոլար : Երթալով թուշուններուն երգերը կը լսէին, ծառերուն տերևներուն շարժումը կը դադրէր, ոչխարներուն միայն մայելները կը լուէին որոնք կշտացած կը քաշուէին դաշտերէն . բայց քիչ ատենէն ընդհանուր լուծիւն մը պատեց, և հանդարտութիւն մը տիրեց բովանդակ բնութեան մէջ : Չալիւքա Յովսէփը քովը առած՝ իւր խրճիթին դրանը մէջ խոտէ նստարանի մը վրայ նստաւ . աչուրները Յովսէփին երեսը տնկած՝ մտադիր կեցեր էր լսելու իրեն գաղանկքը . բոլոր բնութիւնն ալ կարծես թէ լուռ կեցեր էր մտիկ ընելու . - Յովսէփ սկսաւ պատմել :



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Ց Ի Կ

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ



ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Չիս այսպիսի գերութեան մը վիճակ ծնած չէ, ըսաւ Յովսէփ. Յակովբ՝ իմ հայրս Քանանու երկրին հարուստ հովիւն է. հովուութեան վիճակ մը՝ որ հոս արհամարհելի սեպուած է՝ որովհետեւ գերիներու միայն տրուած է, բայց առաքինութեան և ազատութեան գիրկը՝ որոնց հետ սովորաբար միացած է, երջանիկ և պատուաւոր վիճակ մը համարուած: Երբոր աշխարհիւ բոլոր ազգերը կռապաշտութեան մէջ մոլորած կը պառտէին, Աստուած իմ հօրս պապուն երկնալու ինքը իր աստուածային ձայնովը նորէն սորվեցուց անոր ճշմարիտ աստուածապաշտութիւնը, և ինքն ալ նոյն ատենը պարզ մէկ հովիւ մըն էր, արմաւենիի պէս որ իր հովանւոյն տակ կը պահպանէ շատ մը սերունդներ, իրեն հրաշալի առաքինութիւններն ալ օրինակ պիտի մնային ասպազայ դարերու. իր զուլակն ալ նոյն առաքինութիւններուն ժառանգ եղաւ, և անխոփոխ աւանդեց իմ հօրս. ահ, ամիսս,

սկսեաք էր որ իրեն հետ ծածկուէին անհետանային բոլոր՝ նոյն իսկ իր ծնած երկիրներուն մէջ :

Իմ կենացս ալ առջի տարիները՝ երջանիկ օրերու տեսարաններ էին . քաղցր ամուսնութեան մը երկար ատենուան ակնկալութեանը ստուայն էի ես : Իմ հայրս՝ որ արդէն ծերութեան հասակը բռներ գրկեր էր՝ զիս իբրև մէկ փափուկ սիրոյ գեղեցիկ աւանդ մը՝ այնպէս կը սիրէր՝ գուրգուրալով վրաս , և իմ եղբայրներս ալ իրենց բարեկամութեան սէրը շատ առիթներու մէջ ինծի կը ցուցնէին . ստէպ կ'երթայի գանելու զիրենք դաշտերու մէջ . որոնք ոչխարներու պզտի խումբեր կը յանձնէին արածելու . ոչխարներուս հետ ես ալ կը ցատքըսէի դալար խոտերուն վրայ . իմ ձեռքերովս կը պսակէի զանոնք ծաղկըներով , և վրանին կը խանդաղատէի . յուսամ կը ներէք ինծի ասանկ մանր և թեթև նկարագրութիւններու ինչնալուս , բայց ասոնք իմ երջանկութեանս օրերը միտքս կը ձգեն :

Սակայն ամէնքն ալ անցան լըմնցան , ինչպէս որ կ'անցնի կ'երթայ դարունն ալ իր ամէն գեղեցկութիւններովը . տեսակ տեսակ ծաղիկները որ իրարու կը յաջորդեն , անտառներու փոփոխ ներդաշնակ ձայները , կենսատու օդը՝ զորն որ կը շնչէ մարդ պարզ և զուարթ երկնքի մը տակ , և այն քաղցր ուրախութիւնը՝ որ նոր ծլած ծաղիկներուն հետ կարծես թէ մէկ սրտէ մը կը բղխեն , ասոնք բոլոր կը ծածկեն մեր աչքերէն՝ օրերուն ու ժամերուն արագ ընթացքը , ինչուան որ հաուաչելով երթանք հասնինք այն օրերուն ամենէն վերջինին . ասանկ ահա իմ երջանկութիւնս ալ թուաներևութացաւ . . . Ափսոս . անանց կը կարծէի ես իմ երջանիկ բաղքս . դիւրաթեք որթը մէկ ծառի մը միայն սլլուիլը բաւական է շիտակ կենալու , իսկ ես տասը եղբայրներ գորովանօք գրկելու երջանկութիւնը ունէի , և ինչ աւելի ամուր կութընէ :

լու հաստատութիւն կրնար ըլլալ իմ պատանեկու-
թեան օրերուս . քաղցր և դիւրին բան մը կ'երևնար
ինձի սիրելն ալ՝ սիրուիլն ալ . և անցուցած տարի-
ներուս հետ մէկտեղ իմ անոնց վրայ զգացած բա-
րեկամութեան սէրս ալ կը շատնար :

Եւ հիմա կը հաւտան, թէ որ ըսելու ըլլամ . . .
որ ահա ասոնք եղան . . . այս եղբայրներս եղան իմ
թշուառութեանս պատճառ . բերանս առաջ չէր
երթար ըսելու, փափաքելի էր ինձի քեզմէ ալ
ծածկել իրենց չարութեան յիշատակը, բայց դժ-
բաղդաբար՝ բոլորովին կապ ունի իմ խեղճ պատ-
մութեանս հետ :

Այն որ իմ երջանեկութեանս բուն պատճառն
էր՝ նոյնը եղաւ նաև իմ թշուառութեանցս ալ
պատճառ : Հօրս Յակովբայ իմ վրաս ցուցրցած
սէրը՝ դրդուեց զայրացուց եղբարցս սրտին նախան-
ձը, բայց ճշմարիտ ալ է որ զիս ուրիշներէն աւելի
խնամքով կը սիրէր, վասն զի իմ վրաս կը տեսներ
իրեն սիրելի ամուսնոյն զաւակը՝ և իւր ծերու-
թեանն ալ պտուղը . կաղնիի ծառի մը պէս որ իր
նոր արձրկած ճիւղին աճմանը համար իրեն բոլոր
անուշգր կուտայ չինայէր, վասն զի արդէն ալ
անջի հին ճիւղերն շատ անուշգի կարօտութիւն
չունին, ասանկ ալ իմ հայրս ամէն խնամք կ'ընէր
վրաս՝ նոր ծլած միտքս կըթելու և զարգարելու . . .
ինչ գիտնամ, կրնայ ալ ըլլալ որ հայրս համո-
ղուեր էր թէ ես իմ ուրիշ եղբայրներէս աւելի գո-
րովանօք կը սիրեմ զինքը (*):

(*) ԾՆՆ . ԳԼ . ԼԷ . 2-11 : — Յովսէփ Եօթնուտանամայ էր ,
մինչ արածէր եղբարքն հանդերձ խաչինս . և էր կրտսեր ընդ որդիսն Բա-
լայ , և ընդ որդիսն Չելիայ կանանց հօր իւրոյ : Եւ բերէին համբաւ չար
զՅովսէփայ առ Խորայէլ հայրն իւրեանց : Բայց Խորայէլ սիրէր զՅովսէփ
առաւել քան զամենայն որդիսն իւր . քանզի որդի ծերութեան նորս էր . և
արար նմա պատմու ճան ծաղկեայ : Իբրև տեսին եղբարքն նորս թէ սիրէ
զնա հայրն քան զամենայն որդիս իւր , ատեցին զնա . և ոչ կարէին խօսել

Չեմ գիտեր ինչպէս բացատրեմ ցաւերու այն սարսափելի հարուածները՝ որ սիրտս գամուեցան, երբոր իրենց ատելութիւնը յայտնի երևան եղաւ : Իմ դառն արցունքներս սիրելի հօրմէս ծածկելու համար՝ անտառները կը վազէի առանձնութեան մէջ լալու, ուր տեղերն որ ինչուան այն ատենը զուարճութեան երգերուս միայն վկայք եղած էին . անձանօթ էր ինձի ինչուան այն չարագուշակ ժամը, ցաւոց զգացմունքը որ սրտին առջևը ուրախութեան գէմ պարիսպ մը կը քաշէ իմ ճակատիս վրայ, թէպէտ դրուած է եղեր արտասուաց հեղեղներ թափել, բայց ես չգիտնալով ամենեւին՝ արցունքներուս առջի կաթիլներն ալ զիս տակնու վրայ կ'ընէին՝ տեսնելով որ բռնի տխրութեան մը մէջ կը քաշեն կը ձգեն : Չարմացած ես ինձի կը հարցընէի . իրաւ է արգեօք որ եղբայրներս զիս չեն սիրեր, կ'ատեն բացարձակ : Ա՛հ, հայր, կը հառաչէի ինքնիրենս, եթէ քու սէրդ՝ եղբարցս ա տելութիւնը իմ գլուխս կը թափէ, պէտք է ընտրեմ կորսնցընել քու սէրդ, զքե՛զ . . . :

Յակովբ հայրս իր ոչխարներուն մէկ հօտն ալ ինձի յանձնեց, նոյն օրը՝ մեր սովորութեանը համեմատ հանդիսի օր մը եղաւ . հայրս ինքը իր ձեռքովը գլխուս վրայ ծաղիկ պսակ մը գնելով՝ ձեռքս

ինչ ընդ նմա խորազութեամբ : Եւ ետես երազ Յովնէփ՝ և պատմեաց եղբարց իւրոց . և յաւելին ևս ատել զնա : Եւ ասէ ցնոսա . լուարուք զերազն զոր տեսի : Թուէր և թէ որպէս կապէաք ի դաշտի միում . և կանգնեցաւ որայն իմ, եկաց ուղտորդ . և դարձան որայքն ձեր, և պազին երկիր իմում որայոյն : Եւ ասն ցնա եղբարքն իւր . մի թէ թագաւորելով թագաւորեսցնօ մեզ . և յաւելին ևս ատել զնա վասն երազոյն նորա . և վասն բանիցն նորա : Եւ ետես միւս ևս երազ . և պատմեաց հօր իւրում՝ և եղբարց իւրոց : Եւ ասէ, ահա տեսանէի միւս ևս այլ երազ . որպէս թէ արեգակնդ և լուսին՝ և մտասան աստեղք երկիրպագանէին ինձ : Սաստեաց նոս հայրն իւր՝ և ասէ . զի՛նչ է երազն զոր տեսեր . արդ՝ գարով գայցեմք ե՛ս և մայր քո՝ և եղբարք քո, և երկիր պագանիցեմք քեզ : Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր . բայց հայրն պահէր զբանսն :

ալ առաւ հովուական ցուարձ. ետքը պրկէց զիս դուրովանօք, և մխիթարութեան արցունքներ օրհնեալ ծերունւոյն աչքերէն սկսան կաթկըթել: Կ'օրհնեմ զքեզ, Աստուած իմ, ըսաւ, որ իմ կեանքս երկնցուցիր, և այս օրուան հանդիսիս հասուցիր. Յովսէփ, որդեակ իմ, ասկէց ետե տղայ չես դուն, հիմա քու սիրտդ պէտք է որ առաքիլութեան հաստատուն պտուղներ հասցնէ, որոնց սերմանքը խնամքով ցաներ և սնուցեր եմ ինչուան այս օրս. հայրական խնամոցս անարժան չգանուիս, որդեակ իմ. ո՛ր պիտէ թերևս հաճին երկինք՝ այս մէկ մխիթարութիւնս ալ շնորհելու ինձի՝ տեսնալ քու վրագ այս անգին սերմանց աճիլը և պտղաբերելը. աս է միայն սրտիս փափագը: Ահա ասոնք էին խեղճ ծերունւոյն սրտին խղճերն:

Հօրս ձեռքովը պսակուած, ոչխարներս առջևս ձգած, բոլոր ընտանիքս ալ ետևէս, քնարներ և սրինգներ զարնելով՝ ընդարձակ դաշտ մը դացինք: Բոլոր այն օրը ուրախութեան նուիրած անցուցինք, նոյն իսկ եղբայրներս ալ կարծես թէ իրենց անիրաւ ատելութիւնը մոռցած կը տեսնուէին. իմ սիրտս ալ կը խնտար տեսնելով որ տղայութեան երջանիկ օրերը նորէն սկսան երկնալ:

Եղբարցս հետ օրերս անցընելով՝ կը տեսնայի որ անհոգութեամբ երեսէ կը ձգէին իրենց ոչխարներուն խնամքը, իրենք զիրենք անկարգ զուարճութեանց կուտային, ոչ իրենց հարցը Աստուծմէ կը պատկառէին, ոչ իրենց պապերուն յիշատակէն, և ոչ նոյն իսկ իրենց հօրը ներկայութենէն. ո՛հ, ի՛նչ պէս սիրտս կտոր կտոր կ'ըլլար. երբեմն կը վազէի իմ ոչխարներուս հետ անոնց ոչխարներն ալ հոգալու, ջանալով որ անոնց անհոգութիւնը ծածկեմ, և երբեմն երգելով՝ կ'օրհնէի զԱստուած, բնութեան արարիչը, իմ պապերուս առաքիլութիւնները կ'երգէի, որդիական սիրոյ և եղբայրական բարե-

կամուժեան գեղեցկուժիւնները կը հնչեցընէի . և անանկ մը կուգար ինձի որ իրենց սիրտը շարժելու սաստիկ փափաքս՝ սրտէս գորովաշարժ և ներդաշնակ ձայներ և համողիչ խօսքեր հանել կուտար . վերջապէս արտասուալից աչուրներովս ոտուրնին ինկած կ'երգուրնցընէի զիրենք չվտացընելու այն պիսի պատկառելի ծեր մը . բայց անոնց ականջները խլցեր էին իմ երգերուս և աղաչանքներուս դիմացը : Գնահ, կը պոռային երեսէս վեր, պարծէ Զակովբայ առջև ըրած խնամքներդ, երգէ իրեն գիմացը այն ներդաշնակուժիւններդ որոնցմով իրեն սիրտը վաստղեր ես քեզի, և աչուրներէդ թափած արցունքներովդ, իրեն ձեռքովը սրբելու ատենը, հաւատացուր մեր բռնած գէշ ճամբան :

Ես քաշուեցայ, և հօրս երեսէն փախչելով որ արցունքներս չտեսնայ՝ բաց տեղ քամիներու դիմաց նստած, վազած արցունքներս կը չորցընէի, բայց ցաւը սրտիս վրայ տողորուած կեցեր էր :

Այն օրերը՝ իմ մայրս մէկ ուրիշ զաւակ մըն ալ բերաւ Զակովբայ, որ ուրախուժեան տեղ անմըխիթար ցաւեր տարածեց ընտանեաց մէջ, և որուն յիշատակը դեռ ինչուան այս օրս՝ թշուառու թեանցս գիրկը մատնուած օրերս՝ արցունքներ կը վազըրնէ աչքերէս : Դեռ կարծես թէ աչքիս առջևն է՝ այն գորովալից մայրը որ իր դողդրղացող ձեռքերուն վրայ առած այն սիրելի զաւակը, Ահա հիմա մոռցայ իմ երկայն տարիներուս ցաւերը, ըսաւ ծերոյն . սիրելի՛ ամուսին, ահա կը մեռնիմ ես, բայց դուն զիս բողբոլին չես կորսնցըներ . ահա քեզի մէկ նոր Յովսէփ մըն ալ կ'ընծայեմ, ահա ճիշդ իրեն կերպարանքն է . . . Ետքը կէս մեռած աչուրները դէպ ի ինձի դարձընելով, Ահա քեզի ալ, ըսաւ, սիրելի որդեակ, մէկ ուրիշ եղբայր մը, սիրեցէք զիրար . . . Այս ըսելու ատենը գորովալից նայուածքով մը նայեցաւ երեսս, և վերջին շունչը տուաւ :

Ա՛հ, հա՛րկ է արդեօք Յակովբայ և իմ զգացած
ցաւերնիս բացատրել: Աչքերնուս արցունքներովը
լուացինք մօրս պաղած մարմինը և նորածին տղան:
Ուրախ սրտով կը տեսնայի օրէ օր Բենիամինի մեծ-
նալը, այս էր ահա իրեն անուանը, կ'օրհնէի զԱս-
տուած որ տուաւ ինձի եղբայր մը՝ որուն հետ կըր-
նայի փոխադարձ բարեկամութեան սէր մը վայե-
լել:

Գիտուած մըն ալ պատմեմ, թերևս մտադրու-
թեան քիչ արժանաւոր. վասն զի, ինչ գիտնամ,
կարելի է որ այնպիսի երազ մը Աստուծոյ մասնա-
ւոր ազգեցութիւնը ըլլայ: Կը պատմէի Յակովբայ
եղբարցս առջև՝ թէ երազ տեսայ որ մէկ փառա-
ւոր գիշեր մը՝ արևը լուսինը և տասնըմէկ աստղե-
րը՝ երկնքի կամարը կը թողուին դալու ինձի եր-
կըրպագութիւն ընելու: Իմ եղբայրներս այս երա-
զէս գուշակութիւններ ընել ուզեցին, իբրև թէ ի-
րենք պիտի խոնարհին և ես ատենօք իշխանութեան
պիտի հասնիմ: Ընդունայն կարծիքներ, ո՛վ աս-
տեղք՝ այսօրուան օրս դուք երկնքէն իմ նախա-
տինքներուս միայն վկաներ էք:

Բոլոր եղբարցս մէջէն Սիմէոն և Ռուբեն ամե-
նէն աւելի ինձի դէմ ատելութիւն ունեցողներն
էին: Կը ստիպուիմ մասնաւոր յիշել զասոնք, վասն
զի եթէ կարելի ըլլար, բոլորովին կը ծածկէի իրենց
ըրածը, և ոչ խօսք կը բանայի իրենց բռնաւորու-
թեանը վրայ: Ա՛հ, որչափ կը ցաւիմ, մասնաւոր
Սիմէոնի վրայ. վասն զի որչափ ալ սարսափելի է
իմ թշուառութիւնս, բայց իրեն թշուառութեանը
չհասնիր: Իմ կենացս գոնէ առջի տարիները եր-
ջանկութեան մէջ անցան, բայց ինքը ծնած օրէն՝
դառնութեան միայն զգացմունքներ ունեցեր է: Ես
իմ սիրելի անձինքներէս բաժնուած՝ մեր փոխա-
դարձ սէրը մտածելով կը միթարուիմ, իմ թը-
շուառութեանցս անգունդին մէջն ալ բարեկամու-

Թեան քաղցրութիւնը կը վայելեմ, բայց բարեկամութիւնը երբէք Սիմէոնի սիրտը չկրցաւ շարժել ի գութ․ իրեն աշուրները չեն թափած ամենակին այն քաղցր արցունքներն զորոնք զգայուն սիրտ մը ծաղրէն աւելի կ'ընտրէ : Միշտ տխուր ու մաղձոտ՝ միայնութիւն կը փնտռէ, իրեն մաղբերուն մութ գոյնը աւելի զգալի կ'ընէ իրեն բնութեան տխուր բնութիւնը : Գեռ երիտասարդ հասակին մէջ ճակատը ծերութեան ծալքերով ծածկուած է․ ոչ երբէք քնար մը ձեռքը ինկած է, և ոչ երգ մը հընչեցուցած է․ անզգայ սրտով մը կը նայի ծաղկընէրուն և արշալուսոյ գեղեցիկ տեսարաններուն վրայ : Սիմէոն թէպէտ եղբարցս մէջ անդրանիկ չէ, բայց այնպիսի ազգեցութիւն մը ունի ամենուն սրտին վրայ, որ իբրև իրենց գլուխը կը նային վրան : Ռուբեն որ մէջերնին ամենէն մեծն է, աւելի խորամանկ կերպով մը իր ատելութիւնը կը բանեցընէ․ :

Այն օրը՝ որ քիչ մը առաջ պատմած հանդէսնիս կը կատարէինք, և անմիջապէս այն վայրկենին որ հայրս ծաղկընէրով զիս պսակեր էր, մէյմըն ալ յանկարծ բողբոլլին անձանօթ ծաղկահասակ հովիւ աղջիկ մը մեր տնակը մտաւ․ բարակ քօղ մը երեսը կը ծածկէր, բայց իրեն նազելի հասակը և քալուածքը ամենուն աչքը իրեն վրայ կը դարձընէին : Պատկառանքով մը մօտեցաւ Յակովբայ․ Ազնուազարմ ծերունի, ըսաւ իրեն, ցաւ է ինձի որ քու ուրախական հանդէսդ կ'ընդհատեմ, բայց մէկ թշուառ որբ մըն է որ զիմացդ կը տեսնաս, Աբրահամու եղբօրը՝ Նաքովբայ ցեղէն․ դեռ օրօրոցն էր բնակարանս՝ երբոր հայրս կորսնցուցի, ես իմ ձեռուրներովս՝ մօրս աչքերուն արտաւանունքն ալ գոցեցի : Գու առաքինութիւններուդ համբաւը՝ քաջալերեց զիս մօտենալու այս տեղերս․ գթած որբ աղջկան մը վրայ, իմ տհաս հասակիս պատսպարան եղիր․ դառն արցունքներուս

մխիթարանք, յանձն ան ցաւերս սփոփել, ա՛հ թող
որ զքեզ ինձի հայր կանչեմ :

Այս խօսքերս ըսելու ատենը մէկ կողմանէ ար-
ցունքները արծաթափայլ ջրի հոսանքի մը պէս
երեսին վրայէն սահելով կը վազէին, մէկալ կող-
մանէ ալ ոսկեգոյն մագերովը կը սրբէր. Գուսար
իմ, պատասխան տուաւ Յակովբ, դառն ցաւերով
մի տագնապեր սիրտդ. առաքինութիւնը՝ միշտ յօ-
ժար ինամակալ մը գտեր է զիս, վստահութեամբ
խօսէ համարձակ, ըսէ ինչ է քու անուռդ և հօրդ
անունը :

Խեղճ աղջիկը, հօրս սիրալից խօսքերէն սիրա
առած, - Սեղիմա է իմ անունս, ըսաւ, և ինձի այս
կեանքը տուողը է Ուրբէր՝ Բաթուկէի եղբօրը Եղկա
նայի սրգին : - Օրհնեա՛լ ըլլայ իմ հարցս Աստուա
ծը, յանկարծ աղաղակեց Յակովբ. ճանչցեր եմ
Ուրբէրը, երբոր Միջագետաց դաշտերուն մէջ Լա-
բանայ ոչխարները կ'արածէի. Աստուծոյ ընտրեալ
ծառայ մըն էր Ուրբէր. շատ անգամ փափագեր էի
ազգականութեան կապերով միանալ հետը. և ա-
հա կը տեսնամ որ այսօր կը հաճին երկինք իմ սրը
տիս փափաքները լեցընել : Ետքը անոյշ նայուած
քով մը երեսս նայելով. Որդեանկ իմ, ըսաւ ինձի,
ծանր էր ինձի միշտ տեսնալս որ Քանանու աղջիկ
ները իմ տունս կը լեցընեն, դուն միայն զաւելընե-
րուս մէջէն դեռ չունիս ամուսին, ահա Սեղիման
քեզի, որդեանկ, ինքն Աստուած ձեր ամուսնու
թիւնը օրհնէ : Չարմանքի մը մէջ լուռ կեցած մը
տիկ կ'ընէի հօրս ըսածները. վասն զի սրտիս զգաց-
մունքները կարծես թէ հօրս խօսքերը գուշակե-
լով դեռ ինքը չըսած, ներսի դիս սկսեր էին թըն-
դացընել : Քու կամքդ՝ իմն ալ է, պատասխանեցի
մէկէն Յակովբայ. Աստուած շատ անգամ իր կամ-
քը յայտնէր է քեզի, ինքն է անշուշտ, որ այսօր
ալ այս որոշմունքը ազգեց : Նոյն միջոցին մէկ ա-

մօթխած կարմրութիւն մը պատեց Սեւիմայի այտերը : Ընկերացաւ Սեւիմա մեզի հետ ինչուան գաշար . ուր որ մեր հանդէսը կատարեցինք . երկուքներնուս սիրտն ալ կպաւ իրարու , և իմ ծերունի հօրս առջև շատ անգամ կրկնեցինք թէ մեր ամուսնութեան օրը մեզի մեծ երջանկութեան օր մը պիտի ըլլայ :

Արդէն գիշերուան խաղաղ և զուարթ թագուհին երեք անգամ իր արծաթափայլ գունարը լեցուցեր ամբողջացուցեր էր . մեր հարսանեաց համար որոշուած օրն ալ այն էր . . . : Հրաւիրեց Յակովբ իր բոլոր զաւկրները . Ժողովեցանք իր տնակը՝ ուր որ հանդիսին պատրաստութիւնները կը տեսնուէին . դաւար տերևներու վրայ շարուած էին ազնիւ և անուշահամ պտուղներ . չորս կողմը հոտաւէտ ծաղկրներ սփռուած էին . մեծ մեծ դաշխուրաններու մէջ կաթը յորդութեամբ կը վազէր , և մէկ գեղեցիկ ուլ մըն ալ մօրթուած էր . կարգէ դուրս ուրախութիւն մը հօրս երեսին վրայ կը փայլէր : Այն պտուղներուն և կաթով լեցուն ամաններուն մէջտեղը՝ երկու ծաղկէ պսակներ դրուած կային :

Հազիւ թէ հանդէսը սկսեր էր , Յակովբ՝ Սեւիմայի և իմ մէջերնիս նստած , չկրցաւ իր սրտին ուրախութեանը դիմանալ , ոտք ելաւ , դրաւ գլուխնիս ծաղկէ պսակները , և Սեւիմայի ձեռքը իմ ձեռուրներուս մէջ դնելով ըսաւ . Աստուածն Աբրահամու , Աստուածն Իսահակայ , ձեզի հետ ըլլայ . ձեր ամուսնութեանը ինքը վերէն հովանի ըլլայ , և իր օրհնութիւններովը լեցընէ զձեզ . ա՛հ , ուր էր թէ տար ինծի Աստուած՝ մեռնելէս առաջ տեսնալ ձեր զաւկրները ձեզի պէս առաքինի : Ես սրտիս սաստիկ ուրախութենէն ինքզինքս կորսնցուցածի պէս , հօրս գիրկը վազեցի ինկայ , և կը զգայի միայն երեսիս վրայ իրեն աջուրներէն ար-

ցունքներուն թափուիլը՝ զորոնք ուրախութիւնն ու սէրը իրեն սրտէն կը վազցընէին :

Այս սիրոյ զգացմանց գեղեցիկ տեսարանին մէջ Սիմէոն աչուրներէն բարկութեան կայծակներ թափելով՝ յանկարծ ոտք ելլելն ու տնակէն դուրս վազելն մէկ ըրաւ : Անակնկալ զարմանք մը սպառնաց Յակովբայ սիրտը, թողուց զիս գրկէն, և ետնէն երթալով բարձրաձայն՝ Արդեակ իմ, պոռաց իրեն, որդեակ իմ, ասանկ մեզմէ կը հեռանաս, կոյր ատելութիւնը ո՞ւր զքեզ կը քշէ կը տանի . ահա հիմա ատենն էր ամէն բան մոռնալու :

Ծերունուոյն խօսքերը օդուն մէջ ցրուեցան, և Սիմէոն նոյն կատաղութեամբ հեռացաւ գնաց : Մեզմէ մէկն ալ պատճառը չկրցաւ մակաբերել, բայց իրեն բարկութիւնը տակնուվրայ ըրաւ բոլոր մեր հանգէսը :

Քիչ օր անցաւ վրան, և ես դիպուածով մը այն չարագուշակ բարկութեան պատճառը իմացայ : Օր մը դէսպիս անտառը երկըննալու ատենս, յանկարծ բազմութեան մը խառն ձայներ ահանջս դըպան . զգուշութեամբ մը մօտեցայ ձայներուն, և խիտ տերևներուն ծակերէն տեսայ բոլոր եղբայրներս մէկտեղ ժողվուած . Բենիամին միայն պակաս էր մէջերնին : Սիմէոն կատաղութենէն գոյնը նետած՝ բոլոր մարմինը դողն մէջ՝ ոտք ելած կայնած մէջերնին, մէկ բարձր հպարտ սոճի ծառի մը պէս՝ որ կայծակէ զարնուած ջարդութուրդ ըլլալէն վերջն ալ՝ դեռ իր ճիւղերը կը թօթովէ և կարծես թէ օդուն մէջ կը փորձէ շարժել :

Չէ, կարելի բան չէ, կ'ըսէր անոնց, և կարծես թէ դեռ ահանջիս մէջը կը հնչէ այն ահաւոր ձայնը որ բոլոր անտառը կը թնդացընէր . չեմ կրնար չատել Յովսէփը : Ինքը չէ՞ որ մեր հօրը սէրը մեր վրայէն յափշտակեց . դիշեր ցորեկ կ'ամբաստանէ զմեզ Յակովբայ առջև . Յակովբ ալ՝ այն անօրինէն

լրածներուն միայն համեմատ զմեզ կը դատէ . և երբեմն ալ թէ որ ուրախութեան կայծ մը աչուրնէրուն մէջ կը ցոլայ՝ Յովսէփայ համար ըրած հանդէսներուն օրերն են միայն : Այս ասանկ է եղբայրներ . և ես չեմ կրնար այսպիսի մասնաւորութեան մը դիմանալ . ահա դրեր եմ ես միտքս հեռանալու Յակովբայ տնակէն , և մէյմնն ալ յաւիտեան ոտք կոխել չունիմ՝ ես հոն : Արդ դուք ալ կ'ուզէք ինծի հեռուիլ , եթէ Յովսէփայ պէս կ'ընտրէք երթալ մասնել զիս Յակովբայ : Բայց կրնա՞ք մտնալ այն սարսափելի նախատինքներն որ ամէն օր մեր գլուխը կը բերէ . Ռուբեն մոռցար որ դուն ես անդրանիկ մէջերնիս , և առաջ դուն էիր Յակովբայ սրտին սիրելին : Ելէք , հեռանանք այս տեղերէս . մի հոգաք թէ ձեր ելլալ երթալը վըշտացնէ Յակովբայ սիրտը . միթէ բաւական չի՞ միւր թարուիր Յակովբ իր Յովսէփայ և Սելիմայ սիրելիներուն գիրկը :

Այս որ ըսաւ Սիմէոն , ամէնքը մէկ բերան երգմունք ըրին իրեն հետ հեռանալու . այս որ տեսայ պաղեցաւ արիւնս երակներուս մէջ :

Շուտ մը ելան ամէնքը մէկէն Յակովբայ դիմացը եկան , ես ալ ետեններնէն երթալով՝ իրենց Յակովբայ տնակը մանալու ատեն ես ալ անոնց հասայ : Ռուբեն առաջ նետուելով մը ըսաւ . Երկար ատեն է որ կը դանգրտիս իբրև թէ անհոգութեամբ կրնայինք ոչխարները , հրաման տուր ուրեմն մեզի Սիւքեմայ պարարտ խոտերուն վրայ տանինք արածելու զանոնք : Յակովբ չգիտնալով թէ ի՞նչ պատճառի համար արդեօք այս հրամանս կ'ուզէին , սիրով հաւանեցաւ . բայց չկարենալով յանձն առնուլ որ երկար ատեն իրենցմէ բաժնուած մնայ , խօսք առաւ որ նոյն ամսուան մէջ լուսինը իր ընթացքը լմնցնելու օրը՝ իրենց հօրը տնակը դրանուին : Անկէջ ետե եր որ վերջին հրաժարական

բարևները տուին իրարու : Միմէոն աչքերէն կրակ
ցառքեցընելով մօտեցաւ Յակովբայ : Ծերունին
նախ ծանրութեամբ մը նայեցաւ երեսը , բայց մե-
կէն հայրական սիրով մը գրկեց զինքը . Միմէոն ի-
րեն հօրը գրկին մէջն ալ նոյն տխուր և դաժան
կերպարանքն ունէր :

Յաւերուս տաղնապէն արիւն կ'անցնէր սրտէս .
Այ իմ խեղճութեանս , կ'ըսէի ինքնիրենս , հօրս
սէրը ինձի թշուառութեանց միշտ պատճառ պիտի
ըլլայ . ինչ դժբաղդ եմ եղեր ես , որ երջանիկ պի-
տի ըլլամ եղեր եղբարցս երջանկութիւնը տակնու-
վրայ ընելով : Ասոնք էին սրտիս հառաջանքները :
Սեւիմա կը ջանար մխիթարել զիս , իրեն անոյշ
ձայնը սրտիս տրամութիւնը փարատեց . կը յուսայի
որ հեռաւորութիւնը թերևս Միմէոնի դաժան ա-
տելութիւնը թուլցընէ :

Եղբարցս հեռու եղած օրերը խաղաղ և երջանիկ
անցուցինք : Երբոր հօրս որոշած օրը հասաւ , Սե-
ւիմայի հեռ գացինք Յակովբայ տնակը , անյագ սի-
րով մը գրկեց զմեզ իր թևերուն մէջ : Բայց իմ
եղբայրներս դեռ չէին տեսնուեր , հայրս ուզելով
ցուցընէլ անոնց որ անհամբեր զիրենք տեսնելու
կը սպասէր , անոնց ընդ առաջ երթալ ուզեց :

Ելանք տնակէն , ծերունին մէջերնիս մէկ ձեռ-
քը ինձի և մէկաւր Սեւիմայի տուած էր . Բենիա-
մինը առջևնիս ձգած մեր դաշտերը կարեցինք , բա-
ւական հեռաւորութեամբ տեղ առաջ գացինք .
հոն նստաւ Յակովբ մայրի ծառի մը տակ , իսկ Սե-
ւիմա՝ Բենիամինը և ես պզտի բլրակի մը վրայ ե-
լանք՝ որ հեռուէն տեսնալով եղբարցս գալը աւե-
տիս տանք հօրս .

Արևը իր ընթացքին կէսը ըրեր էր , հայրս շփո-
թած վախը պատեց զինքը որ չըլլայ թէ փոր-
ձանք մը իր զաւկըներուն գլխուն հանդիպած ըլ-
լայ , կը զղջար հրաման տալուն վրայ որ հեռանան

իրմէ. կը փափաքէր երթալ անձամբ գտնել զանոնք օգնելու. կամ միիթարելու ինչ բանի որ կարօտուծիւն ունենային: Բայց ես իրենց ուշանալուն բուն ճշմարիտ պատճառը դուշակելով՝ տեսայ որ յոյսերս օդը ելան. և թէ հեռաւորուծիւնն ալ անոնց բարկուծիւնը չէր դադրեցուցած: Աստահ եղիւր ինձի, ըսի հօրս, ես կ'երթամ՝ կը գտնեմ եղբայրներս:

Ինչ կը խօսիս, ըսաւ ծերունին, դուն ալ կ'ուզես զիս թողուլ հեռանալ, ամէն զաւկրներէս զըրկուած պիտի տեսնամ զիս: Գիտեմ որ զքեզ Սիւքեմ խրկելս՝ անձամբ երթալուս չափ կը ծառայէ, կը ճանչնամ քու եղբարցդ վրայ ունեցած սէրդ... բայց թէ որ հարկ ըլլայ սպասել քու դարձիդ ալ ինչպէս անոնցը... Յովսէփ, մեռնելու օրերուս մօտեցած եմ ես, և թէ յանկարծ մեռնելու ըլլամ՝ քանի որ օրհնուծիւնս առած չես, և քու ձեռուրներդ ծերուծեան աչուրներս գոցելու որ չըլան...

Հօրս բերնէն այս խօսքերը լսելու ատենս սիրտս կտոր կտոր եղաւ. Սելիմն ալ մէկ կողմանէ կը յորդորէր զիս ամէն տեսակ սրտաշարժ խօսքերով որ մինակ չթողում ծերունի հայրս: Սարսափելի պատերազմ մը ներսի դիս կը զգայի, բայց եղբայրական սէրը և պարտքս յաղթանակեցին, պագտուեցայ ծերունի հօրս հետ, որ իր գրկին մէջ զիս սըխ մելով կը հառաչէր ցաւագին՝ որոնք սրտիս ինչուան խորը կը թափանցէին: Պագտուեցայ սիրելի ամուսնոյս և պզտի Բենիամինին հետն ալ՝ որ մեր ցաւոցը մասնակից՝ արցունք թափելով թևերը կ'երկնցընէր ինձի:

Սելիմն բոլորովն արտասուալից վազեց ետևէս. Յակովբայ առջև չհամարձակեցայ, ըսաւ, պարզ կերպով ըսել քեզի. ո՞ւր կ'երթաս սիրելի. մտցա՞ր ուրեմն եղբարցդ քեզի դէմ ունեցած ատելու

Թիւնը, կը յուսան գարձընել զանոնք իրենց հօրը տունը. եթէ կը սիրես քու ամուսինդ, Յովսէփ մի Թողուր զինքը :

Կը սիրեմ զքեզ, պատասխանեցի իրեն, բայց կրնամ չսիրել եղբայրներս, Թէպէտ անիրաւ ըլլան ինծի դէմ. ո՞ր պիտէ Թերեւս այս սիրոյ նշանը անոնց սիրաւ շահի : Սիրտ ան, քաջալերուէ Սելիմա. քու ամուսինդ է, մէկ հայր մըն է, ինքը Աստուած է որ զքեզ կը յորդորէ :

Մէկէն կամացուկ մը իրեն գրկէն զատուեցայ և հեռացայ անկից. ստէպ ետևս գարձած հալած աչուրներով մը իմ սիրելիներուս վրայ կը նայէի, որոնք անշարժ կեցած իրենք ալ զիս կը դիտէին. բայց երբոր բոլորովին կորսնցուցի զիրենք աչքէս՝ անհնարին սրանեղու-Թիւն մը պատեց զիս. քանի մը քայլ նորէն դէպ ի ետև վազեցի՝ մէյմըն ալ զիրենք տեսնելու մտքով, անոնք ալ դիմացէն նոյն զգացմամբ մը շարժած դէպ ի ինծի կուգային, հեռուանց իրարու Թևերնիս կ'երկնցընէինք, և սիրոյ անձայն նշաններով կը նայէինք իրարու երկար ժամանակ. կ'ըսէի ինքնիրենս. Ինչո՞ւ աչքերէս այս արցունքները կը Թափին... Ինչո՞ւ սիրտս ներսի դիս կը կտրրտի, Թէ որ սիրելիներէս բաժնուելուս համար է նէ՝ օրուան մը համար է միայն, եղբայրներս տեսնալու համար է :

Նոյն վայրկենին կարծես ձայն մը ներսի դիէս լսեցի՝ Թէ Պարտքդ է որ զքեզ կը կանչէ. մէկէն վերջին անգամ մըն ալ նայեցայ Յակովբայ և Բեհիամինի վրայ, և աչուրներս հայրենական դաշտերու վրայ գարձընելով՝ որ դիմացս բլրի մը վրայ կ'իյնային, գոայ հօրս տնակը : Բարով մնաս, ըսի հեռուէն, երջանիկ բնակարան. յուսամ քանի որ արևը իր ընթացքը կրկին անգամ չէ ըրած՝ քու հովանիիդ տակը իմ վտերս լմնցած տեսնամ : Աս ըսի և ճամբաս շարունակեցի :

Քանի որ առաջ կ'երթայի, եղբայրներուս հետ պագտուելու փափագը իմ տրամուլթիւնս կը թեթևցնէր, վստահութիւն մը կը զգայի որ պիտի չկարենան դէմ կենալ իմ գորովալից սիրոյս, անկեղծ և մտերիմ բարեկամութեանս՝ որուն վկայներ էին սրտաշարժ խօսքերս, նայուածքս, աղաչանքներս և յորդ արցունքներս :

Այս խորհրդածութեանց մէջ էի երբոր մտայ Սիւքեմ, և այն միջոցներուն որ սովորաբար ոչխարները կը քաշուին դաշտերէն, կը յուսայի հոն եղբարցս հանդիպիլ, երազ ընթացքով մը կտրեցի բոլոր դաշտերը՝ բայց մէկն ալ չգտայ հոն (*) : Հար-

(*) ԾՆՆԴ. ԼԷ. 12-36 : — Եւ գնացին եղբարք նորա արածել զխաշինս հօրն իւրեանց ի Սիւքեմ : Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ . ո՛չ աւանիկ եղբարք քո արածեն զխաշինսն ի Սիւքեմ . եկ առաքեցից զքեզ առ նոսա . և ասէ ցնա . ահա առսիկ եմ . ասէ ցնա Իսրայէլ . երթ տես եթէ ո՞ղջ իցեն եղբարքն քո՝ և խաշինք , և բեր ինձ զտոյց : Եւ առաքեաց ցնա ի ծործորոյն Վերրոնի . եկն ի Սիւքեմ . և եգիտ ցնա այր մի մտրեալ ի դաշտին : Եհարց ցնա այրն՝ և ասէ . զի՞նչ ինդրես : Եւ նա ասէ . զեղբարսն իմ ինդրեմ . պատմեալ ինձ ո՛ւր արածիցեն . և ասէ ցնա այրն . բարձին աստի . և լուայ զի ասէին , երթիցուք ի Գովթայիմ : Եւ գնաց Յովսէփ զհետ եղբարց իւրոց . եւ եգիտ ցնոսա ի Գովթայիմ : Տեսին ցնա եղբարքն յառաջագոյն ի հեռաստանէ , մինչև և մտ եկեալ էր առ նոսա . խորհուրդ վատ ի մէջ առին սպանանել ցնա : Եւ ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր , ահա երազաւանսն գայ . եկայք սպանցուք ցնա , և ընկեսցուք ի մի ի զբոց աստի , և ասացուք զազան չար եկեր ցնա , և տեսցուք զի՞նչ լինիցին երազքն նորա : Իբրև լուաւ Ռուբեն , կորեւաց ցնա ի ձեռաց նոցա , և ասէ , մի հարցուք զքա յոզի . և ասէ ցնոսա Ռուբեն . մի հնդցուք արիւն . այլ արկէք զքա ի գուր մի անապատի աստ . և ձեռն մի արկանէք ի նա : Զի թափիցէ ցնա ի ձեռաց նոցա և հասուցտնիցէ ցնա առ հայր իւր : Եւ եղև իբրև եկն Յովսէփ առ եղբարսն իւր , մերկացին զպատմուձանն նորա ծաղկեայ ի նմանէ , և առին ընկեցին ցնա ի գուրն . և գուրն ունայն էր . և ջուր ոչ գոյր ի նմա Եւ նստան ուտել զՏաճն : Զաչա ի վեր բարձեալ տեսին , և ահա ձանապարհորդք իսմայելացիք գային ի Գազառէ . և ուղտք նոցա լի էին խնկովք ստաշնամբ և ուսնիւ . և երթային իջուցանել յԵգիպտոս : Եւ ասէ Յուզա ցեղբարսն իւր . զի՞նչ օգուտ է եթէ սպանանիցեմք զեղբայրն . և թաքուցանիցեմք զարիւն նորա . եկայք վաճառեսցուք ցնա իսմայելացուցն . և ձեռք մեր մի շաղտեսցին ի նմա . զի եղբայր և մարմին մեր է : Եւ լուան նմա եղբարքն իւր : Եւ անցանէին արք մաղխանացիք , վաճառականք : Եւ ձգեցին հանին զՅովսէփ ի զբոյ անտի , և

յուզի՝ ո՛ւր են արդեօք Յակովբայ տղաքը : Պատաս-
խանեցին թէ շատ օրերէ ի վեր այն տղաքը որ այն-
պիսի առաքինի հօր մը անարժան զաւկրներ կը
տեսնուին , այս դաշտերէն քաշուեցան . և թէ չեն
գիտեր հիմա ո՛ւր ըլլաւնին , բայց միայն տեսեր են
որ դէպ ի մօտ անտառը կը մտնեն եղեր :

Այս որ լսեցի խորունկ հառաչանքներ սրտէս
ելան . շփոթած վազեցի դաշտերուն մէջէն , գիշե-
րուան մոռթն ալ կոխելու վրայ էր : Ա՛հ ան ինչ
տաղնասպներ էին որ սիրտս կը ճգմէին . վասն զի
ճամբաս շարունակելով աւելի հեռանալս՝ գիտէի
որ մէկ հայր մը մէկ սիրելի ամուսին մը բիւր տեսակ
անհանգստութիւններով պիտի լեցընէր , որոնց
տեսութիւնը ինծի ալ անոյշ էր և կարօտս ալ զիս
կը մաշէր : Բայց ի՞նչպէս ալ կրնամ կ'ըսէի , ետ
գառնալ առանց եղբայրներս հետս ունենալու .
կարելի է ըսել Յակովբայ թէ Սիւքեմէն ելեր
դպեր են , և ո՛ւր ըլլաւնին յայտնի չէ : Երգմամբ
չափ միտքս դրի որ ընտրեմ մանաւանդ մեռելը
քան թէ հօրս գիրկը չգարձընել իր զաւկրնե-
րը : Չսպասեցի որ օրը լուսըննայ , գիշերը իր մոռթ-
քօղը տարածեր էր ամէն տեղ՝ երբոր ես անտառը

վաճառեցին զՅովսէփ իմացեացուց քսան դահեկանի . և իջուցին զՅովսէփ
յԵգիպտոս : Իարձաւ Ռուբեն ի գուրն , և ոչ եզիտ զՅովսէփ ի գրի անդ :
Պատառեաց զճանդերսս իւր . և դարձաւ առ եղբարսս իւր՝ և ասէ . պատա-
նակն չէ անդ , և ես արդ յո՞ երթայց : Եւ առեալ զպատմուճանն Յովսե-
փայ՝ զենին ուլ այժեաց , և թաթառեցին զպատմուճանն յարեանն : և ա-
ռաքեցին զպատմուճանն ծաղիկայ տանել առ հայրն իւրեանց . և ասեն .
զայդ գտաք . ծանխր եթէ որդւոյ քոյ իցէ պատմուճանդ եթէ ոչ : Եւ ծա-
նեալ զնա՝ և ասէ պատմուճանս որդւոյ իմոյ է . գազան չար եկեր զնա ,
գազան յափշտակեաց զՅովսէփ : Եւ պատառեաց զճանդերսս իւր , և քուրձ
զդեցաւ ի վերայ միջոյ իւրոյ . և սուգ ունէր ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս
բազումս : Եւ ժողովեցան ամենայն ուստերք նորա՝ և դատերք նորա , և ե-
կին միսթարել զնա , և ոչ կամէր միսթարել . ասէ՛ զի իջից ես սովին սգով
առ որդի իմ՝ ի դժոխս . և ելաց զնա հայրն իւր : Իսկ մաղիսնացիքն վա-
ճառեցին զՅովսէփ յԵգիպտոս Պետափրեայ ներքինոյ դահճապետի Փա-
րաւոնի :

մտայ, և որ կողմը երթալս չգիտնալով կը պոռայի միշտ • Որդիք Յակովբայ, եղբարք իմ, ուր էք • ձայնս բոլոր անտառը բռներ էր, և կարծես թէ մէկ գառնուկ մըն էր որ մայրը կորսնցուցած ցաւա գին կը պոռար :

Ինչպէս համարձակեցար Յովսէփ, ըսաւ Չաւիւբա սարսափած՝ Յովսէփայ խօսքը կտրելով, գուն մինակ գիշերուան մթութեան արհաւիրքներուն մէջ գբեղ ձգել՝ այնպիսի անառի մը մէջ • գող ելան օսկրներս՝ չըլլայ թէ գազան մը հան գիւրած ըլլայ քեզի : Փախան առջևէս, պատասխանեց Յովսէփ, բայց ափսոս որ գազաններուն վրայ չգտած անգութ սիրտը՝ իմ եղբարցս վրայ գտայ եղկելիս...

Վերջապէս անծանօթ մարդ մը ձայնս լսելով եկաւ գտաւ զիս, և իմացուց որ եղբայրներս գէպ ի Դովթայիմ գացեր են • երկնային հրեշտակ մը երևցաւ ինձի որ կարծես թէ եկեր էր ինձի յօգնութիւն : Ահ հոգիդ սիրես, ըսի իրեն, թէ որ Յակովբայ գաշտերէն անցնելու ըլլաս՝ գնա մտիր մէջ մը ծերունւոյն տնակը, փարատէ իրեն և իմ ամուսնոյս մտքէն ընդունայն վախերը • ըսէ իրենց, որ քիչ մը ուշանալուս պատճառը՝ եղբայրներուս ետեէն պտըտիլս է միայն :

Իսկ ես ճամբաս առաջ տանելով և բոլոր գիշերը քալելով՝ առտուն կանուխ Դովթայիմ գաշտը հասայ : Մէկէն զարկաւ աչքիս որ բիւրաւոր ոչխարներ ամէն կողմէ կուգային հոն, պահապան շուները՝ ուրախութեամբ վազելով քովս եկան և ցատքըտելով չորս դիս կ'ելլային : Ահա վերջապէս գտայ եղբայրներս՝ պոռացի ուրախութեամբ մը, երթամ՝ պլուրիմ վզերնին : Վազեցի գէպ ի իրենց, և ամենէն առաջ Սիմէոնն էր որ գիմացս ելաւ • կատաղութիւն մը աչուրներուն մէջ բռնկեցաւ, Այ յանդուգն, պոռաց երեսէս ի վեր, ինչուան

հոս ալ համարձակեցար գալու ետևէս. ես երեւորդ չտեսնելու համար միայն հոս քաշուեր հեռացեր էի. Յակոբը զքեզ խրկեց որ գաս մեր բռնած ճամբան քննես, մեր բրածը չբրածը լրատես. հեռացիր արդար հարուածէս, կորսուէ՛ գիմացէս : Աս ըսելով՝ ուժով մը ետ հրեց զիս :

Կը խոստովանիմ՝ որ ուզեցի փորձել մէյմը աւոր ատելութեանը յաղթելու. ուստի ինքը զիս ետ հրելու ատենը՝ ես ուժով մը թուերուս մէջը ասի գրկեցի զինքը. բերանս բռնուած խօսք մը չէր ելեր. ուժով մը բռնած զինքը կը սխմէի գրկիս մէջ՝ բարեկամութեան սիրոյ միայն ներելի բռնութեամբ մը :

Բայց ինքը զգածուելու տեղ՝ աւելի կատղեցաւ. Սիրոյ թէ ատելութեան, ըսաւ, հանդէս է ասիկայ. ողորմելի՛ թշնամի, կեղծաւորութեամբդ յաղթեցիր ինծի, ուժով ալ կարծես նուաճել զիս : Այս ըսելով՝ ուժով մը թօթվեց զիս, ելաւ գրկէս, և դանակը քաշելն ու վրաս յարձրկելն մէկ բրաւ. անշարժ կեցեր էի ես, բայց Ռուբէն փութաց բռնեց թուէն և արգիլեց հարուածը :

Ասոր վրայ ամէնքը թափեցան վրաս, և իմ վիճակս կ'որոշէին. Սիմէոնի կատաղութեանը չափ չկար. յարձրկեցաւ վրաս, և առանց վայրկեան մըն ալ աղաչանքս մտիկ ընելու՝ քաշկուտելով տարաւ ձգեց զիս ջրհորի մը մէջ, բայց մէջը ջուր չկար :

Արևը իր ընթացքին կէսը ըմպընելու վրայ էր, և եղբայրներս ուրախութեան հանգէսներ կ'ընէին. երբոր ես տկարացած և կէս մեռածի պէս երկնցեր էի քարի մը վրայ և մահուանս վայրկենին կը սպասէի : Մէյմըն ալ յանկարծ երևցաւ Սիմէոն ջրհորին բերանին քով, հրամայեց որ դուրս ելլամ, և օգնեց ինծի ելլալու. կատաղութիւնը դեռ իրեն աչուրններուն մէջ կը փայլէր, բայց կարծէի թէ վերջապէս գթութիւնը դրդեց իրեն սիրտը :

Դողզըզալով մը կ'երթայի ետևէն ինչուան հասանք ուր որ բոլոր եղբայրներս ժողովուեր էին . հոն նոր զարմանք մը և անակնկալ այլայլութիւն մը խեղքս թուցուց գլխէս . տեսայ մէջերնին քանի մը օտարականներ որ ոսկի կը համրէին եղբարցս . մէկէն սիրտս կաթեց գլխուս եկած զժբազգ վիճակը , յուսահատ չորս դին աչուրներս կը դարձնէի՝ Ռուբենը կը փնտռէի . բայց անիկայ աներևութացեր էր՝ չկար մէջ տեղ : Յանկարծական տագնապն ու հառաչանքներս՝ ի սկզբան ձայնս խղղեցին , բայց վերջապէս սրտիս ցաւերուն ալ յաղթելով՝ այս գառնութեան խօսքերը ելան բերնէս .

Թէ որ ձեր սիրտը , ո՛վ որդիք Յակովբայ , զգածուելու ըլլար մէկ եղբօր մը ողորմ նայուածքէն , հառաչանքներէն և յորդ արցունքներէն՝ դոնէ անմեղազիր կ'ընէի զձեզ . իմ տղայութենէս ի վեր ձեզի ցուցրցած անկեղծ բարեկամութեանս այս է փոխարէնը որ այս օրուան օրս ինձի կը ցուցընէք . ես իմ հօրս անակէն ելայ հեռացայ՝ զձեզ հոն դարձնելու համար , և Սիւբեմ՝ չգտնալով՝ ինչուան հոս եկայ ետևներնէդ , և աւելի ալ հեռուն երթալու պատրաստ էի . եղբայրական սէրը բերաւ զիս ձեր քովը , և այսպիսի՛ ընդունելութիւն ձեզմէ պիտի գտնամ եղեր . . . Ո՛հ , ինչո՞ւ բարբարոս անգթութեամբ մը եկեր էք վրաս յափշտակելու զիս մէկ հօր մը , մէկ ամուսնոյ մը գրկէն . . . եղբայրներէս . վասն զի դեռ ինձի եղբայրներ կը ճանչնամ զձեզ : Բայց դուք ի՛նչպէս կը համարձակիք ծախելու բուն ձեր արիւնը . ուրեմն ձեր դիմացը աւելի յարգ ունի ոսկին քան սրբազան և անոյշ կապերն եղբայրական սիրոյ . . . Սիմէոն , ինչո՞ւ արգիլէց Ռուբեն ձեռքդ իմ արեանս մէջ թաթխելու . բայց ահա հեռու է Ռուբեն , հանէ դանակդ , ահա սիրտս . լաւ է ինձի մեռնիլ քան թէ գերութեան վիճակ մը , քան ասորիլ հեռու իմ սիրելիներէս :

Եթէ իմ թշուառութիւններս ձեր սիրտը չեն շար
 ժեր, եթէ իմ արցունքներուս և հառաչանքներուս
 յիշատակը՝ որոնք գերութեան շղթաներու մէջ
 իմ կենացս օրերը պիտի կրծեն մաշեցրնեն՝ ձեր
 սիրտը չեն դրդեր, բայց ինչպէս անողջայ պիտի
 կարենաք գտնուիլ Յակովբայ ցաւերուն ալ: Հօր
 մը ուրեմն արցունքները կ'ուզէք և կ'աշխատէք
 վաղցրնել, խեղճ ծերունի մը՝ իր գերեզմանին մէջ
 հրէ՛լ գլորտը կէ՛լ... Եղճիկ ինծի, ամէնքնիդ ալ ու
 րեմն զինուեր ելեր էք զիմացս... Նեփթաղիմ, ան
 սիրեցեալը իմ Նեփթաղիմ, դուն որ մանկութեան
 երջանիկ օրերուս ընկեր էիր, և բնութեամբ գը
 թած, արցունք թափելով միայն գո՛հ կ'ուզես ըւ
 լալ այս դառն վայրկենիս մէջ: Սիմէոն, եղբայր իմ,
 որ այս քաղցր եղբայրութեան յիշատակը միայն
 պէտք էր սիրտդ շարժել ի գութ, դուն էիր որ կը
 սիրէիր զիս երբեմն, ես ոչ երբէք ատեր եմ դքեզ,
 և ոչ ալ պիտի ատեմ՝ նոյն իսկ այս բարբարոս
 կերպով զիս ծախելէդ ալ ետև. բայց գիտցիր ըս
 տուգիւ որ խղճմտանքիդ խայթերը պատրուտեն պի
 տի քու սիրտդ. անհ, շնորհէ ինծի իմ ազատու
 թիւնս, և ես կը մոռնամ ամէն բան. հօրմէս ալ կը
 ծածկեմ՝ յաւիտեան այս չարագուշակ գաղտնիքը,
 յուսահատ արցունքներս սրբելով՝ սիրով կը սըւ
 լուիմ քեզի, կը դառնանք մեր հայրենի դաշտերը,
 և մեր փոխադարձ սիրոյ բարեկամութեամբը Յա
 կովբայ ծերութիւնը կը մխիթարուի, և իր կենաց
 օրերը կ'երկընման:

Ասոնք ըսելու ատենս՝ թևերս երկնցուցի իրեն,
 և նայուածքս՝ աղաչելու ատենս՝ կը վկայէր սրտիս
 և սիրոյս անկեղծութեանը:

Եղբայրներէս շատերը զգածուած կը տեսնու
 էին, Նեփթաղիմ առաջ նետուեցաւ զիս պաշտպա
 նելու, և նոյն իսկ օտարակամներն որ զիս գնէր
 էին սրտերնին ելաւ, և գնելնուն վրայ կարծես թէ

կը զըջային : Բայց ո՛հ, ի՛նչ մեծ ազդեցութիւն ունի եղեր ստրկի ագահութիւնը մարդու սրտին վրայ : Սիմէոն մէջերնին անցաւ, և առած ստրկէն մաս մը անոնց ետ դարձրնելով՝ սրտերնին շահեցաւ՝ բերաննին գոցեց • ետքը ահաւոր նայուածք մը բոլոր իր եղբայրներուն վրայ ձգելով՝ սպառնացաւ Նեմի թաղիմայ իմ վիճակս իրեն գլուխն ալ հասցընել : Մէկէն նոյն միջոցին քաշեցին առին վրայէս հագած զգեստս՝ զորն որ Սելիմա իր ձեռքովը հիւսեր էր • և գերիի զգեստ մը հագցուցին ինծի :

Երբոր ամէն կողմանէ յուսահատ ինքզինքս տեսայ, Դժբա՛ղզ վայրկեան, տագնապեալ սրտով մը պոռացի, ո՛վ դառն ժամ, որ կարծելով հոս եղբայրներ գտնալ՝ հորս գրկէն բաժնուեցայ : Ո՛վ հայր իմ, ի՛նչ գոյժ է որ պիտի լսես • ո՛վ ասկէց ետեւ քու ծերութեանդ մխիթարանք պիտի ըլլայ : Ո՛հ սիրելիդ իմ Սելիմա, երանի՛ թէ քու խորհրդիդ հետեւած ըլլայի, ես հիմայ երջանիկ պիտի ըլլայի մեր տնակին մէջ . . . :

Ետքը դառնալով նորէն եղբայրներուս, Ահա վերջին անգամ մըն ալ, ըսի իրենց, կ'երդնում ձեզի Աբրահամու ձեռքովը շինուած տաճարին վրայ, մեր պապերուն դամբաններուն վրայ, Յակովբայ ձերմիցած մազերուն վրայ, ձեր ամուսիններուն, ձեր զաւկրներուն վրայ, բոլոր բնութեան վրայ, և նոյն իսկ այն Աստուծոյ վրայ զորն որ դուք ալ կը պաշտէք, որ տիեզերաց տէրն է, որ զմեզ ստեղծեր է եղբարք՝ որն որ մեր սրտին մէջ փորեր գրեր է եղբայրական սիրոյ սրբազան օրէնքը, և որն որ այս վայրկեանս ալ վերէն՝ երկնքէն կը նայի մեզի . . . Անօգնւտ աղաչանք • ալ ասկէց ետեւ թող ինծի համար չսեպուին ըրած աղաչանքներս • դարձէք ձեր հայրենական սահմանները, հոն մէյմըն ալ տեսնալիք չունիք մէկ եղբայր մը որ ատելի էր ձեզի • դարձէք որ Յակովբ՝ իր զաւկրները կորսնցը-

նեղուն ցաւը չի քաշէ... դուք իրեն ծերութեանը միտարանք եղէք... :


Այս որ ըսի, վազեց Նեփթաղիմ ինկաւ գիրկս, երկուքնիս ալ կուլայինք ու կը հառաչէինք : Ուրեմն դեռ հոս ունիմ եղեր մէկ եղբայր մը, ըսի իրեն. վայրկեան մըն էր այն որ սարսափն ու խընդութիւնը միացեր էին իրարու հետ... Նեփթաղիմ լսէ ինձի, գիտցիր որ չկայ Յովսէփ ասկէց ետև, իմ վերջին փափաքս յիշելք մը մնայ մտքիդ մէջ... Նեփթաղիմ սրբէ արցունքներդ : Թէ որ իմ խեղճութիւնս սիրող շարժեց՝ երգունցիր ինձի հայրս ձեռքէ չի թողլու. իրեն ծերութեանը նեցուկ եղիր. միտարէ՛ թէ որ կարելի ըլլայ իրեն ցաւը. ծածկէ իրմէն զիս այս թշուառութեան մէջ ձգողները. խեղճ ծերունին գիտեմ որ այսպիսի ասհար հարուածի մը չկրնար դիմանալ... Քեզի կը յանձնեմ Սելիմա իմ սիրելի ամուսինս... ան Աստուած, թշուառութիւններս կը ծանրանան, կը ճզմեն զիս... Նեփթաղիմ ջմունաս Բենիամինս ալ... :

Կ'ուզէի դեռ խօսքս առաջ տանիլ, բայց Սիմէոն քաշեց գրկէս Նեփթաղիմը և բոլոր եղբայրներս հեռացան գացին, և օտարականներն բռնութեամբ արգիլեցին զիս հոն : Այնչափ սիրոյ կապերը փրջընելով՝ զիս բռնելու ատեննին՝ կարծէի թէ սիրոս հազար ու մէկ կտոր կ'ընեն : Հառաչելով Յակոբբ, Սելիմա՛, Բենիամին՛ կը կանչէի միշտ. արցունքները գետի պէս կը վազէին աչքերէս, մէյմը դէպ ի երկինք կ'ալողակէի. մէյմըն ալ ցաւագին հառաչանքներ կը հանէի : Աչուրներս մթընցան, ծնկուրներս թուլցան՝ ինկայ գլորեցայ գետին. զԱստուած կ'օրհնէի կարծելով թէ մահուանս ժամը հասեր էր. բայց այն օտարականներուն խնամքովը՝ թիչ մը աչուրներս բանալով, չորս զին կընայէի, հայրս կը փնտռէի. ուրիշ մարդ չտեսայ քովս՝ բայց այն

անարդ վաճառականներն որ մարդկանց ազատութիւնը կը կողոպտեն :

Ճամբայ ինկանք • աչուրներս մթընցած բան մը չէին տեսներ , ընդունայն տեղը հարցմունքներ կ'ընէին ինծի • սիրտս և հոգիս ցաւերու մէջ միայն ընկղմած կը տագնապէին : Այնպիսի ողորմելի վիճակի մը մէջ , առանց իմանալու թէ ո՞ր տեղերէ կ'անցնինք՝ զիս հոս բերին ձգեցին , և Պուլթովիս առաւ զիս քու գերիներուդ մէջը խառնեց :

Ահա այս է իմ թշուառութեանս պատմութիւնը : Իմ ընցուած սիրտս այսօր քեզի առաջին անգամ իր ցաւերը բացաւ յայտնեց , ինչուան այս վայրկեանս դեռ ուրիշ մէկու մըն ալ չեմ պատմած իմ վիշտերս՝ թէպէտ և գիտեմ որ թշուառներուն մի միայն մխիթարանքն այն է : Ահա յայտնեցի քեզի իմ եղբարցս չարութիւնն ալ • տարակոյս չկայ որ խեղճերն հիմայ սարսափելի խղճմըտանքներու ձեռք մատնուած են... բայց դու կուլաս իմ խեղճութեանս վրայ • աս զգայուն սիրտդ մէկ երջանիկ հետևանք մը գուշակել կուտայ ինծի • դու իմ յուսահատ կեանքս պիտի նորոգես • և նորէն ուրախութիւնն ալ պիտի ծագես իմ հօրս արնակին մէջ :



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Յ Ի Կ

Ե Բ Գ Ե Բ Բ Ո Բ Գ

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

THE HISTORY OF THE

Faint, illegible text below the title, possibly a subtitle or introductory paragraph.

OF THE

Faint, illegible text below the second section header.

Faint, illegible text below the third section header.

Faint, illegible text below the fourth section header.

Faint, illegible text below the fifth section header.

Faint, illegible text below the sixth section header.

Faint, illegible text at the bottom of the page, possibly a concluding paragraph or page number.



ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Զալիքա ելաւ պալատը քաշուեցաւ և կ'ուղէր
 քիչ մը պառկիլ քնանալ, բայց Յովսէփայ դէմքին
 պատկերը միշտ աչքին առջևը դալով՝ քունը կը
 փախցընէր աչուրներէն: Այնպէս մը կուգար իրեն
 որ դեռ այն թշուառ երիտասարդին խրճիթին մէջ
 կեցած՝ աչուրները անոր երեսը տնկած, և իրեն
 անոյշ ձայնէն ականջները զմայլած՝ իրեն սրտա-
 շարժ պատմութիւնը կը լսէր. կը կարծէր որ Յով-
 սէփ դեռ աչքին առջև կեցած արցունք կը թափէ. ա-
 սով իր սիրտն ալ կ'ելէր և աչուրները կը լեցուէին,
 և կարծելով որ Յովսէփայ հետ մեկտեղ է որ կու-
 լայ՝ այն արցունք թափելուն մէջն ալ զուարթու-
 թիւն մը կը զգար: Բայց երբոր Յովսէփայ պատ-
 մութեան այն կտորը մտքին առջևն եկաւ որ զբաց-
 մամբ մը կը նկարագրէր Սելիմայի փափուկ և ա-
 նոյշ սէրը՝ արցունքները ցամքեցան աչուրներուն
 մէջ, մէկ մահացու թոյն մը տակնուվրայ ըրաւ սիր-
 տը, երևակայեալ զուարճութիւնը՝ աներևութա-

յաւ, ինքնիրեն գալով իմացաւ որ մինակ է, սիրտ
 չէր ըներ և ոչ հոգւոյն տագնապեալ զգացմունք-
 ները քննելու: Այսպիսի անհանգիստ զգացմանց
 մէջ ինկած կը տագնապէր Չալիւքա:

Յովսէփ իր տնակը հասնելով՝ աչքին արցունք-
 ները սրբեց՝ և կարծէր թէ վերջին կաթիլներն էին
 որ իր թշուառութեանցը համար թափեր էր: Եր-
 ջանիկ յոյսերով սիրտը լեցուած՝ քունը տարաւ.
 Իր գերութեան օրէն ետև՝ այս առաջին անգամն
 էր որ քունը իր անուշութիւնը կը թափէր Յով-
 սէփայ աչուրներուն վրայ: Արդէն գեղեցիկ երազ-
 ներ զինքը առած իր հօրը՝ իր ամուսնոյն գիրկը կը
 թուցնէին: Այն գեղեցիկ տեսարաններուն մէջն
 էր երբոր արթնցաւ Յովսէփ, և մէկէն ելաւ իր
 տնակէն դուրս ցատքեց:

Արևը մայր ծառերու մութ անտառի մը ետևէն
 կ'երէր կը բարձրանար, իր ճառագայթներովը կար-
 ծես թէ ոսկեգոյն ներկելով բոլոր ծառերուն պը-
 լուխները, ամբողջ անտառը երկնային կրակով մը
 զուարթացած և ոգևորեալ՝ անոյշ բուրմունքներ
 կը տարածէր օդուն մէջ, որոնք զեփիւռը քշելով՝
 կը տանէր դաշտերը կը տարածէր. երբիչ թռչուն-
 ներն ալ անտառին գիրկը պատապարուած՝ իրենց
 բնակարաններէն մէկ այնպիսի անոյշ ներդաշնա-
 կութիւն մը կը հնչեցնէին, որ կարծես թէ հե-
 առանց հորիզոնին եղերքներէն ձայնը կուգար,
 ուսկից որ օրուան աստղը կը ծնանէր:

Այս վտեմ և սրտաշարժ տեսարանը՝ Յովսէփայ
 սիրտը գրաւեց, նայելէն չէր կշտանար, առաւօ-
 տեան առողջ օդը ծծելէն չէր յագենար, և երկար
 ատեն անոյշ ձայները լսելէն ականջները գոհ չէին
 ըլլար: Նման էր մարդու՝ որ երկար և վտանգաւոր
 հիւանդութենէ մը ելելով՝ կարծէ թէ իրեն հետ
 բովանդակ բնութիւնն ալ նոր կեանք մը կը սկսի,
 բոլոր մտադրութիւնը կ'երթայ ամէն տեսարան

ներուն վրայ զորոնք առաջ անգգայ աչքով մը տեսեր և անցեր էր, խեղճ՝ մարդը չգիտեր որ առողջութեան շնորհքն է որ կը վայելէ. նոյնպէս ալ Յովսէփի այնպիսի զգացմանց մէջ զմայլած ինկեր էր, որոնց վայելքը երկայն ատեն իր սիրտը բոլորովին կորսնցուցեր էր : Ո՛վ գեղեցիկ արև, պուռայ սրտին ուրախութենէն, դուն որ իմ գերութեանս վերջին, օրը կը ծագես, ահա այսօր զուարթ աչքով մը քու սիրուն ճառագայթներդ կը վայելեմ. այսօր՝ առանց արցունք թափելու կը տեսնամ զքեզ որ կ'ելլես լուսաւորելու այն օրհնեալ դաշտերն ալ՝ որոնց մէջ իմ ընտանիքս կը բնակին : Գեղեցիկ արշալոյս, ասկէց ետև մէյմըն ալ պիտի չծագիս՝ որ իմ ուրախութեան երգերս չլսես :

Այն երջանիկ օրն ալ կը սահէր կ'անցներ և լմնալու մօտեցեր էր, և Յովսէփի անհամբեր դեռկեցեր իր մենաւոր խրճիթին մէջ կը սպասէր որ պիտի գան իր գերութեան շլթաներէն ղինքը արձրկելու : Սկսաւ գիշերն ալ իր մութ քօղը ձգելու երկրիս վրայ. բայց Յովսէփի կարծէր թէ կ'երկըն նայ՝ լմնալիք սիւտի չունենայ այնպիսի օր մը զորն որ իր աղատութեանը օրը կը սեպէր : Չկրցաւ ելլել կեցած տեղէն և քաշուիլ իր անակը՝ բայց երբոր մութ խաւարը տիրեց բոլոր երկրիս վրայ : Երկրորդ օրն ալ նոյնպիսի ակնկալութիւններով անօգուտ սպասելէն սիրտը լքաւ. անցան վրան դեռ ուրիշ շատ օրեր ալ, բայց Յովսէփիայ գերութիւնը դեռ չէր անցած : Խեղճին բոլոր յոյսերը ցրուեցան. ուրախութիւնը սրտին մէջը մարեցաւ, և իր դառն տրտմութիւնը նորէն պատեց վրան : Բայց Չալիւքայի կերպին և ըսածներուն խելքը չէր հասներ. Ուրեմն արցունքները, ըսաւ, կեղծաւորեալ և վայրկենական միտթարանք մըն են՝ որ զգայուն սրտերը կ'ենթադրեն դնել մեր խեղճուէցը գիմաց :

Չալիւքայի սրտին մէջ կրակ մը վառուեր էր,

և այն կրակը մարելու համար միտքը դրեր էր հե-
 ոանալ իրմէ . բայց անհնար եղաւ որ այն դաշտե-
 րէն ալ թողու քաշուի . իր պաշտօնն և իր պար-
 տիզին մէջ փակուած կեցած՝ կը հեռանար այնպի-
 սի տեղերէն ուր որ կրնար զինքը հանգիստընել .
 բայց անօգուտ ջանք . վասն զի միշտ կարծէր որ իր
 ետեէն կը պտըտի . տերևներուն թէթև շարժ-
 մունքներուն անոյշ ձայներն որ կը լսէր , կարծէր
 որ անոր հրեշտակային ձայնն է որ ականջը կը հաս-
 նի : Ամէն անգամ որ գիշերուան լուսթեան մէջ
 սոխակի մը տխուր հառաչանք մը կը լսէր , կամ ջրի
 մը ծանր ընթացքի ձայն մը կ'առնէր , կը կարծէր
 որ անոր հառաչանքներն են՝ անոր ողբալու ձայ-
 ներն են որ իր ականջը կը զարնեն . կը սկսէր ան
 ատենը ինքզինքը նախատել՝ որ խեղճին թշուա-
 ռութիւնները լմնցընելու տեղ աւելի կը ծանրա-
 ցընէր , և նոր արցունքներ թափել կուտար իրեն :
 Ինչուան երբեմն երևակայութեանը մէջ ընկզմած՝
 առանց անդրադառնալու գէպ ի Յովսէփայ խրճի-
 թը ելէր կ'երթար , բայց ճամբան յանկարծ ինքն-
 իրենը դառով՝ կը փութար ետ դառնալու :

Մէկ իրիկուն մը Զալիւքա պտըտելով ինչուան
 անտառին մուտքը հասեր էր . ուզեց ետ դառնալ
 այն տեղերէն , բայց ներսէն մէկ աւելի զօրաւոր
 բռնութիւն մը զգաց՝ որ զինքը չթողուց ետ դառ-
 նալու . ծնկուրները դող ելած սկսաւ կամաց կա-
 մաց գէպ ի խրճիթը մօտենալ , լուսինն ալ փառա-
 ւոր զարկեր և լուսաւորեր էր իր ճամբան :

Շուտ մը հասաւ հոն , և թէպէտ բնական կա-
 տաղի սիրտ մը ունէր , բայց այն գերիին գիմացը
 բոլոր մարմինը դող ելած կեցեր էր : Յովսէփ՝ զա-
 նիկայ որ տեսաւ , նախ զարմանք մը պատեց զինքը .
 ետքը սիրտ ընելով ըսաւ . Ահ , եկեր ես անշուշտ
 իմ ազատութեանս աւետիքը տալու ինձի , երբոր
 ես չիտակն ըսելով կը կարծէի որ մոռցեր ես զիս :

Չալիւքա վայրկեան մըն ալ լուռ կենալէն ետքը, հառաչեց սրտէն... Ե՛ս, ըսաւ, քեզ մոռցած ըլլամ. քու թշուառութեանցդ պատկերը միշտ աչքիս առջևն է. բայց կարելի չէ՞, ըսաւ խօսքը բերնին մէջ ծամծրմելով մը և աչուրները վար առնելով, կարելի չէ՞ որ քու վշտերդ ըմբնան, բայց մենք ալ զքեզ կորսցընելու ցաւը չքաշենք: Դուն ալ ի՞նչպէս առանց սրտցաւութեան մը պիտի կարենաս զմեզ թողուլ: Հոս բարեկամներ ունիս դուն, կրնաս բաժնուիլ անոնցմէ՝ մէյո՛ւ ալ զանոնք չըտեսնելու յուսով...: Աշխարհիս վրայ երբեմն արեւակցութեան կապերէն աւելի զօրաւոր կապեր մարդուս առջևը կ'ելլան՝ որոնք ամենէն դառն գերութեան վիճակն ալ կրնան բոլորովին անուշցընել, և մոռցընել տալ: Թէ որ ուրիշ բան մըն ալ չկայ որ զքեզ կարենայ համոզել, բայց չէ՛ս վախնար որ անգութ եղբայրներ կրնան քեզի որոգայթ մը լարել. կրնաս չտարակուսիլ որ իրենք երբոր տեսնան թէ իրենց ատելութեանն ալ յաղթեցիր, քու կեանքդ վերցընելու ետեւ չըլլան: Անշուշտ քու արիւնդ պիտի մտնան... անհ, կը սոսկամ ես... և ես պատճառ պիտի գտնուիմ որ զքեզ գերութենէդ խալըսելով իրենց բարբարոս անգթութեանը զոհ պիտի ըրած ըլլամ: Եւ դուն եթէ այն երջանկութիւնն ալ ունենաս որ մահուան հարուածէն խալըսիս, բայց ես քեզմէ հեռու՝ քու վիճակիդ անտեղեակ, սիրոս տակնուվրայ՝ միշտ պիտի կարծեմ քու արիւնալից տեսարանդ աչքիս առջևը տեսնալ...:

Ահ, մի վախնար ամենևին, կտրճութեամբ մը Չալիւքայի խօսքը կտրեց Յովսէփ. տարակոյս չունիմ որ եղբարցս սրտին մէջ պատած խղճմտանքը, Յակովբայ՝ Սելիմայի և Բենիամինի արցունքներն ու յուսահատ վիճակները, և նոյն իսկ եղբայրական սէրը որ հիմայ իրենց սրտին մէջ արթնցած է՝

զամէնքն ալ փոխած է բոլորովն: Բայց թէ որ եղբարց գրկին մէջն ալ ըլլայ՝ որ մահուանս հարուածը կը սպասէ ինծի, փոյթս չէ, սիրտս վառուած կը հալի կը մաշի վայրկեան մը առաջ երթալու տեսնալու հայրս, ամուսինս • Ինչ օգուտ ինծի այսպիսի թշուառ օրերէ որ սիրելիներէս հետո ստիպուեր եմ անցընելու • եթէ մեռնիլ ալ հարկ է, կը մեռնիմ սիրով՝ առանց սրտցաւութեան, բաւական է որ մէկ անգամ ալ ըլլայ իրենց հետ սրագտուիմ, սլլուիմ վղերնին: Բայց չէ, տարակոյս չկայ, գիտեմ որ եղբայրներս հիմայ իմ երջանկութեանս կը սպասեն: Տուր միայն ինծի ազատութիւն, և քու այս մեծ բարեբոյ յաւիտեան պիտի մնայ մտքիս մէջ • օր մըն ալ պիտի չըլլայ որ արևը իր ընթացքին ծայրը հասնի, քանի որ ես իմ երգերովս քու բարերարութիւնդ չհնչեցընեմ • բնութեան արարիչէն ետքը դուն իմ երախտագիտութեան սէրս պիտի ընդունիս • ինծի սէս քու բարերարութեանդ զգածուած պիտի երգեն զքեզ ինծի հետ իմ հայրս ալ Սելիման ալ:

Սելիմա՛... խօսքը կտրեց Չալիւքա բռնկած կերպով մը, ետքը նորէն մէկէն կերպը անուշընելով • Գուն ուրեմն իրեն համար միայն կ'ուզես ապրիլ, ըսաւ... Հասա հոս թէ որ ուրիշ Սելիմա մը դիմացդ ելլելու որ ըլլայ...:

Ո՛վ իրեն տեղը պիտի կարենայ բռնել, ըսաւ Յովսէփ, այս դաշտերուն ո՞ր հովուուհին...:

Ա՛ն, որ դիմացդ կը տեսնաս, վրայ բերաւ Չալիւքա... Չարմանքդ մէկդի դիր Յովսէփ... Գիտես որ ես զքեզ կը սիրեմ • իմ նայուածքս, իմ հառաչանքներս, թափած արցունքներս, այլայլութիւնս բաւական չհասկըցուցին քեզի (*):

(*) ԾՆՆԳ. ԳԼ. 7-18. — Եւ եղև յետ բանիցս այսոցիկ, և արկ կին տեսան իւրոյ զաչս իւր ի վերայ Յովսէփայ. և տէ գնա՛ քունեալ ընդ

Յովսէփ կարգէ դուրս զարմանքով մը պաշարուած, բերանը կապուեցաւ մնաց: Չալիւքայի սիրտը լեցուեցաւ խնդուածեամբ, և երբոր կարծէր թէ ահա հասաւ իր փափաքանացը՝ Յովսէփ անուշուածեամբ մը սկսաւ խօսիլ:

Գիտե՛մ Չալիւքա, չես ուզեր որ իմ զբացմունքներս ծածկեմ քեզմէ, իմ շրթունքներս ալ արդէն կեղծաւորութիւն չեն գիտեր. ահա կ'ըսեմ՝ պարզապէս որ քու սիրոյն իմ սիրտս չկրնար հաւանիլ: Տէր Աստուած՝ իմ, ինչպէս յանդգնիմ սրբազան կապի մը անհաւատարիմ դռնուելու աս սեղանոյս դիմացը՝ զորն որ ես քեզի նուիրեր եմ: Մեծարոյ նախահարք, ո՛վ հայր իմ, ինչպէս համարձակիմ անարժան զիս ծնունդ ընելու ձեզի: Քու սէրդ ալ, ո՛վ սիրելիդ իմ Սելիմա, ինչպէս կրնամ մոռնալ հոս՝ ուր որ ամէն օր աչքերէս վազած արցունքներն քեզի եմ նուիրեր, և որն որ քու պատկերդ և մեր ամուսնութեան երջանիկ բնակարանը աչքիս առջևը բացեր է միշտ: Բայց դուն, Չալիւքա, ներէ

իս: Եւ նա ոչ կամեցաւ. և ասէ ցիին տեսն իւրոյ զի եթէ տեր իմ ոչ ճանաչէ ինչ ի տան իւրում վասն իմ. և զամենայն ինչ ետ ի ձեռս իմ. և չիք ինչ ի տան աստ որ մեծ է քան զիս. և չիք ինչ զատուալ յինէն բաց ի քէն՝ զի տիկին նորա ես. և զիարդ առնիցեմ զբանդ զայդ զչար և զմեծ, և մեղսնչիցեմ առաջի Աստուծոյ: Եւ եղև իբրև խօսէր ընդ Յովսէփայ օր ըստ օրէ, և ոչ անսայր քունել ընդ նմա, և ոչ հուպ լինել. և եղև օր ինչ այոպիսի, մըտեալ Յովսէփ ի տունն զօրծել զգործ ինչ իւր. և ոչ որ էր անդ յընտանեաց անտի ի ներքս. բնուն և հար զձորձոց նորա և ասէ, ննջեա ընդ իս. և նորա թողեալ զձորձս իւր ի ձեռս նորա, և փախեաւ ել արտաքս: Եւ եղև իբրև ետես եթէ եթող զձորձս իւր ի ձեռս նորա և փախեաւ ել արտաքս. կոչեաց զընտանիս տանն և ասէ. տեսէք, զի ամ մեզ ծառայ եբբայեցի, խաղ առնել զմեզ. եմուտ առ իս և ասէ. ննջեա ընդ իս. և ես աղաղակեցի ի ձայն բարձր, և իբրև լուաւ թէ մեծարարբառ աղաղակեցի. եթող զձորձս իւր յիս՝ և փախեաւ ել արտաքս: Եւ եղ զձորձս առ իւր՝ մինչև եկն տէրն ի տուն իւր. և խօսեցաւ ընդ նմա ըստ բանիցս այտոցիկ, և ասէ. եմուտ առ իս ծառայն եբբայեցի զոր ամեր մեզ՝ խաղ առնել զիս. և ասէ զիս՝ ննջեա ընդ իս. իսկ իբրև լուաւ թէ բարձրացուցի զբարբառ իմ և աղաղակեցի, և թող զձորձս իւր յիս, և փախեաւ ել արտաքս:

յանդգնութեանս, ուրիշ ամուսնոյ մը հետ չես կապուած: Թէ որ ես հաւատարիմ կը փափաքիմ գտնուիլ մէկ ամուսնական խոստմունքի կապերու, պարտրկան չեմ հպատակելու անոր սրբազան պարտքերուն ալ: Երբոր մէկը այսպիսի կապով մը մէյմը կապուած է, կարելի է ուրիշ օտար փափաքներու տեղիք տալ իր սրտին մէջը: Երկու սրտերու իրարու հետ միութիւնը՝ այդ ազատ կապը՝ հոս բռնութեան հպատակելը՝ օրինաւոր կը սեպէ. անանկ որ մի և նոյն օրուան մէջ այս միութիւնը ձեւանալն ու քակուիլը մէկէն տեսնուին: Եթէ այս երկիրս այսպիսի սովորութիւններ իրեն օրէնք կը սեպէ, ես չեմ ուզեր իմ պարտքերս ոտքի տակ առնել: Սելիմա իմ սրտիս վրայ տիրած է և ինքը միայն պիտի իշխէ: Թէպէտ գերի եմ, թէպէտ ամէն բանէ զրկուած եմ, բայց ինձի հետ է առաքինութիւնս, մի միայն բարիքն որ մնացեր է ինձի աշխարհքիս վրայ: Բայց դիտեմ որ դու ալ Չալիւքա կը մեծարես առաքինութիւնը, և եթէ ստուգիւ կը սիրես զիս, այդ սիրոյդ վրայ կ'երգուընցընեմ զքեզ, և եթէ հօրդ կենաց արևը դեռ աշխարհքիս վրայ կը փալիւրլի և եթէ շիրմի մէջ ալ ամփոփուած կը հանգչի, եթէ հօրդ յիշատակը քաղցր է քեզի, հօրդ սրբազան սիրոյն վրայ ալ կ'երգուընցընեմ զքեզ՝ իմ թշուառութեանցս վերջ մը տուր:

Քանի որ Յովսէփ իր խօսքը առաջ կը տանէր՝ կիրքը որ Չալիւքայի աչուըներուն մէջ կը վառէր՝ սկսաւ ամօթ մը ու կատաղութիւն մը աչուըներուն մէջ բռնկցընել. և ինչպէս որ անտառի մը մէջ կայծակի մը ահաւոր աղաղակը՝ յանկարծ կը կտրէ թռչուններուն սրտաշարժ ներդաշնակութիւնը, անանկ ալ Յովսէփայ անոյշ ձայնին՝ կատրած Չալիւքայի այս ահաւոր ձայնը յաջորդեց:

Ապերախա, ցած գերի. անարժան ես բարերարութեան զոր քեզի ընել կ'ուզէի. սիրտդ ալ գե-

րութեան վիճակիդ պէս վատ է և անդգայ : Գնա՛ , սիրէ քու Սելիմադ , որովհետև ինքը միայն կրնայ զքեզ երջանիկ ընել . ընդունայն տեղ իրեն հեռաւորութիւնը պիտի ողբաս . պիտի փատիս գերութեան մէջ , և քու աչուրներդ զանիկայ չտեսնան յաւիտեան :

Ըսաւ , ու կատաղութեամբ խրճիթէն դուրս ելաւ : Յովսէփ շփոթած և դողդողալով մնաց անշարժ կեցած տեղը , Ջալիւքայի վերջին խօսքերը երկար ատեն խեղճին ականջներուն մէջ կը խօսէին : Այս անակնկալ հարուածէն յուսահատած բոլորովին , կէս մեռածի պէս գնաց քաշուեցաւ իր դաշտերը :

Բայց Ջալիւքա իր նախանձայոյզ կատաղութեանը մէջ ինքզինքը կ'ուտէր :

Ի՛նչ ամօթ , աս ի՛նչ նախատինք ինծի , կը պոռար ինքնիրենը , ինծի դէմ այսպիսի արհամարհանք . և ուսկից , իմ մէկ գերիէս . . . Սելիմա՛ աւտելի անուան մը առջև այդպէս գեսնէ գետին զարնուի իմ փառաւոր ցեղս , պատիւս . . . Մէկ գեղացի հովիւ աղջկանէ աւելի զիս անարդ սեպէլ . . . իմ երեսին ալ յանդգնիլ զուրցել . . . Ա՛հ ամօթի մէջ թաղուեցայ . փախչիմ , հեռանամ . . . բայց ինծի ա մէն տեղ հաւասար է , քանի որ աչուրներս չեն տեսնար այն ապերախոր : Թող երթայ սորվի՛նըստիլ այս դաշտերուս մէջ , սորվի հառաչել անմխիթար , սորվի դառն արցունքներ թափել . . . Արցունքներ . . . ա՛հ , բայց ապերախոր այն արցունքներուն մէջն ալ քան զիս շատ աւելի երջանիկ պիտի սեպուի , իմ վշտերուս վրայ պիտի խնտայ . իմ ներկայութեանս սարսափէն խալըսած՝ ա՛լ վախ մը պիտի չունենայ որ յանկարծ երթամ իր միայնութիւնը խռովեմ . ամէն իրիկուն նորէն պիտի երթայ հոն , և իր խորհուրդներուն մէջը հոն իր Սելիմային հետ զբաղած՝ պիտի նուիրէ անոր այն սի

բաւից հառաջանքներն՝ որոնք ժխտեց ինծի... Եր-
թամ հիմնովին կործանեմ իրեն Սելիմային նու-
րած խրճիթը, ուր որ ինքզինքս ինչուան գետին
խոնարհած տեսայ. տակնու վրայ ընեմ այն սեղանն
ալ որ իմ նախատանացս վկայ մը կեցեր է հոն :
Թեթև է վրէժխնդրութիւնս գիտեմ, բայց շատ ըզ-
գալի է իրեն, տարակոյս չկայ, և ասով թերևս
սորվի վախնալ ինծմէ որ արձակ համարձակ կը
յանդգնէր արհամարհելու :

Ասոնք ըսելուն պէս՝ դուրս ելաւ մէկէն՝ երթա-
լու մոքին գրածը կատարելու : Գիշեր մըն էր, և
լուսինն ալ իր պայծառ ճառագայթներուն լոյսը՝
երկնքին մէկալ երեսին վրայ սկսեր էր տարածել.
մէկ խոր մթութիւն մը բոլոր դաշտերը կը ծած-
կէր. լուսթիւն մը պատեր էր անտառները՝ բլուր-
ներն ու ձորերը, վայրենի գազաններն ալ բոլոր
ձայներնին քաշած իրենց որջերը քաշուեր էին
հանգչելու : Նոյն իսկ Փիլոմել՝ որ բոլոր աշխարհ-
քիս տիրող քնայ կը յաղթէր՝ տեղիք տուեր էր, և
իր երգերը աստիճանաբար թուզընելով՝ ալ ձայն
մը չէր հնչեցընէր : Զալիւքայի միայն սիրտը տակ-
նու վրայ էր, կատաղութենէն ինքզինքը կ'ուտէր.
հրաման տուաւ որ Յովսէփայ խրճիթը կործա-
նուի : Կատարուեցաւ հրամանը. կացիններուն հըն-
չող աղաղակները մութ խաւարին մէջ արձագանգ-
ներ տալով՝ ասորժելի կերպով մը Զալիւքայի ա-
կանջները կը թնդացընէին : Այլ և այլ հարուած-
ներու տակ՝ երկու արմաւենիները հեծել սկսան,
խորտակուելու ձայները սաստկացան և վերջապէս
ահաւոր շառագմամբ ինկան գլտորեցան գետին.
գողաց երկիր, և թռչուններն որ անոնց երջանիկ
հովանիներուն տակ իրենց բոյներնին դրած՝ Յով-
սէփայ ձեռքովը կերակրուելով խաղաղ կ'ապրէին
հոն՝ և կարծես թէ խեղճ գերիին վիշտերը կը ջա-
նային քաղցրացընել, ցաւապին ճըւճալու ձայ-

ներ վրայընելով թոան դացին : Չալիւքա՛ այն աւերակներուն մէջ տեղը կեցած՝ ուրախութեան կայծ մը սիրտը ծագեցաւ :

Բայց Յովսէփ որուն վրայ քունը սկսեր էր իր թէթև թևերը տարածելու , և որուն որ արցունքները դեռ չէին ցամքած , վախով մը արթընցաւ : Նման քաղթի մը որ երկար պաշարման մը վերջը հասած ըլլալով՝ թշուառ քաղաքացիները հանգրտեան մէջ ընկղմած՝ իրենց խեղճութիւնը կը մոռնան , մէյմըն ալ յանկարծ ստորերկրեայ յարձակմամբ մը աշտարակի մը օդ ելլալովը՝ բոլոր քաղաքը իր հիմունքներէն սկսեալ՝ սարսափելի ցնցմամբ մը կը դողդրղայ . և երբոր այս ազաղակը անգութ ուրախութեամբ մը մտիկ կ'ընէ թշնամեաց բանակը , քաղաքացիք կ'արթըննան՝ վեր կը ցատքեն դողալով՝ իրենց կորուստը աչքերնուն առջևը հասած տեսնելով :

Գեղեցիկ արշալոյսը որ կարմիր վարդագոյն սւայ ծառութեամբ մը զարդարուած՝ երկրիս վրայ անոյշ բուրմունքներ կարծես թէ կը թափէ՝ սկսեր էր արևելեան կողմը երևնալ , երբոր Չալիւքա ինքն ալ իր ըրած ավերակներէն սոսկում մը զգալով՝ իր գիւղական պալատէն փախչելով գնաց քաշուէցաւ՝ Մեմփիսի պարիսպներուն մէջ իր խայտառակութիւնը ծածկելու :

Յովսէփ ուրախութեամբ լսեց Չալիւքայի երթալուն լուրը : Հասաւ իրիկուան այն ժամը որ Յովսէփ իր առանձնութեան տեղը կը քաշուէր :

Անհնարին ցաւ մը և սարսափելի զարմանք մը սրտեց խեղճ երիտասարդը երբոր տեսաւ սեղանը կործանած , խրճիթը աներևութացած և բոլոր ծաղկըները որոնցմով զարդարեր էր իր միայնարանը՝ խոտերուն վրայ ցրուած նետած : Ինչպէս մէկ գեղացի մը որ իրիկուան դէմ՝ հանգչելու փախքով մը վառուած՝ ծանր քալուածքով մը դէս

ի տուն կը քշէ իր կովերն ու սայլը, և մտքէն կ'երևակայէ իր նոր ձևացած ընտանեացը սիրոյ ձայները և այն ուրասուլթիւնն որ զինքը տեսնելուն պէս սկստի փայլէր իր սիրելի ամուսնոյն աչուրնէրուն մէջ. բայց հազիւ թէ իր տանը դիմացը կը հասնի, կայծակը կ'ինջնայ երկընքէն, կը տեսնէ աչքին առջևը բոլոր իր տնակը կրակ դարձած, կը լսէ իր կնոջը և որդւոցը կիսամեռ ձայնը. գոյնը նետած և սարսափէն սառած՝ կեցած տեղը անշարժ կը մնայ. ասոր նման բոլորովին Յովսէփ ալ երկար ատեն աչուրնէրը տնկած այս տեսարանիս վրայ կը նայէր: Ինկաւ աւերակներու կտորներուն վրայ, գրկէց զանոնք, և իր արցունքներովը թրջելով, Յանկալի խրճիթ, հառաչէց սրտէն, զքեզ որ սրբ տիս քաղցր յիշատակին նուիրեր էի՝ զքեզ քամիներն չեն որ դետին կործաներ են. անհնարին բան էր որ երկինքը իմ մէկ հատիկ մխիթարութիւնս որ ունէի այս տեղերուս մէջ մրրկի ձեռքով յափշտակեր ինծմէ: Հոս ատելութեան և վրէժինդրութեան հարուած մը կը տեսնամ ես: Այս ըսելով երկար ատեն լացաւ աւերակներուն վրայ:

Յովսէփայ գեղեցիկ և սքանչելի առաքինութիւններն որ ինչուան այն ատենը անտառներու ստուերներուն մէջ միայն կը փայլէին. նման այն անուշահոտ բուրմունքներու՝ որ դաշտերէն օդուն մէջ տարածուելով՝ իրենք իրենցմէ չեն երթար միանար քաղաքներու սրտորեալ օդերու հետ, ինչուան որ քամիներէ չքշուին զխառնուին, անանկ ալ վերջապէս ինչուան Մեմփիս եկան յայտնուեցան Յովսէփայ առաքինութիւնները, հասան Պետափրեսի ահանջն ալ: Ազնուասիրտ և մարդասէր տէրը՝ ուղեց որ առաքինի գերիին շղթաները քակուին. և կանչուեցաւ Յովսէփ Պետափրեսի սալատը: Խոր տրամութիւն մը ձգեց Յովսէփայ սիրտը՝ այս նոր

հրամանը • աճապարեց՝ դեռ այն դաշտերէն չբաժնուած՝ վերջին անգամ մըն ալ իր միայնարանը երթալու • հոն՝ անյազ աչուրներով մը նայելով այն տեղւոյն վրայ • Մնաս բարով, ո՞վ սեղան, հառաչեց սրտէն, որ զքեզ շատ անգամ աչքիս արցունքներովը թրջեր եմ • բարով մնաս դու ալ իմ ցանկալի խրճիթս, որուն աւերակներն ալ սիրելի են ինձի, ամսոս որ կը յափշտակեն զիս այս տեղերէս քանի որ քու քաղցր հովանիդ դեռ չէի կրցած նորէն իր առջի տեղը բարձրացնել : Ես կարծէի որ ալ մէյ մըն ալ բաժնուելիք չունիմ քեզմէ՝ բայց եթէ երթալու տեսնալու իմ հայրենական դաշտերս • և և հա կը ստիպուիմ երթալ քաղաք մը՝ ուր որ մէկ երկրորդ գերութեան վիճակ մը ինձի կը սպասէ : Հոն չըլլայ թէ նոր որոգայթներ լարուին գիմացս, և իմ առաքինութիւնս... բայց միշտ նոյն պիտի մնայ : Այո, Սելիմա, ահա կ'երդնում քեզի անխախտելի և հաստատուն հաւատարմութիւն մը :

Այս խօսքերս զուրցելէն ետև աչուրները լեցուած արցունքներով՝ դարձաւ վերջին անգամ մըն ալ նայեցաւ այն տեղերուն վրայ, այնպէս մը կուգար իրեն թէ ոտուրները չեն շարժիր՝ այն բընակարանէն հեռանալու : Վերջապէս ելաւ քաջուեցաւ անկէ • անանկ տագնապ մը զգաց վրան որ կարծէր թէ այս երկրորդ անգամ զինքը բռնած կը հեռացնէին իր սիրելի Սելիմայէն և իր ծերունագարդ հօրմէն : Նոյն վերջին բարևները գնաց իր բարեկամներուն ալ տալու, գրկեց խանդաղատանօք՝ պագտուեցաւ հետերնին, խօսք տուաւ երբեմն երբեմն գալու նորէն հոն իրենց քովը՝ մէկտեղ միտթարուելու համար • այս սրտաշարժ հանդիսին մէջ՝ բարեկամութեան արցունքներ ամէն աչքերէ կը վազէին : Ծանր քալուածքով մը դէպ ի Մեմփիս իր ընթացքը շտկելով, ելաւ կայնեցաւ Պետափրեսի առջև : Զարմացած երկար ատեն երեսը

նայելէն ետքը, Բաղդը սխալեր է, ըսաւ Պետափրէս, որ քեզի պէս երիտասարդ մը գերութեան մէջ ձգեր է. ես ալ առանց գիտնալու այսպիսի անիրաւութեան մը գործակից գտնուէր իմ. ինծի հետ պալատս բնակէ Յովսէփ, անիրաւութեան տեղը կ'ուզեմ լեցընել. ամէն բարեք պիտի ընեմ քեզի : Այս խօսքերուս կ'ուզէր Յովսէփ իր երախտագիտութիւնը ցուցընել. բայց բերանը կապուեցաւ՝ լեզուն բռնուեցաւ, հառաչանք մը միայն չրթունք ները հանեցին :

Չարութեան կիրքը բուռն կերպով մը արթընցաւ նորէն Չալիւքայի սրտին մէջ : Ամէն օր աչքին առջնէն էր, մէկտեղ նոյն պալատին մէջ կը բնակէր. չէր համարձակեր հետը խօսելու, բայց շատ անգամ աչուրները իրեն վրայ դարձած կը մնային. պալատին քով եղած պարտեզին մէջ ժուռ գալու տունը շատ անգամ իր սիրտը կը փնտուէր զինքը :

Յովսէփ՝ մարդկանց բազմութեան մը շփոթութենէ հեռանալու մտքով՝ սովորութիւն ըրեր էր՝ նոյն գեղեցիկ պարտեզը քաշուելու. հոն աչուրները բնութիւն կը փնտուէին՝ բայց հետքն ալ չէր տեսնուէր : Այն մասնաւոր ձևերով տնկուած ծաղիկներուն տեղը, ընդարձակ դալար դաշտ մը աչուրները կը փնտուէին՝ մէջտեղը ծաղիկներու խումբերով զարդարուած, որոնց մէջ մարդուս աչքը երթայ ընկղմի զմայլած : Տեսնալով ծառերու շարք մը որ չափաւոր հեռաւորութեամբ մէկ գծի մը վըրայ տնկուած էին, և որոնց տարածուելու տեղն ալ չափուած էր, զարմանքով մը կանկ առաւ կեցաւ. Աշխարհքիս վրայ ըսաւ, միայն մարդս չէ եղեր մարդու իշխանութեան տակ ինկած, դուք ալ ո՞վ ծառեր իմ գերութեանս ընկեր էք եղեր : Ահ ո՞ւր էք երջանիկ մայր ծառեր, որ ձեր ազատ հովանին ինծի պատսպարան մըն էր, և որոնց տակը իմ ազատութիւնս կը վայելէի :

Երբոր Յովսէփ այս մտածմունքներու մէջ ընկըլ մած էր, աչքին զարկաւ ջրի հանդէս մը, որ երկրիս խորունկէն ելլելով՝ աղաղակաւ մը կը ցատքէր, և վերջէն խողովակներու մէջէն ստիպուած անցնելով մարդու հաճոյից կը հնազանդէր, և կանոնաւորեալ ձևերով օդուն մէջ փոշիի պէս կը ցրուէր. այս տեսարանը Յովսէփայ սրտին վրայ զարմանք մը քան թէ ախորժ զգացմունք մը ձգեց: Իսկ երբոր անդին գլուխը դարձուց՝ հառաչանք մը սրտէն ելաւ՝ տեսնելով մէկ պարզ ջրի առուակ մը որ իր բնական զառ ի վայր ընթացքովը՝ պզտի անտառի մը մէջէն բղխելով՝ ձորերուն մէջէն փալփլելով կը սահէր կ'երթար ախորժելի սուլէլու ձայն մը օդուն մէջ տարածելով:

Օրուան աստղը իր ընթացքին կէսը հասեր էր, և օդն ու երկիրս կարծես թէ իր տաք ճառագայթներովը բոցերու մէջ պաշարեր էր: Չալիւքա նրստեր էր մրտենիներէ ձևացած հովանոցի մը տակ:

Չալիւքա հազիւ թէ հոն մտեր էր, Յովսէփ ալ որ արևուն տաքութենէն պատասպարելու տեղ մը կը փնտուէր, եկաւ հոն քաշուելու: Այն տեղերուն գեղեցիկ տեսարանը մէկ անոյշ զմայմունք մը Յովսէփայ վրայ տարածեց, սիրտը սկսաւ հառաչել: Մէյմը Չալիւքայի վրայ կը նայէր, մէյմը այս հրաշալի տեղերուն գեղեցկութեանը վրայ. այն հովանիին տակ Յովսէփայ սիրտը զգածուեցաւ, աշուրները գորովալից արցունքներով թրջեցան. կարծեց Չալիւքա թէ ահա յաղթանակեց. բայց յանկարծ առաքինութիւնը արթնցաւ Յակոբայ զաւկին սրտին մէջ, դաժան նայուածք մը Չալիւքայի վրայ ձգեց, և բիւր լարուած որոգայթներուն մէջէն ցատքեց ելաւ: Յանդգնեցաւ Չալիւքա ըզգեստներէն քաշել, բայց արիացաւ փախաւ Յովսէփ, և իր զգեստը մնաց Պետափրեսի տմուսնոյն ձեռացը մէջ:

Չալիւքա տակնուկրայ և պատ կարած՝ երկար տակն մնաց հոն լեզուն բռնուած : Գազանային կա տալուծիւն մը աչքերուն մէջը վառուեցաւ . Աստուածուհիդ Աստղիկ, պոռաց ահաւոր ձայնով մը, տեսար յանդուգն գերին, և ես եմ որ քու արձանիդ առջևը այս նախատինքս քաշեցի : Գուն երկնքէն վրէժխնդիր եղիր ինծի, պատժէ ապերախ տը . բայց չէ՛, ես անձամբ պիտի պատժեմ այդ ցած գերին . մեռնի Յովսէփ, անարդ գերիի մը արիւն է որ պիտի թափուի :

Յովսէփ վազելով փախչելու ատենը՝ Պետափրէս դիմացն ելաւ . ինկաւ Յովսէփ, սլլուեցաւ տիրոջը ծնկուղնէրուն . Բոլոր կենացս մէջ, ըսաւ իրեն, պատրաստ եմ սիրով ծառայելու քեզի պէս ընտիր տիրոջ մը, բայց ներէ ինծի որ ըսեմ, սիրտս քաղցր և փափուկ սիրոյ կապերով կապուած՝ կը տեսնեմ որ չկրնար կոտորել մոռնալ զանոնք, Յակովբայ իմ հօրս զաւակն եմ ես և Սելիմայի ամուսին . մեր հարսանեաց երջանիկ օրը գերի ծախուեցայ եղբայրներէս : Գթա՛ իմ թշուառութեանցս վրայ, իմ ծաղիկ հասակիս, Յակովբայ ծերացած օրերուն, Սելիմայի դառն արցունքներուն . դարձուր զիս իմ հայրենի երկիրս . հայրս իմ աղատութեանս գինը կը վճարէ հրամանքիդ . իսկ եթէ կը մերժես իմ խնդիրքս, գոնէ թող տո՛ւր ինծի որ դառնամ նորէն քու գաշտերդ, և հոն գլաւ նամ վայելէլ հօրս և սիրելի ամուսնոյս տեսութեանէն զրկուած :

Փափուկ և գթած սիրտ մըն էր Պետափրէսի սիրտը . Յովսէփայ արցունքներէն և աղաչանքներէն շարժած՝ Ես որ, ըսաւ, կը կարծէի վարձատրել քու առաքինութիւններդ, զքեզ մէկ այնպիսի նուաստ գերութեան վիճակէ մը ազատելով կըրկւ նապատկեր եմ եղեր քու վտերդ : Յաւ է ինծի կորսնցընել զքեզ . բայց ինքզինքս երանելի սեպե

լով՝ որ մէկ առթով մը ամբողջ ընտանիք մը և
 զքեզ երջանիկ պիտի ընեմ, ահա հրաման քեզի,
 դարձիր քու հայրենիքդ, ուր որ բոլոր սիրելիներդ
 ժողովուած կը սպասեն քեզի: Եւ քու ազատու-
 թեանդ գինը որ կը խոստանաս, նախատինք կ'ընես
 ինձի. զիս շահասէր միայն մարդ մը կը կարծես.
 քու հաւատարմութիւնդ և քու ըրած ծառայու-
 թիւններդ զքեզ ազատ ընելու բաւական իրա-
 ւունք մը չէն տար. ինչ ոսկի պիտի կարենաս
 վճարել որ քու առաքինութեանցդ հաւասարին:
 Ա՛ռ իմ ուղտերէս մէկը, գնա՛ գրկելու քու հայրդ,
 վազէ սրբելու Սելիմայի արցունքները: Երջանիկ
 Յովսէփ, յաւիտեան սիրելի պիտի ըլլաս իմ սրտիս:

Այս խօսքերուս վրայ Յովսէփայ սիրտը ելաւ,
 բերանը բացեր էր՝ և լեզուն բռնուած չէր կրնար
 իր սրտին բիւր տեսակ զգացմունքներն յայտնել,
 աչուրները միայն իր բարերարին երեսը տնկած, և
 յորդ արցունքները որ գեղեցիկ երեսներուն վրայ-
 էն կը սահէին կը թափէին, անձայն լեզուով մը իր
 սրտին երախտագիտութիւնը կը յայտնէին. Պե-
 տափրէս ձեռքը երկնցընելով վեր վերցուց զինքը,
 և ոտքի տակ առնելով այն ամբարտաւանութեան
 պատը որ հպարտութիւնը միայն կը ձգէ տիրոջ և
 գերիի մը մէջը՝ թեւերը բացաւ իր գիրկը ընդունելու
 զանիկայ. վազեց Յովսէփ ընկաւ գիրկը. բայց չըր-
 թունքները չէին կրնար գոնէ վերջին բարեն ալ
 տալ:

Զալիւքայի միտքը տակնուվրայ եղած վրէժ-
 խնդրութեան խորհուրդներու մէջ կը պառտէր,
 երբոր Պետափրէս իր ամուսինը երեցաւ նոյն մրտե-
 նիներուն տակ, և ըսաւ Զալիւքայի. Աչքերս ար-
 ցունքներով լցուած կը տեսնես՝ վասն զի ասկէց
 ետև Յովսէփի ազատ է, իր վերջին բարեններն ալ
 առի. այս վայրկենիս ահա ճամբայ կ'ելայ, կը դառ-
 նայ իւր հայրենիքը... Բայց ինչ կը նշանակէ որ

աչքերդ բարկութեան կայծակներ կը թափեն, ի՞նչ տազնապ պատեր է գգեղ... Այդ ի՞նչ զգեստ է Յովսէփայ զգեստը չէ՞ :

Ձալիւքայի սիրտը կատաղութեան և յուսահատութեան մէջ կը տազնապէր․ վայրկեան մը սարսափելի այլայլութեամբ իրարու ներհակ տազնապներու մէջ չարչարուելէն ետքը՝ յաղթեց սրտին կատաղութիւնը․ և մէկ կողմանէ ինքզինքը ստիպուած տեսնալով կամ իր խայտառակութիւնը յայտնելու, և կամ Յովսէփայ վրայ մէկ ծանր յանցանք մը ձգելու, և մէկալ կողմանէ ալ բարկութեամբ լեցուած՝ տեսնալով որ Յովսէփ իր վրէժխնդրութենէն կը փախչի՝ սրտին խորունկէն այս յուսահատ կատաղութեան խօսքերն զուրս տուաւ Յովսէփ, այն ապերախտը, այն յանդուգն գերին յաղթանակէ՛․ փութա Պետափրէս նախատինքներուս վրէժը պահանջէ... Այս զգեստը իրեն փախուտար, ինձի դէմ ըրած նախատինքներուն նշանները չէն :

Պետափրէս ապշած և սաստիկ կիրք ելած քար կտրեցաւ մնաց կեցած տեղը: Բայց այնչափ ալ աւելի սրտին նախանձայուզութիւնն գրգռուեցաւ որչափ որ սրտանց կը սիրէր իր ամուսինը, թէպէտ և անիկայ անզգայ իրեն սիրոյն՝ դրսուանց միայն ինքզինքը առաքինի կ'երևցընէր, և իրենց ամուսնութեան կապը պատուել կը ցուցընէր: Միտքը բերաւ Յովսէփայ փախչելը, իրեն երեսին գոյնը նետելը, իրեն շփոթութիւնը․ Ո՛վ դէք, պոռաց յանկարծ, այս աստիճանի ալ կեղծաւորութիւն կրնայ եղեր գտնուիլ մարդու սրտին մէջ: Երբոր ես իրեն կեղծեալ թշուառութեանցը պատմութիւնը լսելով՝ արցունք կը թափէի, իրեն առաքինութիւնները կը գովէի, զինքը թմերուս մէջ առած կը գրկէի, ահա այն անօրէնը, այն ցած գերին... Բայց ահա կ'երդնում գլխուս վրայ, որ իմ

վրէժխնդրութեանս հարուածը պիտի ինչեցընեմ
այն ապերախտ գերուոյն վրայ : Այս ըսելով վազեց
պալատը , հարցուց տեղեկացաւ դէպ ի ո՞ր կողմէն
երթալը , և մէկէն զինուորներ վազցուց ետևէն :

Յովսէփ առանց ուշանալու մէկէն ճամբայ ելեր
էր , ուղտի մը վրայ հեծած երագ ընթացքով մը
դաշտերը կը կտրէր : Ուրախութեամբ կը փախչէր
կը հեռանար այն տեղերէն՝ որոնք իրեն համար փոր-
ձանքաւոր էին և տագնապալից . և մէկալ կողմանէ
ալ կը յիշէր անձկանօք՝ որ ահա կ'երթար երջա-
նիկ բնակութեան մը մէջ քաղցր կեանք մը վայե-
լել՝ հօր մը և սիրելի ամուսնոյ մը գիրկը , ուր որ
ինչուան իր եղբարցը խղճի խայթերն ալ իրեն ա-
ռաքինութեանցը վկայ էին . հաստատ մտքին մէջ
կ'որոշէր որ ամենևին կերպով մըն ալ երեսնին չը-
տայ ըրածնին , անանկ որ՝ ոչ Յակովբ և ոչ Սելի-
մա իր բերնէն չկարենան առնել իր թշուառու-
թեանցը ստոյգ պատմութիւնը : Երբոր այսպիսի
ախորժեղի խորհուրդներու մէջ ընկալմած՝ կը խըն-
տար սրտին մէջ որ ամէն մէկ քայլը առնելուն իր
երջանկութեանը կը մօտենար՝ յանկարծ միտքը ին-
կաւ որ Պետափրեսի դաշտերուն մէջ ալ բարեկամ-
ներ ունէր՝ որոնցմէ կը հեռանար : Ուզեց բոլո-
րովին բաժնուելէն առաջ՝ վերջին անգամ մըն ալ
պագտուիլ հետերնին , իրենց ալ հաղորդել իր եր-
ջանկութիւնը , և իր գերութեան բնակարանին վեր-
ջին տեսութիւնն ալ ընել : Աշխարհիս վրայ այն-
պիսի կապեր կան , որ զգայուն սիրտը կը կապեն
այն տեղերուն հետ ալ՝ որոնց մէջ իր թշուառու-
թիւններն ալ լացած ըլլայ :

Դեռ քիչ հեռացեր էր այն դաշտերէն , ուստի
մէկէն դարձուց իր ընթացքը հօն . հազիւ թէ մը-
տաւ չմտաւ չորս կողմը առին իր գերութեան ըն-
կերները , և բերկրալից զուարթ ուրախութիւն մըն
էր որ ամենուն երեսը ծագեց : Սիրելի՛ բարեկամ

ներս, ըսաւ անոնց, այս վերջի անգամն է որ կը տեսնաք զիս, իմ վիշտերս ահա վերջապէս լինցան: Պետափրէս՝ մեր սքանչելի տէրը, իմ թշուառութեանցս վրայ գթաց, աչուրները լեցուեցան, իր գիրկը բացաւ ինծի, մտրդասիրութեան գեղեցիկ առաքինութիւնը իրեն սրտին մէջ տեսայ որ կը փայլէր, և իմ ազատութեանս հրամանը տուաւ ինծի: Սիրտս լեցուած է ուրախութեամբ, բարեկամք իմ, և ձեզմէ բաժնուիլս միայն ցաւ է ինծի. բարեկամութիւնը, առաքինութիւնը, թշուառութիւնը՝ այս սրբազան կապերն են ահա որ զմեզ միացուցին մէկ սիրտ մէկ հոգի ըրին: Ահա կ'երթամ ես, և զձեզ գերութեան վիճակին մէջ կը թողում. բայց ահա երգմունք ձեզի որ ձեր շղթաներն ալ յաւիտենական պիտի չըլլան: Շարունակեցէք դուք միայն ձեր ամէն պարտքերը ճշգիւ կատարելու մէկ այնպիսի տիրոջ մը՝ որուն սիրտը ըզգայուն է թշուառներուն վիճակին, և գիտէ վարձաւորել առաքինութիւնը:

Այս խօսքերս լսելու ատեննին երեսնին կախուեցան և ցաւ մը ամենուն սիրտը ճմլեց, բայց մեկէն իրենք իրենց խեղճութիւնը մոռցած Յովսէփայ ուրախութեանը մասնակից ըլլալ կը ջանային, արցունքնին սրբեցին, և վազեցին պագտուելու հետք. Յովսէփայ սիրտն ալ ելաւ, և ամենուն հետ պագտուելու ատեն իթուպալին գիրկը ընկած՝ չէր կրնար անկէջ բաժնուիլ:

Երբոր ասոնք հոս վերջի սրտաշարժ բարևներու հետ էին, հեռուէն զինեալ զինուորներու խումբ մը տեսնուեցան՝ որոնք վազելով դէպ ի իրենց կուգային. երթալով մօտեցան՝ և երեսներնուն վրայի կատաղութիւնը յայտնապէս կը գուշակէր որ մէկ դառն հրաման մը կատարելու կը վազէին: Հասան վերջապէս և հովիւ գերիները չորս կողմանէ պաշարեցին. առաջ անցաւ զինուորաց զինաւորը մէ-


ջերնէն, և Յովսէփայ Երեսէն ի վեր ահաւոր ձայնով մը պուաց . Ապերախտ գերի, անարժան քու տիրոջ բարերարութեանը, մտիր գերութեան շղթաներուդ մէջ, Պետափրեսի հրամանն է, բանտի խորերը պիտի տանինք իջեցրնենք զքեզ :

Այս դառն գոյժը՝ լռեցուց սուգի դարձուց բոլոր ուրախութեան և մտերիմ սիրոյ աղաղակներն . Իսկ Յովսէփ յանկարծական կայծակէ մը զարնուած ի պէս՝ ինկաւ գլորեցաւ հովիւներուն գիրկը, որոնք ոչ ինչ պակաս յուսահատութեան մէջ ընկեր էին . զուարթ ուրախութիւնը մարեցաւ աչուրնեւուն մէջ, և մահուան գունաթափ դեղնութիւն մը պատեց թշուառ երիտասարդին երեսներուն վրայ : Նման էր Յովսէփի մէկ կտրիճ ծաղկահասակ դիւցազունի մը, որ պատերազմի դաշտէն ելլալով՝ ուր որ իր կարծութիւնը ցրցուցեր է, քաղքին դրանը առջև մեծ ուրախութեամբ մը ընդունելութիւն գտնաւ ժամանակ՝ բոլոր քաղաքակիցներուն և իր ընտանեացը հետ պագտուելու վայրկենին՝ մահացու գնտակ մը թշնամին կը հասցընէ սրտին . գետին կ'իյնայ քաջը . և յաղթութեան փառքը՝ կը մթըննայ իր մեռած աչուրներուն մէջ . իր արեանը մէջ կը լողայ այն դափնիէ պսակը որով իր ճակատը պսակուեր էր, և այն բազմութեան թևերը որոնք վայրկեան մը առաջ կը գրկէին զինքը ի նշան իրենց սրտին ուրախութեանը և սիրոյն՝ ետքը իր անշնչացեալ մարմինը միայն վերցընելու կը ծառայէն :

Երբոր Յովսէփ քիչ մը ինքզինքը գտաւ, Երանգ կը տեսնեմ թէ ճշմարիտ էր լաածս, ըսաւ տկար ձայնով մը . իրան է այս հրամանը որ խեղճ Յովսէփը իր երջանկութենէն անողորմ կը բաժնէ . . . : Ահ, ձեր արցունքները իմ թշուառութիւնս կը հաստատեն : Սիրելի բարեկամներ, եթէ դժբաղդ Յովսէփը կը սիրէք, իմ թշուառ բաղբիս վրայ սըր-


տերնիդ մի հատցընէք : Կը տեսնամ որ սարսափելի է թշուառութեանս այս նոր հարուածը , բայց իմ սիրտս վշտաց զոհ ըլլալու համար եղած է : Բարով մնացէք , սիրելիք . . . ո՞վ կարծէր թէ ասանկ բան գլուխս պիտի հասնի . . . հառաջանքները խօսքը կտրեցին :

Հովիւ գերիները՝ իրենց զարմանքէն իբրև խորքնէ մը արթընցածի պէս , խեղճ կերպով մը Յովսեփայ երեսը կը նայէին , կարծես թէ աչուրներուն մէջ կը փնտռէին՝ յանցանք ունի թէ չէ . բայց անմեղութիւնը և առաքինութիւնը որ Յովսեփայ աչուրներուն մէջ և երեսին վրայ կը փայլէին՝ բոլոր իրենց սրտին կասկածները կը փարատէին՝ որ Պետափրեսսի հրամանը իրենց մտքին մէջ կը ծնանէր : Սկսան իրենք ալ իրենց բարեկամին հառաջանացը հետ ձայներնին միացընել : Ոտք ելան բռնութեամբ պաշտպանելու զինքը . Իթոպալ մանաւանդ՝ Յովսեփայ աղաջանքներուն ահանջ չգնելով՝ կտրճութեամբ մը առաջ անցաւ : Բայց բոլոր ջանքերնին անօգուտ եղան , և երբոր անոնք յուսահատ կը կանչուրուտէին , և անէծքներու հետ ցաւագին աղաղակներով օգը կը թնդացընէին , զինուորները յափըշտակեցին խեղճ Յովսեփը իրենց գրկէն , և առին տարին :



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Յ Ի Կ

Ե Ր Գ Զ Ո Ր Ր Ո Ր Դ



ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

Յովսէփ խոր լուծեան մը մէջ ընկզմած զինուորներուն մէջէն կը քալէր • աչուրներուն վրայ մթուծիւն մը ինջեր էր, և արցունք ամենեկին չէին վազըններ, շրթունքները դեղնած և դողի մէջ՝ հառաչանք մըն ալ չէին հաներ • բոլոր ցաւը սրտին խորը լեցուէր էր : Եր գերուծեանը ընկերներուն աղաղակները և հառաչանքները քանի որ ետեէն կը լսէր՝ իր սրտին տազնապը կ'աւելնար • ետին դարձաւ, և սրտաշարժ նայուածքը՝ իր երախտագիտութիւնը կը յայտնէր • քանի մը վայրկենէն բոլոր այն աղաղակները իրեն համար դադրեցան, և չորս կողմն որ նայեցաւ զինուած կատաղի պահապաններ միայն տեսաւ, որոնք մերկ սուրերով պատեր էին զինքը • իր սիրան այն սուրերուն օգնութիւնը կ'ուզէր, կը փափաքէր որ մտնեն իր սրտին մէջ, և խաղտեն զինքը այնպիսի թշուառութեան մը սարսափելի ծանրութենէ :

Այս տազնապներու մէջ էր երբոր մտաւ Մեմ

փիս : Ամէնքը աչուրնին տնկած իրեն վրայ կը նայէին . բոլոր հանդիսականաց սիրտը շարժեցաւ ի գուժ , տեսնելով իր ծաղիկ հասակը իր ազնուութիւնը . անմեղութիւնը որ ամէն շարժմունքին մէջ կ'երևնար , և այն ծանր տառապանքը որուն տակը ինկած կը ճզմուէր խեղճ երիտասարդը :

Հասաւ վերջապէս բանտին առջևը , որուն ախուր տեսարանը Տարտարոսի երևոյթ մը կուտար . կը լսուէին նաև մէջի թշուառներուն շղթաներուն ձայները : Բանտապան մը որուն դէմքը կը ցուցընէր՝ որ պատիժներու պաշտօնեայ է , եկաւ մէկ խոր և մուժ խուցի մը դռները բացաւ : Այն խաւար բնակարանին տեսքը՝ որ երկրիս անդունդներուն երևոյթը ունէր , սարսափով մը ետ ետ հրեց Յովսէփը . բայց բռնի խոթեցին զինքը հոն . լսեց որ երկրթէ դռներ վրան կը գոցեն . և ինքզինքը գլշերուան թանձր մթութեան մը մէջ գտաւ : Ինկաւ կէս մեռածի պէս անարգ անկողնոյ մը վրայ , աչուրները գոցուեցան , արիւնը երակներուն մէջ կը պաղէր , անմեղ երիտասարդը այնչափ ատեն միայն իր վտերէն ազատ մնաց որչափ որ ցաւերուն սաստկութենէն ինքզինքը կորսնցուցած ինկեր էր :

Անշարժ մնաց ինկած տեղը ինչուան երկրորդ օրը . քնոյ անուշուութիւնը վայելելու տեղ՝ մահուան անզգայութիւն պատեր էր վրան : Երբոր սկսաւ նորէն զգայութիւնը վրան դառնալ , և յոգնած աչուրները բանալով չորս կողմը որ նայեցաւ և սարսափելի մթութենէ մը զատ ուրիշ բան մը աչքին չզարկաւ՝ ցաւագին հառաչանք մը հառաչեց . և ահա գետնափոր կամարները՝ ահաւոր խուլ արձագանգով մը իր հառաչանքը կրկնեցին . դող մը պատեց դժբաղդ Յովսէփայ սիրտը , կարծեց որ մահապուշակ ձայներ են որ այն բնակարանին մէջ կ'որոտան մէջի թշուառ բնակիչներուն սարսափը սաստկացընելու : Ո՛վ տէր , պուսայ վերջապէս ,

դժբաղդ երանգ մըն է արդեօք տեսածս՝ որ հոգւոյս դիմացը կը բացուի՝ որ երկար ժամանակէ ի վեր չարագուշակ տեսարաններու մէջ կը չարչարուի : Այս ըսելով թուցած ձեռուըները աչքերուն վըրայ կը պտըտցընէր, անկողինը և բանախն պատերը կը շօշափէր :

Ա՛հ, վայ ինձի, շատ ստոյգ է, հառաչալից ձայնով մը ըսաւ, գլուխս հասած թշուառութիւնները իրաւցընէ են... Երբոր ես մտքիս մէջ երևակայելով թէ ահա թշուառութեանցս վերջը կը հասնիմ, ուրախութեամբ լեցուած կը վազէի երթալու գրտնելու մէկ սիրելի հայր մը, և մէկ ամուսին մը... Հո՞ս, այն է ուրեմն չարագործաց բնակարանը... և ես եմ որ ինկեր եմ հո՞ս... ես որ ինձի, իմ առաքինութեանցս լարուած որոգայթներէն կը փախչէի... և այս սարսափելի հարուածը ինչաւ գլխուս քու ձեռքերէդ ո՞վ Պետափրէս աղնուասիրտ տէր, որ իմ գերութեանս շղթաները փրցուցիր, և իմ վերջին բարևս առնելու ատենդ գրկիդ մէջ զիս կը սխմէիր, և արցունքներ կը թափէիր... Մէկ կատաղած ամուսին մը յաջողեցան ուրեմն վերջապէս այսպիսի բարբարոսութեան մը մէջ գլտորել զքեզ : Այս հառաչելու ատենը, սրտին ցաւը խօսքը բերնէն կտրեց :

Երկար ատեն լուռութիւն մը պատեց վրան : Իրեն բանտակից թշուառներուն աղաղակներն ու հառաչանքները, բանախն թանձր պատերէն անցնելով՝ Յովսէփայ ահանջը կը հասնէին. ասոնց նման մութ անտառի մը մէջ կը հնչէն գայլերու և գիշերային թռչուններու տխուր և սարսափ ձգող ձայները :

Ոչ զքեզ միայն կ'ողբամ ես, յանկարծ հառաչեց նորէն, ո՞վ իմ հայրենի տունս՝ որ զիս ծնար, և ուսկից հեռու՝ չկայ ինձի երջանկութեան վայելք մը, այլ զքեզ կ'ողբամ իմ թշուառութեանս տընակը. ուր որ գառն գերութիւն մը քաշեցի, և ա՛հ,

ինչ ըսեմ, կարծէի որ գերութիւնս իմ խեղճութեանցս լուսն է : Չձեզ կ'ողբամ, սիրելի բարեկամներս, որ զձեզ մոռցած իմ թշուառութիւնս մխիթարել կը ջանայիք . զձեզ ինծի սրտակից եղբայրներ գտեր էի . . . Չքեզ կ'ողբամ ո՛վ խրճիթ՝ իմ սրտիս սիրելէացը նուիրեալ՝ ուր որ գոնէ արցունք թափելուն քաղցրութիւնը կը վայելէի : Դուք ալ սիրուն ոչխարներ՝ որ զձեզ բուն իմիններու տեղ սեպեր էի, որ իմ հառաչանքներս զգալով՝ դիւրութեամբ մը չորս դիս կը պտըտէիք՝ դուք ալ իմ ողբերուս նիւթ եղաք այսօր . . . Ահա այնպիսի դառն առանձնութեան մը մէջ ինկեր եմ՝ որ զժընդակ ու ահաւոր անապատի մը սարսափ վրաս կը ձգէ, դեռ ողջ ողջ մութ գերեզմանի մը մէջ փակուեր մնացեր եմ . . . Ո՛ր գիտէ թերևս, հիմա արչալոյսը կը ծագէ . բայց ա՛լ ասկէց ետև՝ ինծի համար չէ . բոլոր բնութեան մէջէն հալածուած մէկ յաւիտենական մութ մը պատեր է զիս . . . Ո՛ւր էք սիրուն թռչուններ՝ որ իմ խրճիթս կը լեցուէիք, իմ վշտացս հաւատարիմ ընկերներ, ձեր սրտաշարժերդերը՝ իմ արտասուացս հոսանքը կը մեղմացընէին : Ո՛ւր էք անոյշ զեփիւաներ՝ որ իմ վշտերու գառնութեան մէջ ընկղմած ատենս՝ ձեր ախորժ բուրմունքներովն կուգայիք՝ իմ կենացս մթնցած կայծերը կենդանացընելու : Հիմա ստիպուած կը շնչեմ միայն չարագործաց ապականեալ օդը

Այս գառն հառաչանքը շրթունքներէն ելլալու ատեն՝ գառն և անմուռնչ մաղձոտութիւն մը պատեց վրան :

Ահ եղբարք իմ, մէյմըն ալ պոռաց յանկարծ . ահա ձեր փափաքէն աւելի ծանր թշուառութիւններ գտան զիս : Եթէ դեռ կ'ատէք զիս, եթէ դեռ իմ մահուանս ալ կը փափաքիք՝ գիտեմ որ իմ կարգէ դուրս զժբաղդ վիճակս մէկը ձեզի պատմելու որ ըլլայ՝ արցունքներ աչքերնէդ պլտի թափին . . .

Ահա մահուան գերեզմանին հասեր պլուներ եմ․
 ո՞վ գերեզմանն, մէկ հատիկ ապաւեն թշուաւնե-
 րու, ա՛հ երբ ես ալ քու խաղաղ ստուերներուդ մէջը
 պիտի մտնամ խալըսիմ․ դո՛ւն մնացիր ինձի հօր
 տեղ, դուն՝ բոլոր իմ սիրելեաց տեղ, ասկէց ետե
 քու գիրկդ միայն պիտի հանդէի դժբաղդ Յովսէ-
 փայ վշտահար սիրտը․․․ բայց իմ մարմինս պիտի
 չլծաղուի իմ պապերուս քով, Յակովբ՝ հայրս պի-
 տի չգոցէ իմ աչուըներս․․․ Սելիմս պիտի չսէ իմ
 վերջին հառաջանքս, իմ կիսամեռ աչուըներս պիտի
 չտեսնան Բենիամինը, եղբայրներս պիտի չիմանան
 որ ես ներեր եմ իրենց, իրենց զըման արցունքնե-
 րը պիտի չկարենան թրջել իմ գերեզմանս, և սի-
 րելեացս ձեռուըները պիտի չպսակեն ծաղիկներով
 իմ գերեզմանս․․․ Ա՛հ ի՛նչ կը խօսիմ եղկելիս, դեռ
 ունիմ ես արդեօք հայր մը, ամուսին մը․․․ Յա-
 կո՛վբ և Սելիմս, դեռ կենդանի՞ էք այնչափ ցաւե-
 րու վրայ։ Ա՛հ ա՛լ չկանք մենք աշխարհքիս վրայ․ և
 ահա իմ կենացս վերջին կայծն ալ մարելու վրայ է․
 և մեր ցրուած մոխիրները պիտի չմիանան մէկ գե-
 րեզմանի մը մէջ։

Այս մաղձոտ խորհրդածուծիւններն էին ու-
 րոնց մէջ կը պտըտէր Յովսէփայ հոգին։ Սկսաւ
 մէկիկ մէկիկ աչքին առջևը բերել իր թշուառու
 թիւնները, եղբարցը իր վրայ ունեցած ատելու
 թիւնը․ սկիզբէն ինչուան այս վերջի դառն հա-
 րուածը անցուց մտքէն․ և ահա նորէն յուսահա-
 տուծիւնը սրտին խորունկէն ձայն տուաւ, չըր-
 թունքներուն վրայ տեսնուեցաւ, և դառն հառա-
 չանք մը բերնէն թուչելու ժամանակ՝ յանկարծ վեր
 ցատքեց թշուառ սիրտը, կարծես թէ ինքն ալ զար-
 հուրեցաւ իր ցաւերուն յուսահատ ճամբէն․ Ո՞վ
 տէր իմ և Աստուած, պուսայ դէպ ի երկինք, ի՛նչ
 պէս յանդգնի լեզուս գանդատանաց հառաջանքնե-
 րով օդը լեցընել։ Ստուերք Աբրահամու և Իսա-

հակայ, դու ալ թերևս ո՞վ սրբազան ստուեր հօրս
Յակովբայ, թէ որ այս տեղերուս վրայ կը թռչէք
գիտելու տեսնելու թէ արդեօք կտրճու թեամբ կը
համբերեմ վտերուս, ինչ կ'ըսէք արդեօք երբոր
կը տեսնաք ձեր ծնունդը վատ յուսահատութեան
մը մէջ գլտորած :

Այս խօսքերս զգածուած խօսելու ատենը՝ մէյ
մըն ալ տեսաւ որ լուսաւոր ստուեր մը բանտին
խորունկէն դէպ ի իրեն կուգար : Մտեցաւ Յով
սեփայ • ծերուկ մըն էր պատկառելի • կերպարան
քին վրայ կը տեսնուէր վսեմ առաքինութեան մը
երևոյթ, և շատ դարերու իմաստութեան փայլ մը •
կռնճմտած ճակտին վրայ խաղաղ զուարթութիւն
մը կը փալտրէր • վսեմ նայուածքը, ազնուական
կերպը, և ձեան պէս ճերմակ մօրուքը որ ինչուան
կէս մէջքը կը հասնէր՝ և իրեն վրայ ամէն բան
պատկառելի զինքը կը ցուցնէին :

Վեցաւ Յովսեփայ գիմացը, որ ահուգողի մէջ
հազիւ թէ կը համարձակէր աչուրները վեր վերցը
նել և երեսը նայիլ • Ճշմարիտ է կասկածդ, չես
խաբուիր, ըսաւ իրեն ստուերը • ահա Աբրահամու
ստուերն է որ ինչեր է բանտդ՝ քու առաքինու
թեանդ հանդէսը տեսնելու, և զքեզ քաջալերելու •
Յովսեփ որդեակ իմ, մի յուսահատիր • առջի կտրը
ճու թիւնդ ձեռք առ նորէն • ես ալ թշուառութեանց
առջև ելայ, բայց գիտցայ յաղթել անոնց : Բայց մի
միայն մահկանացուաց առաքինութիւններու վրայ
աչուրներդ դարձրներ • քու արարիչդ քեզի օգնու
թիւն կանչէ • Ճշմարիտ կտրճութիւնը երկնքէն
միայն պիտի ինչնայ քու սիրող • անիկայ կը լսէ
քու ձայնդ • ինչո՞ւ երկրիս անդունդներուն կարօ
տացած հառաչես :

Ծերունին խօսքերս ըսելու ատենը՝ միակերպ
Յովսեփայ երեսը կը նայէր, և իրեն նայուածքին
մէջ կը փայլէին անոյշ կարեկցութիւն մը և վսեմ

արիութիւն մը • խօսքն որ լմնցուց ձեռք տուաւ
Յովսէփայ : Ստուեր ցանկալի , պոռաց Յովսէփ
վեր ցատքելով , դ՛ու ես իմ պահապան հրեշտակս ,
արժանի քեզի ծնունդ պիտի ընծայեմ զիս : Դեռ
կ'ուզէր խօսիլ • բայց ստուերը աներևոյթ եղաւ :

Չէր գիտեր Յովսէփ թէ իրաւցընէ՞ էր արդեօք
տեսածը , եթէ իր սրտին ցաւերուն տագնապը ի-
րեն երևակայութեանը առջև ցրցուցեր էին այն գե-
ղեցիկ ստուերը • բայց հնազանդեցաւ անոր ձայնին ,
և ուր որ յուսահատութեան հառաչանք լսեր էր ,
հոն գեախնը ծուռիկ չոքեցաւ , ջերմեռանդ սրտով
աղօթք մը նուիրեց Աստուծոյ :

Հեռու այն ամէն աշխարհքներէն որ երկնքին
ընդարձակ անբաւութեանը մէջ կը լողան , ամե-
նակալ Աստուծոյ ահեղ աթոռը կեցած է • ուսկից
որ բոլոր աստղերը փոշիի հատիկներու պէս կ'ե-
րևան՝ որոնք օդին մէջ արևուն ճառագայթնե-
րէն կը տեսնուին : Անքննելի իմաստութիւն մը իրեն
աթոռը կը պատէ , որ կ'օրհնէ կը փառաբանէ ամե-
նազօր Արարիչը : Ճշմարիտ իմաստունին աղօթքը
ստանալին ամենէն ամուր պարիսպներն ալ թա-
փանցելով հոն ինչուան կ'ելլայ կը բարձրանայ և
կը խառնուի այն վսեմ ներգաշնակութեանը հետ •
իսկ մեղաւորին հառաչանքներն օդին մէջ կը ցը-
րուին , և երկրիս վրայ կը կորսուին կ'անհետանան :

Հասաւ Յովսէփայ աղօթքն ալ Աստուծոյ մեծ-
վայելութեանց փառաց աթոռին առջև : Յաւիտե-
նականն Աստուած լսեց սիրով , և ահա մէկէն Մխի-
թարութիւնն՝ անոյշ և կարեկից նայուածքով մը ,
Յոյսը՝ լուսաւոր ճակատով և անխռով Հանգստու-
թիւնը՝ Անմեղութեան մէկ հատիկ ընկերը , անու-
շահոտ ամպերու մէջ պլլուած ինջան երկնքէն ,
բանտին մուժ կամարներուն մէջ մտան յաղթա-
նակաւ , և թշուառ երիտասարդին չորս կողմը պա-
տեցին : Ինչպէս որ գեղեցիկ երիկուան մը լու-

Թեան ժամանակ կը կաթէ երկնքէն սիրուն ցօղը, որ դաշտերու պարարտութիւն մը պարգևելու աւտեն, կը զովացընէ և կը զուարթացընէ աշխատութենէ յոգնած դաղրած խեղճ երկրագործին տնակը, և անոյշ քուն մը կը պատրաստէ իրեն: Չգաց Յովսէփ որ նոր կարճութիւն մը իր սրտին մէջ վառուեցաւ, կամաց կամաց սկսաւ թեթևալ հոգւոյն վրայէն այն ծանրութիւնն ալ որ զինքը կը ճզմէր, սկսաւ աւելի հանգիստ շունչ մը առնել: Չարմանք մը զինքը պատեց երբոր տեսաւ որ սիրտը կակըղցեր էր և կրնար արցունք թափել: Մէկէն յոգնած աչուրներուն վրայ քունը ծանրացաւ, լալը դաղրեցուց. ալ երջանիկ էր Յովսէփ, վասն զի քունը վիշտերը փարատեր էր վրայէն:

Իսկ Չալիւքա կը ջանար յաղթանակել և իր վրէժխնդրութեամբը մխիթարուիլ. բայց ինքն ալ ասպշած մնացեր էր. զգալով սրտին մէջ հակառակ զգացմունքներ որ իրեն դէմ կ'ելլային. նման հրաբուխի մը որ մըրկէ տակնուվրայ եղած ծովուն անդունդներէն կրակներ կը ցատքեցընէ՝ որոնք չեն կրնար կատղած ալիքները զսպել. Չալիւքայի սիրտն ալ կ'այրէր դեռ, և կը տագնապէր սիրոյ՝ խղճմտանքի և կատաղութեան մէջ:

Ինչո՞ւ, կ'ըսէր ինքնիրեն, գթութեան զգացմունք սիրտս պատեր է... և այն ալ մէկ ասպերախտի... մէկ ցած գերիի մը. որուն դիմացը ամօթէս ու նախատինքէս գետին անցայ. բայց ահա այս գերին է, այս ասպերախտն է, Յովսէփ է, այս արարածն է միայն որ սիրտս յափշտակեր է... Ի՞նչ է ըրածս. անմեղութեան դահիճ մը ելեր եմ մէջտեղ: Յանցաւոր իմ օրինաւոր ամուսնոյս դէմ. յանցաւոր իմ սիրելոյս դէմ, փոխանակ իրեն սքանչելի առաքինութեանը հետևելու. չարաչար զրպարտեցի անմեղը: Թշուառները աշխարհքիս վրայ սրբազան ոգիներ են գիտեմ. բայց ինչո՞ւ ոչ իրեն թը

շուտառութիւնները , ոչ իր ցաւը , ոչ իր ծաղիկ հասակը , ոչ իր գեղեցկութիւնը , ոչ իմ սէրս՝ չկրցան խաղտել Յովսէփը իմ յուսահատ կատաղութենէս : Գնահ , անգութ կնիկ , գնա դուն քու ձեռքովդ խոթելու սուրը խեղճ երիտասարդին սիրտը , գնահ իրեն արեան տեսարանովը աչուրներդ կշտացընելու . և առանց իրեն համար կաթիլ մը արցունք թափելու՝ գնահ լսելու իրեն վերջին հառաչանքը . . .

Ըսաւ և կ'ուղէր երթալ գտնալ թշուառ Յովսէփը , բայց սիրտը կապկըպէր էր զինքը , չէր թողուր իրեն առջևը ելլալու : Շատ անգամ գիշերուան թանձր մութը երկրիս վրայ պատած ժամանակ՝ ելաւ բանտը երթալու . բայց հազիւ այն ահաւոր բնակութեան դուռը կը հասնէր , ծնկուրները կը կտորտին , ոտուրները կանկ կ'առնէին , և կարծելով թէ Յովսէփայ հառաչանքներն են որ ականջը կը հասնին , արիւնը կը սառէր , բոլոր մարմինը գող կ'ելէր , և սարսափ մը վրան պատած կը փութար լեղասպատառ փախչելու : Նման էր Զալիւքա թշուառ մարդասպանի մը , որ գիշերուան մթութեան մէջ՝ ականայ խիղճը զինքը կը քաշէ կը տանի իր սպաննած անձին գերեզմանին վրայ , հոն դառն յուսահատութիւն մը կը պատէ զինքը որ սիրտը պատառ պատառ կ'ընէ , և ահա այն տագնապին մէջ կը կարծէ լսել ցաւալից ստուերին հառաչելը . սարսափ մը կ'իջնայ վրան , մազերը կը տնկուին , զարհուրած ետ ետ կը նետուի . և աչքին զիմացը կ'երևակայէ տեսնել այն արեան մէջ թաթիուած ստուերը՝ որ մթութեան մէջէն ետևէն կ'իյնայ զինքը հարածելու :

Մէկ իրիկուն մը վերջապէս՝ սրտին սարսափն կը յաղթէ , քող մը երեսը կը ձգէ , և ծածուկ կուգայ բանտը . կը բացուին զիմացը այն ահաւոր երկրթէ դռները : Զալիւքա ներս կը մտնէ . դողգողուն

ձեռքը տկար լոյս մը բռնած էր որ հազիւ թէ այն սրահներուն յաւիտենական մթուածիւնը կրնար լուսաւորել . քանի որ առաջ կ'երթար՝ սիրտը տապնապեալ կրնետէր, շունչը կը բռնուէր . յանցաւորը որ հոն կը բնակի՝ շատ աւելի նուազ սարսափ մը վրան կը զգայ :

Յովսէփ որ Աստուծոյ օգնութիւնը խնդրելէն ետեւ շատ աւելի խաղաղ էր սիրտը՝ անոյշ քուն մը կը քնանար, բայց երեսներուն վրայ դեռ կը տեսնուէին արցունքներուն նշանները, բարձր բոլոր թրջած էր, մէկ մահուան դեղնութիւն մը ինչէր էր ճակատին և բոլոր դէմքին վրայ, բայց այն վիճակին մէջ ալ երեսը իր գեղեցկութիւնը չէր կորսնցուցած :

Զալիւքա՝ սիրտը անհանդարտ՝ աչուրները ամէն կողմ դարձրնելով Յովսէփը կը փնտռէր, և ահա յանկարծ դպաւ աչքին . արիւնը այլայլեցաւ . ուտուրները բռնուեցան . մնաց անշարժ . . . վայրկեան մը անցաւ վրան, և Զալիւքա սիրտ ըրաւ մօտենալ իրեն, բայց ի՛նչպէս բոլորովին պաղեցաւ մնաց, երբոր տեսաւ որ մահուան գոյն մը ծածկեր էր Յովսէփայ երեսը : Կարծեց թէ ա՛լ չկայ սիրելին, սարսափէն քանի մը ոտք ետ ետ նետուեցաւ, բոլոր մարմինը սկսաւ դողալ, քիչ մնաց որ ճրագը ձեռքէն իյնար մարեր : Բայց վերջէն ինչուան անկողինին մօտ՝ քովը երթալով՝ տեսաւ որ կենդանի է Յովսէփ՝ բայց միայն քնոյ մէջ է . Այս ի՛նչ զօրութիւն է, ըսաւ տկար ձայնով մը, անմեղութեան գօրութիւնը . այս սարսափելի տեղոյն մէջ ալ՝ այս ի՛նչ հանդարտութիւն է որ կը վայելէ, իսկ ես իմ պալատիս մէջն ալ գիշեր մը չէ եղած որ աչուրներս հանգիստ գոցեմ :

Այս միջոցիս Յովսէփ քնոյ ժամանակ գեղեցիկ երազի մը մէջ երջանիկ էր : Ինքզինքը թշուառութիւններէն մեռնելու վիճակ հասած տեսնալու ա-

տեն՝ յանկարծ Սեւիմա իր առջեր ելաւ . Ահա նորէն կը տեսնամ զքեզ, կ'ըսէր իրեն, ո՞վ ապերջանիկ Յովսէփ, ահա եկեր եմ քեզի հետ մէկտեղ վիշտերդ քաշելու, և քեզի հետ լինցընելու իմ կենացս օրերն ալ այս բանտիս մէջ: Այս խօսքերս էին որ կը կարծէր լսել Սեւիմայի բերնէն:

Այս գեղեցիկ երազը՝ կենդանութիւն մը ծագեց երեսին, երախտագէտ սրտի ուրախութիւն մը փայլեցաւ դէմքին վրայ . սիրոյ ժպիտ մը այտերուն վըրայ տեսնուեցաւ, և կարծելով գրկել իւր սիրելի ամուսինը՝ երկնցուց թևերը... բայց Չալիւքա էր դիմացը: Սրտին սաստիկ ուրախութենէն քունը կարեցաւ, արթնցաւ Յովսէփ... շփոթեցաւ խեղճ երիտասարդը, վեր ցատքեց . նայեցաւ սև քօղի մը տակ ծածկուած դիմացը կեցեր էր Չալիւքա... անակնկալ սարսափ մը ինջաւ սրտին . դարձուց երեսը՝ ինկաւ անկողնին վրայ, և ճակատին վրայ մահուան գոյն մը սրտեց նորէն:

Այս տեսարանը բարկութեան կրակ մը բռնկցուց Պետափրեսի կնկան աչուընտրուն մէջ. Անմիտ երիտասարդ, պռուսց երեսէն ի վեր, ահա տես իմ կարողութիւնս . ես եմ որ զքեզ այս բանտը ինջեցուցի... Սարսափ պատեր է զքեզ... բայց դուն թէ որ ուզես դեռ կրնաս գերի ըլլալու տեղ՝ իմ սրտիս վրայ իշխել:

Իմ կողմանէս օրոշմունքս ըրեր եմ, պատասխան տուաւ Յովսէփ հաստատուն և խիստ ձայնով մը . սրչափ ալ ահաւոր է այս բնակարանը, ես հոս երջանիկ եմ առաքինութեամբս, և եթէ անկէջ զբրկուիմ՝ հօրս տանը մէջն ալ երջանկութիւն չմնար ինծի: Ո՞վ առաքինութիւն, Ո՞վ Յակովբ, ո՞վ սրտիս մէկհատիկ սիրելիդ, թէ և աշխարհքիս բոլոր դառն թշուառութիւնները գլուխս թափելու ալ ըլլան, ահա կ'երգնում որ հաւատարիմ պիտի մընամ ձեզի...

Այս խօսքս որ լսեց Չալիքա՝ սրտին կատաղութիւնը բոլոր մարմնոյն մէջ տարածուեցաւ . Ինծմեաւելի այս բանտը ընտրեցիր, պուռաց, հոս ուրեմն մեռիր ապերախտ... Մութ կամարները կրկնեցին այս ահաւոր սպանալիքը : Նոյն կատաղութեամբ դուրս ելաւ Չալիքա, և Յովսէփ մնաց նորէն մութութեան մէջ . դռներն ու երկրթէ վանդակները աղաղակաւ մը կղպուեցան . կարծեց Յովսէփ թէ ահա այս վերջին անգամն էր որ գոցուեցան :

Անձ մըն էր անծանօթ որ բանտին չորս կողմը կը պտըտէր, կը հառաչէր խեղճը, և անկեղծ սիրոյ արցունքներ էին որ կը թափէր : Կատաղի նա յուածք մը ձգեց այս անմերձենալի բնակարանին վրայ, փորձեց դռները կոտորել . բայց այն երկրթէ դռները դիմացան իրեն ուժին առջևը : Արդէլքները աւելի յանդգնութիւն մը սիրտը ազդեցին . վազեց բանտապանին ոտքը ինկաւ, և կը պաղատէր որ իրեն բանտին դռները բանայ : Կատաղի դէմքով նայեցաւ երեսը բանտապանը, և երեսը անդին դարձուց : Այն ատենը անծանօթը պլլուեցաւ ոտուրներուն և արցունքը գետի պէս կը վազէր աչքերէն : Ահա կը տեսնաս, ըսաւ իրեն, որ զէնք մը չկայ վերաս, մէկ պարզ հովիւ մըն եմ ես Յովսէփայ բարեկամը, չեմ ուզեր ուրիշ բան, բայց միայն երթամ գրկեմ իմ բարեկամս : Թէ որ քու սիրտդ անոյշ բարեկամութեան սէրը վայելեր է . թէ որ թըշուառութիւններ հասեր են քու գլուխդ ալ, և սիրելիներուդ ձեռքը աջուրներէդ սրբեր են թափած արցունքներդ, անոնց սիրոյն համար ըլլայ կ'աղաչեմ, լսէ ինդիրքիս :

Բանտապանին սիրտը՝ անծանօթին բարեկամութեան արցունքներէն ու խեղճութեան ձայնէն շարժելով՝ այս առաջին անգամ գլութեան զգացմունք մը տեսնուեցաւ վրան : Նշան ըրաւ հովուին ետևէն երթալու . բացուեցան բանտին դռները :

Թուչուների մը պէս Թուաւ անծանօթը, մտաւ այն տխուր բնակարանը, վազեց պլլուեցաւ Յովսէփայ վիզը իրեն անկողնին վրայ : Լուռ-Թիւն մը պատերէր երկուքին վրայ ալ երկար ատեն . Աղնիւ բարեկամ, վերջապէս ըսաւ Յովսէփ, գթասիրտ հոգի, դուն որ միայն իմ վշտացս կարեկից գանուեցար, ձայն մը հանէ, խօսէ, լսեմ ս'վ ես դուն . այս ինչ սիրոյ կապեր են, ինչ հառաչանքներ որ սրտիս ինչուան խորը կը Թափանցեն :

Գեռ չիճանչցա՞ր Յովսէփ քու սրտակիցդ, պատասխանեց հովիւր, ան որ առանց քեզի չի կրնար ապրիլ, որ եկեր է քու ցաւերուդ մասնակից ըլլալու, և զքեզ այս դառն տեղէս խալըսելու :

Այդ քու անոյշ ձայնդ է բարեկամութեան, սիրեցեալդ իմ Խթոպալ, ըսաւ Յովսէփ . Թշուառութիւններէ անզգայ դարձած սիրտ մը շարժեցիր բարեկամ : Ա՛հ Խթոպալ, սիրելի բարեկամ, որ բարերար հոգին բացաւ քեզի բանտին ահաւոր դռները . . . : Բայց ինծի համար երջանկութիւնը լմընցաւ . քիչ օրէն այս բանտը՝ իմ շիրիմս պիտի ըլլայ : Գնա՛ դարձիր դուն բնակութիւնդ . երջանիկ երկայն օրեր կը մաղթեմ բարեկամներուս . ինչո՞ւ դուն ալ Խթոպալ եկար հոս իմ Թշուառութիւններս տեսնալով՝ քու երջանկութիւնդ տակնու վրայ ընելու :

Մե՛նք երջանիկ, ըսաւ Խթոպալ, ա՛հ, այն սուկալի օրուրնէ ետև որ բարբարոսները զքեզ մեր գրկէն յափշտակեցին տարին, յուսահատութիւնն ու ցաւը մեր դաշտերը պատեցին : Բոլոր քնարները կտորտեցինք, մէկն ալ չկայ որ ծաղկընէրով զարգարուի . մեր տնակները իրենց զարդերէն մերկացեր են, զուարճութեան շուքն ալ չմնաց սրտերնուս մէջ . Յովսէփ, զքեզ միայն լալու համար է որ մէկտեղ կը ժողովունք : Ոչխարներն ալ երեսի վրայ մնացած կը պտըտին դաշտերը, բնութիւնն

ալ բողբո՛ մէկ մեծ բանտ մը կ'երևնայ աչքերնուս . նորէն մեր առջի խեղճ վիճակին մէջ ինկանք , նորէն ուրիշ բան չենք՝ բայց եթէ ցած գերիներ . . . կ'ուզէս ըսել նաև , որ ես հիմա հազիւ թէ իբրև թանձր ամպերու մը մէջէն կը տեսնամ և կը ճանչնամ այն Աստուածը որ դու ինծի ատեն մը յայտնապէս ցուցըցեր էիր : Բարութիւնը , կըսէիր ինծի , Աստուծոյ էութիւնն է . և աղբիւր ամէն արարածներու : Իմ սիրտս ալ ասանկ կը ճանչնար զինքը , բայց թէ որ բարի է Աստուած , ինչո՞ւ կը թողու որ իմ առաքինի բարեկամս ասանկ չարչարուի : Ուրեմն այն մահկանացու աստուածներուն կը նըմանի աս ալ որ մեր վըայ կ'իշխեն . ինքն ալ ուրեմն երբեմն առատաձեռն է և երբեմն անգութ . . . և իր բարերարութիւնները՝ մեր վիշտերը մեզի աւելի զգալի ընելու միայն կը ծառայեն : Սիրելիդ իմ Յովսէփ , քանի որ դուն զատուեցար մեզմէ , անոր սեղանը կործանուած և փոշիներու մէջ գլորտըկած կեցած է :

Ինչ կը խօսիս , պոռաց Յովսէփ ցաւագին սրբատով իրեն խօսքը կտրելով : Այս մութ տեղը փակուած , հեռու իմ ձեռքերովս շինած սեղանէս , կ'անցընէի երբեմն մոգէս , որ անշուշտ իմ ընկերներս կանգնած են նորէն , և չորս կողմը շարուած իրենց անմեղ ձեռուրները կը վերցընեն դէպ ի երկինք . և այս մտածութիւններս մեծ մխիթարութիւն էին իմ սրտիս : Իթոպա՛լ , դագրէ զիս սիրելէն , թէ որ բարեկամութեան սէրը քեզի մոռցընել կուտայ զԱստուած՝ բնութեան հայրը : Հոգւոյդ աչուրները կուրացեր են բարեկամ , մոռցեր ես ուրեմն որ գրեզմանէն անգին մէկ երջանիկ ու խաղաղ բնակութիւն մը կայ՝ անմեղութեան ապահով բնակարան մը : Թէ որ իմ կենացս դժբաղդ օրերը այս բանտիս մէջ պիտի ըմբռնան , հոն կը տեսնանք զիրար . հոն պիտի գտնանք մէկգմէկ քեզի պէս ընտիր բարեկամ

ներ, և իմ թշնամիներս հոն պիտի չկարենան իմ սիրելեացս գրկէն զատել հեռացընել զիս : Ես մըտքովս միայն հոն թուչելով՝ ինչպէս որ մէկը ձմեռուան մէջտեղերը աչքին առջև կը բերէ գարնան գեղեցիկ օրերը որ երթալով կը մօտենան, նմանապէս ես ալ կը մոռնամ երբեմն բանտի մէջ ըլլալս, և աչուըներս կը դադրին արցունք թափելէն... Իմ սրտիս կտրճուածիւնը կը զարմացընէ զքեզ. բայց գիտնաս Իթոպալ, որ ես ալ միշտ հաստատուն չեմ կրցած կենալ. և այս կտրճուածիւնս ալ այն ճշմարիտ Աստուծոյ շնորհքն է, որուն որ ապաւիններ եմ : Դուն ալ ուրեմն անոր ապաւինէ, և նոյն կտրճուածիւնը կը զգաս դուն ալ քու սրտիդ մէջ :

Ահ Յովսէփ, ըսաւ երիտասարդ հովիւ գերին զգածուած բոլորովին, ես եկեր էի որ քու վիշտերդ մխիթարեմ, և հիմա դուն զիս կը քաջալերես... բայց իմ յուսահատ և կոտրած սիրտս չկրնար քու կտրճուածիւնդ ունենալ. ահ, չէ բարեկամ, դուն պիտի չմեռնիս այս բանտիս մէջ. գիտցիր Յովսէփ որ մենք չենք ուզեր ասկէց ետև ալ ծառայել մէկ անգուծ տիրոջ մը, կամ կը մեռնիմ ես, և կամ կը խալըսեմ զքեզ իրեն կատաղուածեան ճանկերէն. պիտի կոռւիմ քեզի՝ և քու առաքինուածեանցդ համար. չեմ կրնար անգործ վատուածեամբս քու թշնամիներուդ օգնական սեպուղի : Եկուր ետևէս, փախիր այս ահաւոր բանտէն, ո՞ գիտէ թերևս այս մէկ անգամ մըն էր որ բազդ ունեցայ այս բանտը մոռնալու. զէնք մը չկայ վրաս, բայց բարեկամուածեան կրակն է՝ որով զինուած եմ, ո՞վ կրնայ դիմացս ելլալ : Դեռ կը յիշեմ Յովսէփ, ինչպէս ալ կրնամ մոռնալ այն օրը որ ես բանտ մտնելու աւտեն՝ քու աղաչանքներդ՝ քու արցունքներդ էին միայն որ իմ շղթաներս վրայէս փրցուցին : Այն ատենը դուն դեռ զիս չէիր ճանչնար, գթուածիւնը միայն շարժեց քու սիրտդ, և ես հիմա կ'ուզես որ

վայրկենի մը մէջ ոտքի տակ անելով բարեկամութիւնը, երախտագիտութիւնը, այն Աստուածը որ դուն ինծի ճանչցուցիր, և այն առաքինութիւնները որ դուն իմ սրտիս մէջ դրիր, անգութ սրտով թողում զքեզ մեռնիլ այս սարսափելի բանտիս մէջ: Արցունքները՝ քու բռնաւորներուդ ձեռքէն զքեզ խալըսցընելէք չունին, ինչուան հիմա չտեսանքու դառն արցունքներդ. արիւն միայն է հիմա որ պէտք է թափել: Եկուր ետեւս, ինքն ալ Աստուած կը պատերազմի անմեղութեան պաշտպանութեան համար:

Այս խօսքս ըսելու ատենը՝ կորձութեամբ մը վազեց բռնեց Յովսէփայ ձեռքէն՝ դուրս քաշելու զինքը այն սարսափելի բանտէն:

Ետ քաշեց իր ձեռքը Յովսէփ. Թէ որ կ'ուզես, ըստ. Իթոպալին, իմ թշուառութեանցս ծանրութիւնը թէթեցընել, դուն ալ բարեկամ, քաջութեամբ համբերէ անոնց: Ամէնիկդ ալ հաւատարիմ մնացէք Պետափրեսի, ինքը չէ յանցաւորը... Իարձկր անակդ. տար հետդ ամենուն խաղաղութիւն և կորձութիւն: Շինէ նորէն իմ սեղանս. Ժողկէ հոն բոլոր ընկերներդ, և քանի որ շունչս վրաս է, այս տխուր բանտիս մէջէն իմ սրտէս ելած հառաչանքներն ալ ձերիններուն հետ միանան. ինչնայ գթութիւնը երկընքէն ձեր վրայ, և իրեն ձեռքը սրբէ ձեր աչքերէն թափած արցունքնիդ: Առէք նորէն քնարները, Ժողկեցէք դաշտերուն ծաղկըները, և առաքինի սէր մը մխիթարէ ձեր բարեկամութեան կարօտէն քաշած վշտերնիդ: Ձեր երջանկութեան յիշատակաւր դոնէ երբեմն դադրին արցունքներուս հոսանքները... Կ'ուզես Իթոպալ, որ ասկէ ինքզինքս խալսեցընելու ատեն յանցաւոր ձգեմ զիս: Կ'ուզես որ փախչիմ ասկէց ինչպէս որ վառ գերի մը կը վախչի տանջանքէն, և իմ յանցանոցս ձայնը հասնի ետեւս ինչուան հօրս տունը, և

չթողու ինձի երթալու գրկելու իմ սիրելիներս
այսպիսի նախատինք մը վրայէս չարբած :

Գոնէ ըսէ ինձի, պատասխանեց Իթուպալ, ո՞վ է
քու թշուառութեանցդ պատճառը . ինչուան այս
օրս ամենայն խնամքով քու գաղտնիքներդ պահէր
եմ, և ես դեռ քու առջի թշուառութիւններդ ալ
չէյտեմ . ըսէ, հանգարտեցուր իմ սիրտս ալ . քու
սիրտդ ալ . գոնէ հիմակուան ցաւերուն պատճա
ռը դիր սրտիս մէջ : Այս ըսելով՝ գորովանօք մը
սխմեց Յովսէփայ ձեռքը :

Երախտագէտ սրտի մը պարտքերը յայտնի են
քեզի ալ, Իթուպալ, ըսաւ Յովսէփ . մէկ ընտիր
տիրոջ մը ունեցած պարտքս կը ստիպէ զիս՝ այս
պիսի ատելի ճշմարտութիւն մը ծածկել բոլորո
վին . . . Սիրելի՛ բարեկամ . ա՛ռ իմ վերջին բարե
ներս : Երբօր մահը իմ սրտիս փափաքները լեցը
նելու որ ըլլայ, ժողովէ՛ թէ որ կարենաս, իմ մո
խիրս, և տար անսառփին այն առանձին տեղը, և
դիր իմ կործանած խրճիս աւերակներուն տակ՝
ուր որ արցունքներս վազեր են : Հայրենական գե
րեզմանին մէջ չկրցայ թաղուիլ նէ, գոնէ բարե
կամներս շիրմիս չօրս կողմը պատեն . դիր վրան յի
շատակարան մըն ալ, թող կարգայ ամէն մարդ
ՀՈՍ ԳԱՀՈՒՅԾ Է ՄԵՎ ԳԺԲԱԳԿԻ ՄԸ ՄՈՒԻՐԸ :
Գնա՛ երբեմն դուն ալ հոն, այս քու սիրելի ձե
ռուրներովդ ծաղիկներ սփռէ գերեզմանիս վրայ .
չըլլայ որ աչուրներդ արցունք թափեն, յիչէ միշտ
հոն որ մահը՝ այն քաղցր բնակութիւնն է որ քու
բարեկամդ գտեր է աշխարհիս վրայ : Թէ որ ձեզմէ
մէկը ծանր վշտի մը մէջ էյնալու որ ըլլայ, թող եր
թայ քաշուի այն առանձնութեան մէջ՝ որն որ ես
լալու նուիրեր էի . հոն կը համոզուի որ իրեն վըշ
տերը չեն հաւասարեր եղեր այն թշուառութեանց
որ իմ ծաղիկ հասակս չորցուցին փճացուցին, և
ո՞ դիտէ թերևս իմ ստուերս ալ կը համնի վրան
զինքը քաջալերելու :

Այս խօսքերուս վրայ՝ երկուքն ալ գրկեցին զերար, և ինկան գլորեցան անբարբառ անկողնոյն վրայ: Չէր կրնար Ռթոպալ բաժնուիլ իր սիրելի բարեկամէն, և յորդ արցունք միայն կը թափէր. ինքն Յովսէփ ալ զգածուած բոլորովին հառաչանքներ միայն կը հանէր սրտէն: Ասանկ են երկու եղբայրներու վերջին բարևները որոնք զերար գորովանօք կը սիրեն, և որոնցմէ մէկը մահուան դուռը հասած որ ըլլայ, երկար ատեն կը ջանայ միսթարել իր եղբայրը, բայց մահուան վերջին վայրկեանները կը հասնին, կ'աներևութանայ աչքէն իրեն տեսիլը, կը զգայ միայն որ գիրկը առած կը սխմէ զինքը և իր արցունքներուն մէջ կը թաթխէ, այն ատեն՝ մահուան սպառ քրտինքը վրան իջնալու վայրկենին՝ իր սիրտը վերջին անգամ մըն ալ բարեկամութեան զգացմունքովը կը զուարթանայ, և իր աչուրները մտրելու ատեն՝ իրենց արտասուացը վերջին կաթիլներն ալ կը թափեն:



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Յ Ի Կ

Ե Ր Գ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ



ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յովսէփ մինակ մնացած՝ երկար ատեն խոր ցաւերու մէջ պաշարուած մնաց. մէյմըն ալ յանկարծ վեր ցառքեց մէկ մեծ աղաղակի մը շիտթութեան ձայնէն : Մէկէն բանտին դռները բացուեցան, և երկու բանտարդեալներ ներս մտան : Ամենովփիս և Դարբալ էր իրենց անուաները : Ծիրանիներով ծածկուած էին, և զգեստներուն վրայ զարդի տեղ դրուած գոհարներն ու օսկիները կը փալփրլէին բանտին մթութեանը մէջ : Երկուքն ալ տագնապներնէն և յուսահատութիւններնէն կուլային, և մէկ կողմանէ ալ կը ջանային ծածկել իրենց արցունքները . ցածութիւն մը հպարտութեան հետ կը տեսնուէր վրանին . չորս կողմերնին կեցած պահապան զինուորներուն հետ հպարտ ձայնով մը կը խօսէին, և անոնց պաշտպանութիւնը կ'ուզէին : Բայց իրենց հպարտութիւնն ալ աղաչանքներն ալ անօդուտ եղան . բանտի մէջ փակուած դեռ ալ կանջներնուն մէջ կը խօսէին բազմութիւն ժողո-

վրդեան մը հանդիսի աղաղակները • մեռելի գոյն մը պատեց երեսնին , և մէկ դաժան ըուլթիւն մը ինկաւ վրանին :

Յուսահատութեան հառաչանքները վերջապէս սկսան բանտը թնդացընել • երբեմն զիրար կը նախատէին , և երբեմն սրտերնուն կատաղութիւնը իրենք իրենց դէմ կը դարձընէին • Գարբալ որ Ամենովփիսէն աւելի ծանր յանցաւոր էր , երկրթէ վանդակի մէջ գոցուած կատղած վայրենի խող մը դարձեր էր , ահուաները կը կրճըտէին , և կատաղութեան փրփուր մը կապուտցած շրթունքները կը ծածկէին • աչուրներէն կրակ կը ցատքեցընէր • և գլուխը յուսահատութենէն պատերուն կը զարնէր , որով մէկ խուլ արձագանգ մըն էր որ մութ կամարները կուտային • երկուքն ալ կրակ դարձեր էին տեսնալով որ մէկ գերիի մը հետ մի և նոյն բանտը ինկեր էին :

Յովսէփ այս միջոցներուս խաղաղ կեցած իր թըշուառութեանցը մէջ՝ ամենեին տրտունջի ձայն մը չէր հաներ • միայն երբեմն երբեմն հառաչանքներ բերնէն կ'ելլային : Այս երկու յանցաւորներուն յուսահատ վիճակներնէն սիրտը զգածուած՝ կարծես թէ մոռցաւ իր թշուառութիւնները , միտքը դրաւ միսիթարեւ զանոնք • մօտեցաւ անոնց և անոյշ ձայնով մը ըսաւ • Երկար ատենէ ի վեր՝ առանց յանցանքի մը , ես ալ կեցեր եմ հոս...

Ողորմելի՛ գերի , ահաւոր ձայնով մը խօսքը կը տրեց Գարբալ , դեռ կը յանդգնինս ալ զքեզ մեզի հետ բաղդատելու : Այս տեղս ինչ մեծ տարբերութիւն ունի քու բնական խրճիթէդ • աշխատութենէ խալըսած , աւելի երջանիկ չէս հոս , որ հանդատեան համը կ'առնես •

Չայնը քաշեց Յովսէփ... Եւ ըսաւ ինքնիրեն զարմանքով մը , թէ Չիրենք յանցաւոր ալ տեսնելով զգածուեցայ իրենց վիճակին վրայ , և իրենք իմ հա-

լածուած անմեղութեանս անզգայ կը գտնուին...
 Ո՞ւր է բարեկամութեան այն անոյշ ձայնը որ իմ
 սրտիս մէջ մխիթարութիւն մը կը ծագէր. ո՞ւր էք
 դուք ալ սիրելիներս, որ ինծի պէս դժբաղդի մը
 ձեռք կուտայիք, որ երկար ատեն մըրբիկներու զի-
 մաց ինկեր կը տագնապիմ:

Յաւիտենական Աստուած մը իր բարձրութեան
 աթոռէն, ուսկից որ բոլոր տիեզերք մէկ աւազի
 հատի մը պէս կ'երևնան, գարձուց իր սրատես ա-
 չուրները երկրիս վրայ, որոնք կը թափանցեն ամէն
 տեղ ցորեկուան աստղին ճառագայթներէն աւելի՝
 որոնք ինչուան խոր անդունդները կը հասնին՝ կը
 լուսաւորեն: Երկնից կամարը որ շարժուն պարըս-
 պի մը պէս տարածուած է անհուն ընդարձակու-
 թեան մը մէջ՝ իրեն տեսութենէն բան մըն ալ չը-
 ծածկեր, և անոր մէջի գեղեցիկ օրհնութեանց ձայ-
 ներուն հետ մէկտեղ՝ որ միանալով անմահից փա-
 ռաբանութեանցը հետ մէկ տեսակ հրաշալի ներ-
 դաշնակութիւն մը կը ձևացնեն, կը լսէ նաև պրզ-
 աի ճճիի մը վերջին հառաչանքը, կամ մէկ տերևի
 մը իյնալը այս հեռաւոր աշխարհիս մէջ: Բայց այս
 վայրկենիս իր աչուրները թագաւորաց պալատնե-
 րու վրայ չէին պտրտէր, և ոչ բնութեան գեղեց-
 կութեան վրայ, ոչ ալքատի խրճիթի վրայ՝ որ
 շատ անգամ իր տեսութեան կէտն է, և ոչ երջա-
 նիկ իմաստնոյ մը վրայ. մէկ աւելի մեծ տեսարան
 մը իր մտադրութիւնը իրեն կը քաշէր, և ասիկայ
 առաքինութիւնն էր որ թշուառութեան հետ ճա-
 կատ ճակատի եկած յաղթական կը հանդիսանար:

Այն միջոցին որ Ամենովիիս և Դարբալ կը նա-
 խատեն Յովսէփը, յաւիտենականն Աստուած կը
 զիտէր զինքը բանալին թանձր կամարներուն մէ-
 ջէն. մեծ էր ասպարէզը, բայց բոլոր տիեզերքէն
 աւելի ընդարձակ. վասն զի հանդիսադիր կէցեր էր
 նա ինքն անսահմանն Աստուած: Եւ ահա տեսաւ

Յովսէփ երկնային զօրաց գնդեր՝ հիանալի գեղեցկու-
 թեամբ մը զարգարուած . կը լսէին վերէն երկրնքէն իր
 հառաջանքները , կը տեսնէին իր արցունքները : Ընդհանուր լու-
 թիւն մը պատեց երկինքը , մէկ անոյշ գթութեան զգացմունք մը բոլոր
 անմահից սիրտը գրաւեց : Վեր վերցուց Յովսէփ
 աչուրները՝ տեսաւ որ ամենագութ Աստուածն էր
 որ իրեն վրայ կեցեր կը նայէր . գագրեցան Յովսէփայ
 սրտին հառաջանքները , արցունքները կտրեցան ,
 նայեցաւ՝ և ահա զուարթ և երջանիկ օրեր , իբրև քօյլի
 մը տակէն տեսաւ , որ կը սպասեն իրեն : Նման էր
 ամենեկին ինչպէս որ աշխարհիս կենդանութիւն
 տուող աստղին առջի ճառագայթները որ կը զարնեն ,
 բնութիւնը նորէն ոգի կ'առնէ , ստուերները կ'
 անհետանան , զուարթութիւն մը անտանները կը
 պատէ , և զարմանքի մը մէջ պաշարուած աչք մը
 կը տեսնայ որ վայրկենէ վայրկեան տեսարանը կը
 գեղեցկանայ :

Նոյն ատենը երկինքին սրբազան գունդերը աչուրնին
 գէպ ի վեր Աստուծոյ աթոռը վերցընելով Յովսէփայ
 համար շնորհք կը խնդրէին : Շուտ մը պատրուտեցան
 այն ամպերն որ Աստուծոյ լուսափայլ աթոռը կը
 ծածկէին , պայծառ լոյս մը ծագեց մէջէն որ բոլոր
 բնութիւնը զուարթացուց , և մէկ ձայն մը քան
 զբոլոր հրեշտակներունը շատ աւելի ներգաշնակ
 այս խօսքերս որոտաց .

Ուզեցի մէկ ճշմարիտ իմաստութիւն մը՝ թշուառութեանց
 մէջ մաքրել զտել , ուզեցի հասկըցընել երկրի՝ որ
 մանկութեան հասակն ալ կրնայ ըլլալ առաքինի . և
 երկնից ալ՝ որ մարդը թէպէտ փեղերաց մէջ ամենէն
 նուաստ հոգեղէն արարածն է՝ բայց հաւասար է
 երկնաւորաց երբոր իր անմեղութիւնը անարատ
 կը պահէ թշուառութեանց մէջ ալ : Ահա ինչպէս որ
 ոչնչութենէ ելաւ լոյսը՝ հիմայ ալ կ'ուզեմ որ
 չարութիւնը ծնանի բարիք . որպէս զի

մահահանացուներն ալ որ պատրաստ են արանջալու՝ գիտնան թէ Ձեռք մը կայ՝ որ ոչ երբէք արգարը կը թողու :

Այս պատգամները որոտալէն ետև՝ առաջ կան չեց Ռթուրիէլը Եգիպտոսի պահապան Ոգին :

Եթովպիոյ խորերը՝ չմտենալու քարաժայռներու մէջ քաշուած՝ որ հին և անապատ դարձած բերդի մը երևոյթ ունէր, հոն Նեղոսի սկզբնաւթեան մօտերը կը բնակէր այս պահապան Ոգին : Ինչպէս մէկ գեղեցիկ ծառ մը անուշահոտ պտուղներով ծանրացած՝ միայնակ կը բարձրանայ անապատի մը մէջ, և որուն շուքին տակ խմաստունը՝ աշխարհիս շփոթութիւններէն փախչելով կը վազէ հանգստութեան համը առնելու, ասանկ ալ այս պողաբեր ջրին հոսանքը կը վազէր այն ցամաք քարաժայռներուն մէջէն : Մահահանացու մը ամենակին ոտք կոխած չունի հոն. և Ոգին ալ՝ Աստուածութեան մը պէս, անտեսանելի է մարդու՝ որ իրեն պարգևներովը զարգարուած է :

Այն ժայռերէն ջրի մէկ սլաքի հոսանք մը բղխելով՝ որ մարդուս անտարբեր աչքը և ոչ ուշադրութեան կարօտ կը սեպէ՝ կը ցուցնէ իրեն աշխարհս ստեղծողին մեծութիւնը : Այն անբեր և անկենդան կարծուած քարաժայռները, մանր կենդանի մարմիններ կը ծնանին, և այն հոսանքին հետ մէկտեղ կը վազէ Եգիպտոսի բոլոր հարստութիւնը :

Ռթուրիէլ Աստուծոյ ձայնը առնելուն պէս մէկէն դէպ ի երկինք իր ընթացքը շակեց, ելաւ Աստուծոյ մեծվայելչութեան աթոռին առջև, և երեսի վրայ ինկաւ երկրագոյնութիւն ըրաւ : Աստուծոյ բարձր պատգամները ընդունելէն ետև, թիւերը բացաւ, թուաւ ընկղմեցաւ երկնից ընդարձակ տարածութեանը մէջ՝ և կտրեց ակեղերքը. որչափ որ կը տեսնար օտքին տակը աշխարհքներ որ կը պտըտին՝ այնչափ ալ վսեմ խորհուրդներ իր մտքին դմացը կ'ելլային :

Արևուն բարձրութենէն՝ ուր որ քիչ մը հանգ-
չեցաւ, դարձաւ այս աշխարհիս գունտին վրայ որ
մեղքերու և աւելորդապաշտութիւններու թանձր
ամպերու մէջ թաղուած ծածկուեր էր. և այս մը
թուլթեանց մէջ մահկանացուք տագնապեալ կը
պտրտէին դժնդակ կրքերու մէջ, ինչպէս որ քա-
րաժայռներու մուտ ծակերու մէջ թռչուն մը աս-
դիս անդին զարնուելով կը թռչի: Արևէն ելաւ ար-
տորանօք թռաւ դէպ ի երկիրս անանկ լուսաւոր
պայծառութեամբ մը՝ որ կարծես թէ այն աստղին
մասն էր՝ որ զատուելով կ'իյնար աշխարհիս վրայ:

Ամպի մը մէջ ծածկուած ինչաւ Յովսէփայ բան-
տին առջևը. բացուեցան դռները, և Նթուրիէլ մը
տաւ ներս. թեթև լուսաւորութիւն մը ծագեց այն
մուտ կամարներուն մէջ. և անուշահոտութիւն
մը բուրեց բնակարանին մէջ, կարծես թէ գե-
ղեցիկ արշալոյսը որ այս միջոցին դաշտերը կը զար-
գարէր, իր զուարթ լոյսը և անոյշ բուրմունքները
այս ահաւոր տեղուոյս մէջն ալ տարածեր էր:

Մօտեցաւ Յովսէփայ որ հանդիստ կը քնանար.
կեցաւ կը դիտէր զինքը. իրեն սուր ու թափանցող
աչուրները արտաքին երևութին վրայ միայն չմնա-
ցին՝ ուր որ մեր հետաքրքրութեանը սահմանն է,
այլ ինչպէս որ մարդկային տեսութիւնը մաքուր
ու պայծառ ջրի մը յատակը կը տեսնէ ոսկիին գըլ-
տորիլը, ինքն ալ նայեցաւ տեսաւ Յովսէփայ ա-
ռաքինութիւնները իրենց բուն ծննդեան տեղը.
տեսաւ որ անոր ազնիւ սրտէն կը բղխէին, և հրա-
շալի կերպով մը կարծես թէ ամէն երակներուն
մէջ տարածուելով իրեն բոլոր էութեանը կենդա-
նութիւն մը կուտային: Զարմանք մը պատեց
երկնային Ոգին. ինչուան այն վայրկեանը դեռ չէր
տեսած մէկ մահկանացու մը որ ասանկ փափուկ և
գերազանց սիրտ մը ունենայ: Ետքը դարձուց ա-
չուրները և նայեցաւ Ամենովփիսի և Դարբալի վը-
րայ, որ տագնապեալ քուն կ'ըլլային:

Այն ժամանակներն որ աշխարհիս տղայու թեան վրայ դեռ քիչ ատեն անցեր էր, և Աստուած դեռ կը հաճէր յայտնապէս իր խորհուրդները հալորդելու մարդկութեան՝ որ վերջին մնացորդներն էին այն երջանիկ օրերուն, որոնց մէջ մարդս կարծես թէ և ոչ իսկ կը զգար թէ երկնքին և երկրիս մէջ հեռաւորութիւն մը կայ, այն ժամանակները, երազներն երբեմն երբեմն մէկ սրբազան երկնային լէզու մըն էին. անոնք մեր կոյր տգիտութիւնը կը լեցընէին, և մշուշի մը մէջ անյայտ կեցած ապագան՝ երազներու մէջ խորհրդաւոր դարձուածքներու տակ կը յայտնուէր. և քանի որ մարդուս ըզգայութիւնները քնոյ մէջ թալուած կը հանգչէին՝ մահուան տեսարանի մը մէջ, հոգին՝ թողլով մարմինը՝ որուն կենդանութիւնն էր՝ կը թռչէր երկնք, և հոն մահկանացուաց և թագաւորութիւններու վիճակները կ'իմանար:

Յովսէփ վարժած ըլլալով կանուխկեկ արշալուսին հետ արթըննալով՝ բացաւ աչոււնները: Այն փալիլուն նուազ լոյսն որ տեսաւ, և անուշահոտութիւնն որ առաւ՝ ինքզինքը զուարճալի անտառի մը մէջ կարծեց. բայց իր երկու ընկերները դեռ կը քնանային:

Ամենովփիս գեղեցիկ երազ մը կը տեսնէր. բայց Դարբալ կ'երևնար որ ձախորդ տեսիլքներու մէջ կը պտըտէր: Գիշերներն (*) ալ, ըսաւ Ամենովփիս

(*) ԾՆՆԴ. Խ. 1-25: — Եւ եղև յետ բանիցս այսոցիկ յանցևաւ տակառապետ արքային եգիպտացւոց, և մտտակարար տեսան նոցա արքային եգիպտացւոց: Եւ բարկացու Փարաւոն ի վերայ երկոցուն ներքինեացն իւրոց. ի վերայ տակառապետին, և ի վերայ մտտակարարին: Եւ եզգնոսա ի բանտի առ դահճապետին. յայնմ բանտի տեղոջ ուր Յովսէփն կայր. և յանձն արար զնոսա դահճապետն Յովսէփայ. և կայր նոցա ի սպասու: Եւ էին աւուրս ինչ ի բանտի անդ: Եւ տեսին երազ երկոցին, զիւրաքանչիւր երազ ի միում գիշերի: Տեսիլ երազոյ տակառապետին և մտտակարարին որ էին արքային եգիպտացւոց, մինչ էին ի բանտի անդ: Եմուտ

Դարբալին, երջանկութեան օրերուս տեսարանն ներովը՝ վտերս չեն դադրիր: Երազիս մէջ տեսայ որ սրթի ճիւղ մը ձեռքս առած՝ որուն վրայ շատ ողկոյզներ կային՝ կը ճզմէի խաղողը թագաւորին գաւաթին մէջ. և իմ պաշտօնս ընելով՝ իրեն կը հրամայընէի: Եւ երբոր թագաւորը անոյշ աչքով մը երեսս նայելով՝ գաւաթը ձեռքէս կ'առնէր՝ արթընցայ: Մտածէ դուն հիմա սրտիս յուսահատութիւնը քանի որ զիս այս բանտիս մէջ կը դրաս նամ, ուսկից խալըսէլու յոյս մը չկայ:

առ նոսա Յովսէփ ընդ առաւստն, և ետես զնոսա՝ և էին խառվեալք: Ահա ցարք ցնեքքինիսն Փարաւոնի որ էին ընդ նմա ի բանտի սնդ առ տեսան նորա՝ և ասէ. ընդէր տրտում են երեսք ձեր այսօր: Եւ նորա ասն ցնա, երազ տեսաք, և մէջ որ իցէ որ մեկնիցէ զնա: Եւ ասէ ցնոսա Յովսէփ, ոչ ապաքէն ի ձեռս Աստուծոյ իցէ մեկնութիւն նոցա. պտտեցէք ինձ: Եւ պտտեաց տակառապետն զերազն իւր Յովսէփայ՝ և և ասէ. թուէր ինձ ի տեսեան իմում, որթ մի առաջի իմ: Եւ յորթն երեք ուռք՝ կանաչք յոյժ: և ունէր երիս ողկոյցս հասեալս ողկոյց խաղողոյ: Եւ բաժակն Փարաւոնի ի ձեռին իմում: Առնուի զխաղողն, և ճմէի ի բաժակն Փարաւոնի, և տայի զբաժակն ի ձեռս Փարաւոնի: Եւ ասէ ցնա Յովսէփ, այս է մեկնութիւն նորա: Երեք ուռքն, երեք աւուրք են: Այլ ևս երեք աւուրք, և յիշեցէ Փարաւոն զիշխանութիւնն քո, և անդէն ի նմին տակառապետութեան քում կացուցէ զքեզ. և տացես զբաժակն Փարաւոնի ի ձեռս նորա, ըստ առաջնոյ իշխանութեանն քո՝ որպէս և էիր տակառապետ: Այլ զիս յիշես յիւր յորժամ բարի լինիցի քեզ, և արասցես ինձ որդմութիւն. և յիշես ցնա զիս առաջի Փարաւոնի. և հանցես զիս ի բանտէ աստի յայտմանէ: Ձի գողանալով զորացան զիս յերկրէն եբրայեցոց. և աստ՝ ինչ ոչ արարի, և արկին զիս ի տուն զբոյս այսորիկ: Իբրև ետես մատակարարն թէ ուղիկ մեկնեալ, ասէ ցնովսէփ. և ես տեսանէի յերազի, թուէր ինձ թէ երիս խանս նաշնոյ ունէի ի գլուխ իմում: Եւ ի վերնում խանին յամենայնէ զոր ուտէր արքայ Փարաւոն, զորմ մատակարարաց. և թուէրք ուտէին զնա ի խանէ անտի՝ որ էր ի վերայ զիւրոյ իմոյ: Պատասխանի ետ Յովսէփ և ասէ ցնա. այս է մեկնութիւն նորա: Երեք խանքն երեք աւուրք են: Յետ երից աւուրք բարձցէ Փարաւոն զգլուխ քո ի քէն, և կախեցէ զքեզ զգայտէ. և կերի ցնա թուէրք երկնից զմարմին քո ի քէն: Եւ եղև յաւուրն երբորդի, որ ծննդոց էր Փարաւոնի, և առնէր ուրախութիւն ամենայն ծառայից իւրոց: Եւ յիշեաց զիշխանութիւն տակառապետին, և զիշխանութիւն մատակարարն ի մէջ ծառայից իւրոց: Եւ կացոյց տակառապետն անգրէն յիշխանութեան իւրում. և ետ զբաժակն ի ձեռս Փարաւոնի: Եւ զմտակարարն կախեաց զիւրայտէ, որպէս և մեկնեացն Յովսէփ:

Երբոր Ամենովինս իր խօսքը ըմնցուց, Խթուրիէէ՛ որ Յովսէփայ քովը կեցեր էր՝ մեզմ' և անոյշ ձայնով մը քանի մը խօսք ականջէն վար ըսաւ, նը ման զեփիւռի ամենաթեթև շարժմունքի մը՝ որ հազիւ թէ կը զգայ ծառին տերևը :

Յովսէփի՛ իր հոգւոյն վրայ յանկարծ ազդեցու թիւն ելած նոր իմաստներուն վրայ ինքն ալ ապշած զարմացած, Երազդ՝ սիրտս շարժեց, ըսաւ Ամենովինսին, կ'ուզեմ մտքիդ տագնապը ցրուել : Ահա իրեք օր ալ դեռ, և անկէց ետև թաղաւորը քեզի շնորհք պիտի ընէ, և զքեզ քու առջի պաշտօնիդ պիտի հասցընէ : Հազիւ թէ Յովսէփ իր խօսքը ըմնցուցեր էր, Ամենովինս ուրախութենէն ինքիրմէ դուրս ելած, մոռցաւ իր կատաղութիւնը, վազեց գերիին վրայ, գրկեց զինքը, և երգմունք ըրաւ որ իր պաշտօնին հասնելուն պէս՝ առջի իշխանութիւնը զինքը այն բանտէն հանելու պիտի բանեցընէ :

Այն ատեն Գարբաշն վախը մէկդի դրած և ա՛նանկ յաջող մեկնութեան մը յուսով, Ո՛վ հրաշալի երիտասարդ, ըսաւ, դուն որ երազներու թարգմանն ես՝ մտիկ ըրէ իմինս ալ : Տեսայ երազիս մէջ որ գլխուս վրայ իրեք աման ունէի, մէջը կերակուր դրուած, և երկնքի թռչունները ամէն կողմէն կը թափէին վրան : Իրենց կռիւէն բոլոր օդը տակնու վրայ էր, և իրենց շփոթութեան ալաղակները դեռ ինչուան հիմա ականջիս մէջ կը խօսին : Ըսաւ՝ և անհամբեր կը սպասէր պատասխանին :

Խթուրիէէ՛ երկրորդ անգամ մըն ալ ապագայ ըլլալիքը բացաւ Յովսէփայ հոգւոյն առջևը : գութը շարժեցաւ խեղճին : Ըութիւն մը պատեց վրան : Գարբաշ կը ստիպէր զինքը ըսելու : Մի հարցընէր ըլլալիքը, ըսաւ երիտասարդ գերին, երբեմն վտանգաւոր է պատուելը այն մութ քօղը որ մեր ճակատագիրը կը ծածկէ մեզմէ : Փոյթ չէ, կ'ուզեմ ես,

կը հրամայեմ ըսել, վրայ բերաւ Գարբալ, ըսէ յայտնապէս մահս պիտի գուշակես: Այլևայլ ճամբաներ կան որ հոն կ'առաջնորդեն մարդու, պատասխանեց Յովսէփ սիրտը ելած: Այն ատեն հպարտութեամբ լեցուած Գարբալը սպառնալից ձայնը բարձրացընելով, թէ որ վայրկեան մըն ալ չըսես, ըսաւ, կենդանի պիտի չտեսնես զքեզ: Աւեր ջապէս կ'ուզես, կրկնեց Յովսէփ անուշուութեամբ մը. ահա ուրեմն գիտցած ըլլաս... որ իրեք օրէն ետև... խայտառակ մահապարտութեան պատիժ մը պիտի հասնի զլուխդ: Այս խօսքերս անանկ կերպով մը ըսաւ, որ կարծես թէ գլխասիրտ դատաւոր մըն էր՝ որ յանցաւոր մը դատապարտելու ատեն կը հառաչէր: Գարբալին գոյնը նետեց, գող մը պատեց վրան, սկսաւ գլորտըկել, ինկաւ այն գերիին ոտուըններուն քովը՝ զորնոր հպարտութեամբ նախատեր էր:

Աներևութացաւ Իթուրիէլ, իրեն հետ մեկտեղ վերացաւ այն լոյսն ալ որ ծագեր էր բանտին մէջ, ինչպէս որ երեկոյեան լոյսը կ'ընկղմի կը լմըննայ մութ խաւարին մէջ:

Հազիւ թէ իրեք օր անցեր էր վրան, Ամենով փիս իր առջի պաշտօնին հասաւ թագաւորին պալատին մէջ, և Գարբալ կախաղանը ելաւ:

Ինքն ալ զարմացաւ Յովսէփ տեսնելով որ երկու երազներուն տուած մեկնութիւնները ճիշդ կատարուեցան: Մխիթարական անդրադարձութիւն մը անցաւ մտքէն, որ Աստուած ըլլալէքները իրեն յայտնելովը՝ յայտնի կը ցըցունէր որ զինքը երեսէ չէր ձգած. բայց ինքը կը փափաքէր փարատել այն մութ գիշերը՝ որ իրմէ կը ծածկէր բուն իր ասպագայ վիճակը: Ամենովփիս իր այս անակընկալ երջանկութենէ գինովցածի պէս եղած, և հազարումէկ տեսակ հանգէսներն ու պատիւները, խեղճ Յովսէփը իր մտքէն հեռացուցած՝ մոռցաւ

բողորովին Յովսէփայ տուած խոստամունքը : Բայց Իթուրիէլ ասկէց ետև Յովսէփայ պահապան Ոգին էր :

Գիշերը՝ որ արևուն հետ մէկտեղ աշխարհիս թագաւորութիւնը բաժներ են մէջերնին, ծանրութեամբ մը առաջ կու դարձնեն ու ձորերը, դաշտերն ու քաղաքները՝ մթութեան մէջ ընկրղմած՝ աշխարհիս վրայ նայողին աչքին՝ միակերպ տխուր տեսարան մը կը բանային : Փարաւոն թագաւորը խոր քնոյ մէջ ընկղմեր էր իր պալատը զինուորներով պահպանուած՝ անմերձենալի էր մարդու : Բայց Եգիպտոսի Ոգին զինուորներուն մէջէն անցաւ մտաւ պալատը, մտեցաւ թագաւորին որ կը քնանար, և հանդերձեալ Եգիպտոսի գլխուն գալիքը՝ ահաւոր տեսարաններով իրեն առջև բացաւ : Արթընցաւ թագաւորը տակնուվրայ եղած, և սիրտը հանդիստ մը չէր գտնար : Արևը ելաւ և դեռ իր տագնապը պաշարեր էր զինքը. Փարաւոն դուրս ցատքեց անկողնէն այն ժամուն որ գեղացիի մը աչուրներէն կը կտրի քունը. կանչեց Պետափրէսը և իր բոլոր պալատականները :

Արբոյ խորերը հին դարերէն մնացած տաճար մը կեցեր էր. անիկայ էր աւելորդապաշտութեան բնակարանը : Այս հրէշին վնասակար շունչը՝ այն գեղեցիկ տեղերը՝ անբեր անապատ դարձուց, որն որ այն տեղը ընտրեր էր իրեն՝ աւելի դիւրաւ ծածկելու իր պատգամներուն ստութիւնը, և հետաքրքրութեամբ իրեն քաշելու մարդկանց սիրաբ : Հպարտութիւնը, արհաւիրքը, և խաբէութիւնը իր տէրութեանը պաշտօնեաներն էին. մէկ դառնութեան կրակ մը իրեն աչուրներուն մէջ կը փայլէր. անհանգիստ՝ տակնուվրայ եղած, և գլխնալով ալ ստուգիւ որ երկրէս վառնուած՝ պիտի ստիպուի դժոխքին մէջ լինալու ընկղմելու, ձեռքը պատրաստ միշտ բռներ էր մէկ թանձր կապ

մը՝ որով մահահանացուաց աչուրները կը կապէր . և մէկ կողմանէ ամէն հնարք կը բանեցընէր իր իշխանութեան կեանքը երկնցընելու : Այս միջոցներու ամէն տեղերէ Եգիպտոս կը վազէին իր պատգամները ընդունելու . և ինքն այն անապատներուն ծոցէն իր թոյնը կը տարածէր բոլոր աշխարհիս . երեսը : Շատ անգամ կ'երթար կը նստէր թագաւորաց հետ իրենց արքունական աթոռներուն վրայ :

Իմանալուն պէս որ Փարաւոն տագնապներու մէջ պաշարուեր է, ժողովեց բոլոր իր կախարհները և իր տէրութեան պաշտպանները : Դէպ ի պալատը խմբովին սկսան երթալ՝ ոմանք մարդկանց կուրութեանը վրայ խնտալով՝ և ոմանք ալ սաստիկ նախանձայոյզ՝ իրենք ալ իրենց վրայ կասկածոտ : Ելան թագաւորին առջև . յարգութեամբ ծոռեցաւ անոնց թագաւորը, և պատմեց տեսած երազները՝ որ զինքը կը տագնապէին :

Բայց, դժ զարմանալեացս, շուարած բոլոր խումբը մնաց անշարժ . լեզունին՝ որ չարութեանց պատրաստ էին՝ երկար ատեն անձայն և անխօս կեցեր էին պապանձեալ : Իթուրիելի զօրութենէն ամէնքն ալ ճնշուած, այս առաջին անգամն՝ ճշմարտութիւնը խոստովանեցան, ըսին յայտնապէս որ մէկ անթափանցելի բօղ մը իրենցմէ ալ կը ծածկէր այս ապագան :

Այն ատեն Ամենովիտի միտքն ինկաւ Յովսէփը, և թագաւորին առջև մօտենալով յայտնեց իրեն, որ մէկ գերի մը կար բանտին մէջ իրեն և Բարբալին բանտակից, և որն որ անմեղ կ'երևնար, և թէ անիկայ իրենց տեսած երազներուն մէջ իրենց ճակատագիրները կարգացեր էր : Շուտ մը հրաման տուաւ թագաւորը որ այն գերին իր առջևը բերեն :

Յովսէփ, որ մոռցեր էր Ամենովիտն ալ և այն երազներն ալ որոնց թարգման եղեր էր՝ իր առջի յուսահատ վիճակին մէջ ընկզմած կեցեր էր . մէկ

մին ալ յանկարծ իր բանտին գոները բացուեցան :
 Թագաւորի հրամանը առջևը դրին որ շուտով
 պէտք էր որ Թագաւորին առջևը ելլար : Չարմանք
 և վախ մը պատեց Յովսէփայ սիրտը . բայց ստի-
 պուած հնազանդելու՝ ոտուրները գողգողալով
 դուրս ելաւ բանտէն . բազմութեան խումբ մը ըն-
 կերացաւ իրեն , իր տկարացած և մթութեան վար-
 ժած աչուրները հազիւ կրնային դիմանալ առաւօ-
 տեան գեղեցիկ լուսոյն ճառագայթներուն :

Փարաւոն իր ոսկիէ աթուռին վրայ նստեր էր .
 չորս կողմը բոլոր իր մեծամեծներն շարուեր էին ,
 փառիբլուն պսակ մը ճակտին վրայ կը շողար , և
 ձեռքն ալ իր Թագաւորական դաւազանը բռներ
 էր : Մտաւ Յովսէփ պալատը , և գողալով մը մօ-
 տեցաւ Թագաւորին աթուռին դիմացը . սիրտը վա-
 խի մէջ էր՝ չըլլայ թէ նոր յանցանք մըն ալ վրան
 ամբաստանուի : Այրիկեան մը Թագաւորական
 պայծառութիւնը աչուրները առաւ . բայց իր ան-
 մեղութիւնը զինքը ապահովցուց , և Եգիպտոսի
 պահապան Ռզին զինքը քաջալերեց , որ ամենուն
 աչքէն անտեսանելի՝ իրեն վրայ ամպի մը մէջ ծած-
 կուած կը թռչէր : Պարզ մահկանացու մըն է , ը-
 սաւ Յովսէփ ինքն իրեն , որ այս փառաւորու-
 թեանցը տակ կեցեր է : Այս մտածմունքներով
 վերցուց միտքը ինչուան տիեզերաց Թագաւորին
 վրայ , և անկէց ետև այն մեծութեան երևոյթը աչ-
 քին ուրիշ բան չէր տեսնուեր բայց մէկ կեղծիք
 մը : Նման մէկ երկնային ոգիի մը որ երկիր ինչնա-
 լով մարդկային երևութի տակ , և պահելով երկ-
 նից բնակիչներուն յաւիտենական երիտասարդու-
 թեան վայելչութիւնը՝ ամենուն սիրտը շարժե՛-
 այն հասակին պառշաճ շնորհքներովը՝ և միանգա-
 մայն՝ ծերութեան արժանաւոր պատկառանքն ալ
 ընդունի ամենէն . ասոր նման Յովսէփ ալ թէպէտ
 գեռ երիտասարդ՝ բայց Թշուտութեանց մէջ հա-

սունցած՝ այն ժողովքին մէջը կեցած կը հանդիսանար :

Կը դիտէր զինքը թագաւորը • որչափ որ հարատուութիւնն ու անզգամութիւնը կախարդներուն աչուրներուն մէջ կը շողային՝ նոյնչափ ալ ճշմարտութիւնն ու պարկեշտութիւնը Յովսէփայ ճակտին վրայ կը փայլէին : Ամենուն աչքը Յովսէփայ վրայ էր ••• զինքն որ տեսան՝ ամէնքն ալ մոռցան որ գերի մըն է Յովսէփ : Այսչափ է ահա առաքիւնութեան ծածուկ ազգեցութիւնը՝ որ կարծես թէ հոն Յովսէփին էր թագաւորը :

Բայց այն ժողովքին մէջ ամէն բանէն աւելի Յովսէփայ աչքին Պետափրեսը զարկաւ • ի սկզբան չճանչցաւ զինքը ամենեւին • բայց ինչ զարմանք ու այլայլութիւն էր որ զգաց Պետափրէս սրտին մէջ երբոր տեսաւ իր գերին Յովսէփը • երեսը նայածին պէս՝ մէկէն ճանչցաւ զինքը, մնաց անշարժ, բարեկամութեան և ցաւոց զգացմունքները կը կտրտէին իր սիրտը :

Թագաւորը վերջապէս այս երկար լռութիւնը կտրելով ըսաւ Յովսէփայ • Ո՛վ երիտասարդ, երկինքը զքեզ մարդկային մտքէն դուրս իմաստութեամբ մը զարդարեր է, բայց կը տեսնեմ որ թըշուառութեանց ալ դառն վիճակին հանդիպեր ես • խօսէ համարձակ, յայտնէ մեզի ապագայի մը գաղտնիքը : Ներկայութիւնդ՝ քու համբաւդ ստուգեց, և ճշմարտութիւնը կարծես շրթունքներուդ վրայ կը տեսնենք : Այս գիշեր Երկինքը երկու երազներ խրկեց ինձի^(*) : Այնպէս կուգար ինձի որ

(*) ԾՆՆԴ. ԳԼ. ԽԱ. 1-8. — Եւ եղև յետ երկուց ամաց աւորց, ետես Փարաւոն երազս թուէր թէ կայցէ յեզը զետոյ : Եւ ահա որպէս թէ ի գետոյ անտի ելանէին եօթն երինջք զեղեցիկ տեսանելով, և ընտիրք մարմնով և արածէին ի խողի անդ : Եւ այլ ևս եօթն երինջք ելանէին յետ նոցա ի գետոյ անտի, զազիւք տեսանելով, և վտիտք մարմնով, և ալածէին առ այլ երնջովքն առ եզեր գետոյն : Եւ ատէին եօթն երինջքն

Նեղոսի եզերքները կը պտղատէի, մէյմըն ալ տեսայ որ այն բարերար գետին մէջէն գէր երինջներ կ'ելլային՝ հրաշալի գեղեցկութեամբ մը զարգարուած և որոնց սպիտակութիւնը կը զարմացընէր զիս . բայց ետեւէն ուրիշ սև և տգեղ երինջներ ալ ելան՝ մեռածի պէս նիհարացած, կլլեցին առջինները՝ և նոյնպէս նիհար մնացին : Սարսափած արթընցայ տեսած երազէս . քնացայ նորէն, բայց ահա ուրիշ երազ մըն ալ հոգւոյս առջին ելաւ : Ոսկեգոյն հասկեր տեսայ որ պարարտ հատիկներով իրենց ցողունին վրայ կը ծանրանային . և ահա ուրիշներ ալ ցամքած՝ և տաք քամիներէ չորցած՝ ելան առջիններուն ետեւէն, կլլեցին զանոնք . և մնացին նոյնպէս ճռզած և ողորմելի : Նոյն միջոցին ձայն մըն ալ ազդեց սրտիս որ այս երազները աստուածային են, և թէ իմ թագաւորութեանս երջանկութիւնն ասոնցմէ կը կախուի : Խօսէ երիտասարդ, թերևս իմ ժողովրդեանս աղէկութեանը համար է . ո՞ն գիտէ թերևս մէկ բարերար Աստուած մը հաճի յայտնել քեզի մեկնութիւնը :

Թագաւորը այսպէս խօսելէն ետև ընդհանուր լռութիւն մը պատեց բոլոր ժողովքը : Այն լռութեանը մէջ Յովսէփ իր հոգւոյն դիմացը կը տեսնէր ապագայ հանդերձեալքը իբրև մէկ անհուն տարածութիւն մը՝ որ մթութեան մէջ ծածկուած էր, և ուր որ թեթև կայծեր միայն կը սլալային . և ահա ի՞թուրիչ մէկդի առաւ այն թանձր քօյը

զազիրք տեսեամբ և վտիտք մարմնովք, զեօթն երինջս գեղեցիկս տեսեամբ և զընտիրս : Զարթեալ Փարաւոն և անդրէն ի քուն եմուտ : Եւ ետև երազ երկրորդ . և ահա եօթն հասկ ելանէին ի միում փնջի ընտիրք և գեղեցիկք : Եւ ահա եօթն այլ հասկք սինք և խորշակահարք ելանէին յետ նոցա՝ և կլանէին եօթն հասկքն սինք և խորշակահարք զեօթն հասկսն՝ զընտիրս և գատորս : Զարթեալ Փարաւոն և էր երազ : Եւ եղև առաւօտ . և իռ ովեցաւ անձն նորա՝ Եւ առաքեաց կոչեաց զամենայն երազահանսն Եգիպտոսի, և զամենայն իմաստունս նորա, և պատմեաց Փարաւոն զերազն իւր . և ոչ որ էր որ մեկնէր զերազն Փարաւոնի :

որ ներկային և ըլլալիքներուն մէջ տեղը ձգուած էր : Եւ ահա տեսաւ Յովսէփ մէկ պայծառ լըս մը, և առանց թռչելու վերանայու այս աշխարհներէս վեր՝ յաւիտանական Աստուծոյ վճիռները կարգաց իմացաւ :

Ո՛վ Թագաւոր, ըսաւ Յովսէփ, ահա իրաւցընէ իմ Թշուառութեանցս մէջ՝ մէկ Աստուած մը ազգէց ինծի ըլլալիքը, բայց ոչ այն աստուածներէն է զորոնք Եգիպտոս կը պաշտէ, այլ գերադոյն էա կը, ամենազօր արարիչը և բնութեան մէկ հատիկ տերը : Ապագայ ըլլալիքները այնպէս են իր առջևը, ինչպէս որ մեզի ներկայն է : Մէկ նայուածքով մը բոլոր դարերը կը գիտէ, և տիեզերքը ամբողջ կը տեսնայ. ինքն է որ այս վայրկեանիս կը խօսի քեզի հետ ալ, և ես ուրիշ բան չեմ՝ բայց եթէ իրեն պարզ Թարգմանը : Այն գէր երկնջները, որ Նեղոսէն կ'ելլային և այն պարարտ հասկերն՝ առատութեան տարիներ կը նշանակեն, իսկ այն վատուժ երկնջներն և այն չորցած հասկերը՝ կը ցուցընեն որ առատութենէն ետև սարսափելի սով մը պիտի տիրէ Եգիպտոս (*). Յովսէփ խօսքը կտրեց և յու-

(*) ԾՆՆԳ. ԳԼ. ԽԱ. 25-42. — Եւ ստէ Յովսէփ ցՓարաւոն. երազն Փարաւոնի մի է, զոր ինչ Աստուած առնելոց է՝ եցոյց Փարաւոնի : Եօթն երկնջն գեղեցիկք՝ եօթն ամ են. և եօթն հասկքն գեղեցիկք՝ եօթն ամ են. երազն Փարաւոնի մի է, և եօթն երկնջն տգեղք և վտիտք որ ելանէին զՏառնոցա, եօթն ամ են. և եօթն հասկքն օխք և խորակահարք լիցի զեօթն ամ սով : Բանն զոր ասացի Փարաւոնի՝ այն է զոր ինչ Աստուած առնելոց է, եցոյց Փարաւոնի : Ահա ամք եօթն եկեացն բազում լիութեան յամենայն երկիրս եգիպտացւոց : Եւ յետ այնորիկ եկեացէ եօթն ամ սովոյ, և մոռացին զլիութիւն յամենայն երկիրս եգիպտացւոց և սպառեցէ սովն զերկիր : Եւ ոչ ծանօցի լիութիւնն յերեսաց սովոյն որ քայցէ յետ այնորիկ. քանզի աստիկ լինիցի յոյժ : Այլ վասն կրկնելոյ երազոյն Փարաւոնի երկիցս անգամ. զի ճշմարիտ է բանն առ ի յԱստուծոյ և փութացի Աստուած առնել զնա : Եւ արդ՝ տես խնդրեալ այր մի իմաստուն և խորհրդական Փարաւոնի. և կացուցես զնա ի վերայ երկրիս եգիպտացւոց : Եւ արասցէ, և կացուցէ զորձակալ Փարաւոնի ի վերայ երկրիս : Եւ հինգերորդ եացն զարմտիս երկրիս եգիպտացւոց զեօթն ամացն բարեաց եկելոց, և ժողովեցի ցորան

սահատուծիւն մըն է պատեց թագաւորին եւ իր պալատականներուն ճակատին վրայ :

Դուն, ըսաւ Փարաւոն Յովսէփայ որ Աստուած լուսաւորեր է, չէս մի կրնար մեզի հնարք մը ցուցնել այս սարսափելի հարուածին դարման մը ընելու :

Պատասխանեց Յովսէփ . Ո՛վ թագաւոր, իմաստուն եւ խելացի մարդ մը դէր Եգիպտոսի վրայ որ առատուծեան տարիներուն մէջ երկրին բերքերուն մէկ մասը պահելով սովէն ժողովուրդը խալըսցնէ :

Կարծես թէ ինքն անոյշ Համոզումն էր որ կը խօսէր իր բերնէն : Այն խորհուրդը շատ հաճոյ անցաւ թագաւորին ալ իր պալատականներուն ալ, անոնցմէ շատը կը յուսային իրենք հասնիլ այնպիսի փառաւոր պատուոյ մը : Ո՛վ ժողովուրդ, ահա հիմակուրնէ անոնք ձեր հացովը կը ջանան կերակրուիլ, և զձեզ սովէ խալըսելու տեղ՝ առատուծեան տարիներու մէջ ալ ձեր հացը ձեր ձեռքէն յափըլտակելու պիտի ջանան :

Երբոր անոնց միտքը տեսակ տեսակ խորհուրդներու մէջ կը պտըտէին, Փարաւոն Յովսէփայ դառնալով, Ահա զբեզ ընտրեցի, ըսաւ, ահա զբեզ

ընդ ձեռամբ Փարաւոնի . և կերակուրք ի քաղաքս պահեսցին : Եւ եղիցի կերակուրքն պահեալ երկրիս յեւթն ամս սովոյն որ լինիցին յերկրիս եզիպտացոց . և մի սատակացի երկիրս ի սովոյ : Եւ հաճոյ թուեցաւ քանքն առաջի Փարաւոնի, և առաջի ամենայն ծառայից իւրոց : Եւ ասէ Փարաւոն ցամենայն ծառայս իւր . միթէ գտանիցնմք այր այնպիսի՝ որ ունիցի զոգի Աստուծոյ յանձին իւրում : Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփ . որովհետեւ եցոյց Աստուած զայդ ամենայն, չիք այր իմաստնագոյն և խորհրդական քան զքեզ . դու լիցիս ի վերայ տան իմոյ . և բերանոյ քում՝ հնազանդ լիցի ամենայն ժողովուրդ իմ . բայց միայն աթոռովս ի վերոյ եղէց ես քան զքեզ : Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփ . ահաւասիկ կացուցի զքեզ այսօր ի վերայ երկրիս եզիպտացոց : Եւ հասնեալ Փարաւոնի զմատանին իւր ի ձեռանէ իւրմէ՝ եզ ի ձեռին Յովսէփայ . և զգեցոյց նմա պատմուճան բեհեզայ, և արկ մանեակ ոսկի ի պարանոց նորս :

զրի իշխան Եփիպտոսի վրայ • բոլոր իմ ժողովուրդս քու հրամաններուդ հնազանդի, և ես միայն ըլլամ քեզմէ վեր : Ուսկից գտնամ ես քեզմէ աւելի խելացի և իմաստուն մարդ մը : Անշուշտ եմ՝ այն Աստուածը որ քու բերնէդ կը խօսի՝ ինքն զքեզ խաւրեց հոս՝ մեր գլխուն գալու հարուածէն խալսցընելու զմեզ : Հնազանդ եմ ես իրեն վճիռներուն, և երանի թագաւորաց որ կրնան իրենց արքունական գաւազանը այսպիսի պաշտօնատերներու ձեռքը վստահիլ • Բնչ յանցանք էր որ համարձակեցան ձդել վրագ • քու վրագ ամեն բան ճշմարտութիւն մը կը քարոզէ • նոյն խակ երկինքը զքեզ կ'արդարացընէ : Չէ չի կրնար ըլլալ որ յանցաւոր ըլլաս գուն, որովհետև Աստուած մըն է որ իր գաղանկները կը յայտնէ քեզի :

Ասոնք ըսելու ատենը, հանեց մասնին, և երկընցոց Յովսէփայ՝ որ սաստիկ զարմանքէն լռիկ և անշարժ կեցեր էր : Պաշտականները որ կը սպասէին իրենք հասնիլ այն փառաւոր պաշտօնին՝ նախանձէն իրենք զիրենք կ'ուսէին • բայց մէկէն հանդարտութիւն և հաւանութիւն մը պատեց վերանին : Ասոր նման է որ կը տեսնուի երբեմն Ովկիանու խաղաղ երեսը՝ այն միջոցին որ մըրիկը տակնուվրայ կ'ընէ բոլոր ծովերը :

Յովսէփ՝ ըուութիւնը քակելով՝ հրամանքիդ ինծի բրած շնորհքը, ըսաւ թագաւորին, կը զարմացընէ զիս, և սիրտս կը շարժէ • բայց ես չեմ կրնար շնորհքդ ընդունիլ : Յանցաւոր սեպուած եմ, և չեմ գիտեր ինչ յանցանք է որ վրաս կ'ամբաստանուի • վկայ կը կանչեմ այն Աստուածը՝ որ ինծի ապագայ ըլլալքը յայտնեց, կը բողոքեմ այս քու արքունական աթուղի՝ որուն վրայ արդարութիւնն է որ կ'իշխէ՝ որ ես յանցանք մը չունիմ ամենևին : Պետափրէս • սիլ իմ ազնուասիրտ տէրս, ինչպէս կըրցար զրպարտութեանց ականջ կախել, և քու գըր-

կէդ բաժնուէլու ատենս՝ թափել վրաս բոլոր քու բարկութեանդ կայծակները : Հրաման տուր դարձնելու զիս նորէն բանար, քննէ իմ վարքս, ինչուան սրտիս խորը մտիր նայէ, և թէ որ յանցաւոր ըլլամ ես, ահա ինքը թագաւորը որ ըսածներս կը լսէ ինքը զիս պատուհասէ : Բայց թէ որ զիս անմեղ գտնալու որ ըլլաս՝ մեծութեան և փառքի չեմ փափաքիր, նորէն քու սէրդ քու բարեկամութիւնդ դարձուր ինծի, և ես ուրախ և զուարթ կը դառնամ սիրով իմ հօրս տունը, իսկ թէ որ այս շնորհքըս շատ մեծ սեպէս ինծի, և թէ որ վճռուած է ինծի միշտ թշուառ մնալ աշխարհիս վրայ, տուր ինծի նորէն իմ գերութեանս շղթայները, թող իմ օրերս արցունքներու մէջ մաշին լմնման . բայց իմ սիրտս հաւատարիմ պիտի մնայ քեզի, և իմ բոլոր կեանքս թող վկայէ քեզի իմ անմեղութիւնս : Այս խօսքերս ըսելու ատենը գետի պէս արցունքները կը վազէին աչուրներէն :

Թագաւորը սաստիկ զգածուած, բարկացած աչքով մը դարձաւ նայեցաւ Պետափրեսի երեսը, բոլոր պալատականներն ալ զգածուէր էին : Այն ատենը ան ամպերուն մէջէն որոնց մէջ Եգիպտոսի Ագին կը բնակէր լուսաւոր ճառագայթ մը ծագեց, մարդկային աչուրներուն անտեսանելի՝ ինջաւ Չալիւքայի ամուսնոյն վրայ : Եւ ահա հոգւոյն մէջ արթնցաւ բարեկամութեան սէրը որ ունէր Յովսէփայ վրայ . դարձուց աչուրները անմեղ երիտասարդին վրայ, և առջած իրեն պարկեշտութեանը և իրեն ազնուական վստահութեանը վրայ, ինկաւ պլուեցաւ Յովսէփայ ոտուրներուն, և աչքէն յորդարցունքներ թափելով սկսաւ հառաչել . Երկինք, անիրաւութիւնը ուրեմն իմ սիրտս ալ մտէր ապականէր է, ես անմեղ մը ուրեմն չարչարեր եմ . Յովսէփ, սիրելի բարեկամ, թէ որ կը ներես ինծի որ այս անունը սամ քեզի, սիրտս կտոր կտոր ըրիր :

խղճմտանքս՝ ինչուան որ գերեզման ինչնամ պիտի հալածէ զիս, և իմ աճիւնս ալ պիտի խռովէ... Դուն որ իմ գերիս էիր, տէրս ես ասկեց ետեւ, եւ լիր բարձրացիր այն բարձր աստիճանս ուր որ առաքինութիւններդ զքեզ կը հրաւիրեն, և իրաւացի սրատիժը թափէ վրաս... Բայց ահա աչուը ներուզ մէջ կը տեսնեմ, որ կընէրես ինձի: Փարաւոն տէր իմ, թագաւորն է հալածուած անմեղութեան վրէժխնդիրը. փառաւորէ Յովսէփը, և տուր իմ սրատուհասիս վճիռը:

Այս խօսքերուս վրայ թագաւորին բարկութիւնը ինչաւ: Յովսէփի փութաց՝ վեր վերցուց իր տէրը, և իր աչուըներուն մէջ՝ որ երկայն ատենուան արտամութիւն մը մտեր էին, փայլեցաւ քաղցր ուրախութիւն մը՝ սիրով խառնուած:

Ահ, հառաչեց Յովսէփի, այս փառաւոր վկայութիւնը որ իմ անմեղութեանս կուտաս, և քու վրէտագին ցաւդ՝ մոռցընել կուտան ինձի իմ թշուառութիւններս: Բանտին անգունդներուն մէջ՝ քու բարերարութեանցդ յիշատակը միշտ միտքս էր, և հիմա որ իմ տէրս ոտքս ինկած տեսայ՝ ինչպէս բաշատրեմ սրտիս զգացմունքը: Հիմայ ուրիշ շնորհք չեմ խնդրեր, միայն ազատութիւն, դառնալու իմ ծնած հայրենիքս: Հոն ի՛նչ սիրոյ կապեր սիրտս կը քաշեն, մէկ ծերունի հայր մը, մէկ սիրելի ամուսին մը, թէ որ կենդանի են դեռ... եղբայրներ... Շատ արցունք թափելու առիթներ կը սպասեն ինձի: Եւ ո՞վ եմ ես, մէկ խեղճ բնակիչ մը դաշտերու, ես մէկ թագաւորութիւն մը կառավարեմ: Ո՞վ թագաւոր՝ Աստուած չընէ, որ գայ օր մը որ ըրած շնորհքիդ վրայ ստիպուիս զվճալ:

Այս որ ըսաւ, մեծամեծներէն շատերը՝ որոնց սրտին մէջ փառասիրութիւնը բնութեան զգացմունքը խղզեր էր, և որոնք իրենց չափաւոր կարողութիւնը ճանչնալ չէին գիտեր, Յովսէփայ հրաժարելուն վրայ զարմացան և շատ գոհ էին:

Բայց Պետափրէս կը ստիպէր Յովսէփը որ իր գեղեցիկ առաքինութեանցը արժանաւոր վարձքը ընդունի . Փարաւոն ալ իր առաջարկութիւնը կը պնդէր : Այն ատենը նման պզտի ջրի առուակնէրու , որ մեծ գետի մը բունութենէ իրենց ընթացքէն խոտորելով՝ կը ստիպուէին իրենց ջրերը խառնել անոր հետ և մէկտեղ վազել զարնուիլ քարաժայռերու հետ որոնց գլուխները ինչուան ամպերը բարձրացած են , ասանկ ալ բոլոր պալատականներուն խումբը՝ ստիպուելով իրենց փառասիրութիւնը շողքորդութեամբ ծածկել՝ միացան կայսեր հետ մէկտեղ՝ համոզելու անձանօթ երիտասարդը : Յովսէփայ սրտին մէջ երկու հակառակ զգացմունքներ կը կուռէին իրարու հետ . զբսէն թագաւոր մըն էր որ զինքը կը ստիպէր , այնպիսի մէկ մը որ իրեն հրամայելու իշխանութիւն ունենալով՝ զիմացը կեցած կ'աղաչէր . բայց ներսէն ալ կարծես թէ կըզգար որ Յակովբ և Սելլմա իրենց կը կանչէին զինքը : Արջապէս յաղթանակեց բնութեան սէրը . և երբոր հեռանալու կը պատրաստուէր թագաւորէն և Պետափրէսէն որ զգածուած կը նայէր՝ մէյմըն ալ յանկարծ մէկ երկնային ձայն մը սրտին մէջ այս խօսքերս թնդացուց՝ կեցիր ուր կերթաս Յովսէփ . այն որ հանդերձեալքը յայտնեց քեզի , անիկայ կը հրամայէ քեզի մնալ Եգիպտոս : Չես տեսնար որ այս երկիրս՝ սովի տագնապներուն և մեծամեծաց ագահութեանը որս կ'ըլայ , և դուն պարտրկան ես խալըսելու Եգիպտոսը այս երկու հարուածներուն ձեռքէն ալ : Ինքն Աստուածքու տկարութեանդ կ'օգնէ : Հայր մը գրկելու կը վազես , ահա հոս ազգերու և ժողովուրդներու եղեր հայր :

Կանկ առաւ Յովսէփ , մօտեցաւ թագաւորին . Ահա կը զգամ , ըսաւ որ երկինքը կը հրամայէ ինծի հնազանդելու իրեն վճիռներուն , և ես ահա պա-

տրաստ եմ իմ՝ երջանկութիւնս զոհելու քեզի համար : Քանի որ սովը Եգիպտոս տիրէ ես ասկից չեմ հեռանար, բայց այս հարուածը՝ Եգիպտոս աւրելէն որ դադրի՝ կը փափաքեմ միայն թողուլ զիս որ բնութեան ձայնին ետևէն վազեմ՝ երթամ :

Յովսէփ այս խօսքերս ըսելու ատեն՝ այն յալութական հանդիսին մէջ աչուրները լեցուեցան . և իրեն վսեմ հոգին՝ բոլոր իր գէմքին և շարժմունքներուն մէջ կ'երևնար : Մեծութեան և սիրոյ չփայտորուելու զգացմունքներու մէջ ինկած՝ զգաց որ ուրիշ բան չէր՝ բայց մէկ պարզ մահկանացու մը : Թագաւորը զուարթացած՝ հանեց մատնին տուաւ ձեռքը, ոսկի վզնոց մը անցուց վրան, և փալիբլուն գեղեցիկ ծիրանի մը ինչուան ոտուրները կ'ինջնար . Պետապրէս ուրախութենէն ինքզինքը մոռցած՝ վազեց սլլուեցաւ Յովսէփայ հետ :

Այս միջոցիս պալատէն դուրս ելաւ յայտնուեցաւ Թագաւորին երազներուն շփոթութիւնը և Յովսէփայ մեկնելը : Այս հրաշալիքներուն ձայնը՝ մէկ մեծ հրդեհի մը երազնութաց բոցերուն պէս՝ քիչ ատենի մէջ տնէ տուն հասաւ տարածուեցաւ : Սովին տագնապէն՝ առատութիւնը մոռցան, քաղաքացւոց այլայլութիւնը այնպէս մը կը ցուցնէր որ կարծես թէ սովը արդէն պատեր էր բոլոր երկիրը :

Հրաման տուաւ Փարաւոն որ փառաւոր հանդիսով մը Յովսէփայ առաքինութիւնը վարձատրուի . և ցուցնեն ժողովրդեան Եգիպտոսի ազատիչը : Եկաւ պալատին դրանը առջև Թագաւորական կառքերէն մէկը (*), որ կարծես թէ շարժուն Թագաւոր

(*) ԾՆՆԴ . ԽՅ . 45-48 . — Եւ Եհան զնա յերկրորդ կտուս իւր . քարոզ կարգայր առաջի նորս . և կացոյց զնա ի վերայ երկրին եգիպտացւոց : Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփ . ահա ասիկ ես Փարաւոն , առանց քօ ոչ ոք համբարձցէ զձեռս իւր և զոտս իւր ի վերայ ամենայն երկրիս եգիպտացւոց . և կոչեաց Փարաւոն զանուն Յովսէփայ փամփթովսնսնէ :

ւորական ակթու մըն էր, և որուն վրայ հիանալի ակունքներուն փայլունութենէն՝ ոսկին կը մըթըննար․ վեց ձի՝ որոնց ձեան պէս ճերմութիւնը մարդուս աչքը կ'առնէր, հանգարտ քալուածքով կառքը կը քաշէին․ ակթուին ետեւէն՝ արդարութեան արձանը խորհրդաւոր պատկերներով և տաւերով ծեփուած՝ թաղը վեր կը բռնէր։ Ելաւ Յովսէփ կառքին վրայ, չորս կողմը զինուորները պատած՝ մտաւ ճեղքեց ժողովրդեան բազմութիւնը։ Այս պիտի հանդիսով մըն էր որ հռովմ ալ յաղթական զօրավարները կը մտնէին։ Բայց թէ որ անոնք ետեւէն և առջևէն՝ արիւնալից զէնքեր, շղթայակապ գերիներ, աւարհարութեանց կողոպուտներ կը քշէին կը տանէին, հոս խաղաղ առաքինութեան յաղթանակ մըն էր միայն։

Յովսէփայ տեսութիւնը՝ ժողովրդեան վրայէն փարատեց սարսափը։ Իմաստութիւնն ու մտրդասիրութիւնը որ իրեն զէմքին վրայ կը փայլէին՝ մէկ երջանիկ ապագայի մը աւետիսներ կուտային ամենուն․ արամութիւնը բոլոր ժողովրդեան ճակատէն աներևութացաւ, երեսի վրայ ինկած կառքին առջևը երկրպագութիւն կընէին իրեն, զուարթ ուրախութիւն մը ամեն կողմ կը փայլէր, և բոլոր քաղաքը գովեստներու և ծափահարութեանց ձայներէն կը թնդար։

Յովսէփ նախատական վիճակէ մը խալըսելուն պէս այսպիսի փառաւորութեանց մէջ զինքը տեսնելուն՝ չմոռցաւ ամենակին ինքզինքը․ ոչ այն փայլուն և գեղեցիկ կառքը, ոչ այն հարուստ իշխանութեան մատնին, ոչ այն փառաւոր ծիրանին՝ աչքին բան մը չէին տեսնուէր․ ժողովրդեան ուրախութիւնը միայն իր սիրտը շարժեց․ չունէր Յովսէփ՝ իշխանաց այն խիստ սիրտը, որ իրենք զերենք արժանաւոր սեպելով ուսմիկին յարգութեանը, անըզգայ աչքերով կը նային վրանին։

Հատ անգամ միաբը՝ իրեն ախորժեղի մտած մոռնաբնորուն մէջ ընկղմելով, այնպիսի փառաց մէջ՝ մտքովը կը թուչէր կ'երթար իր հօրը տունը, և այն միջոցին ոչ ժողովրդեան բազմութիւնը կ'երևնար աչքին, և ոչ անոնց գովեստները կը լսէին ականջները:

Այն ատենները Զաչիւքա բոլոր պիղծ մեհեանները կը պարտէր, և Եգիպտոսի բոլոր կուռքերը կը կանչէր օգնութեան: Նոյն գիշերը ելաւ գնաց այն անտառը՝ ուր որ Յովսէփայ խրճիթը կար. հոն շինած սեղանին առջևը գետին իյնալով և աչքին արցունքներովը թրջելով սեղանը. Ո՛վ Աստուած՝ իմ սիրականիս պողաց հառաչանօք, սուտ կուռքերով՝ ընդունայն աղաչանքներ նուիրեցի ինչուն այսօր. զքեզ կը պաշտեմ ես ալ. դուն ես անշուշտ բնութեան մէկ հատիկ Աստուածը, այն թշուառ երիտասարդին առաքինութիւնները՝ զոր կը հալածեմ, կը ստիպեն զիս հաւատալ: Անշուշտ ինքն ալ հիմա կ'աղաղակէ քեզի, սիրտս կը զգայ կը վայելէ քաղցրութիւն մը այս վայրկեանիս. վասն զի ահա ես ալ մի և նոյն իրեն Այն օգնութիւնն է որ կ'ուզեմ. և իմ ձայնս ալ՝ իրեն ձայնին հետ է որ կը խառնեմ: Հանէ սրտէս այս կիրքն որ զիս կը խղդէ, իսկ թէ որ այս քու կարողութենէդ վեր է...

Այս խօսքս ըսաւ չըսաւ՝ վախ մըն է սիրտը պատեց, չըլլայ որ նոյն Աստուածը հալածուած անմեղի մը վրէժը իրմէ պահանջէ: Իր հողւոյն այլայլութեանը մէջ՝ կարծեց որ սեղանը կը շարժի, որ անտառին բոլոր ծառերը իրար կ'անցնին, և թէ մէկ ահաւոր ձայն մը՝ դող ելած գետնէն կ'որոտայ: Սարսափէ մարմինը թուլցած, պաղ քրտինք մը ինչաւ վրան. փախաւ արտորնօք. ինկաւ Մեմփիս՝ իր պալատին մէկ անկիւնը գնաց ծածկուեցաւ:

Արևը իր ընթացքը կը շարունակէր. արգիլեց

Չալիւքա որ մարդ չհանգիպի քովը • գոյնը նե-
տած • բոլոր գողի մէջ՝ աչքին դիմացը եղած բա-
ներն ալ չէր տեսներ • այնպէս մը կուգար իրեն որ
աներևոյթ ձեռք մը միշտ աչքին առջևը կը դնէր իր
չարութեան տեսարանները • կիրքը խղճմտանքը
իր հոգւոյն մէջ տոգորուած՝ ահաւոր սարսափով
զինքը տակնուվրայ կ'ընէին :

Մէյմըն ալ յանկարծ ուրախութեան հազարա-
ւոր ձայներու աղաղակ մը և Յովսէփայ անունը ա-
կանջը թնդացուցին : Այս ի՞նչ երևոյթ է, ըսաւ ինք-
նիրէն , այս անունը՝ որ սրտիս ինչուան խորը տը-
պաւորուած է՝ միշտ ահանջիս մէջ իրեն արձա-
գանգը միայն կը հնչէ • ուրախութեան ձայներու
մէջ կը լսուի՞ այս անունը : Դեռ խօսքը բերանն էր ,
երբոր լսեց նոյն անունը աւելի որոշ կերպով : Չգա-
ծուած շփոթած , և տակնուվրայ՝ վազելով մը պա-
լատին բոլոր երկայնութիւնը կտրեց աչուրները
չորս կողմը կը դարձնէր ուր որ իր հոգւոյն տագ-
նապը իրեն կ'առաջնորդէր : Յովսէփայ յաղթա-
կան անունը՝ հազարաւորաց բերնէն հնչելով իր
ախանջները թնդացուց , և ահա նոյն վայրկենին
տեսաւ Յովսէփին ալ յաղթութեան կառքի մը վրայ
փառաւոր նստած : Ի՞նչ նոր տեսարան : Իրեն այ-
լայլած երևակայութեանը դիմաց եկան՝ մէկ պատ-
կերքի մը պէս իր չարութիւնները , իր պատիժը ,
և իր փառքին ոչնչանալը • այնպէս մը կուգար իրեն
որ իրեն տեսութեանը դիմաց բոլոր ժողովուրդը
սարսափէն կը գողար : Չարագուշակ յուսահատու-
թիւն մը աչուրներուն մէջ փայլեցաւ • երեսին գոյ-
նը նետեց՝ պատ կտրեցաւ • աչուրները մթնցան ,
կարծես թէ ամպ մը ինչաւ ծածկեց աչքէն բոլոր
տեսարանը , ախանջները՝ ալ չէին լսեր այն ուրա-
խութեան աղաղակներն որ իր սրտին վրայ սարսափ
մը կը պատէին • երթալով տագնապը սաստկացաւ՝
ինկաւ գլորեցաւ գետին կէս մը մեռած :

Սրտին կատաղութիւնը շուտով զինքը զգաստա-
ցուց և գնաց փակուեցաւ իր խուցին մէջ: Ձեռքն
առաւ Յովսէփայ զգետոն որ անոր փախչելու ա-
տեն իրեն ձեռքը մնացեր էր, և որն որ իրեն դառն
յիշելէք մըն էր իր սրտին կրիցը և նախատինքի մը
որ այն պատճառաւ քաշեր էր. աչքին արցունքնե-
րովը թրջեց զայն, բայց մէյմըն ալ յանկարծ կա-
տաղի նայուածք մը վրան ձգելով,

Ո՛վ զգետտ հառաչեց սրտէն, դուն որ ատեն մը
իմ յուսահատ կատաղութեանս կրակն էիր, դո՛ւն
հիմա ալ իմ չարաչար մահուանս վկայ պիտի ըլ-
լաս: Սրբազան օրէ՛նք ամուսնութեան, ձեր վրէժը
պիտի պահանջուի... Յաղթանակեց Յովսէփ, իմ
կատաղութեանս վրայ կը խնտայ. որչափ որ իրեն
անմեղութեանը տրուած վկայութիւնները փառա-
ւոր են և գեղեցիկ, այնչափ ալ մեծ է իմ ամօթս
ու նախատինքս. Եգիպտոս բոլոր պիտի իմանայ որ
գերիի մը առջև ամօթով մնացեր եմ ես... Ո՛ր աւ-
տուածը զինքը բանտէն քաշեց խալճսեց. գոնէ այս
միտիթարութիւնն ալ չմնաց ինծի որ ես ըլլայի զին-
քը իր շղթայներէն խալցցընողը. ես այս փափա-
քիս ընդունայն տեղը ընկայ ետևէն, և հիմա իմ
չարութեանցս դարման մը ընելու հնարք չմնաց:
Անտարակոյս հիմա կը փութայ երթալու, կը վազէ
պարծենալու իր Սելիմային որ արհամարհեց զիս...
կարելի չէ՞ մի երթամ ինչուան հօրը տունը՝ հաս-
նիմ ետևէն, մորթեմ Սելիման իր աչքին առջև, և
նոյն սուրը խոթեմ իր կուրծքն ալ... Ա՛յ յիմար
Չալիւքա. սպաննել զինքը կորոտաս, և չես տես-
ներ որ քու հարուածդ գլխուդ վրայ կեցեր է...
Ա՛հ ուր էր թէ Սելիման վերջի շունչին մէջ դրա-
նար. իսկ թէ որ հարկ է որ ապրին մէկտեղ, ո՛ւր
էր թէ իրենց ամուսնութեան վիճակն ալ իմ ար-
հաւիրքներովս դառնանար բոլորովն. Փութա՛ս,
ստուեր Չալիւքայի, թախր ետևէն, հասիր տակ-

նուվրայ ընելու իրենց երջանկութիւնը , չար կասկածներ իրենց սրտերուն մէջ արուեստեալ և թէ որ քու ամեն հնարքներդ բանեցընելէդ ետև՝ զիրենք նորէն երջանիկ որ տեսնես՝ դուն ալ վկայ իրենց նախանձելի միութեանը՝ փախիր գերեզմանէն ալ անդին՝ քու ընդունայն վրէժխնդրութեանցդ կսկիծը յաւիտեան քաշելու : Ո՛ւր էր թէ որ մը բոլոր Եգիպտոս զէնք վերցընէր ասոնց ցեղին դէմ , և ծովէն ու ցամաքէն ելլային հալածեւ զիրենք : Ան ատեն խոստուերս ալ քիչ մը հանգչէր հանդարտէր :

Սուրբ՝ որով ինքզինքը զարկաւ յուսահատութեանէն՝ բերնէն խօսքը կարեց : Գլորեցաւ գեախն , արիւնը գետի պէս կը վազէր , Յովսէփայ զգեստը թաթղուեցաւ բոլորովին : Իր յուսահատ կատաղութիւնը կշտացեր էր , սիրտը՝ արիւնը մէջը սառելու ատեն՝ դառնութեան կրակներով գեռ կ'այրէր կը բռնկէր , Յովսէփայ դէմքը իրեն մթնցած աչուրներուն դիմացը գեռ կեցեր կը փայլէր . չըրթունքները Յովսէփայ անունը կը հնչէին , և երբոր մահուան պաղութիւնը վրան տիրեց , և վերջին շունչերը տալու մօտեցաւ՝ որ ալ չէր կրնար այս սիրելի անունը կրկնել՝ իր վերջին հառաչանքն ալ նուիրեց Յովսէփայ :

Իսկ Յովսէփ իր նոր իշխանութեանը փառաւոր հանդէսը ընելէն ետև , կառքը բերաւ զինքը գեղեցիկ պալատի մը առջև զորն որ Փարաւոն իրեն բնակութեան համար որոշէր էր : Ինչաւ կառքէն , մըտաւ այն հիանալի պալատը՝ ուր արհեստը բնութեան գեղեցկութեանը հաւասարէր էր :

Յովսէփ քիչ մը հանգչելու մտքով՝ իր գերիններուն բազմութիւնը հեռացուց քովէն : Բանտի մը խորունկէն այս պալատին մէջ յանկարծ ինքզինքը փոխուած տեսնելով՝ չորս կողմը կը նայէր , կարծես թէ ստուգել կ'ուզէր չըլլայ թէ երազ ըլլայ տեսածը : Բայց ինչպէս որ մրրկեալ արեքներուն դի-

մայր կը փլչի կը կործանի հողէ բլուր մը, այնպէս ալ մէկէն այն զգացմունքներն որ ազադակաւ լեցուած հանդիսէ մը ստիպուած՝ սրտին խորը ամփոփուած էին յանկարծ դուրս զեղան: Ինկաւ գետին երեսի վրայ, և նոյն բնակարանը այս առաջին անգամ Յաւիտենական Աստուծոյ անունը թնդացուց:

Ամենակալ Աստուած, ըսաւ դէպ ի երկինք, դուն ես, այո՛ դուն ես որ զիս բանտին անդունդներէն հանեցիր դուրս: Ո՛ւր եմ ես հիմա. փառքի հանդէսներու մէջ. եղնկ ինծի իրաւ արգէօք ամեն բան զոհեցի՞ ես ասոնց համար. փառասիրութիւնը իշխեց արգէօք իմ սրտիս վրայ ալ. եթէ ճշմարիտ է, աս էրանի թէ բանտին մէջ մեռած անհետացած ըլլայի... Բայց դուն ես, ս՛վ Աստուած իմ, որ այս զոհերը ընելու հրամայեցիր ինծի. սրտէս դեռ արիւն կ'անցնի, բայց ասա ինքզինքըս կը յանձնեմ՝ քու ամենակարող ձեռքդ՝ ուսկից որ իմ բաղդիս թելը կախուած է:

Յովսէփ դեռ չսկսած այն տէրութեան մէջ կարգ կանոն դնելու՝ ուզեց իր սրտին մէկ տագնապը հանդարտեցնել. կանչեց իր գերիներէն մէկը, որուն հաւատարմութեանը վրայ վստահացուցեր էին զինքը:

Ելի՛ր գնա՛, ըսաւ իրեն, Քանանացոց երկիրը Յա կովբայ իմ հօրս դաշտերը մտնալու ատենդ՝ մէկ գեղեցիկ ձոր մը առջևդ կ'ելլայ՝ որուն մէջէն պայծառ ջրի առուակ մը կը սահի. հոն կը գտնես մէկ ծաղկահասակ հովուուհի մը՝ Սելիմա անունով. իրեն՝ արցունք թափելէն կը ճանչնաս զինքը: Ըսէ իրեն, որ ես կենդանի եմ, բայց իմ թշուառութիւններս մի պատմեր իրեն. բաւական են իրեն թափած արցունքները. իմացուր իրեն իմ հաւատարմութիւնս, ըսէ իրեն որ եթէ երկինքը ինծի հրամայած չըլլար թիչ մը ժամանակ զոհել զիս մէկ մեծ ժողովրդեան

մը երջանկուժեանը համար, ես այս պալատէն՝ շատ աւելի կ'ընտրէի մեր ամուսնուժեան տնակը : Թող ինքը Յակովբայ խմացրնէ իմ վիճակս, ինքը՝ հօրս սրտին սիրոյ զգացմունքներուն մխիթարանք ըլլայ... Մտիր բուն իրեն տնակն ալ. երեցիր հօրս, թէ որ կ'ասարի դեռ աշխարհիս վրայ. տես թէ ծերուժիւնն ու ցաւերը սրչափ ճշնէր են օրհնեալ ծերունին : Ար փափաքիմ ես, որ եթէ դեռ ուժէ ընկած չէ բոլորովին, քիչ մը ատեն յանձն առնէ հեռանալու իր մէկալ զաւկըններէն, բայց ինքը մինակ չգայ պանդխտուժեանս օրերը անուշցընելու : Իսկ թէ զինքը կենդանի չգտնես... գնա դաշտերէն ծաղիկները՝ Ժողվէ. մօտեցիր իրեն շիրմին, սփռէ վրան այն ծաղիկները ըսելով, Քու որդիդ Յովսէփն է որ այս ծաղիկները կը նուիրէ քեզի... Տես թէ իմ պզտի Բենիամինս, և մէկալ ուրիշ եղբայրներս ո՞րք են թէ չէ : Ել, գնա թուշելով. բոլոր իմ երջանկուժիւնս քեզմէ կախուած է : Յովսէփ խօսքը լմնցուց. և գերին խոստանալով ամենայն հաւատարմուժեամբ իրեն հրամանները կատարելու հեռացաւ քովէն :

Յովսէփայ սիրտը տեսակ տեսակ զգացմունքներու մէջ կը պտրտէր, ինչուան որ քնոյ ազդեցուժիւնը բոլոր մարմնոյն վրայ տարածուելով՝ խաղաղ հանգստուժեան մը մէջ ձգեց իրեն հողին :

Արևը հազիւ թէ հորիզոնէն վեր բարձրացեր էր՝ Յովսէփ որ ծուլուժիւն ինչ ըսել է չէր գիտեր՝ ելաւ անկողնէն : Ար պատրաստուէր բոլոր Եգիպտոս պտրտելու. գլուխնին գալու հարուածին դարման մը ընելու մտքով : Բայց ուզեց Յովսէփ բնուժեան զգացմունքին պարտքը լեցընելէն ետև. բարեկամուժեան պարտքն ալ կատարել. ուստի իր ճամբորդուժեանը ձեռք չզարկած, կառքը դէպ ի այն դաշտերը դարցուց՝ ուր որ գերուժեան վիճակ մը անցուցեր էր :

Այն եղանակին մէջն էր, որ բնութիւնը իր առջի երիտասարդութեան զարդերովը փառաւորուած էր: Պայծառ կանանչութիւն մը անտառները դաշտերն ու բլուրներուն կողերը կը ծածկէր. ծաղիկները իրենց անուշահոտութիւնը բուրբեր էին. և անոյշ կերպով մը մարդու ահանջները կը զմայլեցընէին ջրի հոսանքներուն ձայները՝ նոր ծնած թռչուններու ձագերուն ճիւղ ճիւղներուն հետ խառնուած. ինչ սրտաշարժ տեսարան էր Յովսէփայ համար: Բանտէն ելլալու ատեն իշխանութեան փառքը իրեն աչուրները այնպէս չէին զարմացուցած, ինչպէս որ բնութեան պարզ գեղեցկութիւնը իրեն սիրտը յափշտակեցին և անոյշ զգացմունքներ վրան ազդեցին: Մեծ ուրախութեամբ մը տեսաւ նորէն անտառները. կը բարեկէր բլուրները աղբիւրները. ինչպէս կառքէն, իր ձեռուրներովը ժողվեց դաշտերէն նոր ծրած ծաղիկները, և պզտի գետի մը վազուկ ջրէն գնաց կուշտ մը խմեց, ծարաւը անցուց:

Համբաւը դեռ չէր տարածած Յովսէփայ իշխանութեան հասնիլը Պետափրեսի դաշտերուն մէջ: Հովիւները օխուր և լքեալ իրեն թշուառութեանցը վրայ կը խօսէին միշտ, մէյմըն ալ փառաւոր կառք մը զարկաւ աչուրնին. բայց իրենք դեռ իրենց տըխուր խօսակցութեանցը հետ զբաղեր էին: Իթոպալ յանկարծ իր խոր արամուութենէն սաստիկ ուրախութեամբ մը զուարթացած՝ վեր ցատքեց՝ վազեց գէպ ի կառքը. հովիւները զարմացած դարձան կը նայէին ետեւէն, և ահա տեսան երիտասարդ մը ծիրանիներով ծածկուած, որուն վրայ իշխանութեան հետ մէկտեղ անուշութիւն մըն ալ կը փայլէր, կառքէն Իթոպալին գիրկը ցատքեց. ճանչցան Յովսէփայը: Զարմանք մը նախ պատեց ամենուն վրայ և սրտեցան մնացին, բայց մէկէն՝ զարմանքը փարատեցաւ, ամենքը մէկէն վազեցին երկու բա-

րահամներուն վրայ և չորս հողմերնին առած ուրախութեան ձայներով օգը թնդացուցին : Նման արցունքներու մէջ ընկղմած ընտանեաց մը, որ սուգի զգեստներով ծածկուէլէն ետքը՝ յանկարծ դիմացնին կը տեսնեն մէկ հայր մը՝ զորն որ սրատերազմի մէջ մեռած կը սեպէին • սարսափով մը պատած՝ կը կարծեն իրեն ստուերը տեսնել, և վախերնէն չեն համարձակիր երթալ գրկել զինքը • բայց բնութիւնը շուտով կը յաղթանակէ վախին վրայ, կը վազեն իրեն գիրկը, ուրախութիւն մը կը ծագէ տանը մէջ, կը հանեն կը նետեն մէկգլխի տրտմութեան զգեստները • ահա հովիւ գերիներուն անակնկալ ուրախութեանն ալ այս տեսարանն էր :

Շատ աւելի զգաց Յովսէփ այս սիրոյ նշաններն, քան այն ամենայն հանդէսներն՝ որոնցմով Մեմփիս քաղաքը իր նոր իշխանութիւնը փառաւորեր էր : Հոս չէր տեսնուեր նախանձոտ փառասիրութիւնն որ քթին տակէն մոմնալով իրեն յարգութիւն կուտար և ոչ ժողովրդեան մը աղաղակով լեցուած դովեստներու ձայներն կը լսուէին • Հոս բարեկամութիւնն էր որ սէր միայն կը նուիրէր և կ'ընդունէր :

Բայց սակայն այս բոլոր գերիները կը փափաքէին լսել տեղն ի տեղը իրեն այսպիսի փառաց հասնելուն հրաշալի պատմութիւնը : Նստաւ Յովսէփ անոնց մէջ խոտերուն վրայ, կատարեց խնդիրքնին, և պարզ կերպով մը այս զարմանալի դիպուածը պատմեց անոնց : Չարմանք և խնդութիւն փոփոխ կը տեսնուէր ամեն մէկուն գէմքին վրայ • սիրտ չէին ըներ բերնէն խօսքը կտրելու, և իրենց սրտին ուրախութեան սաստկութիւնը կը բռնէին, ինչուան որ Յովսէփ ըմնցուց պատմութիւնը • այն ատեն ամենը մէկէն խնդութեան ամեն տեսակ նշաններով իրենց սրտին զգացմունքները գուրս տուին :

Երբոր բոլոր գերիները այսպիսի զուարթ ուրա


խումբեան մը մէջ ընկղմեր էին, Յովսէփ քաջուեցաւ մէջերնէն, գնաց տեսնալու իր առանձնութեան տեղը : Հոն՝ ինչպէս որ ինքը աղաչեր էր Իթուպլին, տեսաւ որ սեղանը շիներ և ծաղիկներով զարդարեր են. ինկաւ երեսի վրայ երկրպագութիւն ըրաւ : Ետքը իր խրճիթին աւերակներուն պըտելով, Ահա նորէն կը տեսնեմ զքեզ, հառաչեց սրբտէն, ո՞վ իմ սիրելի խրճիթս, ուսկից որ կարծէի թէ բաժնուեցայ յաւիտեան, և ուր չէի յուսար թէ և ոչ իմ շիրխմս կարենայ ձեանալ : Իմ հօրս տնակին ստուերը քու վրագ կը տեսնեմ. Ասկէց ինչ հառաչանքներ խաւրեր եմ սրտիս սիրելիներուն. ասկէց որչափ անգամ՝ այսպիսի հեռաւորութիւն մը մէջերնիս ալ գտնուելով. մեր սրտերը գտեր են զիրար՝ միսիթարուեր են իրարմով : Այս տեղս իրենց անուններովը թնդացեր են, շատ անգամ իրենց դէմքերն ալ կարծես թէ տեսեր եմ որ այս ծառերուս մէջ կը պտըտէին : Սրբազան պատկերներ, դարձէք բնակելու այս տեղս, եկէք իմ երևա կայութեանս առջև, և իմ ցաւս միսիթարեցէք :

Այս ըսելով վազեց դէպ ի գերիներուն խումբը, բարեկամք իմ, ըսաւ անոնց, եկէք կանգնենք նորէն կործանած խրճիթս : Երբեմն երբեմն պիտի գամ հոս, ուր որ գերի եղեր եմ, մէկգի դնելու իշխանութեան շղթայները, և ձեզի հետ մէկտեղ բընութեան տէրը օրհնելու, և ասոր հովանիին տակ հառաչանքներ արձըկելու :

Յովսէփայ խօսքը դեռ բերանն էր, երբոր ամենքը մէկէն վազեցին անտառը : Ոմանք խրճիթին աւերակները կը վերցընէին, ուրիշները նոյն տեղոյն վրայէն նոր ծլած ծաղիկները կը մաքրէին. ոմանք ալ վազեցին բերին նոր արմաւենիներ որոնց նոր ծլած ճիւղերէն կարծես թէ զովութիւն մը կը բուրէր, և հոն տնկեցին բոլոր : Ինքն Յովսէփն ալ կ'աշխատէր մէկտեղ, ընդունայն տեղը բոլոր գերի-

ները կ'արգելէին : ՀարարտուԹիւնը և դատարկու-
Թիւնը, ըսաւ անոնց, աւելի նախատինք են ինծի
քան այս աշխատանքներն որոնց մէջ ծնած եմ, և
որոնց մէջ նորէն պիտի դառնամ : Բայց սրտին մէ-
ջէն՝ այս ալ անցաւ, ինչպէս կարելի է այնպիսի
աշխատանքէ մը փախչիլ՝ որ Սելիմայի համար է :
Յովսէփայ օրինակէն յորդորուած, և իրեն հա-
ճոյական բան մը ընելու մտքով՝ երգելով և ուրա-
խուԹեամբ խրճիթը ձևացուցին, որ կարծես Թէ
գետնէն բուսաւ և մէկ վայրկեանի մէջ լմնցաւ :

Քանի մը օր բարեկամուԹեան նուիրելէն ետքը
բաժնուեցաւ Յովսէփ իր գեղացի ընկերներէն և
անտառին քաղցր բնակուԹենէն՝ երթալու պտը-
տելու Եգիպտոսը : Նաւակ մը նկարներով ծաղիկ-
ներով և վարդագոյն դրօշակներով զարդարուած,
որ օգին մէջ Թեթև մը կը շարժէին, Նեղոսի եզեր-
քը կը սպասէր իրեն, յաջող քամի մը առագաստ-
ները ուռեցուցեր էր : Հովիւ գերինները Յովսէփայ
հետ եկան ինչուան գետեզերքը. պագտուեցաւ
հետերնին, մտաւ նաւակը, չուանները քակուե-
ցան, Յովսէփ ելաւ ճամբայ :



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Ց Ի Կ

Ե Ր Գ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Գ

UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO



ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Մովուն ընդարձակ թագաւորութեանը վրայ
ինչպէս որ նաւ մը քամիներու միայն կը հնազան-
դի, Յովսէփայ նաւակն ալ Նեղոսը կը կտրէր
կ'անցնէր՝ առանց թիակներով առաջնորդուելու :

Քիչ մը որ առաջ գացին երէք խոշոր բուրդեր
Յովսէփայ աջքին առջևը ելան՝ որոնք շատ ցեղերու
աշխատանաց պտուղներ էին : Թէ որ վրանին կար-
գաւորեալ ճարտարապետութեան երևոյթ մըն ալ
չտեսնուէր այն անկործանելի քարաժայռներէն
կրնային սեպուիլ, որոնք աշխարհիս ծննդենէն սկը-
սեալ՝ գագաթնին ինչուան երկինք երկնցուցած՝ ի-
րենց ծանրութեանը տակ զաշխարհս կը ճզմեն :
Մարմարիոն քարերը որոնցմով շինուած էին՝ ի-
րենց սքանչելի ձեան պէս ճերմկութիւնը պահէր
էին : Վրանին տեսնուած խորհրդաւոր սրբագրոշմ՝
տառերը պատկառանք մը կ'ազդէին նայողին սրտին՝
որոնք մարդկային մտաց առաջին գաղափարներն
են, և անոնց մէջ աւելի հիներն ալ Գերագոյն Էա-
կին խորհրդաւոր նշաններն են :

Հարցուց Յովսէփ, Ո՞վ է այս հիանալի յիշատակարաններուն շինողը: Հերմէան է, պատասխանեցին, Եգիպտոսի Թագաւորներէն մէկը, և հիմայ ալ իրեն պահապան աստուածը: Երկար ատեն կէցաւ դիտեց այն կարգէ դուրս շէնքերը, որոնց հաստատութիւնն ու ահեղ մեծութիւնը մարդկային արուեստէ վեր բան մը կ'երևնար. և որոնք կարծես թէ մահկանացուաց սովորական գործքերուն ճակատագրէն ազատ՝ բարձրացած կեցեր էին ժամանակին աւերմունքներուն ալ զիմացը անխախտաւ դիմանալու, և անշարժ կենալու քանի որ աշխարհքս աշխարհք է:

Յովսէփ չէր կրնար համոզուիլ՝ որ մէկ թեթև նպատակիմը համար կարենայ մարդ այնպիսի հրաշալիքներ աշխարհիս մէջ ստեղծել. ուզեց այն բուրգերուն մէկուն մէջն ալ մտնել պտըտիլ: Առաջնորդեցին իրեն ծածուկ ստորերկրեայ ճամբայները: Քովի Եգիպտացիները ըսին իրեն որ իրենց համար արգելուած էր բուրգերուն մուտքը. Յովսէփ չստիպեց զիրենք հետը ներս մտնելու, և ինքը ոտքը ներս որ խոթեց՝ ինքզինքը միայնակ խոր մթութեան մը մէջ դուրս: Համան այն յանդուգն մահկանացուաց որ գետնէն ոսկին հանելու համար, հողին ինչուան մութ խորերն ալ կը մըտնան՝ հանգերձ վտանգաւ՝ այն հարստութեան հետ իրենց գերեզմանն ալ ստանալու, նոյնպէս Յովսէփ ալ՝ ամեն բան իմանալու հետաքրքրութեամբ մը քաջալերուած՝ այն մութ Լաբիրինթոսի մէջ կորսուած կը պարտէր:

Երկար ատեն մոլորեալ ներսը քալելէն ետև հեռուանց մէկ տկար և պղզլացող լոյս մը տեսաւ. սկսաւ գէպ ի հոն երթալ. առջի բանն որ աչքին զարկաւ էր զմոսած մարդու մարմին մը, որուն քովը վառած շիրմի կանթեղ մըն ալ կար մարելու վրայ. ծիրանիով պատած էր մեռելը, և պսակ

մը ճակատին վրայ կեցեր էր . այն աստիճան անապահան մնացեր էր որ կարծես թէ մեռած չէր , և իր կենդանութենէն շարժմունքը միայն կորսնցուցեր էր : Մարմնոյն քովը կեցեր էր ծերունի մըն ալ մահուան դուռը հասած , որ հինցած կեանքէ մը՝ ծրեր էր մէջքը , և ճերմակ մօրուքը ինչուան գետին կը քսուէր . անանկ նիհար էր , որ կարծես թէ մահն էր որ հոն իր սրտին վրայ կը հսկէր : Այն պահեալ մոլմիային չորս դին ուրիշ շատ մոլմիաներ ալ գեռ կը տեսնուէին , որ կարծես թէ գերլիներու պէս իրեն հրամաններուն կը սպասէին . ահաւոր ըուծիւն մը պատեր էր բնակարանին մէջ :

Ո՞վ էս գուն , ըսաւ ծերունին շիտթած , ինչպէս համարձակեցար մտնալ այս սարսափելի տեղը . իսուէ՛ մահկանացու , եկեր ես արդեօք մեռեղները անհանգիստ ընելու :

Խոր բնակարանը այն մահադուշակ ձայնին արձագանգ մը տուաւ :

Մի վախնար , պատասխանեց Յովսէփ , թէ որ հոս մեռեղներու բնակարանն է , ես ալ կը յարգեմ իրենց մոխիրը : Բայց այս ի՞նչ տեսարան է . Ի՞նչ պաշտօնի համար է որ այս ահաւոր տեղը կեցեր էս :

Այն ատեն ծերունին՝ մարած աչուրները Յովսէփայ վրայ դարձրնելով . Քու անոյշ ձայնդ , ըսաւ , և մարդասիրութիւնդ որ ամեն կերպերուդ մէջ կ'երևան վախս սրտէս փարատեցին : Եգիպտոսի վերջին թագաւորին մարմինն է որ կը տեսնաս , և ասոնք ալ իրեն ծառայներն են որ իրեն ծառայելու համար մեռնելու վճուռած՝ իրեն հետ հոս եկեր են : Իսկ ես ամենէն աւելի դժբաղդն եմ . Իմ ընկերներէս մէկն ալ չմնաց , էն վերջինը ես իմ ձեռքովս գերեզման դրի , ես միայն մինակ մնացած՝ այս մահուան բնակարանին մէջ՝ ընդունայն տեղը

կը փափաքիմ մահուան • բայց երբ ալ որ մահը զիս սղատելու ըլլայ կեանքէս , մէկն ալ չկայ որ վրաս վերջին յուզարկաւորութեան սարաքերը կատարէ • կորսուի պիտի իմ մոխիրս , և ես պիտի չկարենամ մտնալ այս խումբին մէջ :

Զարմանքով և գթութեամբ լեցուած Յովնէֆայ սիրտը՝ լուռ կեցեր էր : Դարձուց աչուրները նայեցաւ նորէն թագաւորին անշունչ մարմնոյն վրայ՝ որ ընդունայն զարդերով ծածկուած էր , չորս կողմի գերիներուն վրայ՝ որ կարծես թէ դեռ կը սաշտէին զինքը , և ետքը այս ծերունուոյն վրայ ալ՝ որ կուլար կողբար որ դեռ կ'ապրէր անոնց մեռնելէն ետքն ալ : Ապշած մնաց մտածելով այս պիտի թագաւորաց անգութ հպարտութիւնը , որ բաւական չսեպելով իրենց ժողովրդեան գլուխը հասցուցած չարիքնին , իրենց անգթութիւնը գերեմանէն անդին ալ կը տարածէին , և իրենց կեանքը լմնցընելէն վերջն ալ կը զոհէին զանոնք իրենց փառասիրութեանը :

Բայց յանկարծ մէկ ուրիշ զգացմունք մը սրտին մէջը արթնցաւ , այս ծերունին՝ որուն վրայ մտադրութեամբ մը կը նայէր՝ իր հօրը կերպարանքը իրեն աչքին առջևը բերաւ • կարծես թէ հայրն էր որ կը տեսնար զխմացը՝ վերջին հառաչանքը տալու մօտեցած՝ մահը իրեն օգնութեան կանչելով , և ցաւերու մէջ ընկղմած որ իր էն սիրելի զաւակը պիտի չգոցէ իր աչուրները : Սաստիկ զգածուած՝ սկսաւ ստիպել ծերունին՝ որ իր ետեւէն դայ և դուրս ելլէ այն ահաւոր տեղէն :

Անհնարին բան է , ըսաւ թշուառ ծերունին , ապա թէ ոչ տանջանքներու և վատահամբաւութեան մէջ կը ստիպուիմ մեռնելու : Այս շիրմիս մէջ ինչուան հիմայ կեցեր եմ , հոս ալ պիտի մեռնիմ • երկար ատենէ ի վեր մեռելներու մէջ բնակելովս՝ կենդանեաց հետ իմ վերաբերութիւններս լմնցան •

և իմ աչուրներս՝ մահուան մուծի մը վարժած՝
 չեն կրնար արևուն լուսաւոր ճառագայթներուն
 պիմանալ... Աւրախ եմ միայն որ իմ թշուառու
 թեանցս վերջը հասեր եմ... արդէն ոտուրներս ա
 նանկ դող մը պատեր են որ չեմ կրնար և ոչ ին
 չուան այս տեղւոյս դուռը երթալ՝ առնելու այն
 կերակուրն որ սահմանուած է պահելու մէկ այս
 սլախի դժբաղդ կեանք մը, արդէն իմ թուլցած ձե
 ուրներուս վրայ կարողութիւն չէ մնացեր այս
 պլպլացող լոյսն ալ հոգալու... իմ օրերս ալ սլախի
 մարին ըմբնան ասոր հետ. և այն խաւարը որուն
 մէջ սլախի տեսնամ զիս թաղուած՝ ինծի համար
 մահուան քաղցր աւետիսը սլախի ըլլայ... քիչ ա
 տենէն այս շիրմիս մէջ շունչ սլախի չմնայ :

Ասոնք ըսաւ ծերունին, և երբոր Յովսէփ աչուր
 ները լեցուած կը նայէր վրան՝ կանթեղը մարեցաւ,
 ծերունին ալ վերջի շունչը տուաւ :

Ո՛վ ծերունի, հառաչեց Յովսէփ, ափսոս որ ես
 չեմ կրնար վրագ յուղարկաւորութեան պարտքե
 ըր կատարել. ինչո՞ւ խիստ օրէնք մը արգիլէր է
 այս տեղւոյս մուտքը անոնց՝ որ կրնային ձեր սո
 վորութեան համեմատ քու վրագ այս պարտքերը
 կատարել. անոնց տեղ գոնէ իմ սրտիս ցաւը ըն
 դունէ :

Թողուց հեռացաւ անկէց սարսափի և սիրոյ ըզ
 դացմանց մէջ ընկղմած. մոլորեցաւ նորէն այն
 մուծ գիշերուան մէջ, որ տեսած տխուր տեսա
 ըանք իր վրան աւելի կը տպաւորէր : Արջապէս
 բուրգին մէջէն դուրս ելլելով կեցաւ ճակատին դի
 մացը. մեկնեցին իրեն այն սրբազրոյժ տառերէն
 մէկ կտորը, որ այս խօսքերս էին .

Ո՛վ Ժողովուրդ, հոս մահուան բնակարանը չէ,
 այս քարակոյտի ծոցէն որ ինչուան ամպերը կը
 բարձրանայ՝ երկինք սլախի ելլամ, և հոն ձեր պաշտ
 պան աստուածը սլախի ըլլամ :

Ո՛վ Թագաւորներ, հառաչեց Յովսէփ, մա՛հն ալ ուրեմն ընդունայն խրատ մըն է ձեզի համար : Ա՛յ անմիտ մարդիկ, դուք՝ անարգ կենդանեաց հետ աստուածական պատիւ առեր էք վրանիդ, յաւիտենական յիշատակներ կանգնելով՝ որ ձեր իշխանութեանը՝ միանգամայն և ձեր տկարութեանը վկաներ են աշխարհիս վրայ :

Աս խօսքերս ըսելով՝ հեռացաւ բուրդերէն՝ որ մարդկային հպարտութեանը կարգէ դուրս վկայու թիւն մըն էին :

Մտաւ նորէն նաւակը, կտրեց մուծիաներուն դաշտը, ուր որ մեռելները կարծես թէ ուրիշ ցեղի մը մասն էին : Այն մեծամեծ շիրիմներուն մէջ որ չափ որ ընդարձակ տեղ բռներ էին, այնչափ ալ այս դաշտին տակը սխմուած լեցուեր էին, անանկ որ ամէն մէկ քայլափոխին՝ մահուան զո՛հ մը ոտքի տակ կ'երթար : Այն ընդարձակ բուրդերուն մէջ՝ հազիւ թէ մէջի ամփոփուած մոխիրները աչքի տակ կ'իյնային, իսկ հոս ամբողջ ազգեր թաղուած էին, շատ անգամ մի և նոյն տեղոյ մէջ կրկին և կրկին դրուած կային, ինչուան գերեզմաններ ալ՝ գերեզմաններու մէջ կը թաղուէին : Տխուր ստորերկրեայ նեղ և բազմաթիւ ճամբաներուն երկու կողմը բռներ էին մեռելները. հոն էր մահուան Թագաւորութիւնը :

Այն անասպատ դաշտին վրայ կը տեսնուէին սղտի բուրգեր իրարմէ չափաւոր հեռաւորութեամբ, որոնք վկաներ էին երկրիս վրայ թէ մեծերուն ամբարտաւանսութեանը հետևողներ միշտ կը գտնուին : Յովսէփ այս դաշտը անցնելու ատեն, իր հոգւոյն զգացմունքներուն ինքզինքը թողլով՝ թեթև մաղձոտութեան մը մէջ ինկաւ :

Նաւակը կը սահէր կ'երթար Նեղոսի ջուրերուն վրայէն, և ահա այս տխուր տեսարաններուն՝ յաջորդեց յանկարծ մէկ զարմանալի երևոյթ մը՝ որ

էր Եգիպտոսի հրաշալիքը՝ Մերեսեան ըսուած լի-
 ճը, որն որ մարդու անխոնջելի ձեռքը քարա-
 ժայռներու մէջ փորած էր, և որ կ'օգնէր Նեղոսի՝
 իր ծոցը ընդունելով անոր ջուրը՝ երբոր չա-
 փազանց առատութեամբ մը կը տարածուէր. ջը-
 րանցքներով ալ անոր հետ կը միանար՝ երբոր ա-
 դահութեամբ իր ջրին կը խնայէր և չէր տարածեր։
 Ո՛վ մահկանացուք, դուք ալ երբեմն բնութեամբ
 աստուածոց հաւասար կը փայլէք, քարաժայռնե-
 րը՝ ովկիանոս մը բացեր են մէջտեղ։

Լճին մէջտեղը գեղեցիկ պալատ մը կար՝ քառա-
 կուսի կոթողներ չորս կողմէն բարձրացած՝ որ ջու-
 րերուն վրայ իբրև հայլի մը մէջ զարկած կը տես-
 նուէին։ Հոն ամառուան տաքութեան ժամանակ
 թափաւորը իր պալատականներուն հետ կ'երթար
 անոյշ զովութիւն մը վայելելու։

Յովսէփ շարունակեց իր ճամբան, և մէկ աւելի
 մեծ տեսարան մը իր աչուրներուն դիմացը բացուե-
 ցաւ։ Եգիպտոս՝ ընդարձակ տարածութեան մը
 մէջ՝ իր բոլոր հարստութիւնը իրեն դիմացը կը դը-
 նէր։ Նեղոս՝ իր ընթացքին դիմացը ելած ար-
 գելքներէն բոլոր անցնելով փրփրած Եթովպիոյ
 բարձր քարաժայռներէն վար կը թափի, անկէց
 խաղաղ ընթացքով մը կը վազէ երկու լերանց գո-
 տիներուն մէջէն՝ որոնք Եգիպտոսը կը պատեն. և
 ինչուան ծովը առաջնորդելով իրեն՝ կարծես թէ
 կը ստիպեն զինքը այն ընդարձակ գետինը ոռո-
 գելու։

Գետեղերքը՝ ինչուան այս լեռներուն ոտքը՝ ա-
 ռատ հունձքերով զարդարուած է, գեղեցիկ բարձր
 խոտեր և պտղատու ծառեր կը պատեն Նեղոսը, ու
 ընդ բոլոր երկրին երկայնութիւնը ընդարձակ
 պարտէզ մը կը ձևացընեն, ճանապարհորդները
 իրենց պարգևներովը լեցընելով և արևուն տաքու-
 թենէն զանոնք պաշտպանելով։

Տեղ տեղ արմաւենիներ և մայրեր՝ որոնք կարծես թէ անտառներու մէջիններուն պատերն էին՝ անոնց ամենէն աւելի բարձր գլուխնին կը վերցընէին, և կը պաշտպանէին զանոնք օրուան աստղին կրակ թափող ճառագայթներէն : Այն կլիմային համար սեպհական ստեղծուած ծառեր ու բոյսեր չորս դին բուսած կը տեսնուէին, ինչպէս էին ժանտաթզենի, ամենաբարձր կաղնիներ, լուտաս՝ որ աստուածներուն ամբոստան կերակուրին ճաշակը ունի, պապիրը՝ որ իր աղուամագերով ծածկուած գագաթէն՝ լայն տերևները կ'երկնցընէ, որոնց վերայ՝ այն հրաշալի տեղերուն մէջ, Որփէոսը, կ'ըսեն, իր առջի բանաստեղծութիւնները գրեց :

Թուչուններ՝ իրենց փետուրներուն գեղեցկութեանը կողմանէ անուանի՝ այն զուարթ անտառներուն մէջ կը թռչին. և արևու ճառագայթներուն զարնուածքէն փալփրլուն Նեղոսի ջրերուն երեսին վրայ ալ բիւրաւոր ջրի բնակիչներ կը վրիտան :

Այն հիանալի պարտէզներուն մէջ՝ որ մարդուս համար յատուկ շտկուած կ'երևնային, ինչուան կէս մարմիննին խոտերու մէջ թաղուած կ'արածէին հրաշալի գեղեցկութեամբ մը զարգարուած ոչխարներու խումբերը. բնութիւնը զանոնք ծնանելու ատեն կարծես թէ պատկերահաններու վրէժինը ձեռքն առած աշխատեր է վրանին, այն աստիճան կանոնաւորեալ կէտերով զարգարուած էին : Դաշտեր, քաղաքներ, մեհեաններ և բուրգեր՝ որոնց պատկերները Նեղոս գետը աչքի առջև կը բերէր՝ զանազան տեսարաններ կը բանային : Այն յիշատակարաններուն վրայ որ բարձրացած էին մէկ պարզ երկրի մը տակ՝ իրենց նախկին գեղեցկութիւնը կը փայլի միշտ. և Եգիպտոս՝ արհեստից հայրենիքը՝ դեռ կը մեծարէ անոնց արգիւնքը, և ասպտգայ դարերու ալ կ'աւանդէ զանոնք :

Երկու կողմանէ վսեմ՝ երևոյթներ՝ երկրին տեսարանը կը զարդարեն: Հոս ցամաք քարաժայռներ հազարումէկ տեսակ այլանդակ ձևերով ինչուան ամուերը գլուխնին կը բարձրացընեն, ուժով քամիներ կը կռուին և կը խորտակեն՝ ինչուան որ պարզ և անամպ երկինք մը տիրէ այն երկրին ընդարձակութիւնը վրայ: Հոն լեռներու ընդհատեալ գօտիներուն մէջէն կը տեսնուին՝ աւազուտ Լիբիոյ անծայր անասպանները: Եգիպտոս այս գեղեցիկ տեսարաններուն վրայ հիացած՝ համոզուէր էր որ Աստուածները զԵգիպտոս ընտրած պիտի ըլլան իրենց բնակութեան տեղ: Եղիւսեան դաշտերուն երևոյթը կը տեսնուէր հոն, ուր որ ԳեթաՆկղոսի պէս հրաշալի ընթացքով մը կը վազէր, ուր որ խաղաղութեան՝ և թշուառութիւնները մոռնալու ասպարէզն էր, և ուր որ յաւիտենական քարաժայռներ Տարտարոսէն կը բաժնէին այս երանելի բնակութիւնը:

Այն տեղի բնակիչներուն նման՝ վայրկեան մը Յովսէփայ թշուառութիւններն ալ հեռացան մըսքէն՝ զարմանքով լեցուած՝ մնաց կեցած տեղը, աչուրները միայն չորս դին անյագաբար կը ստըտցընէր, կարծես թէ կ'ուզէր այս հրաշալի տեսարանը իր մտքին մէջը ամփոփել. բայց իր հոգին վերացած՝ բնութեան արարչին քովերը կը պտըտէր: Այսպիսի զգացմունքներու մէջ գտնուած ատեն՝ չորս կողմը պիղծ մեհեաններ կանգնուած զարկաւ աչքին՝ մէկ դին կը տեսնէր որ կոկորդիլոսը կը պաշտեն, մէկալ դին Փարաւոնի մովկը՝ նուէրքներ կ'ընդունէր, ասդին հաջող կենդանեաց առջև երկրպագութիւն կ'ընէին: Լիբիոյ ձորի մը հեռուն հին մեհեան մը կեցեր էր, ուսկից պիղծ կրօնք մը կը տարածուէր բոլոր աշխարհիս երեսը:

Յովսէփայ սիրտը զայրացաւ տեսնելով որ այնչափ հարստութեանց մէջ ճշմարիտ արարիչը ճանչ

ցող մը չկար . և կուսպաշտութեան մեհեանները կը պղծեն ամբողջ բնութեան գեղեցիկ տաճարը՝ ուր որ ամէն բան կը հրաւիրեն արարածները օրհնելու ճշմարիտ արարիչը :

Բայց մէկ զարմանալի տեսարան մը Յովսէփայ անդրադարձութիւնը արթնցուց : Մեմփիսը թող լու ժամանակ՝ բոլոր հունձքը կանանչ վիճակի մէջ տեսեր էր , և քանի որ Եթովպիոյ կը մօտենար՝ այն չափ աւելի դեղընցած կը գտնար , ինչուան որ բոլորովին ոսկեգոյն փոխուած տեսաւ զանոնք : Պտղաբեր ծառերու անտառներն ալ նոյն տեսարանը իրեն աչքին առջևը կը բանային . քանի որ առաջ կ'երթար կը տեսնէր որ ծաղիկները՝ տեղ կուտան պտուղներու , և անոնք ալ ի սկզբան կանանչ՝ ետքը աստիճանաբար կը գունաւորուէին , ինչուան որ իւրաքանչիւրը իրեն կենդանի գունովը կը փաշտուէր : Նաւակին մէջ հանդարտ նստած՝ ընդարձակ դաշտի մը տեսարանովը կը զուարճանար , որուն մէջ մարդու զարմանքով լեցուած աչքին առջևը կ'աճէին այն ամէն բարիքները՝ որ բնութիւնը անզգալի կերպով դուրս կու տար : Հոն կը տեսնուէր կանանչ հունձքը որ կը ծլէր՝ որ երկրին պարարտ ծոցէն կը բարձրանար , և որ դեղընցած ցօղունին հետ իր ծանրութեամբը կը ծուէր . ծառերը՝ որ իրենց զուարթ կանանչութեամբը կը զարգարուէին՝ ծաղիկներով կը ծածկուէին , և շուտ մը պտուղներով կը ծանրանային , որոնց աճման արագութեանը ետեւէն հազիւ թէ մարդու աչքին տեսութիւնը կը հասնէր : Վարժես թէ արարչագործութեան նոյն հիանալի տեսարանն էր՝ ուր որ ամբողջ տիեզերք ոգնչութենէ ելլալով՝ քիչ ատենի մը մէջ իր հազարումէկ տեսակ բերքերովը զարգարուած տեսնուեցաւ :

Յովսէփ գեռ հեռու էր Եթովպիայէն երբոր ջրը վէժներուն ալաղակները սկսաւ լսել , քանի որ կը

մտենար՝ ձայնն ալ կը սաստկանար . և ահա քա-
 ռաժայներու մէկ գօտի մը՝ որոնք ամփիթէատրոնի
 ձևով ինչուան ամպերը կը բարձրանային որոշ կեր-
 պով սկսաւ տեսնուիլ : Ինչպէս որ շատ մը կայ-
 ծակներ՝ գոռալով կատաղութեամբ Ալպեանց գա-
 գաթներուն վրայ՝ բռնկած ծծմբի հեղեղ մը կը
 վազընեն՝ ծուխերու մէջ ծածկուած քառաժայռ-
 ներուն երկայնութեանը վրայէն , և մէկ կողմանէ
 ալ արձագանդներուն ահաւոր ձայները երկար ա-
 տեն կը հնչեն . և կամ ինչպէս որ ովկիանոս ծո-
 վուն հին աղբիւրները՝ որ սարսափելի աղաղակաւ
 մը երկրիս ծոցը թափուեցան , որոնք իրենց խոր
 անդունդներէն ահաւոր հեղեղով մը վազելու ա-
 տեն՝ ծովուն ջուրը տակնուվրայ ընելով ինչուան
 ամպերը կը ցատքեցընէին՝ ուսկից ինչուան երկրիս
 բացուած կեդրոնը կը գլտորէին՝ բոլոր աշխարհս
 իրեն հիմունքներէն ցնցելով . ահա ասանկ ալ Նե-
 ղոսը այս քառաժայռներու վրայէն վար կը հոսէր ,
 իր փրփրած ջուրը՝ փոշիի պէս հեռաւոր տեղեր
 ցատքեցընելով : Այս սարսափելի աղաղակն լսե-
 լով՝ թռչունները գողգողալով կը թռչէին կը հե-
 ռանային , կատաղի գաղաններն ալ իրենց ծակերը
 կը վազէին կը պահուրակէին :

Երբոր Յովսէփայ միտքը այս տեսած տեսարան-
 ներէն բարձր խորհրդածութեանց մէջ ընկզմած
 կը պտըտէր՝ յանկարծ մարդ մը ամպի պէս փր-
 փուրներուն մէջ կէս մը ծածկուած այն ջրին հո-
 սանքին հետ վար գլորտեցաւ , վայրկենի մը մէջ
 այն ընդարձակ միջոցը կտրեց՝ երկնային ոգիներուն
 ընթացքին նման : Աւելորդապաշտ մարդիկ առա-
 ջին անգամ որ այս տեսարանը տեսնալու ըլլային՝
 պիտի կարծէին որ Նեղոսի սատուածն էր որ եր-
 կնքէն Եգիպտոս կ'ինջնար : Իսկ Յովսէփ՝ կարեկ-
 ցութեամբ և սարսափով մը լեցուած՝ երբոր մըտ-
 քէն կ'անցնէր թէ խեղճ՝ մարդը մեռաւ անշուշտ ,

մէյմըն ալ տեսաւ որ փայտի մը պլլուած՝ հան-
դարտ կ'երթար՝ Նեղոսի ջրերուն հոսանքին վրայէն:

Յովսէփ ելաւ նաւակէն, և գետեզէրքը նստած
կը փափաքէր այս բարերար գետին սկզբնաւորու-
թեան աղբիւրները գտնալ, բայց ոչ դատարկ և ա-
նոգուտ հետաքրքրութեան մը համար, այլ կ'ու-
զէր բնութիւնը քննելով՝ ամենազօր արարչին մօտ
իր միտքը բարձրացրնել:

Պատասխան տուին Յովսէփայ, որ Նեղոսը որ-
չափ որ իր բարերարութիւններովը ինքզինքն յայտ
նած է՝ նոյնչափ ալ խնամքով մը իր սկզբնաւո-
րութիւնը կը ծածկէ: Յովսէփ աչուրները տըն-
կած ջրվէժին վրայ կը նայէր, և թէ որ իր ներկա-
յութիւնը հարկաւոր չըլլար Եգիպտոսի երջան-
կութեանը համար, կ'իյնար քարաժայռներուն
մէջ, և կ'երթար փնտռելու և գտնելու Նեղոսի աղ-
բիւրը: Եւ ահա Եգիպտոսի պահապան Ոգին ա-
նուշ քուն մը Յովսէփայ աչքերուն վրան ձգեց, և
այսպէս սկսաւ խօսիլ իրեն հետ.

Գիտեմ՝ սրտիդ փափաքը՝ որուն վրայ շատ ան-
գամ մտածեր ես. կ'ուզէ հոգիդ բնութեան ամէն
խորերը թափանցել, և նոյն իսկ այս ալ՝ որ փափա-
քով լեցուեր ես իմանալու՝ ամենէն մեծ հրաշալիք-
ներէն մէկն է: Երկու հռչակաւոր պատերազմող
թագաւորներ՝ աշխարհս արիւնլուայ ընելէն ետքը՝
այս փափաքը պիտի ունենան, և յանձն պիտի առ-
նեն ինչուան զոհելու իրենց թագաւորութիւնները,
և բոլոր գետերն որ իրենց օրէնքներուն տակը կը
վազեն՝ միայն թէ Նեղոսի աղբիւրը տեսնան, և ի-
մանան անոր արգասաւորութեան պատճառը.
այսչափ ահա երբեմն մեծ կը սեպուի՝ նոյն իսկ
մարդկանց արմատը չորցընող անձանց աչքին առ-
ջև՝ իմանալը այս աշխարհս՝ քան թէ անոր տիրե-
լը, բայց ես ոչ երբէք անոնց փափաքը պիտի լե-
ցընեմ: Բնութիւնը ինչո՞ւ պիտի բանայ իր գաղտ-

նիքները այնպիսեաց առջև՝ որ աշխարհքս կործանելու համար միայն կ'ապրին : Երանելի են այս ջրի հոսանքներն որ այնպիսիներէն հեռու՝ կը սահին ազատ, և մարդկային արիւնով չեն շաղուիր, որ ամէն տեղ կը վազեն՝ ուր որ այսպիսիները կ'երևան : Բայց դուն՝ որ ճշմարիտ մեծութիւն մը ունի հոգիդ, և երկրիս վրայ հարուածներ ինջեցընելու տեղ՝ գիտէ մանաւանդ դէմ՝ դնել [Թշուառութեանց և յաղթանակել, եկուր ետևէս [Թուշելով օգուն մէջէն. բնութիւնը յօժար է իր գաղանիքները բանալու քեզի :

Ոգին խօսքն որ լմնցուց, կարծեց Յովսէփ [Թէ անոր ետևէն սկսաւ [Թուշել. այնպէս մը կուգար իրեն որ երկրային մարմինը [Թողուցեր, և ամենանուրբ գոյացութիւն մը ստացեր էր անմահ զգեստ մը՝ անմահ ոգւոյ. օգը՝ իբրև իրեն ապրելու տարերք մը կը տեսնէր : Բազէ մը այն աստիճան արագութեամբ չի յարձակիր ոչխարի մը վրայ՝ ինչպէս որ Յովսէփ կը [Թուշէր օգուն մէջ : Դիմացը՝ անանկ որոշ բնութեան երևոյթները կը տեսնէր՝ որ իրական տեսարաններէն ամենևին տարբերութիւն մը չունէին : Վայրկենի մը մէջ կտրեցին Եգիպտոսը, այրեցած Ե[թովպիան և կեցան Ապիսսինիոյ մէջ, այն քարաժայռներուն վրայ՝ որ ինչուան երկինք բարձրանալով՝ կարծես կը ջանան ծածկել ամենուն աչքէն այն գանձն՝ որ իրենց մէջ ամփոփած կը պահէն : Մէկէն ջրի անոյշ ձայն մը Յովսէփայ ահանջը զարկաւ. և ահա տեսաւ որ երկու մաքուր ջրի աղբիւրներ կը բոխէն այրերուն մէջէն, որոնց վրայ կանանչութիւն մը և ծաղիկներ հովանի կ'ընէին. նոյն իսկ երևակայութիւնը՝ իր ճարտար վրձինովը ասկէց աւելի զուարճալի բնակարան մը չէր կրցած տալ Նայադք ըսուած աղբիւրներու յաւերժահարսանց : Այս երկու աղբիւրները՝ ընդարձակ աւազանի մը մէջ կը միանան. այն աւա-

զանը երկնքին գեղեցիկ հայելին էր, երբեմն կը
ցուցնէր թանձր ամպերու արագ ընթացքը, ի-
րենց իրարու հետ սարսափելի զարնուիլը, և փայ-
լակներն որ կը ցրուէն ամպերը • երբեմն ալ երկնքի
կամարին խաղաղ կապոյտ գոյնը, որուն վրայ ձեան
պէս ճերմակ բուրդի նման՝ առիս անդին կը շար-
ժին թեթև ամպերն՝ որոնց եզերքը ոսկեգոյն ներ-
կուած կը տեսնուի արևուն ճառագայթներէն :
Ոչխարները այն ջրէն դեռ չէն խմած, քամիները
անոր երեսին վրայ շարժմունք մը չէն ազդած, և
մէկ ճճի մըն ալ անոր մէջ իր գերեզմանը դեռ չէ
ունեցած • և էր մէկ խաղաղ լիճ մը : Բայց երբոր
երկնքի հոսանքներէն ուռած՝ կը բարձրանայ այն
քարաժայռներէն ալ վեր՝ որ կարծես թէ իրեն ըն-
թացքին դիմացը առնել կը ջանան, այն ատենն է
ահա իր սահմաններէն դուրս յարձըկած մէկ գետ
մը՝ որուն աղաղակը հեռաւոր տեղեր կը հնչեն, և
որուն որ կատաղութեանը դիմաց՝ ամենևին թուամբ
մը չի դիմանար : Յովսէփ՝ զուարթացած Նեղոսի
ազբիւրները տեսնելուն՝ վաղեց լճին եզերքը, և
ինքն առաջին մահկանացուն էր՝ որուն պատկերքը
անոր ջրին մէջ տեսնուեցաւ :

Ինչուան հոս մտնելդ, ըսաւ Ոգին, դեռ բան մը
չէ, դուն դեռ բնութեան տեսարաններուն արտա-
քին երեսը միայն տեսար • եկ՛ուր, կ'ուզեմ առաջ-
նորդել քեզի այս ազբիւրներուն բուն սկզբնաւո-
րութեան տեղը, և հոն քեզի ուրիշ հրաշքներ կ'ու-
զեմ յայտնել : Հազիւ թէ խօսքը լմնցուցեր էր,
մէյմըն ալ նայիս ոտքերնուն տակի գետինը բացու-
եցաւ, և իրենք մութ ճամբու մը մէջ մտան : Ինչ-
պէս որ եղեր են ոմանք որ ինչուան դժոխքը եր-
թալու ատեն՝ երկար ատեն խաւար անդունդներու
մէջ մոլորած պտըտեր են, և Երեբոսի դռները մօ-
տենալու ժամանակն ալ՝ Կատաղեաց օձերուն սու-
լենները լսեր են • տեսեր են անոնց արիւնազանգ

ջահերը, և եռապլուխ Կերբերոսը որ կրակ կը շնչէ. նոյնպէս ալ հոս՝ մահուան բնակարանին նման՝ ճամբուն սկիզբները պատած կը տեսնուէր մէկ թանձր գիշեր մը և մէկ սարսափ ձգող հանդարտութիւն մը. բայց քանի որ Յովսէփ առաջ կ'երթար՝ տեսարանն ալ կը փոխուէր: Սարսափելի ազդակաւ մը բոցի հեղեղ մը իր ոտքերուն տակը կը վազէր, յանդուգն Ովկիանոս մը այն կրակին վրայ կը թափուէր, քամիներն ալ կարծես թէ ոյժ կուտային հողը պատըռտելու ինչուան անդունդները հասնելու: Ահաւոր պատերազմ մըն էր, շատ աւելի սարսափելի քան Տրոյիոյ դաշտին մէջի Հեփեստոսի և Քասանդոսի մենամարտութիւնը: Յուզեալ ալիքներուն վրայ ահաւոր կայծակներ կը ցատքբաւեն, և գիշերն ու ցորեկ շուտ մը կ'անցնին. այս ահեղ աղաղակին քով՝ կատաղի մըրիկն ալ՝ հանդարտութեան տեսարան մը կը տեսնուի: Աերջապէս կուխէ յոգնած երկրին ծոցէն խուլ ձայներ կ'ելլան, կը դուլայ գետինը, կը բացուի, և մուխի հեղեղի մը հետ դուրս կը սրութկայ ծծումբ, մետաղներ և կրակ կտրած քարաժայռներու կտորներ:

Այս մեծ տեսարանը ամենևին վախ մը չձգեց Յովսէփայ վրան: Իթուրիէլ առաւ զինքը բերաւ զուարճալի տեղերուն մէջ, ուր որ արևուն տեղը՝ մեղմ տաքութիւն մը պատեր էր, որուն ազդեցութիւնը երկրիս կեդրոնէն տարածուելով՝ կենդանութեան սերմունքը կը սնուցանէ: Հոն անգին քարերուն վրայէն ոսկիի և արծրթի գետեր կը վազեն, որոնց փայլքը ամենևին կորսուած չեն աղտոտ աւազներուն մէջէն ալ անցնելու ժամանակ: Հոն է՝ որ բնութիւնը իր ամէն ճիգը թափելով՝ շնչաւորաց անգին սերմունքը կը ստեղծէ, այս սերմունքը աղբիւրներու և մետաղներու հետ ինչուան երկրիս երեսը կուգան կը հասնին: Հոն են գետերուն սկզբնաւորութեան աղբիւրներն ալ՝ որ բոլոր

աշխարհքս կը պատեն. Ռթուրիէլ բերաւ Յովսէփը Նեղոսի աղբիւրներու դիմաց, և անոր արգասաւորութեան պատճառը հասկըցուց իրեն: Յովսէփ անձկանօք մը ծռեցաւ խմեց անոր ջրէն և կարծեց որ նոր կենդանութիւն մը եկաւ վրան:

Ելան գուրս վերջապէս այն տեղէն, և օրուան լոյսը տեսան նորէն: Հիմա տես առ ամպերը, Ըսաւ Ոգին, որ կը վազեն Նեղոսի արգասաւորութիւն շնորհելու: Այս ըսելու ատենը երկինք վերացաւ. և ինչպէս որ արծուին ձագը՝ վարժած ըլլալով օդին թռթռութեանը ինքզինքը յանձնելու՝ իր ծնողին ետեւէն ընթացքը կը շտկէ, նոյնպէս ալ Յովսէփ Ռթուրիէլի ետեւէն թռաւ դէպ ի երկինք անոր կարած ճամբէն: Տեսաւ հոն որ ամպերը իրարու վրայ դիզուած՝ կարծես թէ մեծամեծ լեռներ էին որ կը շարժէին. նման էր երևոյթը՝ ինչ որ կը կարծուի Ոսսա որ Պելոնի վրայ կը գլտորի: Հոն Ռթուրիէլ ցրցուց իրեն որ ինչպէս արևը այն խոնաւ նիւթերը կը քաշէր իրեն, որոնք կարգաւ մը անոր ճառագայթներուն դիմացը գալով՝ իրեն կրակովը կը մաշեցընեն իրենց կեանքն ալ, անոր ջերմութիւնն ալ, և ետքը նորէն կը թափին երկրիս վրայ արգասաւորութիւն տալու:

Յովսէփ այս տեսարաններուս վրայ դիտողութեամբ մը նայելէն ետքը. Ո՛վ երկնային առաջնորդ, ըսաւ Ռթուրիէլին, զիս որ ինչուան այս սահմաններս բերիր՝ որ երկիրը երկնքէն կը բաժնեն՝ պէտք է այս պարիսպներէն պատկառիլ, և կամ կարելի է որ մահկանացու մը ինչուան Եթերային դաշտերն ալ կարենայ ելլալ: Այս խօսքերս ըսելու ատենը՝ Ռթուրիէլին երեսը կը նայէր. և ահա Յովսէփայ նայելու ատենը Ոգին ամպերէն ալ վեր թռաւ բարձրացաւ: Յովսէփ ալ թռաւ ետեւէն, Ռթուրիէլ անոր յանգուզն թռչիլը հանդարտեցուց. և արևէն քիչ մը հեռու կեցան եր-

կուքն ալ : Հոն Ոգին մեկնեց երիտասարդ մահկանացուին որ տիեզերաց փառաւորութենէն զարմացած մնացեր էր . թէ ինչպէս երկնային մարմինները՝ իրենց ծանրութեանը վրայ կը թռնած՝ իրենց այլևայլ շարժմունքները հաւասարակչութեամբ մէջ կը պահեն, և ահա զվսեմութեամբ մը իրարու վրայ կը պտտին . և իրենց անփոփոխ ընթացքին մէջ կը հստատակին կրկին տեսակ օրինաց՝ որոնք մի և նոյն միջոցին մէջ կը քաշեն և կը մղեն զանոնք : Անկէջ ալ Ռթուրիելի առաջնորդութեամբը թուագէտ ի այն վերին գաւառը ուր որ աստղերը կարծես թէ իրարու կը դպչին, և այնչափ հաւաքովութեամբ լեցուած են առատաձեռն Ձեռքէ մը :

Երբոր աշխարհքներուն ամենէն վերջի սահմանը բարձրանալու վրայ կը տեսնուէին, և ահա խիստ հեռուէն մէկ աստուածային ներդաշնակութիւն մը Յովսէփայ ահանջը զարկաւ . նոյն միջոցին լոյս մըն ալ տեսաւ, որուն փայլունութիւնը թէ որ բազմաթիւ ըլլայ մէկը երկնքին վրայի բոլոր արեգակներուն լուսոյն հետ մէկտեղ՝ այնպէս դիւրաւ ստուեր մը կը ձգէր անոնց վրայ՝ ինչպէս որ ցորեկուան աստղը՝ գիշերուան վրայ կը ձգէ :

Իսկ ինչպէս հոս մեր ընթացքէն, ըսաւ Ռթուրիել, չկրնար մահկանացու մը ոտք կոխել այն մէկտեղ տիեզերաց մէջ . բու ինչուան հիմա տեսածդ՝ անոր շուքն է միայն : Եւ դուն հիմա դեռ շատ աւելի հեռու ես Յաւիտենական Աստուծոյն պաշտակէն՝ որչափ որ հեռացած չենք երկրէ . և այս ներդաշնակութիւնը՝ որուն ամենէն նուազ ձայնն է որ կը լսես՝ անմահից երգն է :

Իսկ Ոգին՝ և Յովսէփ անյագ մտիկ կ'ընէր . ինքիրմէ դուրս ելած, զարմանքի մը մէջ ընկղմած էր բոլորովին . բան մը չէր տեսնար զիմացը, ոչ աշխարհքներ, ոչ արևներ՝ որոնց մէջէն Ոգին կը թռուչէր . թողուց ինքզինքը Ռթուրիելի առաջնորդու-

Թեանը, և այսպէս ինչան այն ամուրեւուն վրայ, որ մեր մթնոլորտը կը պատեն: Հոն Յովսէփ ինքնիրեն գալով Ո՛վ աղնիւ Թարգման ընուԹեան, ըսաւ ԻԹուրիելի, դուն քու գաղանիքներդ ինծի ալ յայտնեցիր. ասկէց ետև այս աշխարհս իմ աչքիս առջևն ա՛լ ուրիշ բան չէ՛ բայց մէկ կէտ մը միայն. ես ճշմարիտ իմաստուններու ալ այս գաղտնիքներս պիտի սորվեցընեմ: Գիտեմ որ անոնց դիմացը տեսածներուս մէկ խեղճ պատկերը միայն պիտի կարենամ դնել. բայց Թող իրենք ալ՝ իրենց յաջորդներն ալ ետևէ ըլլան աւելի խորերը Թափանցելու: Բայց սակայն տիեզերաց ոչ հրաշալիքներն և ոչ վսեմուԹիւնը չկրցան Թուլցընել իմ էուԹեանս հետ միացած սրտիս զգացմունքները. լեցուր սրտիս փափաքն ալ ինչպէս որ մտքս լուսաւորեցիր: Քու առաջնորդելովդ չէ՞ն կրնար Թըշուառ աչուրներս տեսնալ իմ հօրս գաշտերը:

Մէկէն զգաց Յովսէփ որ աչքին տեսուԹիւնը գերազանց կարողուԹեամբ մը նոր կենդանուԹիւն մը ստացաւ. և ահա դիմացը տեսաւ իր ծննդեան տեղերը, իր հայրը՝ շատ տարիներու տակ ճընշուած՝ որ Սելիմայի հետ իր խրճԹին դիմացը նըստեր էր. երկուքն ալ խոր տրտմուԹեան մը մէջ ընկղմած էին. և Յովսէփը յիշելով՝ յորդ արցունք կը Թափէին: Յովսէփ աստիկ զգածուած՝ Թևերը կ'երկնցընէր անոնց. արցունքները գետի պէս կը վազէին աչուրներէն. խօսքեր կ'ուղղէր անոնց, կ'ուզէր Թռչել քովերնին և գրկին մէջ սխմել զանոնք: Բայց այսպիսի մէկ ուժով զգացմունքի չկարենալով դիմանալ՝ արԹընցաւ. և ահա ամէն բան աներևուԹացեր էր երկնային կամարին տեսարաններն ալ, ԻԹուրիելն ալ, Յակովբայ գաշտերն ալ: Ինքզինքը Նեղոսի եզերքը պառկած տեսաւ, և գետինը բոլոր արցունքներովը Թըջեր էր: Բայց մէկ աստուածային կարողուԹիւն մը իր սրտին մէջ

տարածուեր էր • միտքը աւելի բացուեր էր • ոտք
էլաւ՝ Եգիպտոսի երջանկու[թեանը համար նուի-
րած աշխատանքը գլուխ հանելու :

Առագաստները ամփոփուեցան , և նաւակը ըրած
ճամբան նորէն բռնելով՝ ետ դարձաւ գետին ըն-
թացքին հետ մէկտեղ : Տեղ տեղ դուրս կ'ելլար
Յովսէփ , ամէն տեղի բերքերը քննեց իմացաւ • և
հրաման տուաւ որ հունձքին հինգերորդ մասը՝ ա-
մէնքն ալ Մեմփիս քաղաքը իրեն բերեն :

Ծափահարու[թիւններով մտաւ քաղաքը , գի-
տէր ժողովուրդն ալ որ զինքը կը մեծարէր՝ [թէ այս
ճանապարհորդու[թեան պտուղը հասարակաց եր-
ջանկու[թիւնն էր : Բայց Յովսէփ իր պալատին մէջ
ամենևին [թուլու[թեան ետեւ չեղաւ • հրաման տու-
աւ , և բոլոր [թագաւորու[թեան մէջ գուբեր փո-
րուեցան , և Մեմփիսի դռներուն քով ընդարձակ
չէնքեր բարձրացան՝ ցորենը անոնց մէջ լեցնելու
համար :

Յովսէփ ուրիշ [թագաւորաց պէս փառաւոր չի-
րիմ՝ մը չկանգնեց իրեն • իր փառաց յիշատակարան
ներն էին՝ մարդկանց երջանկու[թեանը համար նու-
իրած աշխատանքներն : Եգիպտոս պիտի անցնէր
ուրիշ [թագաւորաց ձեռքն ալ • Յոյնք , Հռովմայե-
ցիք և Արաբացիք ետեւ ետև իրենց օրէնքները պի-
տի որոտային հոն • բայց այն բուրգերն որ ժամա-
նակին հարուածներուն ալ կը դիմանան՝ իրենց մէջ
ամփոփուած ամբարտաւանու[թեան մոխիրները
միայն ապագայ դարերու պիտի աւանդէին , իսկ
Յովսէփայ՝ Եգիպտոսին բարերարին յիշատակը՝
պիտի հնչուէր բոլոր այն ժողովրդոց մէջ ալ : պիտի
մեծարէին իրեն աշխատու[թեանցը հետքերը , և ի-
րեն երախտաւոր ձեռքը՝ այն վսեմ՝ աւերակներուն
քարերուն վրայ փորագրած ի պէս պիտի ունենար
տալաւորուած իր անմահ անունն ալ :

Երբոր այս աշխատանքները մէկ կողմանէ առաջ

կ'երթային, Յովսէփ մէկ ուրիշ մեծ գործուղութեան մը ձեռք կը զարնէր: Մեմփիս դառնալէն առաջ Նեղոսի ընթացքովը ինչուան ծով գացեր դիտեր էր: Տեսեր էր որ Նեղոսը Եգիպտոս մտնելու ատեն այնպիսի բարձր ժայռերու վրայէն կը ստիպուէր սահելու անցնելու, որ կարծես թէ երկնքէն վար կը թափէր, բայց Եգիպտոսէն ելլելու ատենն ալ իր ընթացքին դիմացը ուրիշ նոր նոր արգելքներ չէին պակսիր: Արչափ որ Եթովպիայէն ինչնալու ատենը սարսափելի բռնութեամբ մը կ'ինչնար, նոյնչափ ալ իր պղտորեալ ջուրը անգգալի կերպով մը իր ժողված շաղախին վրայ կը դիզէր տղմային հող մը ընդարձակ տարածութեամբ տեղ մը. այս տիղմը շատնալով ինչուան կրնար Նեղոսի դիմացը թումբ մը ձևանալ և արգիլել անոր ընթացքը: Ահա Յովսէփայ խորհուրդն այս էր՝ գետին ընթացքը դիւրինցընել:

Այս խորհուրդը Յովսէփայ մտքին մէջ՝ գեղեցիկ սերման մը պէս՝ ուրիշ հարկաւոր և օգտակար անդրադարձութիւն մը ծագեց: Մտածեց այն ճախճախտուտ տեղը չորցընելով իբրև նոր երկիր մը ձևացընել և Եգիպտոսի հետ միացընել. տեսաւ որ ասով տէրութեան երկիրն ալ պիտի ընդարձակէր՝ սովին դէմ ալ անակնկալ օգնութիւն մը պիտի ըլլար: Զուարթ կենդանութիւն մը աչուընէրուն մէջ փայլեցաւ, այնպէս մը կուգար իրեն որ ահա արդէն կը տեսնար դիմացը այն երկիրը ամենէն հարուստ բերքերով ծածկուած, և ժողովրդեան մը երջանկութեան նոր առիթ մը հնարելու համար՝ զեռ չեղած ալ սիրտը ուրախութեամբ լեցուեր էր: Այս խորհուրդներու մէջ էր երբոր մտաւ Մեմփիս:

Ելաւ Փարաւոնի առջև, և ըսաւ իրեն. Տէրութեանդ մէջ կարգաւորութիւն միայն ընելու գոհ չըլլալով՝ կ'ուզեմ երկրիդ սահմաններն ալ ընդարձա-

կել : Թագաւորը զարմանքով մը խօսքը կտրելով .
 Ո՞ր աշխարհքին վրայ է խօսքդ , ըսաւ , որ կ'ուզես
 պատերազմի կրակ մը թափել :

Պատերազմի կրակ մը , պատասխանեց Յովսէփի ,
 այսպիսի ահաւոր թշուառութիւն մը , որ նախա-
 տինք է մարդկուծեան , որ բոլոր աէրութիւններն
 ալ կը փճացընէ՝ մինչդեռ կարծեն որ կը հաստա-
 տէ : Պատերազմի կրակ մը . սպանութիւնը իմ ձե-
 ուղնէրս ալ ներկէ , և ես արեան մէջ թաթխեմ
 բոլոր հունձքերը , ծաղկրները . գետերուն մաքուր
 ջրերը և խաղաղ խրճիթները : Ա՛հ , կ'ընտրեմ ես
 մանաւանդ նորէն իմ հովուական գաւաղանս ձեռքս
 առնուլ , և այսպիսի հարուածի մը զոհ ըլլալ՝ քան
 թէ անոր ամէն բան փճացընող կրակը թափել աշ-
 խարհիս վրայ : Ո՛վ թագաւոր , ներէ որ զիմացդ
 համարձակութեամբ խօսիմ , դաշտերու մէջ ծնած՝
 կեղծաւորելու արհեստն ալ չեմ գիտեր : Քու ա-
 թուդ թագաւորական կազնի ծառի մը պիտի նմա-
 նի , որ իր ընդարձակ հովանիին տակ պահպանես
 բոլոր քու իշխանութեանդ տակ եղած ժողովուրդ-
 ները , և մօտ եղողներու ալ ազատութեան ապաս-
 տանարան մը շնորհես : Քու կառավարութեանդ
 քաղցրութեամբը անոնց սիրտը քեզի քսուէ . ա-
 կէց աւելի հաստատուն յաղթութիւն մը չկրնար
 ըլլալ : Բայց ես կ'ուզեմ Եգիպտոսը ընդարձակել
 առանց մէկ կաթիլ մըն ալ արիւն թափելու :
 Այն ատենը մեկնեց իրեն իր մտածած խորհուրդը :

Թագաւորը գոհ սրտով մը պատասխան տուաւ
 Յովսէփիայ . Կը ճանչնամ քու իմաստութիւնդ , և
 մարդասիրութեան անոյշ ձայնը քու բերնէդ լսելս՝
 շատ ակորժեղի կուգայ ականջիս : Քու առաջար-
 կութիւնդ մէկէնիմէկ որ լսեցի , կարծեցի որ իշ-
 խանութեանդ մեծութիւնը քու սիրտդ ալ այսպի-
 սի բարբարոս ամբարտաւանութեան խորհուրդ մը
 ձգեր է , որ շատ անգամ բոլոր աշխարհքս արիւն

հեղութեան թատր մը միայն ձևացուցած է : Չեմ ուզեր ես ալ իմ աթոռս արիւնաշաղախ աւերակներուն վրայ դնել : Գնա ուրեմն Յովսէփ , ահա բոլոր զինուորներս քուկդ են , քու հրամաններուդ հպատակ , թող կատարեն այսպիսի մէկ մեծ և օգտակար խորհուրդ մը : Ասանկ խօսեցաւ թագաւորը :

Յովսէփ փութաց մէկէն Մեմփիսէն դուրս ելլելու բազմաթիւ զինուորներով որոնք բոլոր իր խորհուրդը առաջ տանելու յարմար գործիքներով միայն զինուած էին : Երբոր հասան այն ընդարձակ ճախճախուտին եզերքը՝ յուսահատ աչքով մը սկսան նայիլ այն դաշտին վրայ . Ո՛վ կտրիճներ , ըսաւ անոնց Յովսէփ , փոխանակ թշնամեաց հետ կուտելու՝ Եգիպտոսի բարեկամ գետի մը օգնէք պիտի , որն որ կը կը հրաւիրէ զձեզ վայելելու այս դարերէ ի վեր ձևացած ընդարձակութեան բերքերն : Ձեր հայրենիքէն հեռու չեմ քշեր զձեզ , ասկէց ալ ահա կը տեսնաք Մեմփիսի աշտարակները , որոնք կը քաջալերեն զձեզ մէկ մեծագոյն երկրի մը իրաւունքը տալու իրենց : Այս գաշտերը՝ սովին սարսափը թեթեւցնելէն ետև՝ ձեզի վաչ խովը հանդերձ պիտի վճարէ ձեր աշխատանքը : Հասկա ձեզ տեսնամ կտրիճներ , փութացէք այս ահաւոր հարուածին առջևն առնելու :

Խօսքը լմնցուց Յովսէփ , և այն բոլոր բազմութիւնը՝ նման պատերազմող զինուորներու՝ որ պատերազմի վայրկենին ամէն ճիգը կը թափեն իրենց զօրավարը գոհ ընելու և յարձակմունքը սկսելու , ասանկ ալ այս գունդերը անհամբեր կ'ուզէին Յովսէփայ հրամանները մէկէն գլուխ հանել : Սկսան նախ եօթը ջրանցներ փորել մէկ միջոցի մէջ , անոնց մէջ ամփոփելու դաշտին վրայ տարածուած ջրին ընթացքը , տեղ տեղ դիզուած կոյտերն ալ մեծ օգնութիւն էին իրենց աշխատանացը : Զրանցք-

ները իրենց սկզբնաւորութեան տեղը միացած էին իրարու, բայց քանի որ դէպ ի ծով կ'երկըննային՝ այնչափ ալ կը հեռանային իրարմէ :

Իթուրիէլ՝ այն վայրկենին որ Նեղոսի աղբւրը առաջին անգամ երկրիս ծոցէն սկսաւ ցատքել՝ ետեւէ էր մէկ նոր Եգիպտոս մըն ալ ստեղծելու . այս դիտմամբ Թադաւորութեան ինչուան հեռու սահմանները կը խրկէր այն արգասաւոր տիղմը՝ որ զԵգիպտոս ընդարձակելու պիտի ծառայէր, ինքն ալ այսօրուան օրս այս գեղեցիկ գործողութեան եկեր էր օգնելու : Բարձրացաւ օդին մէջ, բոլոր Եգիպտոսը պտըտեցաւ, ջրվէժները անցաւ, սևամորթ Եթովպացւոյն աշխարհը կտրեց և հասաւ Ապիսսինիա : Հոն աղբւրին արագութիւնը դանդաղեցուց, հոսանքները աւելի նուազ բռնութեամբ Եթովպիոյ ժայռերէն վար կ'իյնային, աւելի հանդարտ ընթացքով գետին վազուածքն ալ Եգիպտոսի մէջէն կ'երթար, և ջրանցքները փորող բոլոր աշխատաւոր գունդերն զարմանքով և ուրախութեամբ լեցուած կը նայէին որ Նեղոսն ալ իրենց աշխատութեանը կ'օգնէր, ուստի իրենք ալ ջանքերնին կ'աւելցընէին . Յովսեփայ ներկայութիւնն ալ զիրենք կը քաջալերէր, ամէն բան գործողութեանը երագութիւն մը կուտար : Հասան վերջապէս ծովուն եզերքը . ծովուն տեսարանը մեծ ուրախութիւն մը ազգեց վրանին՝ ինչ որ կ'ազդէ նաւապետի մը վրայ՝ երկայն ճամբորդութենէ ետքը ցամաք երկրի մը երևոյթը :

Ջրանցքերը լմնցան, և պատրաստ էին գետին ջուրը ընդունելու՝ որ տանին ծովը Թափեն . բացուեցան Թումբերը, և Նեղոս դաշտէն քաշուելով վազեց արագութեամբ մը այն եօթը ջրանցքներուն մէջէն : Իւրաքանչիւր գունդ իր փորած ջրանցքին քով ժողվուած՝ ջրին տեսարանովը կը զուարճանար :

Աշխատութիւնը ըմբոսցաւ, և Յովսէփ բոլոր գունդերուն հետ մտաւ Մեմփիս : Այս աշխարհակալութիւնը՝ ամենեկին մէկու մըն ալ արցունք թափել չտուաւ . հայր մը՝ որուն մագերը ճերմըկցուցեր են տարիները՝ իր տղան ողջ տեսնելուն միտի : Թարութիւնը կը վայելէր . հարս մը՝ թևերուն մէջ իր սիրոյ երջանիկ պտուղները բռնած՝ կը պլուկէր իր փեսային հետ՝ որ ուրախութենէն ինքզինքն կը կորսնցընէր, նոյն սրտի խնդութեանը մասնակից կ'ըլլային իրենց սիրուն զաւկներն ալ :

Ելաւ Յովսէփի թագաւորին առջևը, և գործողութեան յաջողութեամբ ըմբոսալը իրեն հասկըցընելէն ետև . Հիմա հրաման տուր, ըսաւ . Եգիպտոս՝ որ բնակիչներով լեցուեր է՝ նոր երկրին վրայ իր ժողովրդեան մէկ մասը տարածէ :

Կայսրը երախտագիտութեամբ զգածուած ելաւ աթոռէն գրկեց զՅովսէփ . Ո՛վ բարերար Եգիպտոսի, պատասխանեց իրեն, ազնիւ աշխարհակալ, ո՞ւր էր թէ ազգերու բոլոր պուլիներն ալ քու օրինակիդ նմանէին . ո՞ւր էր թէ փոխանակ քաղաքականացեալ ազգաց վրայ իրենց աւերակները ձգելու, այսպիսի երկիրներու մշակութեանը հնարք մը գըտնային՝ որոնցմէ իրենք զիրենք ալ կը զրկեն՝ և վայրենի գազանաց բնակութիւն մը կը թողուն : Յովսէփ, ըմբոսը գործքդ, տո՛ւր պէտք եղած հրամանները, և տար ժողովուրդը երջանկացընելու մէկ երկրի մը վրայ որուն գուն ես ստեղծողը :

Յովսէփի գաղթականներ խրկեց հոն, և այն երկիրները բաժնեց անոնց որոնք Նեղոսի տղմբէն ձևացած և երկար ատեն անոր ջուրերովը ծածկուած՝ մէկ հրաշալի արագութեամբ մը իրենց յանձնուած սերմունքը կը բուսցընէին : Եւ երբոր կը զարգարուէին կանանչութեամբ՝ ծաղկըներով, առատ հունձքներով՝ պտուղներով ծանրրցած ծառերով՝ մէկ կողմանէ ալ գեղեր ու քաղաքներ կ'էլ

լային կը բարձրանային : Յովսէփ երջանիկ սրտով մը կը պարտէր այն ծաղկած երկիրներուն մէջ, ինչպէս որ երկրագործ մը մէկ գեղեցիկ պարտեզ մը ձևացրնէլէն ետև՝ ամէն օր կ'երթայ հոն, զուարթ աչքով մը կը նայի կը տեսնայ իր ձեռուընէրովը տնկած ծառերուն մեծնալը, անոնց առջի հովանին կը վայելէ, և իր ընտանեացը մէջ սիրտը կը զուարթանայ՝ քանի որ կը մտածէ թէ իր աշխատանացը պտուղը կը քաղէ : Յովսէփայ սիրտն ալ նոյն զգացմունքները ունէին . բոլոր Եգիպտոս իր ամէն հարստութեամբը Մեմփիսէն սկսեալ ինչուան Նեղոսի ջրվէժները՝ շատ աւելի նուազ զարմանալի տեսարան մը իրեն աչքին առջև կը տեսնուէին : Ծովուն պահապան հրեշտակը այս զուարթ եզերքներուն վրայ կուգար պարտելու, հոն մըրիկներուն ու նաւակոծութիւններուն տագնապները կը մոռնար . ծովն ալ կարծես կը պատկառէր այս նոր դաշտերէն, և նոյն խի Եգիպտոսի պահապան Ուզին ալ այս տեղերուն վրայ թուջելով՝ իր գործքին վրայ կ'ուրախանար :

Այս բրած խնամքներուն մէջ, Յովսէփայ սրտին խորունկէն արթընցան իրմէ անբաժան զգացմունքներն . տեսնելով որ մէկն ալ չգարձաւ այն գերիներէն զորոնք խրկեր էր իր հօրը տնակը, սարսափելի վախեր սիրտը պատեցին :

Շատ անգամ ինքնիրենը կը հարցընէր . Չըլլայ թէ արդեօք Բենիամինն ալ իրմէ յափշտակուած ըլլայ . իրեն կերպարանքը միշտ աչքին առջևն էր . կարծես թէ ահա կը տեսնար որ եղբայրական բարեկամութիւնը իրեն շրթունքներուն վրայ կը փայլէր : Երբեմն կ'անցընէր մաքէն թէ կրնար ըլլալ որ Բենիամինն ալ իրեն պէս Յակովբայ սիրելի ամուսինէն ծնած ըլլալուն համար՝ իրեն խեղճ վիճակը անոր գլուխն ալ հասած ըլլայ . և թէ իր եղբայրները Բենիամինի վրայ ալ ինչուան՝ Յովսէփայ ա-

րիւնը հալածած ըլլան, հայրենական սահմաններէն վերնտած ըլլան զինքն ալ՝ և գերութեան լուծի մը տակ ձգած ըլլան :

Այս տագնապներուն վրայ՝ ծանր կասկած մը իրեն միտքը պաշարեց. Անտարակոյս, կ'ըսէր, եղբայրներս զիս ինչուան ետքը ատելով և վախնալով որ իրենց կարօտութիւնն երևան չելլայ, անշուշտ այն գերիները Յակովբայ աչքէն հեռացուցած են, և թերևս երկաթներու ալ զարկած են : Սկսաւ մեղադրել զինքը որ այն խեղճերուն թշուառութեանը պատճառ եղաւ. ցաւակից կ'ըլլար անոնց, միտքը կը բերէր իր գերութիւնն ալ : Թէպէտ և կը փափաքէր ուրիշ ծառաներ ալ խաւրել իր հօրը խրճիթը՝ բայց փափաքը՝ սրտին մէջը կը խղզէր. և թէպէտ կը տեսնար որ մեծամեծները իրենցմէ ստորիններուն արիւնը արհամարհ կը սեպէին, և ինչուան երբեմն ամբողջ ժողովուրդներ իրենց ախիրաւ կրիցը կը զոհէին, բայց զիտէր Յովսէփ որ ոչ իր փառաց աստիճանը և ոչ բնութեան փափուկ զգացմունքներն՝ չէին կրնար իշխանութիւն տալ իրեն՝ մահկանացուաց մէջ ամենէն նուաստն ալ զոհելու իր կամքին :

Այս միջոցներու ընդհանուր ժողովրդեան թշուառութիւնը Յովսէփայ սիրտն ալ տակնուվրայ ըրաւ, և նոյն իսկ իր խեղճութիւնները թեթևցուց իր աչքին դիմացը : Ընդարձակ շէնքերը լեցուեր էին ցորենով, բոլոր երկիրն ալ իր բարիքներովը ծածկուած կը տեսնուէր՝ երբոր ահաւոր հարուած մը կը պատրաստուէր ժողովրդեան մը՝ որոնք կը պարծենային սովի երես չտեսնելուն համար : Պատարազմներու առաջարկութեանց նըման որ թագաւորաց պալատներուն մէջ կը վըճուուին՝ երբոր երջանիկ երկրագործը որոշուած խորհուրդին անտեղեակ՝ կարծէ թէ իրեն համար է որ իր երկիրը կը մշակէ :

Այն հրեշտակը՝ զորն որ աշխարհիս վրայի ազգերը պատժելու համար կը խրկէ ամենակալն Աստուած՝ ինչաւ երկնքին կամարէն : Որոտաց իր պատգամը . և ահա սարսափեցաւ երկիր , և Ովկիանոս տակնուվրայ եղաւ : Մէկէն ի մէկ լիբիոյ անապատներուն մէջէն սարսափելի փոթորիկներ գուրս յարձրկեցան՝ որոնք իրենց մութ կողերուն մէջ ամփոփած չորութիւնն ու անբեր աւազները բերին թափեցին այն երկիրներուն վրայ . և երբոր այս ամեն բան այրող չորցընող մրրիկները՝ Եգիպտոսը անբեր անապատ կը դարձնէին՝ մէկ կողմանէ ալ Եթովպիոյ վրայ միշտ դիգուած ամպերը ամէն տեղ կը ցրուէին կը տարածէին . մէկ պատերազմ մըն էր որ օգին ընդարձակ դաշտին մէջ կը տեսնուէր : Նախ հարաւային քամիները դէմ կեցան , և ամպերը երկու հակառակ քամիներու բռնութիւններէ ստիպուած իրարու հետ կը զարնուէին , հազարաւոր փայլակներ չորս կողմանէ կը ցատքըտէին , և մի և նոյն միջոցին մէջ կայծակներու՝ մրրիկներու և Նեղոսի ջրվէժներու որոտալները բոլոր օդը կը թնդացընէին : Եթովպիոյ մօտակայ բնակիչները թէպէտ և վարժած էին ջրվէժներու աղաղակին՝ սարսափեցան այս ահաւոր շփոթութեան գոռալներէն : Ա երջապէս լիբիոյ մրրիկները յաղթանակեցին , ամպերը ետ ետ քշուեցան , և ծովերու անդունդներու մէջ ծածկուելու պէս՝ հորիզոնին վրայէն աներևութացան , փորձանքաւոր պարզութիւն մը օդոյ պատեց երկնքին ընդարձակ տարածութեանը մէջ :

Եգիպտոսի պահապան Ոգին տեսաւ որ ամպերուն հետ՝ այն տէրութեան բոլոր հարստութիւնն ալ հեռացաւ գնաց . երկնքին երևոյթը ծածկող քոյ մը չէր մնացած օդին մէջ , բայց այս գեղեցիկ տեսարանը կը դառնանար իրեն , քանի որ պատրաստուած հարուածը կը տեսնէր : Նեղոսի աղ

բիւրին վրայ աշուրները դարձուց. տեսաւ այն գետն որ այս միջոցներուս երկնքին հոսանքներէն ջուրը լեցուելով հեղեղի պէս դուրս կը պոռթկար, հիմա թեթև ալիքներ միայն երեսին վրայ ձևացընելով վար կը թափէր, ու լեռներուն մէջէն կ'անցնէր. կամաց կամաց տեսաւ որ կը ցամքի Նեղոս, և մէկ պզտի առուակ մը դարձաւ՝ որուն հագիւ թէ ջրին ընթացքին ձայնը կը լսուի, և պզտի արգելք մըն ալ բաւական է անոր խեղճ ընթացքը բոլորովին արգիլելու: Արդէն ջրէժներու գոռալու ձայները թուլցեր էին, կարծես թէ ետ ետ կը փախչէին և հեռուէն իրենց որոտալները կը հնչեցընէին: Երթալով հոսանքները ցամքեցան, արձագանգները համրացան, և այն չորցած ընդարձակութեանը մէջ խոր ըուծիւն մըն է պատեց: Երկնքի թռչուններն ու վայրենի գազաններն որոնք ջրերուն աղաղակէն ահու գողի մէջ էին միշտ, հիմակուան հանդարտութիւնը նոր տեսակ սարսափ մը ձգեց վրանին: Մտաւայ դաշտերու բնակիչները տագնապեալ իրենց խրճիթներէն դուրս ինկան, և այն մերկ ու ցամքած ժայռերուն տեսարանը արհաւիրք մը պատեց վրանին. իրենց վրայ վճռուած հարուածը աչքերնուն առջևը կը տեսնային. կը կարծէին տեսնալ՝ որ ահա սովը՝ ոսկորներէ ձևացած ահաւոր երևութի մը տակ՝ կ'ինջնար այն քարաժայռներուն գագաթէն՝ ուսկից որ առաջ ամէն առատութիւն կը վազէր:

Այն միջոցներուն որ ամէնքն ալ այս սարսափելի հարուածը յայտնապէս կը տեսնային, բոլոր Եգիպտոս՝ երջանիկ զուարթութեան մը մէջ ընկրդմամբ՝ առատութեան ետքի վայելքը կը վայելէր: Նեղոս գետ իր ընթացքը առատ ջրով կը շարունակէր, և պակսիլը գրեթէ անզգալի էր: Բայց երբոր տեսան Եգիպտացիք ալ որ ջուրը փոխանակ իր սահմանէն դուրս վազելու՝ երթալով կ'ինջնար,

յուսահատութիւն մը բոլոր տէրութիւնը սրատեց: Բոլոր գեախին երկայնութեանը վրայ երկու կողմէն՝ բազմութեամբ եղբրքները լեցուած, և տխուր աչուրնին ագահ գեախին վրայ անկած՝ ցաւալից սըրտերով անոր պակտիլը կը գիտէին:

Ընդունայն տեղը կը սպասէին դաշտերը որ գան ջրերը ստղաբեր ընեն զիրենք. արդէն փափուկ ծաղիկները չորցան, աւելի ուժով բոյսերը իրենց թուլցած գլուխները ծուլելով՝ կարծես թէ՛ Նեղոսի օգնութիւնը կ'ուզէին. իսկ արմաւենիներն ու մայրերը դեռ իրենց տերեւներովը ծածկուած այն սարսափելի հարուածէն իրենք միայն խալըսիլ կը կարծէին. բայց վերջապէս նման այն յիշատակաւորաններուն՝ զորոնք մարդու ձեռք բարձրացուցեր է իրմէն ետքն ալ մնալու աշխարհիս վրայ, և որոնք դարերու դիմաց կենալէն ետև, վերջապէս կը գլորին ժամանակին աւարհարութեանցը տակ. ասանկ ալ այս գեղեցիկ անտառները բոլոր իրենց ազուրութիւնը կորսընցուցին. և այն տերեւները որոնք կարծես թէ իրենց յաւիտենական զարդերն էին, գեղընցան, թափթըփեցան, և թողուցին մէջ տեղը մերկ և մեռած ցօլուն մը և չորցած ճիւղեր: Բայց երկիրը դեռ բոլորովին մերկացած չէր իր գեղեցիկ կանաչութենէն, վասն զի գետեղեբքներուն վրայ դեռ կը տեսնուէր. բայց քիչ ատենէն ամէն բան փձացաւ, և ընդհանուր աւերակ մը պատեց բոլոր երկիրը: Վարծես թէ մարախներու բանակ մը յարձըկեր կրծեր էր ամէն բան՝ ինչուան հողին մէջի արմատներն ալ, և կամ թէ հրդեհի մը բոցերը բոլոր տէրութիւնը մոխիր դարձուցեր էին: Քարունն ու աշունը որ ձեռք ձեռքի տուած այս գեղեցիկ տեղերուս մէջ կը թաղաւորէին՝ կարծես թէ թողուցեր քաշուէր էին՝ մէյմըն ալ չգառնալու մտքով. ամառը՝ ամէն բան աւերակ դարձընող կրակը իր հետը առած՝ եկեր հաստատեր էր հոն

իր թագաւորութեան ամօր: Արեւոն տաքու-
թենէն խաղտելու համար հովանի մը չկար, երկի-
րը չորցեր էր, զեփիււոփն շունչը մարդուս երեսը
կ'այրէր, և կրակ դարձած Նեղոսն ալ զովութիւն
մը չէր շնչեր ամենակին:

Երբոր մեծամեծներէն շատերը իրենց սպառանե-
րուն խորերը քաշուէր էին՝ որպէս զի սովին սար-
սամբելի հարուածը աչքերնուն առջևէն հեռացը-
նեն, և թէ որ կարելի ըլլայ մտքերնէն ալ դուրս
թօթափեն, Յովսէփ դուրս ելաւ Մեմփիսէն և գը-
նաց զէպի դաշտերը ուր հասարակաց խեղճութիւ-
նը ահաւոր տեսարան մը ձևացեր էր: Ինչ երևոյթ-
էր որ Յովսէփայ աչքին զարկաւ. փոխանակ այն
երջանիկ բնակութեան ուր որ բնութիւնը իր գան-
ձերը առատ կը բաժնէր, հիմա ընդհանուր աւե-
րակի մը միակերպ տեսարան մը միայն բացուէր
էր մէջտեղը. բոլոր Եգիպտոս՝ իր չորս կողմը պա-
տած ժայռերուն և աւազներուն նման անբեր և
անապատ դարձեր էր. Նեղոսը կը ցամբէր՝ իբրև
թէ իր ընթացքը ուրիշ երջանիկ երկիր մը դար-
ձուցած ըլլար, գեղացիները յուսահատ գլուխնին
կախած կը պտրտէին:

Այսպիսի տեսարանի մը դիմաց՝ զարհուրած
կեցաւ Յովսէփ: Բայց ետքը մեկէն ելաւ քաջալե-
րելու Ժողովուրդը, և խոստացաւ անոնց պիտոյքը
լեցնելու: Հաւատացին Յովսէփայ խօսքերուն. գեղեցիկ
ակնկալութիւն մը սրտերնուն մէջը ծա-
գեց, և քաղքէ քաղաք ինչուան Եթովպիա նոյն
յոյսը տարածուեցաւ:

Գնաց Յովսէփ պտրտեցաւ բոլոր այն երկիրներն
որ իրեն արգիւնքովը ձևացուցեր էր, բայց գոհ չէր
ըլլար միայն իր խոստմունքներովը վստահացնելու
Ժողովուրդը, այլ ամէն ջանք սկսաւ ընել խեղճու-
թեան առջև առնելու: Իր սպառտը չէր դառնար
ինչուան որ թշուառ մարդկանց խեղճութեան ձայ-

ները չիդարեցրնէր . անկէց ետև իր բնական թիւնը հասարակաց շէնքերու մէջ էր , ուր որ ցորենը ամփոփուած էր , և ուսկից որ ազգերու բարերար կը հանդիսանար . ահա հոն էր իր սալատը : Գիտեր Յովսէփ որ մեծամեծները աշխատութեան ծանրութենէն խաղըսելու համար էր միայն՝ որ նուաասաստիճանի մարդկանց վրայ ամէն ծանրութիւն կը թափէին , ուստի Յովսէփ ինքը անձամբ իր ժողոված ցորենին գլուխը անցեր էր բաժնելու ժողովրդեան : Երջանիկ գեղացի , մի վախեր չես մեռնիր սովէն , քանի որ քու աշխատանքովդ շինած հացդ Յովսէփայ պէս հարուստի մը ձեռք ինկած կը տեսնես :

Պետափրէս ինքն ալ իր սալատը թողուցած է կեր էր Յովսէփայ օգնելու : Բայց ուրիշ որոնց կրնար յանձնել մէկալ երկրորդական գործողութիւնները , ուր կրնար դանել այնպիսի վստահելի մարդիկ՝ որ ազահութեամբ աւատութիւնը չքփճացրնեն : Գտաւ Յովսէփ արժանաւոր անձինքը , չգնաց քաղաքներու մէջ փնտռելու զանոնք . գտաւ ուղածները մէկ կալուածի մը մէջ միայն , և ասոնք իր գերութեան ընկերներն էին : Պետափրէսի հաճութեամբ՝ Մեմիխի գուռը ժողովց զանոնք :


Միրելի բարեկամներ , ըսաւ անոնց , ես ձեր շղթաներուն մասնակից եղայ , հիմա դուք ալ ինձի հետ կ'ուզեմ որ մասնակից ըլլաք այսպիսի պատուոյ բարձր աստիճանի մը հաստատուն վայելքի , որ է ժողովուրդը երջանիկ ընելու վայելքը : Չմնացին ձեզի ոչ ծաղիկներ , ոչ կանաչ անտառներ , ոչ հասունցած հունձքեր . այսպիսի փխուր տեսարանէ մը զձեզ կ'ուզեմ հեռացրնել՝ ուրիշ հարկաւոր խնամքներ ձեզի յանձնելով . ինչուան որ բնութիւնը զձեզ նորէն կանչէ իր դաշտերը՝ իրեն ձայնին պէտք է որ հնազանդիք . բայց հիմա

մէկտեղ պիտի ապրինք, և ես ուրախութեամբ պիտի տեսնամ նորէն այն օրերն՝ որ բարեկամութեամբ սէրը իմ թշուառութիւններս կը մեղմացնէր :

Յովսէփ խօսքը ըմբոց, և անոնք ամէնքն ալ մեծ եռանդով մը նուիրեցին զիրենք այս սիրոյ նոր պարտքերը կատարելու : Հոգւոյ և մարմնոյ մը մէջ գտնուած գեղեցիկ յարմարութիւնը կը տեսնուէր Յովսէփայ և իր բարեկամներուն վրայ . մէկ սրբտով կը մտածէին և կը գործէին : Արդարութիւնը՝ որ երկրէս հալածուած կը սեպուէր՝ նորէն ծագեց հոն, և իր աթուր Եգիպտոսի մէջ դրած կը տեսնուէր : Աղքատն ալ հարուստին պէս իր իրաւունքը կը վայելէր . և երբեմն թէ որ իշխանութեան ուժն ալ կը փայլէր մէջտեղ՝ քաշուած թշուառին օգնութեանը համար էր միայն : Ահա այսպէս սովին տաղնապի ժամանակ առատութիւն մը տիրեր էր : Մեծամեծները միայն՝ ստիպուած իրենց արտաքին զարդերը չափաւորելու՝ կը նեղուէին սովին տաղնապէն . գոհ էր աղքատը՝ հարուստը միայն տժգոհ . հազիւ երբեք տեսնուած տեսարան մը հասարակաց թշուառութեանց մէջ :


Բայց Եգիպտոսի պահպան Ոգին՝ Նեղոսի աղբիւրէն ելաւ բարձրացաւ բարձր քարաժայռին գագաթին վրայ, ուսկից որ աչքին առջև կը տեսնէր իր պաշտպանութեանը տակ եղած ամբողջ թաւաւորութիւնը : Մէկ զգայուն մօր մը պէս՝ որ ուզելով սնուցանել իր նորածին զաւակը՝ և տալու կաթին աղբիւրը ցամքած գտնելով՝ ցաւագին աչքով մը կը նայի իր սիրոյն քաղցր պտղոյն վրայ, և սանկ ալ Ոգին կը զիտէր այս երկիրը, որ Նեղոսի տղմէն ձևացած, անոր ջրովը արգասաւոր եղած, և հիմա սովէն անասաւոր դարձեր էր : Բայց իր թշուառութեանցը դիմաց միխթարական տեսարան մը բացուած կար . Մեմփիսի դրանը մէջ մէկ

նոր աղբիւր մը կը տեսնէր, ուսկից առատութիւնը
 կը վազէր բոլոր Եգիպտոս. կը տեսնէր որ Յով
 սէփն էր՝ որ անոր ընթացքը կը կառավարէր: Տե-
 սաւ որ հիմայ այն թագաւորութեան պահապան
 Ոգին ալ էր նոյն այս առաքինի մահկանացուն.
 Գոհ սրտով մը թուաւ երկինք, ուսկից որ բոլոր
 այս հարստութեանց վրայ կը հսկէ:



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Յ Ի Կ

Ե Ր Գ Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ



ԵՐԳ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Քանի որ Եգիպտոս զինքը պաղաքեր ընող գե-
տէն զրկուած՝ Յովսեփայ ձեռքովը կը կերակ-
րուէր, սովը՝ մէկ ահաւոր հեղեղի մը պէս, որ մէկ
կողմանէ եթէ թուամբերով արգելուի, դէպ ի ու-
րիշ կողմ՝ մը իր ասպատակութիւնը կը դարձնէ՝
Եգիպտոսի տերութեան սահմաններէն դուրս կը
տարածուէր: Հրեշտակը որ այս սարսափելի հա-
րուածը կը թափէր վերէն՝ հասեր էր արգէն մինչև
Կարմիր ծովուն եզերքները, և չորութիւնը տիրե-
ր էր ինչուան այն տեղերն ալ: Հրեշտակը կտրեց
ծովն ալ, մտաւ Արաբիոյ պաղաքեր դաշտերն ալ,
և մի և նոյն վայրկենին մէջ երկինքն ու երկիրը իր
հարուածներովը լեցուց. ամպերը ցրուեցան և եր-
կիրը իր արգասաւորութիւնը կորսնցուց. Արա-
բիոյ ազնիւ բերքերը բոլոր փձացան. ծովուն երե-
սին վրայ ալ չէր տարածուէր այն անուշահոտու-
թիւնն՝ որ ճանապարհորդները կը զուարթացընէր
և իրենց հայրենիքը մտցընէլ կուտար:

Բայց հրեշտակը իր ահաւոր ընթացքը դեռ կը շարունակէր, և ամենակալ Աստուծոյ իրեն ցուցրցած ճամբովը երթալով հասաւ Քանանու երկիրը Յակովբայ գաշտերուն մէջ: Երբոր նայեցաւ այն բնակարանին վրայ ուր որ բնութեան Արարիչը կը պաշտէին՝ կանկ առաւ, և փափաք մը սրտին մէջ վառուեցաւ որ ինքն ըլլայ այն տեղւոյն պահասան Ոգին: Մտաւ ծերունւոյն տնակը. տեսաւ որ արցունք կը թափէր: Հրեշտակը թէպէտ գթութեամբ լեցուած կ'ուզէր խնայել, բայց ինքզինքը ստիպուած կը տեսնէր Աստուծոյ վճռոյն հնազանդելու՝ որուն գաղտնիքը իրմէն ալ ծածկուած էր: Եւ ահա մէկէն հողին ծոցը ցանուած հունտերը չորցան, բոլոր բոյսերուն սննդարար հիւթերը՝ ցամքած գետերու պէս հողին մէջէն բոյսերու մէջ և ծառերու գապաթները ալ չէին վազեր:

Յակովբայ տնակն ալ իր կանաչութենէն մերկացաւ. ծաղիկներու սրահներով ալ չէր զարդարուէր: Քովի Յովսեփայ շնած խրճիթն ալ չորցաւ, որուն մէջ հիմա Սելիմա կը բնակէր. բոլոր գաշտերն ալ նոյն տեսարանն ունէին:

Յակովբայ որ Յովսեփայ հեռանալէն ետեւ հազիւ երբէք իր տնակէն դուրս ելէր էր, այս թշուառութենէն ստիպուած ելաւ: Սելիմայի և Բենիամինի վրայ կ'ընծայ՝ ծնկուրները գողալով գնաց գաշտերը. ծերութենէն ծուծ գլուխը վեր վերցուց, և տխուր աչուրները չարագուշակ տեսարանին վրայ կը պտըտցընէր: Երկար ատեն լուռ կեանալէն ետեւ. — Ո՛վ խրճիթ Աբրահամու, հառաչեց սրտէն, քու առջի սրայծառութիւնդ արդէն կորաւ լմրնցաւ... Ո՛վ խրճիթ սիրելի զաւակիս՝ որ աներևութացաւ աչուրներէս, դուն ալ մեր ցաւոցը մասնակից ես այսօր, ահա քու վերջին տերևիդ իյնալն ալ տեսայ... Եւ դուն ալ ո՛վ սեղան Աստուծոյ, այն օրէն ի վեր որ Աբրահամու ձեռուը-

ները կանգնեցին զքեզ, ահա այս առաջին անգամ է որ երկրին առջի բերքերը չես ընդունիր... Ո՞վ կը կարծէր որ ուրիշ թշուառութիւններ ալ պիտի ողբամ եղեր, և ուրիշ նոր ցաւերով ալ լեցուած պիտի իջնամ եղեր մահուանս շիրմին մէջ: Սիւրբի զաւակս կորսնցընելս դեռ բաւական չէր ինծի, և հարկ է եղեր որ մեռնելու ատենս՝ անսնամ աչքիս առջևը բոլոր ընտանեացս դառն մահերն ալ...:

Ետքը դորովալից աջուրներով Սելիմայի և Բենիամինի վրայ նայելով, Գուք ալ ըսաւ իրենց, ո՞վ գուտար իմ, ո՞վ որդեակ իմ, որ իմ թշուառ ծերութեանս մխիթարանքներն էք, և իմ աջուրներս գոցելու... Յաւը խեղճ ծերունւոյն բերնէն խօսքը կարեց:

Սելիմ գրկեց խեղճ ծերունին և արցունքովը կը թրջէր. հայր իմ, ըսաւ, թէ որ ամէնքնիս մէկ անգ զերեզման իջնելու որ ըլլանք, սրախ մեծ փափաքը լեցուած պիտի գտնեմ: Շատ անգամ խնդրեր եմ Երկնքէն որ քու վախճանելէդ ետև իմ կեանքս ալ վերցընէ: Արթամ ըլլալովս իմ արցունքներս քուկիներուդ հետ խառնելու, ամէն օր քու խրճիթդ պիտի վազեմ զքեզ փնտռելու. և զքեզ երբոր հոն չգտնամ՝ իմ սիրտս ի՞նչ պէս պիտի դիմանայ այսչափ ըրած կորուսաներուս վրայ, և իմ արցունքներս պիտի բաւեն արդեօք լալու մէկ հայր մը, մէկ ամուսին մը: Այս խօսքերը անանկ սրտաշարժ ձայնով մը ըսաւ, որ Բենիամինն ալ զգածուեցաւ, և Յակովբայ սրաին ցաւերն ալ քիչ մը մեղմացան:

Իսկ Յակովբայ մէկալ տղաքը մէկտեղ իրենց բնակութիւններէն դուրս ժողովուած տխրութեամբ մը կը նայէին իրենց բնակարաններուն և իրենց դաշտերուն վրայ՝ որոնք մերկացեր էին բոլոր իրենց ունեցած հարստութիւններէն. ետքը զարհուրած

իրենք իրենց վրայ կը նայէին՝ առանց խօսք մը բերաններնէն հանելու :

Սիմէոն իր ամէն եղբայրներէն ալ աւելի արըտում և գոյնը նետած՝ ոչ խրճիթներուն վրայ և ոչ դաշտերուն վրայ աչուրները կը դարձընէր, դառն յուսահատութեան մը մէջ ընկղմած՝ կատաղի աչուրները հողին վրայ անկած կը նայէր :

Ահ խլճի խայթեր, յանկարծ պոռայ հառաչելով, որ դիշեր ու ցորեկ կը հալածէք զիս, միթէքնէ տանջանք էկք դուք ինծի, և ահա մէկ ուրիշ աւելի սարսափելի մըն ալ. վասն զի գիտեմ ստուգիւ՝ տարակոյս չիկայ, ո՞վ որդիք Յակովբայ, գիտեմ որ ես եմ որ ձեր գլխուն վրայ այս հարուածը երկնքէն թափել տուի : Ես եմ որ զձեզ մոլորցուցի, ես միայն ծախեցի իմ եղբայրս. թէ որ ես չըլլայի՝ բարեկամութիւնը, ուրախութիւնը և առատութիւնը հիմա այս դաշտերուս մէջ պիտի թաղաւորէին : Թէ որ այս հարուածը իմ գլուխս միայն իջնալու ըլլար՝ շատ փոյթ չէի ըներ, բայց այս վրէժխնդիր երկնքը՝ որուն որ ընդունայն տեղը կ'աղաչեմ որ բարկութեան կայծակը իմ վրաս միայն թափէ, կ'ուզէ իմ վիշտերս ծանրացընել. կ'ուզէ որ տեսնամ հօրս մեռնիլն ալ, Սելիմայինն ալ և բոլոր ընտանեացս ալ : Աչքիս արջեր պիտի տեսնեմ բոլոր ասոնց վերջի շունչերնին տալը՝ ասոնց ամենուն մահուանը պատճառ զիս միայն գտնելով : Ծներ եմ ես Աբրահամու ցեղը արմատէն ջնջելու : Ընդունայն տեղը խոստացաւ իրեն Աստուած մէկ բազմաթիւ սերունդ մը, ես այն սերունդը ջրնջեցի : Ա՛լ հնարք չկայ. պէտք է որ արմատախիլ փճանայ... Այո՛. այս այսպէս է, դուք ալ ասկէց Լահ փուճ տեղը կ'արդէլուք զիս. ահա կ'երթամ ես ամէն բան յայանելու Յակովբայ. կ'ուզեմ որ սրառիէ զիս Յակովբ, որ զարնէ սպաննէ զիս, և մէկ հարուածով խալըսէ բոլոր այս դաշտերը մէկ

մարդասպանի մը ձեռքէն, և անոր պատճառաւ ինչպէս ամէն հարուածներէն :

Ասոնք ըսաւ, և յուսահատութիւնը ճակատին վրայ պատած՝ կ'ուզէր հեռանալ իր եղբայրներէն :

Կեցի՛ր ո՛ւր կ'երթաս, պուտայ ետեւէն Ռուբէն, կեցի՛ր. ապա թէ ոչ, ահա մենք ալ կուգանք ետեւդ և կը յայտնենք Յակովբայ որ բոլոր իր զաւկերներն ալ յանցաւոր են : Անպո՛ւթ, կ'երթաս մահ վրն տուելու, և չես մտածեր որ կը վազես հայրդ սպաննելու :

Սոսկում մը ինչպէս Սիմէոնի վրայ. կանկ առաւ և տխրութեամբ դարձաւ նորէն իր խրճիթը : Տեսան հեռուանց պատկառելի ծերունին որ Սելիմայի և Բենիամինի վրայ կութնիած արցունք կը թափէր :

Զերթանք առաջ, ըսաւ Նեփթաղիմ : Երջանիկ Սելիմա, երջանիկ Բենիամին, երանի՛ ձեզի որ կըրնաք իրեն արտասուացը ընկերել : Անշարժ մնացեր էին ամէնքն ալ. Սիմէոն կը դողար, կարծես թէ մարդասպան մըն էր որ իր վերաւորած զոհը դիմացը կը տեսներ : Սիրտը սկսաւ նետել, սրալ քրքրտինք մը ինչպէս վրան. էլաւ քանի մը քայլ առաջ գնաց երթալու Յակովբայ ոտքը սկըտելու, իր յանցանացը սարսափելի ծանրութենէն ինքզինքը խալըսելու, բայց ահեղ փոթորիկ մը ետ հրուելու պէս, ահուգողի մէջ ետ քաշուեցաւ :

Այս միջոցներուս ամէն տեղ կը տարածուէր Եզիպտոս կառավարողին իմաստութեան համբաւը՝ որով բոլոր այն երկիրները սովէն կը սրահաւնէր :

Երկնքին և երկրիս մէջտեղը հրեշտակ մը կը թռչի որ մարդկանց առաքինութիւնները կը հռչակէ : Սեմիիտի աշտարակներուն վրայէն՝ երկնքէ երկինք բարձրանալով ելաւ ինչուան բոլոր փեղեբաց Առտուծոյն աթոռին քով, ամէն տեղ Յովսեփայ իմաստութիւնը կը քարոզէր՝ որով Եզիպտոսը սո-

վէն ասպահովուց : Տիեզերաց մէջի բոլոր աշխարհք ները իրենց այլ և այլ ընթացքներուն մէջ Յով սեփայ անուանը արձագանգ թնդացուցին . երկ նային Ոգինները մտիկ կ'ընէին այս վսեմ ներգաշ նակութիւնը՝ որ առաքինութեան նուիրուած էր : Անկէց արագ ընթացքով մը ինչաւ հրեշտակը Յակովբայ դաշտերուն վրայ . հոն ալ յայտնի ըրաւ Եգիպտոս կառավարողին խմաստութիւնը՝ իր քաղցրը բնաւորութիւնը , ու այն առատութիւնն ու կարգերը որ իր թագաւորութեանը մէջ հաստատեր էր , իրեն զգայուն սիրաբ որ ունէր թշուաւ ներուն՝ դաշտերու բնակչաց և նոյն իսկ օտարներուն վրայ :

Այս համբաւը Յակովբայ սիրաբ շարժեց , բայց իրեն տղաքը տագնապով մը լեցուց . այնպէս մը կուգար իրենց որ այնչափ առաքինութիւններուն պատկերը յանդիմանութիւն մըն էր իրենց բարբարոս անգթութեանը : Այս մարդս , ըսաւ Սիմէոն ինքնիրենը , թշուաւներուն օգնութիւն կը հասնի իրեն անծանօթ ալ ըլլան , իսկ ես՝ բուն իմ եղբօրս արիւնը մտայ :

Կանչեց Յակովբ իր բոլոր տղաքը . կը քաշուէին դիմացը ելլալու , և ամէն անգամ որ քովը կը ժողվուէին՝ վախ մը կը սլատէր զիրենք չըլլայ թէ յանցանքնին իմացած ըլլայ : Բայց այս օր որ արդէն իրենք զիրենք այս հարուածին պատճառ կը սեպէին , իրենց հօրը ներկայութենէն աւելի կը սարսափէին . դողալով մտան իրեն տնակը . ծերունին նայեցաւ մէյմը երեսնին , և աչուրները վար առաւ .

Ահա դուք ալ կը տեսնաք , ըսաւ անոնց , թէ ինչ խեղճութիւն է որ մեր երկիրներուն վրայ ալ հասեր է . ցաւը՝ ծերութենէս աւելի՝ դէպ ի դէրեզման կը հրէ զիս . չեմ ուզեր ջանալ իմ օրերս երկնցընէլ . զաւակս կորսնցընելով՝ իմ կենացս անգին բանը կորսընցուցի . բայց Սելիմս դեռ ողջ է ,

բայց Բենիամին դեռ կենդանի է. Բենիամին՝ իմ սիրելի զաւակիս ճիշդ պատկերը՝ զորն որ կ'ողբամ՝ էս դեռ. և դուք ամէնքնիդ ալ՝ սիրելի էք ինծի: Եգիպտոս սովէն անապատ դարձեր է, բայց ցորենի կողմանէ առատ է, և այս դանձը իր կառավարողին խնայողութեանը արգիւնքն է. Կացէք ոտքը ինկէք. այս ոսկին ալ դրէք գիմացը. համբաւին ըսածին նայելով, դաշտերու բնակչաց և թշուառներուն վրայ ալ կը դիծայ և կ'ողորմի. երգութիւնը ցէք զինքը իր խնամքը ինչուան հոս մեր վրայ ալ հասցնելու: Թէ որ հասակս ինծի ներելու ըլլար, և թէ որ աւելի ընտրելու չըլլայի լալու իմ զաւակս բուն իր ծննդեան տեղերը՝ էս անձամբ կ'երթայի Եգիպտոս (*): Փափաքելի էր ինծի ճանչնալ այս մահկանացուն՝ որուն վրայ համբաւը այսչափ գովեստիւք կը խօսի: Բազդ սեպտեցէք ձեզի իրեն տեսութիւնը, մօտէն իրեն առաքինութիւնները զիտեցէք. իրեն քաղցրութիւնը՝ իրեն զգայուն սիրտը ձեր վրայ ալ տպաւորուին: Փութացէք երթալու, և Եգիպտոսէն կերակուր միայն բերելով գոհ մի ըլլաք, առաքինութիւններն ալ առէք ձեզի. ի դարձին կ'ողբամ՝ որ այս մահկանացուն վրայ տեղն ի տեղը տեղեկութիւն տաք ինծի: Բայց որպէս զի ամէն զաւակներէս ալ մէկէն չղատուիմ, Բենիամինը իր հօրը քովը մնայ:

Ծերունին դադրեցաւ խօսելէն. և Սիմէոն կը խնտար սրտին մէջ որ առիթ մը գիմացը կը բացուէր եղած խեղճութեանց դարման մը ընելու՝ որոնց պատճառ ինքզինքը կը գանար:

Յովսէփ բոլոր Եգիպտոսի վրայ իր խնամքը տա-

(*) ԾՆՆՊ. Գ. 1. 10Բ. 1-2. — Եւ Լուսն Յակոբ Եթէ գոյ վաճառ յերկրին Եգիպտոսաց, սակ Յակոբը ցորգին իւր. Ընդէր հնդգայք. ահա բնութի գոյ ցորեան յԵգիպտոս, իջէք անդը, և գնեցէք մեզ սակաւ մի կերակուր, զի կեցցութ և մի մեռցուք:

բաժեր էր, ինչուան ուրիշ մօտ երկիրներն ալ իր առատութեանը մասնակից կ'ընէր: Բայց ափասն որ օտար աղգերը կերակրելու ժամանակ, չէր գիտեր որ իր ընտանիքը աչքերնուն առջև կը տեսնային սովն ու մահը:

Փարաւոն տեսնելով՝ որ ինչպիսի զարմանալի կարգաւորութեամբ ցորենը կը բաժնուէր՝ շատ մեծ ուրախութեան մէջ էր սիրտը: Կանչեց Յովսէփը, իր սպառտականները քովէն հեռացուց և այսպէս իր երախտագիտութիւնը յայտնեց իրեն. Դուն ես իմ աթոռիս հաստատութիւնը, ըսաւ իրեն, դուն միայն արժանաւոր սաշտօնեայ իմ գաւազանս ինձի հետ կրելու. ինչ կերպով կըրնամ ես քու այսչափ խնամքներդ վարձատրել: Թէ որ քեզի համար կոթողներ ու բուրգեր կանգնել ուզենամ, բայց դուն գիտեմ որ կ'արհամարհես այսպիսի սպառտները, որ ամբարտաւանութեան նշաններ ըլլալով անարժան են քեզի: Շատ աւելի կ'ընտրես դուն որ յիշատակդ ամենուն սրտին մէջ միայն կենդանի մնայ, և արդէն ալ քու գործքերդ փառաւոր յիշատակարաններէն աւելի հիանալի են և յաւիտենական: Այս թագաւորութեանս մէկ մասին դուն ես ստեղծողը, դուն բոլոր Եգիպտոսն ալ պահող, և նոյն իսկ սպառտ սերունդներն ալ քու արդեամբքդ է որ պիտի ապրին. դուն ես որ այսօր իրենց հայրերը կը կերակրես, իրենք ալ ուրեմն քեզնէ իրենց կեանքը պիտի ընդունին: Գիտեմ որ քու զգացմունքներուդ ուրիշ արժանաւոր փոխարէն մը չեմ կրնար ընել, բայց եթէ դիմացդ նոր աւիթ մը բանալով օգտակար ըլլալու տէրութեանս. եկուր քու ըրած բարիքներուդ վրայ այս ալ աւելցուր:

Գիտես որ սովը չէ միայն թշուառութեանց մէջ որ Եգիպտոս կ'աւերէ, մէկ ուրիշ աւելի հին և

աւելի տարածեալ հարուած մը ամէն օր իր աւեր-
մունքները կը յաճախէ, և այս՝ աւելորդապաշ-
տութիւնն է: Քու առաքինութիւններդ՝ քու խօ-
սակցութիւններդ ճանչցուցին ինծի բնութեան
ճշմարիտ Աստուածը, կարելի չէ որ այս ժողո-
վուրդն ալ լուսաւորես: Հիմա ամօթ մը զիս կը
պատէ՝ քանի որ կը մտածեմ թէ այնպիսի մահ-
կանացուաց վրայ կը տիրեմ որ քիչ տարբերու-
թիւն ունին անբան կենդանիներէ՝ որոնց դիմացը
ինկած երկրպագութիւն կ'ընեն. փափաքելի էր
ինծի բուն մարդկանց վրայ թաղաւորել: Գոցենք
պիղծ մեհեանները՝ որոնց ձեռքէն երկիր կը տագ-
նապի, քու ձայնիդ դիմացը սուտ աստուածները
աներևութանան. և ինչպէս որ Թեոփիլոսը մէջ մէկ
Աստուած մը միայն կայ՝ ասանկ ալ մարդկանց մէջ
մէկ պաշտօն մը միայն ըլլայ:

Յովսէփ քիչ մը ատեն լուս կենալէն ետեւ, Ո՛ր-
չափ փափաքելի էր ինծի, ըսաւ, որ դերագոյն
Աստուածը՝ միայն անխօս արարածները չխոստ-
վանէին, այլ մարդկային սերունդը միաբան և միա-
ձայն զինքը պաշտէին. ինչպէս կը փափաքէի որ
անոնք ալ մասնակից ըլլային իմ ընտանեացս վայե-
լած շնորհքին. շնորհքը փափաքելի էր իրաւընէ,
բայց և միանգամայն ալ ցաւալից յիշատակը՝ մէկ
զգայուն սրտի մը համար: Այն ատեն միայն մար-
դիկ մէկ հայր մը իրենց ճանչնալով, և այլևայլ
կրօնքներով ալ զատուած չըլլալով ամէնքն ալ ի-
րարու եղբայրներ կը ձեանային. ինչ անոյշ միու-
թիւն՝ երբօր բնութիւնն ըլլայ որ կապէ: Բայց
վախեմ թէ սոյդ երջանիկ ժամանակը գեւ հասած
չըլլայ. և քու առաջարկութիւնդ ալ անյապթելի
արգելքներու դիմաց հանդիպի: Բարեկամութիւնը
հասարակաց թշուառութեան մէջ՝ և ընտանու-
թիւնը հաւասար վիճակի մը մէջ, յաջողցուցին
ինծի ճշմարտութեան լոյսը ծագել իմ գերու-

Թեանս ընկերակիցներուն սրտին մէջ : Գուն ալ իմ ձայնիս մտիկ ըրիր, կամ մանաւանդ Թէ ըսեմքու առաքինի և զգայուն հոգւոյդ. բայց փորձով տեսայ որ շատ դժուար բան է աւելորդապաշտու Թեանց մէջ ընկրլմած ամբողջ ազգ մը լուսաւորել: Գեռ կը յիշեմ այն դժբաղդ օրը որ օտարական մը գիպուածով կոկորդիլոս մը սպաննած ըլլալով ոչ իմ իշխանուԹիւնս և ոչ քուկդ չկրցան կատղած ռամիկը զսպել, և սահասան զինուորներուն ձեռքէն յափշտակելով՝ բզկի բզկի ըրին: Բոլոր Թա գաւորուԹեանդ մէջ պարտելու ատենս՝ սոսկում մը վրաս պատեց երբոր լսեցի որ կ'երզնուին մարդիկ՝ եթէ սով ըլլայ՝ մարդու արիւն խմել քան Թէ իրենց պաշտած կենդանիներէն մէկուն միսը ուտել. արդ ինչ յուսահատ կատաղուԹիւն պատե պիտի զիրենք Թէ որ վերցնելու ըլլաս իրենց այն պատուածներն՝ որոնց ինչուան մեհեաններ ալ շիներ են, և քու գերագոյն Աստուծոյ շինած տաճարներուդ մէջ մարդկանց արիւն պիտի վազցնեն: Այսպիսի պաշտօն մը՝ որ սրտէ պիտի բզկէ՝ հաստատելու համար բռնուԹիւն մի գործածեր. հետեւէ բնուԹեան օրինակին որ յաւիտենական Աստուածը մեզմ և համոզիչ ձայնով մը կը քարոզէ:

Բայց սակայն մի կարծեր Թէ, ըսաւ, չեմ ուզեր այսպիսի առաջարկուԹեան մը յաջողելուն օգնել՝ որն որ ես ալ շատանց ի վեր մտածեր եմ. բայց այսպիսի արմատացած աւելորդապաշտուԹեանց դէմ, աւելի երկար ատենուան կարօտ դարման մը պէտք չէ: Կարգեր և սովորուԹիւններ այս ժողովրդեան մէջ դնելու ատենդ՝ հրաւիրէ մարդկանց մէջէն աւելի լուսաւորեալները՝ նախ զանոնք միաբանելու այն ճշմարիտ կրօնքին հետ՝ որ բնուԹիւնը մեզի կը սորվեցնէ. և որպէս զի ռամիկն ալ ընդունայն տեղը չիխտովի՝ կրօնքի ճշմարտուԹիւնը խորհրդաւոր քօղերու տակ ծածկած գիր առջև:

նին, որպէս զի գոնէ Եգիպտոս՝ որ աւելորդապաշտութեանց բնակարան սեպուեր է, այս սրբազան Ճշմարիտ կրօնքին անգին սերմունքներն ալ ունենայ. և երբոր տգիտութիւնը գալու ըլլայ իր սուտ աստուածոցը վրայօք հարցընելու, խնաստունները վազեն ամէն կողմանէ գերագոյն Կազին ծանօթութիւնը իրենց սրտին մէջ տալաւորելու. ինչուան որ մարդկային ցեղը իր Թանձր կուրութենէն խաղըսելով՝ ընդունի այս Ճշմարտութիւնը, և միշտ յարատեւ անոր մէջ:

Խօսքը կտրեց Յովսէփ. և Թագաւորը հաճութեամբ ընդունեցաւ ըսածները. դուրս ելաւ Յովսէփ մէկէն գործադրելու ըրած խորհուրդնին:

Մեծփիսի մօտ մէկ փառաւոր տաճար մը կը շինուէր, որուն գեղեցկութեանը Եգիպտոսի մէհեաններէն մէկն ալ չէր հասներ. և Թէպէս նուիրուած էր իրենց սուտ աստուածներուն՝ բայց դեռ անոնց սաշտամամբը պղծուած չէր: Արիացաւ Յովսէփ, և այս տաճարը կուռքերուն ձեռքէն յափշտակելով նուիրեց Յաւիտենական Աստուծոյ:

Ահա այս կերպով կը լուսաւորէր Յովսէփ այն Ժողովուրդները զանոնք կերակրելու Ժամանակ:

Յովսէփ իր այս ամէն խնամքներուն և հոգերուն մէջ ալ կ'երթար երբեմն կը քաշուէր առանձին անդ մը՝ իր սրտին սիրելի զգացմունքներուն մէջ իյնալու ընկղմելու, որոնց մէջ միայն մեծ ախորժ մը կը զգար:

Ժամանակը զարմանալի արագութեամբ մը կ'անցներ, և դեռ ինքը իր սրտին փափաքները զոհ չէր կրցած ընել. օր մը երբոր իր ընտանեացը կարօտովը սաստիկ լեցուած էր՝ եկան իրեն խնայընելու որ օտարականներ եկեր են՝ սպրելու համար կերակուր իրմէն խնդրելու: Հրաման տուաւ ներս ընդունելու: Մտան օտարականները Յովսէփայ զխնայը. և իրեն փառաւորութիւնը աջուրնին

առնելով՝ ինկան իրեն ոտքը երկրպագութիւն
ըրին ճակատնին ինչուան գեալնը զպցընելով :

Մէջերնէն երկցագոյնը սկսաւ խօսիլ . Ահա տա
սը եղբայրներ են որ ոտքդ ինկեր են , ըսաւ Յով
սեփայ , հաճէ գթալու մէկ բազմաթիւ և դժբաղդ
ընտանեաց մը՝ որ առատութեան մէջ ապրելէն
ետե՛ հիմա սովին սարսափն ու տագնասլը պաշա
րեր է զիրենք : Օտարական մարդիկ ենք . և թե
պէտ այս ոսկիներն ալ բերեր ենք՝ բայց գիտենք
որ քու խնամքդ վայելելու ամենակին իրաւունք չու
նինք : Բայց համբաւը՝ հեռաւոր աշխարհքներ՝ ին
չուան մեր զաշտերուն մէջն ալ քու առաքինու
թիւններուդ ձայնը բերաւ տարածեց . որով և վըս
տահուութեամբ եկեր ենք թշուառներու պաշտպանի
մը մեր աղաչանքն ընելու (*) :

(*) ԾՆՆԴ . ԳԼ . ԽԲ . 3-16 : — Եւ իջին կողարքն Յովսեփու
առանկրին՝ գնել ցորեան յԵգիպտոս . և զԲենիամին զեղբայրն Յովսեփայ
ոչ արձակեաց Յակոբ ընդ կողարն . քանզի ասէր թէ գուցէ պատահիցէ
նմա հիւանդութիւն : Եւ եկին որդիքն Իսրայելի գնել ընդ այլ երթեկան
քանզի էր սով յերկրին Քանանացոց . և Յովսեփ էր իշխան երկրին . և նա
վաճառէր ամենայն ժողովրդեան երկրին : Եւ եկեալ կողարքն Յովսեփայ
երկիր պազանէին ի վերայ երեսաց խոնարհ յերկիր : Եւ իբրև ետես Յով
սեփ գեղբարն իւր , ծանեաւ , և օտարանայր ի նոցանէ , և խօսեցաւ ընդ
նոսա խտտագոյնս և ասէ . Ուստի՞ գայք . և նոքա ասեն . Յերկրէն Քանանա
ցոց գնել կերակուրս : Ծանեաւ Յովսեփ գեղբարն իւր . և նոքա ոչ ծա
նեան զնա . և յիշեաց Յովսեփ գեղբարն իւր զոր ետես . և ասէ ցնոսա . Լրտեպ
էք զուք , և զիտել զել և զմուտ աշխարհիս եկեալ էք : Եւ նոքա ասեն . Ոչ
տէր . ծառայք քո եկեալ եմք գնել կերակուրս : Եւ յիշեաց ին մի որդիք եմք
առն միոյ . արք խաղաղութեան եմք , և չե՛ն ծառայք քո լրտեպ : Եւ յնո
սա . Ոչ . այլ զել և զմուտ երկրիս եկեալ էք տեսանել : Եւ նոքա ասեն , Եր
կտասան կողայր եմք ծառայք քո՝ որդիք առն միոյ յերկրին Քանանացոց .
և կրտսերն առ հօր իւրում է այսօր , և միւսն չէ՛ ի միջի : Եւ յնոսա Յով
սեփ . Եյդ իսկ է զոր ասացի , թէ լրտեպ էք : Եւ զավին յայտ արարէք :
Երգուեալ յարեն Փարաւոնի , ոչ ելանէք աստի՛ եթէ ոչ եկեսցէ կողայրն
ձեր կրտսեր այս : Երգ առաքեցէք զմի ոք ի ձէն՞ և ասցէ գեղբայրն ձեր .
և զուք կացէք ի զիպահոյ մինչև յայանի լիցին բանք ձեր եթէ արդար խօ
սիցիք և թէ ոչ . ապա թէ ոչ՝ երգուեալ յարեն Փարաւոնի թէ ոչ լրտեպ
էք զուք : Եւ երգ ցնոսա ի բանտի զերիս տուրս :

Խօսողին ձայնին հնչմունքը Յովսէփայ ահանջը
 թնդացուց. մտադրութեամբ մը սկսաւ օտարա-
 կաններուն երեսը նայիլ : Մէջերնէն մէկուն վրայ
 աւելի իր ուշադրութիւնը գնաց. կարգէ դուրս դեղ-
 նութիւն մը սպասեր էր երեսին վրայ. մեծ յան-
 ցանքի մը տէր կ'երևնար, և սրտին խռովութիւնը
 իր տխուր ու այլայլած աչուրներուն մէջ կը տես-
 նուէր : Յովսէփ ճանչցաւ զինքը, Սիմէոնն էր .
 սարսափ մը վրան սրտեց. նոյն միջոցին ճանչցաւ
 Նեփթաղիմն ալ, ետքը Ռուբէնը և վերջէն բոլոր
 մէկալ եղբայրներն ալ. զարմանքէն մնաց անշարժ :
 Իր սրտին առջի զգացմունքը իրենց ներքէն եղաւ .
 թեւերը բացաւ և քիչ մնաց որ շրթունքներն իրենց
 անունները պիտի հնչեցընէին . բայց ուզելով նախ
 իրենց սրտին դադանի զգացմունքներն իմանալ ինք
 զինքը բռնեց : Մտադրութեամբ մը վրանին կը
 նայէր, կարծես թէ սրտերնուն մէջի եղածները
 կ'ուզէր տեսնել . բայց աչուրները երբոր Նեփթա-
 ղիմի վրայ դարձան, գութը շարժեցաւ . սակայն
 ընդունայն տեղը մէջերնին Բենիամինն ալ կը փըն-
 տըւէր :

Բայց անոնք բոլոր Յովսէփայ նայուածքէն վախ-
 ցած՝ այլայլութեան մէջ սրաշարուած, վասն զի չա-
 րութիւնը՝ առաքինութեան զիմացն էր որ կեցեր
 էր, չէին համարձակեր աչուրնին վեր վերցընելու
 և նայելու իրեն երեսը . կը սպասէին որ ինքը նախ
 լռութիւնը քահէ : Ո՞ր է դեռ ձեր հայրը, հար-
 ցուց Յովսէփ զգածուած ձայնով մը : Որ է Յա-
 կովբ, խոր ծերութեան հասակ մը հասեր է, սր-
 տասխանեց Ռուբէն : Յովսէփ աչուրները երկինք
 վերուց որ երախտադիտութեան արցունքով կը
 փարփէր : Ինչո՞ւ ուրեմն ամէնքնիդ մէկէն մինակ
 ձգեր զինքը եկեր էք, ըսաւ . ո՞վ իրեն ծերութեա-
 նը օգնական մնացեր է քովը : Այս խօսքերը ըսե-
 լու ատեն՝ քիչ մնաց սր սրտին այլայլութեանը

չգիմանալով ինքզինքը պիտի մատնէր : Պատասխան տուաւ Ռուբէն . Բենիամինը՝ իր զաւկրնէրուն մէջ էն պզտիկը, և Սելիմա անուշադ տղջիկ մը՝ որ իրեն որդեգրեր է, իրեն ծերութեան օգնականներ մնացին :

Ասոնք որ լսեց Յովսէփ, չիկրցաւ իր սրտին տագնապեալ այլայլութեանցը զիմանալ զուրս ելաւ, և արցունքները հեղեղի պէս երեսէն վար կը թափէին : Դեռ ողջ են եղեր, հառաչեց ինքիւրենը, զեռ ողջ են եղեր իմ սրտիս սիրելիները, և ես զեռ կը անտընամ երթալու վեցնինն պլուսուր... Փութամ, երթամ, իմ ընտանիքս է, օտար ժողովրդէ մը աւելի պէտք է որ ինծի սիրելի ըլլայ : Քանի մը քայլ առաջ գնաց, և յանկարծ կանկ առնելով, Ինչ կը մտածեմ ես ըսաւ, միթէ այս ժողովուրդն ալ օտար է ինծի համար . ինքն Աստուած չէր որ իմ խնամքներուս յանձնեց այս ժողովուրդն ալ . կրնամ ես թողուլ զասոնք առանց իրեն հրամանին, ինչպէս կրնամ սկսած գործքս անկատար թողուլ երթալ... Ո՛հ ահա կը տեսնամ որ իմ երջանկութիւնս ալ զառնութեամբ խառնուած է... : Հպատակիմ ուրեմն անոր կամացը որն որ ինծի այսչափ պաշտպանութեան նըշաններ ցըցուցեր է . և ես հոս կեցած շատ աւելի լու կերպով կրնամ սովին առջն առնել որ կը սպասնայ իմ հօրս տունը փճացընել բոլորովն . բայց կրնամ մէկ այսպիսի զոհ մը՝ ուրիշ կողմանէ քաղցրացընել ինծի . գիտեմ, սիրելիդ իմ Սելիմա, որ քու ներկայութիւնդ շատ հարկաւոր է ծերունի հօրս՝ որուն մեծ մխիթարութիւնը դուն ես . դուն իմ տեղս կեցիր հօրս քով ինչուան որ ես ալ մասնակից ըլլամ այդ քաղցր ընկերութեան . բայց դուն անձկալիդ իմ Բենիամին, եկուր իմ գիրկս, հասիր, օգնէ ինծի, համբերութեամբ անցընելու այսպիսի դառն պանդխտութեան մը վերջին օրերը :

Արցունքները սրբեց, և եկաւ նորէն Յակովբայ որդւոցը քով, որոնք անհամբեր իրեն կը սպասէին, վախնալով որ չըլլայ թէ իրենց խնդիրքը մերժէ: Յովսէփ մտքէն որոշելով որ ինքզինքը յայտնէ անոնց քանի որ իրմէն չէն բաժնուած, Պէտք եղած հրամաններս տուի, ըսաւ, շուտ ըրէք, գացէք, վազեցէք ձեր հօրը կարօտութիւնը լեցնելու... իրեն որդեգրածին պիտոյքը հոգալու... Այն ծերունին՝ ինծի համար բողբոլովին անծանօթ անձ մը չէ. լսեր եմ իրեն առաքինութիւնները...: Ահա ուզած ցորեննիդ կուտամ ձեզի. բայց տաբահոյս չիկայ որ սովը պիտի բանադատէ զձեզ նորէն գալու Եգիպտոս. կ'ուզեմ ձեր խօսածներուն ճշմարտութիւնը ստուգել, ուստի մէջերնէդ մէկը պէտք է որ հոս կենայ՝ ինչուան որ ձեր ըսած մէկաւ պզտի եղբայրնիդ ալ բերէք որ տեսնամ, . . . Ուրիշ եղբայր ալ չէք ունեցած: Այս որ ըսաւ, աչուրները անկած երեսնին կը նայէր:

Այս հարցմունքիս վրայ՝ այլայլութիւն մը պատեց զիրենք, ձայներնին քաշուեցաւ. Միմէոնի գոյնը նետած քար կտրեցաւ. Նեփթաղիմ սկսաւ հաւաչել, ամենուն ալ այնպէս մը կուգար՝ թէ զի մտցնին նստած իմաստուն մարդը՝ իրենց սրաին մէջիններն ալ կը տեսնար: Մենք տասուերկու եղբայրներ էինք, ըսաւ Ռուբէն խօսքը բերնին մէջ ծամծրմելով... բայց չէնք գիտեր թէ ինչ փորձանք եկաւ մէկուն գլխին:

Այս միջոցիս ամէնքն ալ իրարու երես կը նայէին, թէ ո՞վ արդեօք պիտի մնար այն անծանօթ երկրին մէջ: Միմէոն ցած ձայնով մը սկսաւ ըսել իրենց. Ահա երկինքը դեռ կը շարունակէ հալածել զմեզ. գիտէք գուք ալ թէ ո՞վ է մէջերնիս բուն յանցաւորը. էլէք, դարձէք Յակովբայ անակը, ես կը մնամ հոս. ինծի համար ամէն տեղ հաւասար է, ամէն տեղ ալ հաւասարապէս խղճմտանքը

սկիախի սրաարուսէ իմ սիրաս : Եւան եղբայրները սրագտուեցան Սիմէոնի հետ, և խօսք տուին իրեն մէկէն ճամբայ ելլալու, որպէս զի իր դերութեան ժամանակը չերկնցրնեն :

Սիմէոնի ցաւը և իր եղբարցը վերջին բարեներն որ տեսաւ Յովսէփի, քիչ մնաց որ սրտին մէջը ամփոփած զգացմունքները դուրս սկիախի տար . բայց Եգիպտոսի պահապան Ոգին ուղեւորվ Աստուծոյ հրամանաւը Սիմէոնը պատժել, իր անգութ եղբայրներուն տաղնապը երկնցրնել, և հալածեալ անմեղութեան արդարութիւնը լեցրնել՝ Թող չտուաւ Յովսէփայ՝ այս վայրկեանիս ալ ինքզինքը յայտնելու անոնց : Եւան դիմացէն, դարձան իրենց տեղը . Սիմէոն տխուր և յուսահատ մնաց միայնակ :

Յովսէփ՝ մէկ տաղնապալից քնէ մը արթընցածի սէս հարցուց Թէ ինչ եղան այն օտարականներն որ իրեն գթութեանը դիմեր էին . իմացուցին իրեն Թէ գացին : Այս գոյժը անհնարին ցաւ մը Յովսէփայ սիրտը սրտեց . Ճշմարիտ է որ տեսայ եղբայրներս, հառաչեց ցաւագին . ինչո՞ւ գոնէ մէյո՞ր չպագտուեցայ հետերնին . անգութ սիրտ, ուրեմն վրէժ ուղեցիր առնուլ : Ուղեց գոնէ Սիմէոնը տեսաւ . բայց ան ալ չկար մէջտեղ . չէր գիտեր ինքն Յովսէփ ալ որ իր եղբայրը դէպ ի դաշտերը մոլորած երթալու ատեն՝ մէկ աներևոյթ ձեռք մը զինքը այն տեղերէն աւեր հեռացուցեր էր : Ամէն տեղ փնտուել տուաւ Սիմէոնն ալ և ուրիշ եղբայրներն ալ, բայց անօգուտ ջանք :

Կ'անցնէին օրերը, և Յակովբ իր խրճրթին զիմացը նստած ատեն՝ Սելիմայի և Բենիամինի հետ՝ տեսաւ որ իր որդիքը կուգային հեռուէն : Ինչան ուղտերէն՝ և ծերունւոյն զիմացը շարեցին ցորենով լեցուն սարկերը : Մեծ սիրով ընդունեցաւ ծերունին իր զաւկրները . բայց ամենուն հետ սրագ

տուէլէն ետև՝ այլայլած կերպով մը չորս կողմը նայելով, Ո՛ւր է հատրա Սիմէոնը, ըսաւ, ոչ զինքը և ոչ իր ուզորը կը տեսնամ հոս :

Մի տազնապիր, հայր, սրատասխանեց Ռուբէն, ան որ Եգիպտոս կը կառավարէ, անոր քովն է . անիկայ կ'ուզէ դեռ տեսնալ զխնացը Յակովբայ բոլոր զաւկըները :

Այս լուրը կարծես թէ կայծակի մը պէս ինջաւ Յակովբայ դիտուն : Ա՛յ անգութ մարդիկ, պոռայ ցաւագին, կը ջանա՞ք ուրեմն զրկել զիս ամէն զաւկըներէն . կորսնցուցի Յովսէփը . Սիմէոն չկայ, և դուք կ'ուզէք Բենիամինն ալ առնել ինծմէ . ան կարելի բան չէ որ ձեր ձեռքը թողում ես Բենիամինը . ու բռնեց սխմեց Բենիամինը դրկին մէջ :

Լուս և յուսահատ մնացին Յակովբայ բոլոր տղաքը : Վերջապէս Ռուբէն համարձակելով հայր իմ, ըսաւ, ինչ բանէ կը վախնաս . երկու զաւկըներ ունիմ ես, սպաննէ զանոնք, թէ որ չգարձընէմ Բենիամինը :

Ո՛ւր է, դարձուցիր ինծի Յովսէփը, զայրացած սրտով մը ըսաւ ծերունին . Եգիպտոսի մէջ ալ անտառներ, կատաղի գազաններ չէն գտնուիր . կարծես Ռուբէն, որ իմ թոռներուս արիւնը որդուցս կորուստը մխիթարէ : Ռուբէն չէր համարձակեր սրատասխանելու :

Լուսթեամբ բացին ցորենի պարկերը, և առջի բանն որ աչքերնուն զարկաւ՝ էր իրենց ոսկին որ Յովսէփայ ձեռքը դրեր էին, և Յովսէփ ալ ծածուկ իրենց պարկերուն մէջ դնել տուած էր : Զարմանք մը սպաշարեց զիրենք . բայց ծերունին՝ սիրտը գողի մէջ ընկած որ չըլլայ թէ Բենիամինն ալ կորսնցընելու վտանգի մէջ էինայ, ետ դարձած ոսկին վերայ շատ մտադրութիւն մը չգրաւ :

Բանի որ ցորեննին չէր ըմնցած՝ Յակովբ և ոչ մտքէն կ'անցընէր իր տղաքը նորէն Եգիպտոս խըր .

կելու. կը ցաւէր Սիմէոնի վրայ, բայց չէր ալ կրնար որոշել որ Բենիամինը քովէն զատէ :

Բայց սովը իր հարուածը կը շարունակէր. ցորենը կը պահսէր, և յուսահատութիւն ու սարսափը կը պատէր նորէն բոլոր դաշտերուն մէջ : Յակոբայ զաւկրները՝ յուսահատ մեռնիլը աչուրնին առած՝ Յակովբը ամենևին անհանգիստ չէին ըներ՝ ետեւէն էյնալով որ Թողու Բենիամինը տանելու Եգիպտոս. բայց իրենց ամուսիններն ու տղաքը՝ ծերունայն խրճիթին դիմացը միշտ պարտելով՝ իրենց լուծութեամբը բաւական կը հասկըցընէին սրտերնուն տապնապը :

Վերջապէս ելաւ Յակովբ տեսնալու Թէ քանի օրուան դեռ կերակուր մնացեր է. սարսափեցաւ մնաց երբոր տեսաւ որ շատ քիչ օրուան միայն պաշար մնացեր է : Սելիման՝ իր այնչափ սիրելին, և այն զաւակը որուն վրայ կը դողպըղար որ չըլլայ Թէ ան ալ փորձանքի մը հանգիպի, և բոլոր ուրիշ իրեն տղաքը՝ ամէնքը մէկէն դերեզման պիտի ինջնային. և Թէ որ քիչ մըն ալ ուշանալու ըլլար, և ոչ ժամանակ կը մնար երթալու Եգիպտոս, և սովին դէմ օգնութիւն մը գտնելու : Այս մտածմունքը՝ սարսափ մը ձգեց վրան : Ետքը դարձաւ հարցուց ինքնիրենը. Սիմէոնն ալ իմ զաւակս չէ՞. միտքը բերաւ որ տեսեր էր զինքն ալ Յովսեփայ կորսուելուն վրայ կուլար, որ առեն մը սասախկէ՞տաւ : Շուտ մը դուրս ելաւ իր խրճիթէն. և մինակ գնաց գտնելու իր տղաքը, որ զինքը տեսնելնուն վրայ ապշած կեցեր էին :

Գացէք, ըսաւ, նորէն այն մարդուն, և Թէպէտ կարօտութեան մէջ եմք, բայց ընծայ տարէք իրեն այս երկրիս աղնիւ բերքերէն ալ. ձեզի ետ դարձուած ոսկիին ալ կրկինը տարէք իրեն. Թող առնէ ոսկին, և իմ զաւկրներս դարձընէ ինծի : Եւ վերջապէս ալ... որովհետեւ հարկ է... առէք մէկտեղ

ձեր եղբայրն ալ ու գացէք : Անտառներէն անցնելու որ ըլլաք , լաւ ականջ դրէք , ամէն կողմ աչուրնիդ դարձուցէք , չըլլայ որ գողան մը հանդիպի իրեն , կամ Յովսէփայ փորձանքը իրեն գլուխն ալ գայ :

Այո՛ , ըսաւ Ռուբէն զգածուած սրտով . ահա նորէն կը խոստանամ որ եղբայրս դարձնեմ քու գիրկդ : Թէ որ խոստամունքես սրակսելու ըլլամ , զիս սեպէ յանցաւոր իրեն մահուանը , և վշտալից հօր մը անէծքները թափէ իմ գլուխս : Մէկաշնոնք ալ բոլոր նոյն խօսքերը կը կրկնէին :

Գարձաւ Յակովբ իր ընակարանը . սղափ Բենիամինը տեսաւ հեռուէն՝ որ ընդ առաջ կը վազէր իրեն . գորովալից սիրով մը ընդունեցաւ զինքը : Ծերունին՝ սիրաբ ելած գրկեց զինքը՝ առանց խօսք մը բերնէն հանելու . և ձեռքէն բռնած հանգարտ քայլուածքով մը մտաւ իր խրճիթը : Հոն յայտնեց իրեն որ պէտք էր սրատրաստուիլ երթալու :

Այո՛ , որդեակ իմ , հառաչեց Յակովբ , իմ վրաս հուծիւնս մեծ է , հրեշտակ մը Իսահակը խալըսեց . յուսամ որ Աստուծոյ ուրիշ հրեշտակ մըն ալ Բենիամինիս առաջնորդէ :

Երթալու օրերնին երբոր հասաւ , Յակովբ Սելմայի գրկէն Բենիամինը առնելով իր արցունքովը թրջեց իր սիրուն զաւակը , աչուրները երկինք վերցուց , յանձնեց զինքը իր հարցը Աստուծոյն : Երկուքն ալ լուռ կեցեր էին , ատեն ատեն հառաչանքներ միայն կը լսուէին : Վերջապէս ոտք ելաւ Յակովբ , յանձնեց Բենիամինը Ռուբէնին ձեռքը : Բենիամին լսելով մէկ ձեռքը իր անդրանիկ եղբօրը տուած՝ մէկայը Նեփթաղիմի՝ խրճիթէն դուրս ելաւ : Նոր ուղափ մը վրայ գրին զինքը , ամենուն աչքն ալ Բենիամինի վրայ էր . ելան ճամբայ :

Բայց Յովսէփ անհամբեր կը սպասէր իր եղբարցը գառնալուն :

Մէկ գիշեր մը երբոր իր տխուր մտածմունքնէ
բուն մէջ ընկզմած էր, Իթոպալ զգածուած կեր-
պով մը եկաւ Յովսէփայ քով. Սիրելի՛ բարեկամ,
ըսաւ իրեն, դուն ինձմէ քու գաղանխքներդ ծած-
կեցիր, բայց էս ահա իմացայ ամէն բան. քու ա-
ռաքինութիւններդ ալ թշուառութեանցդ մեծու-
թեանը կը հաւասարին... Յովսէփ զարմացած մը-
տիկ կ'ընէր ըսածները:

Բաւական ժամանակ է, վրայ բերաւ Իթոպալ,
որ մէկ անձանօթ մարդ մը դոյնը նետած և շփո-
թեալ եկաւ մտաւ իմ եղած տաճարիս մէջ. դըր-
սուանց այնպէս մը կը տեսնուէր որ վրէժխնդիր
Աստուծոյ մը երեսէն կը հալածուէր, և ճակախն
վրայ յանցանաց և խղճմտանքի նշաններ տպաւո-
րուած կային: Տագնասաներու և ահուգողի մէջ՝
ինքն ալ չէր գիտեր թէ ո՞վ զինքը բերեր էր այն
սրբազան տեղը. տարին զինքը մէկ առանձին միայ-
նարան մը՝ ուր որ յանցաւորներու իրենց չարու-
թիւնը քաւելու որոշուած էր: Շատ օրերէ ետեւ
հարցուցի իրեն. և անուռն է... քու եղբայրդ Սի-
մէոնն է...:

Գեղեցիկ լուր, Իթոպալին խօսքը կտրեց Յով-
սէփ. բարեկամ, չէս գիտեր թէ ինչ տագնասանե-
րէ խայրսեցիր զիս. եկուր, առաջնորդէ ինձի, եր-
թամ գրկեմ զժբաղդ Սիմէոնը...:

Մի երթար, կեցիր բարեկամ, պատասխանեց
Իթոպալ, դուն քու դրած օրէնքներդ պատուէ.
գիտես որ յանցաւոր մը մեզի իր չարութիւնները
յայտնելու որ ըլլայ, երկար ատեն կը նստի միայ-
նութեան և լուռութեան մէջ. ինչպէս որ այս պարտ-
քերուն տակն է ան ալ որ կ'ուզէ մեր կրօնին գաղ-
տնիքները տեղեկանալ:

Սիմէոնն ալ բոլոր չարութիւնները պատմեց ին-
ծի. լսելուս սէս սոսկում մը զգացի վրաս. հիմա
յուսահատութեան վիճակի մը մէջ է: Բայց պէտք

է՛ ինքը որ առաքինութեան և բնութեան սրբազան կապերը նախատեր ոտքի տակ առեր է, քիչ մը ատեն մարդկային ընկերութենէ զատուած նրատի՝ երբոր արժանի ըլլայ քու տեսութեանդ, ես անձամբ կ'առնեմ կը բերեմ քեզի՝ քու բարեկամդ քեզի կը դարձնէ եղբայրդ: Բայց կը ստիպեմ զքեզ որ այն ատենն մէկէն ի մէկ չյայտնես զքեզ իրեն:

Ճամանակներ և օրեր՝ կ'իյնային կը գլտորէին դարերու անգունդին մէջ. և ահա վերջապէս եկան իմացընէրու Յովսէփայ, որ օտարականներ եկեր են՝ քրտինքի և փոշիներու մէջ ծածկուած, և կ'ուզեն զինքը տեսնալ: Հրաման տուաւ որ մէկէն ներս խոթեն: Մտան Յովսէփայ առջև, ձեռուընին բռնած բերած ընծանին ալ: Յովսէփ իր եղբայրները տեսածին պէս ուրախութենէն ինքզինքը մոռցաւ. աչուըները գթով լեցուած Բենիամինի վրայ մնացին. որ նախ վախով մը Յովսէփայ երեսը կը նայէր, բայց ետքէն մէկ քաղցր վստահութիւն մը սկսաւ զգալ (*):

(*) Ծ.ՆՆԳ. ԳԼ. ԽԳ. 15-29. — Եւ առեալ արանցն զարտաբազան, և արծաթ կրկին ի ձեռս իւրեանց, և զԲենիամին. յարուցեալ իջին յԵգիպտոս, և կացին յանդիման Յովսէփայ: Իբրև ևտես զնոսա Յովսէփ և զԲենիամին ևղբայր իւր, ասէ ցհաղարապետ տանն իւրոյ. Տար զարտ ի տուն, և զեն զնիւն. և պատրաստեա, զի ընդ իս ուտելոց ևն արքղ այգորիկ ի միջօրէի: Եւ արար այրն որպէս և ասաց Յովսէփ. և տարաւ զարտն ի տուն Յովսէփայ: Եւ տեսեալ արանցն ևթէ տարան զնոսա ի տուն Յովսէփայ, ասեն. Վասն արծաթոյն որ զարձաւ յամանս մեր զառաջինն, մտանեմք անդր, առ ի խուզելոյ զմեզ. արկանել ի վերայ մեր, և առնուլ զմեզ ի ծառայս, և զէջս մեր: Մատուցեալ առ այրն՝ վերակացու տանն Յովսէփայ, խտեցան առ զրանն՝ և ասեն. Սղաչեմք զքեզ տէր, իջաք զառաջինն գնել կերակուրս: Եւ ևզև իբրև հասար յիջականս. և բացար զամանս մեր, և արծաթ իւրս. քանչիւր յամանի իւրում էր. արդ զարծաթն այսրէն կշռով զարձուցար, և աւասիկ ի ձեռին միրում է: Եւ այլ արծաթ բերար ընդ մեզ, գնել կերակուրս. և ոչ զիտեմք սկ եզ զարծաթն յամանս մեր: Ասէ ցնոսա. Խաղազութիւն ընդ ձեզ՝ մի երկնչիք. Ատուածն ձեր և հարցն ձերոց, եզ ձեզ զզանձս յամանս ձեր, այլ իմ՝ զձեր արծաթն առեալ, և հաճեալ եմ. և ևհան առ

Ռուբէն մէկ ձեռքը ոսկին բռնած՝ մէկալ ձեռքն ալ Բենիամինի տուած՝ Յակովբայ զաւերներուն գլուխը կեցած՝ առաջ անցաւ : Ամէնքը մէկէն Յովսեփայ ոտքը ինկան՝ երկրպագութիւն ըրին : Հարցուց Յովսէփ . Երբունի ձեր հայրը , և այն օրիորդը որ ձեր հեռու եղած ժամանակը զինքը պիտի մտի թարեր՝ ո՞ղջ են դեռ :

Ողջ են , պատասխանեց Ռուբէն , և իմ հայրս ահա մեր առջի անգամուռան ոսկիին կրկինը խաւրեց հրամանքիդ , որն որ անշուշտ հրամանքիդ հրամանաւր նորէն մեր պարկերուն մէջ դրուած էր : Տուր մեզի նորէն ցորեն , և Սիմէոնը դարձուր մեզի , ահա մէնք հնազանդեցանք հրամանիդ , և Յակովբայ պզտի զաւակն ալ բերինք :

Յովսէփ աչուրները Բենիամինի վրայ միայն դարձուցած՝ գորովալից ձայնով մը ըսաւ իրեն . Երկինքը զքեզ օրհնէ : Ետքը դուրս ելաւ , կանչեց իր ծառաներէն մէկը . Գնա , ըսաւ , վազէ Իթուպա լին , ըսէ իրեն որ քանի մը օրը ինծի համար չնորհէ և այն օտարականը խրկէ ինծի . վասն զի իրեն եղբայրները եկեր են , և անհամբեր կը սպասեն իրեն . . . և թէ ես ալ իրենցմէ աւելի կը փափաքիմ զինքը տեսնալու :

Այս հրամանը տալէն ետև , նորէն ներս մտաւ . և ահա շուտ մը Իթուպան ալ հասաւ Սիմէոնի

Նոստ զՇմաւոն : Եւ տարաւ ի ներքս այն զորեարն ի տուն Յովսեփայ , և բերին ջուր լուանալ զոտս նոցա . և ետ կերակուր զբաստուց նոցա : Եւ նոքա պատրաստեցին զպատարագան մինչև եկեալ էր Յովսէփ ի միջօրէի . քանզի լուան թէ անդ ճաշակեաց է : Եմուտ Յովսէփ ի տուն , և մատուցին նմա զենծայն՝ զոր ունէին ի ձեռս իրեանց՝ ի տան անդ . և երկիր պագին նմա ի վերայ երեսաց իրեանց յերկիր : Եհարց զնոսա և ասէ . Զխորդ կայք . և ասէ ցնոսա , թէ ո՞ղջ իցէ հայրն ձեր ձեռունի , զորմէ ասացէք թէ տակաւին կենդանի է : Եւ նոքա ասեն . Ողջ է ծառայ քո հայր մեր , տակաւին կենդանի է : Եւ ասէ . Օրհնեալ է այրն այն յԱստուծոյ : Եւ խոնարհեցան երկիր պագին նմա : Ամբարձ զպչս իւր՝ և Լտես զԲենիամին զեղբայր իւր զհամաւայր՝ և ասէ . Այդ է եղբայրն ձեր զորմէ ասացէք անկէ առ իս :

հետ, որ վազեց պլլուեցաւ Յակովբայ որդւոյը վիզը: Յովսէփ անոնց ուրախութեան սիրոյ հանդէսները աչքին առջև տեսնալով՝ կը փափաքէր խառնուել մէջերնին. այս առաջին անգամն էր որ իր եղբարցը սիրոյն վրայ կը նախանձէր: Բայց Իթուարալի նայուածքը՝ և իր ըրած ջանքերը՝ բռնեցին զինքը, և թող չառուին որ դէռ ինքզինքը յայտնէ անոնց:

Փառաւոր հարկինք մը պատրաստուեցաւ իրենց համար. երկու սեղան դրուած կային. մէկուն վըրայ Յովսէփ նստեր էր իր բարեկամին հետ, մէկաւին վրայ ալ իր եղբայրները իրենց կարգաւ: Բենիամինի ամէն տեսակ պատիւ և մտադրութիւն եղաւ սեղանին վրայ (*): Ա՛հ, կ'ըսէր Բենիամին իր եղբայրներուն, ի՛նչպէս կարելի ըլլար որ Յակովբայ և Սեղիմայի սրտէն վախը փարատէինք, և Եգիպտոս կառավարողին ազնուութիւնը իրենց կարենայինք ճիշդ հասկըցընել:

Արշալուսին առջի ճառագայթները արծրուելուն պէս՝ Յակովբայ ընտանիքը՝ իրենց հօրը վախը և մտածմունքը շուտով փարատելու համար, պատրաստուեցան ճամբայ ելլելու: Իթուարալ Յովսէփայ ծառաներուն կամաց ձայնով մը հրամաններ առաւ, զինքն ալ համոզելով որ իր զգայուն սիրտը մէկ վերջին փորձի մըն ալ համբերէ:

(*) ԾՆՆԳ. ԳԼ. ԽԳ. 29-34: — Ետ (Յովսէփ). Եստուած ոգոր մնացի քեզ սրդեակ. Եւ խառնեցաւ Յովսէփ, և գալորէին աղէք նորա ի վերայ եղբօրն իւրոյ, և իննգրէր լալ: Մտեալ ի սենեակ անոր ելաց, և լուացաւ զինեա իւր ել. պնդեաց զանձն և ասէ. Սրկէք հաց: Եւ արկին նմա միայնոյ և նոցա իւրաքանչիւր ումք, և եգիպտացւոցն որ ճաշէին ընդ նմա իւրաքանչիւր առանձինն, զի ոչ կարէին եգիպտացիքն ուտել հաց ընդ երբայեցիսն, քանզի գորշել էին եգիպտացւոցն: Նստաւ առաջի նորա անգրանիկն ըստ երիցութեան իւրում, և կրտսերն ըստ կրտսերութեան իւրում, և զարմացեալ էին արքն իւրաքանչիւր ընդ եղբօր իւրում: Եւ առին իւրեանց մասունս ի նմանէ: Եւ մեծացաւ մասն Բենիամինի քան զմասունս ամենեցուն հինգպատիկ քան զնոցայն: Երբին և արեւցան ընդ նմա:

Յակովբայ զաւելները Մեմփիսէն կը հեռա-
նային և դաշտերուն մէջ առաջ կ'երթային. Եգիպտոս
կառավարողն սիրով ըրած հիւրընկալու-
թեանը վրայ կը խօսէին, և թէ ինչպէս իրենց հայրը
պիտի ուրախանար Բենիամինը տեսնելով իր բոլոր
զաւելներուն հետ մէկտեղ. բայց Սիմէոն յանկարծ
կանկ առաւ :

Ահ, հառաչելով մը ըսաւ անոնց, օդը յուսա-
հատութեան ձայներէս կը մթննայ. չէ, որոշեր եմ
ես, ձեզի հետ մէկտեղ չեմ կրնար Յակովբայ տը-
նակը մտնալ: Ես հոս եղած ատենս մէկ երկնային
ողիէ առաջնորդուած՝ փառաւոր տաճար մը հա-
սայ, ուր որ առաքինութիւնը կը թագաւորէր, և
հոն գտայ, կը հաւատաք արդեօք խօսքիս, գտայ մար-
դիկ որ նոյն յաւիտենական Աստուածը կը պաշ-
տէին: Ուզեցի իմ յանցանացս ծանրութիւնը թօ-
թափել վրայէս, ամէն բան յայտնեցի իրենց. սար-
սափ մը պատեց զիրենք. մէկ առանձին բնակարան
մը դրին զիս, և միայնութեան ու լուութեան մէջ
փակեցին: Հոն ուրիշ բանի մը զբաղած չըլլալով՝
խղճի խայթերը այս յանցաւոր սիրտս կտոր կտոր
կ'ընէին: Այն առաքինի անձինքը գլթացին վրաս,
ամէն օր կուգային մխիթարելու զիս. բայց զիս ա-
ռաքինութեան յորդորելով՝ փոխանակ իմ խղճի
խայթերս հանդարտեցրնելու, աւելի կատղեցու-
ցին: Գիտեմ որ երկար ատեն այս տագնապնե-
րուս մէջ չարչարուելու որ ըլլամ՝ իմ յանցանքս
բաւելիք չունիմ: Ահա տեսէք ուրեմն իմ որոշ-
մունքս, բոլոր աշխարհ պիտի երթամ պարտիմ՝
ինչուան սր փնտռեմ գտնամ Յովսէփը:

Սարսափած և զգածուած Սիմէոնի խօսքերէն,
մէկ կողմանէ ցաւը կը չարչարէր զիրենք որ պիտի
կորսնցընէին Սիմէոնը, մէկաւ կողմանէ ալ յոյսը
կը մխիթարէր որ թերևս տեսնան նորէն Յովսէփը:

Հազիւ թէ բաժնուէր էր Սիմէոն իր եղբարցը

դրկէն, և ծանր քաղաածքով մը կը հեռանար իրենցմէ, և ահա Յովսէփայ ծառաներէն մէկը Իթոպալին հրամանաւը վազելով հասաւ շունչը բռնուած . Ես դարձիր, պոռաց Սիմէոնի, դուք ալ ամէնքնիդ կեցէք տեղերնիդ : Ինչո՞ւ բարիքի տեղ չարիք հասցընելով՝ իմ անրոջս գաւաթը գողցաք :

Այս խօսքիս վրայ ամէնքն ալ ղարմացած մնացին . աչքերնէն արցունքնին դադրեցաւ : Ռուբէն բարկութեամբ մը առաջ նետուեցաւ . Սպաննէ, ըսաւ, որուն քովէն որ գաւաթը գտնաս : Մէկէն վար ինջեցուցին պարկերը, բայց հազիւ թէ Բենիամինի պարկը բացեր էին, և ահա գաւաթը ամենուն աչքին զխմացը դուրս ելաւ : Ամենուն գոչնը նետեց, յուսահատութեան պոռալ մը փրցուցին և զգեսանին կը սրտուէին : Յովսէփայ ծառայի հրամայեց որ իր ետեէն գան իր անրոջը զխմաց ելլալու :

Յովսէփայ առջևն որ ելան՝ ամէնքը մէկէն ինկան ոտքը . գլուխնին կաթնյուցած՝ իրենց արցունքովը գետինը կը թրջէին . Մենք անմեղ ենք ըսին ամէնքը մէկ բերան, բայց ի՞նչպէս զմեզ արգարացընենք . անշուշտ Աստուած պատժելի՞ ուզէ զմեզ մէկ ուրիշ յանցանքի մը համար . . . ամէնքնիս ալ ահա քու գերիններդ ենք :

Յովսէփ՝ սաստիկ զգածուած հօր մը պէս, որ ստիպուած ըլլայ իր զաւկրները պատժելու, քիչ մնաց որ ինքզինքը պիտի յայտնէր . բայց Իթոպալ որ հոն էր՝ արգիլեց զինքը : Յովսէփ մէկ կեղծեալ ուժով մը ըսաւ իրենց . Ան միայն դերիս է, ըսաւ, որուն քովէն գաւաթը գտնուեցաւ . և դուք խաղաղութեամբ դարձէք ձեր հօրը քովը :

Այս խօսքերուս վրայ սարսափ մը պատեց Ռուբէնին վրայ . ցաւալից աչուրները վերցուց Յովսէփայ երեսը, հառաչանքները սրտին մէջ խղզեց .

Կ'աղաչեմ կը պաղապիմ՝ քեզի, ըսաւ, ըսէ ձայնիս՝
 գթալով մէկ հօր մը վրայ, որ թէ իր թշուառու
 թեանցը և թէ իր ծերութեան հասակին համար
 պատկառելի է: Իր սիրոյն այս ետքի զաւակը ին-
 ծի յանձնելու ատենը ըսաւ ինծի. Գնա՛ խնայուր
 Եգիպտոսի այն իմաստուն կաւավարողին իմ թը-
 շուառութիւններս, ըսէ իրեն որ ես այնպիսի զա-
 ւակ մը կորսընցուցի՝ որ ինչուան այսօր յիշատակը
 աչքէս արցունք կը վազցընէ, մէկ զաւակ մը որ Բե-
 նիամինի ճիշդ դէմքն ունէր, և իմ սրտիս մէջն ալ
 հիմա անոր տեղը այս Բենիամինս բռներ է: Թէ
 որ ինծմէ ասիկայ ալ յափշտակելու ըլլայ՝ հասա-
 կիս ծերութեանը ջնայելով՝ անձամբ պիտի եր-
 թամ Եգիպտոս, թող տեսնայ մէկ հօր մը ար-
 ցունքները, տեսնայ իմ մեռնելս իր ոտքերուն
 քովը:

Բենիամին իրեն բերնէն խօսքը ատնելով՝ ըսաւ
 Ռուբենին. Եղբայր իմ, մի վշտանար՝ զիս գերու-
 թեան մէջ թողուդ համար. ես յանցաւոր չեմ
 ամենեւին. բայց որովհետեւ Երկինքը իմ գլուխս
 միայն այս դժբաղդութիւնս բերաւ, ես միայն
 պէտք է որ քաշեմ: Ետքը դառնալով Յովսեփայ.
 Ես հրամանքէդ չեմ խնդրեր, ըսաւ, որ բոլորովին
 թողուս զիս ազատ, բայց չես շնորհեր արդեօք ինծի
 մէկ խնդիրքս: Իմ հօրս ծերութիւնը փոփելու
 համար հաճէ որ դառնամ եղբարցս հետ. ա՛հ, գի-
 տեմ որ սրտին ցաւերը քիչ ատենէն խեղճ ծերու-
 նին գերեզման պիտի ինջեցընեն. ես իմ դժբաղդ
 վիճակս չեմ յայտներ իրեն, որպէս զի չըլլայ թէ
 իր ցաւերը ծանրացընեմ. ես ինքզինքս մոռնալով՝
 իրեն հետ կը շարունակեմ ողբալու այն իմ մէկ
 եղբայրս, որուն յիշատակը սիրելի է իմ սրտիս. և
 երբոր Յակովբ վախճանելու որ ըլլայ, և ես իմ
 արցունքներովս իր գերեզմանն որ թրջեմ, ահա
 վկայ կը կանչեմ երկնից և երկրիս տէրը՝ որ կը

դառնամ նորէն հոս գերութեան մէջ քեզի ծառայելու :

Յովսէփ այսչափ առաքինութեանց սեասարան ներէն տակնուվրայ եղած սիրտը՝ ինքզինքը կը մեղադրէր՝ անմեղութիւնը վշտացնելուն համար, ալ չէր կրնար իր սրտին զգացմունքներուն գէմ գնել՝ որ զինքը Բենիամինի գիրկը կը հրէին, ոտք ելլալու վրայ էր վազելու պլլուէլու վնզը՝ երբոր Միմէոն յանկարծ վեր ցատքեց գնաց պլլուէցաւ Յովսէփայ ոտքերուն. Ահա հոս է, պոռաց ձեռքը կուրծքին զարնելով, ահա հոս է այս անպուծ՝ այս դաժան սիրտը, որ իր եղբայրը ծախեց. ալ ինչ ուրիշ զոհ կը փնտռէք : Ես զասոնք բռնադատեցի, ես ասոնց պլուխը այս ամէն թշուառութիւնները բերի. զիս միայն պատուհասէ, ազատէ Յակովբն ալ իր մէկն զաւկին ձեռքէն որ իրեն նախատինքն է :

Միմէոն դադրեցաւ խօսելէն, բայց Յովսէփայ սիրտը ալ չէր դիմանար եղբայրական բարեկամութեան գէմ կուտելու. իր սրտին խորունկէն մեկ այնպիսի ձայն մը արձրկեց՝ որ բոլոր եղբայրները զարմանքի մէջ պաշարեց, վազեց Միմէոնի վնզը՝ ինկաւ և պոռաց. Ես եմ Յովսէփը :

Ապշած պաղեցան մնացին ամէնքն ալ, աչուրնին տնկած երեսը կը նայէին. Ճանչցան զինքը. կ'ուզէն իրենց սրտին ուրախութիւնը դուրս տալ... բայց ո՛հ, ինչ զարմանալի երևոյթ, յանկարծ սարսափ մը ինչաւ վրանին, տաղնապ մը բոլոր իրենց սրտին զգացմունքը պաղեցուց : Միմէոն Յովսէփայ գրկին մէջ սկսաւ գողգողալ, կուտեցաւ հետը՝ իրեն համբոյրներէն ինքզինքը քաշեց՝ ինկաւ նորէն պլլուէցաւ ոտուրներուն :

Յովսէփ նորէն վեր վերցուց Միմէոնը. Ես եմ քու եղբայրդ ըսաւ. Ռուբէն, Նեփթաղիմ և դուք ալ ամէնքնիդ՝ ոտք ելէք, գիրկս եկէք, ես եմ ձեր


Եղբայրը : Աստուած Թոյլ տուաւ այս դժբաղդու թիւնս դալու մեր վրայ, որպէս զի կարենամ ես Եգիպտոսի կարօտութիւնը լեցընել և իմ ընտանիքս կերակրել : Շատ երջանիկ եմ ես, ձեր կեանքը պահելու ուրախութիւնը ահա կը վայելէ սիրաս... Սիմէոն, ինչո՞ւ կը վախճիս իմ սիրոյ գգուանքներէս . քու զղջումդ ինձի ամէն բան մտոցընել տուաւ . դրկէ՛ եղբայրդ :

Այն ատենը Սիմէոն, որուն աչուրներուն մէջ ինչուան այն ատենը յուսահատութիւն մը միայն տեսնուեր էր՝ յորդ արտասուաց գետ մը սկսաւ վազցընել . և չէր համարձակեր և ոչ աչուրները Յովսեփայ վրայ վերցընելու :

Պետափրէս և բոլոր Յովսեփայ բարեկամները վաղեցին տեսնալու այս սրտաշարժ տեսարանը . ամենէն աւելի Բենիամին ամենուն աչքը կ'առնէր : Յակովբայ զաւկները իրենց զգացմանցը սասկուութեանը մէջ՝ չէին իմացած ամենեկին՝ որ չորս կողմերնին օտար հանդիսականք պատեր էին : Ատեն ատեն խղճմտանքի խայթերը բարեկամութեան անոյշ հանդէսներուն մէջ ձայներնին կը բարձրացընէին, և սիրոյ գրկախառնութիւնները կը խոովէին : Սիմէոն կուրծքը կը ծեծէր, և մեկաշնոնք ալ բոլոր ամէն մէկը իր ըրած չարութեան կտորը կ'ողբար . բայց Յովսեփ գորովալից աչքով մը կը նայէր ամենուն վրայ ալ հաւասար կերպով : Զգացին Յովսեփայ այս անձայն ներումը . մեղադրանքի ձայները դադրեցան, և դառնութեան արցունքները կտրեցան :

3 0 4 5 6 7 8 9 0 1 2 3 4

5 6 7 8 9 0 1 2 3 4



ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Գիշերը՝ որ իր մթութիւնը մեր վրայ ձգելու ժամանակ՝ կը ծածկէ մեր աչքէն ակեղերաց հրաշալի տեսարանը, սկսեր էր երկրիս երեսը իր թագաւորութիւնը տարածելու. խաղաղ լուսինն ալ՝ իր սրտաշարժ փառաւորութեամբը զարդարուած՝ հանդարտ ընթացքով մը դէպ ի երկինք կը բարձրանար. Յակովբայ զաւկընները քաշուեր էին քիչ մը հանգչելու: Յովսէփ և Բենիամին միայն դեռ արթուն էին. ձեռք ձեռքի տուած՝ առանձին տեղ մը փնտուելով՝ դէպ ի դաշտերը երկնցան. ուրախութեան զգացմունքներու սաստիկ կրից հանգիսէ մը ետքը՝ երջանիկ հանդարտութիւն մըն էր որ կը վայելէին. իրենց սրտերը առանց խօսքերու կարօտ ըլլալու՝ բարեկամութեան միայն անձայն լեզուովը իրարու հետ զբաղէր էին. երկնային ոգիներուն խօսակցութեան տեսարանն էր: Գիշերուան լուսութիւնն ալ իրենց զգացմունքները աւելի կը շարժէր:

Յովսէփ սկսաւ խօսիլ . Սիրելիդ իմ Բենիամին ,
 դիտեմ՝ բաւական՝ ինչ որ ինծի փափաքելի էր ի-
 մանալ . Յակովբ և Սելլիմա իրենց ցաւերուն կրցեր
 են դիմանալ՝ չեն վախճանած : Իմ եղբայրներս՝ ի-
 րենց զըման դառն տաղնապաններուն մէջ պաշա-
 րուած՝ հօրս անակը խաւրած գերիներս չեն ար-
 դելած . և անտարակոյս այն խեղճերը ճամբուն
 վրայ կորսուած են և կամ թողեր զիս փախեր են :
 Բայց փափաքելի էր ինծի լսել թէ ինչպէս հայրս
 և ամուսինս իմացան և կրցան դիմանալ իրենց թը-
 շուառութեանը . արդեօք իմացաւ Յակովբ որ իմ
 խեղճութեանս իր զաւկրներն են պատճառ : Այս
 նիւթերուս վրայօք եղբարցս հետ խօսիլը՝ մեծ
 անգթութիւն է . ես Սիմէոնի առջև և ոչ իսկ ու-
 ղեցի ստեպ Սելլիմայի անունը տալ , բայց շատ ան-
 դամ բերնէս կը փախչէր : Քեզմէ հիմա կ'ուզեմ
 տեղեկանալ . քու սիրտդ անմեղ է , եղբայրական
 սէրը չես կրնար խաբել և չես ալ ըրած՝ և կրնաս ,
 Բենիամին , համարձակ խօսիլ առանց կարմնալու :

Պատրաստ եմ կամքդ կատարելու , պատասխանեց
 Բենիամին . այն դժբաղդ օրերուն յիշատակը՝ մըտ-
 քիս մէջ լաւ տպաւորուած է . և ինչ որ աչքովս
 տեսած չեմ , անոնք ալ Նեփթաղիմէն լսելով գի-
 տեմ . Նեփթաղիմ շատ անգամ պատմած է ինծի
 այս խեղճ գիպուածը :

Նստան երկուքն ալ բլրի մը վրայ . բնութիւնը
 իրեն գեղեցկութիւններէն մերկացած՝ կարծես թէ
 սուգի մէջ էր . բարձր մայրի ծառերը իրենց բոլոր
 տերևներէն մերկ մնացած՝ իրենց անշարժ և սևա-
 գոյն ճիւղերովը երկինքը աչքէ կը ծածկէին . լուսնի
 փայլունութիւն ալ թեթև ամպերու տակ մթնոցած
 էր : Յովսէփ մտադրութեամբ կեցեր էր լսելու , և
 քանի որ աստղերը լութեամբ իրենց շրջանը կ'ը-
 նէին , մէկ փափուկ սարդութեամբ մը Բենիամին
 սկսաւ պատմել .

Անդուծ Մաղիանացիները, ըսաւ, զքեզ 'Նեփ
 Թաղիմի գրկէն յափշտակելով՝ առին տարին...
 վրան քանի մը ժամ անցնելէն ետև՝ Ռուբէն որ
 հեռացեր էր եղբայրներէն՝ դարձաւ նորէն: Ասիւ-
 ծի մը պէս որ իր որսը պատրուտելէն ետև՝ դեռ եր-
 կար ատեն կատաղութիւնը վրան կը տեսնուի և
 սարսափելի կը մտմուայ, նոյնպէս Սիմէոնն ալ իր
 կատաղութեանը մէջ դեռ կը տագնապէր: Աչուը-
 ները կրակ կը ցատքեցընէին, երեսին դոյնը երբեմն
 կը դեղճնար և երբեմն կը կարմրէր, սարսափելի
 շունչ մը կ'առնէր կուտար. իր գծագրութիւնը իր
 շարժմունքները իր շփոթած քալուածքը և իր ա-
 մէն կերպերը յայտնի կը ցուցընէին որ սիրտը բար-
 կութեամբ ու վրէժխնդրութեամբ լեցուած է:
 'Նոյն զգացմունքները և կիրքը կը տեսնուէին Յա-
 կովբայ մէկալ որդւոցը վրայ ալ՝ Թէպէտ աւելի
 նուազ աստիճանի. 'ՆեփԹաղիմ' միայն էր որ կու-
 լար: Ռուբէն զարմացած հարցուց իրենց շփո-
 Թութեան պատճառը. և նոյն միջոցին վաղեց գու-
 բը, և զքեզ հոն չգտնելով՝ զգեստները պատրուտեց:
 Այն ատենը 'ՆեփԹաղիմ' իմացուց իրեն քու խեղճ
 վիճակդ. Ռուբէն Թէպէտ ինքն ալ զքեզ չէր սի-
 րեր, բայց քու ազատութեանդ և քու կենացդ ալ
 այսպիսի գերութեան վիճակ չէր ուզեր: Վայ
 դիտուս, պուաց յուսահատ, ինչ փորձանք եկաւ
 վրաս. Յակովբ ինծմէ՝ իր անգրանիկ տղէն պիտի
 պահանջէ Յովսէփը: Սկսաւ աղաչել եղբայրներուն
 և սպառնալ միանգամայն որ յայտնեն իրեն Թէ ո՞ր
 կողմանէ զքեզ տարին. Սիմէոն՝ Ռուբէնին մեղա-
 գրանքներէն աւելի զայրացած՝ արգիլեց եղբայր-
 ներուն որ չըսեն. իսկ 'ՆեփԹաղիմ' ինքն ալ չէր դի-
 տեր, վասն զի Սիմէոն զինքը մէկդի քաշեր տարեր
 էր՝ երբոր դուն ծախուէցար: Բայց Ռուբէն մէ-
 կէն հեռացաւ անոնցմէ, վաղեց զքեզ փնտուելու,
 փախաւ 'ՆեփԹաղիմ'ն ալ մէջերնէն և ընկերացաւ

իրեն : Շատ օրեր ընդունայն տեղ զքեզ փնտաւ լին ետե՛քրախնքի և փոշիներու մէջ ծածկուած ետ դարձան :

Ռուբէն Սիմէոնի զիմացը ելլալով՝ Ահա գիտեմ, ըսաւ, իմ ցաւս՝ որ աչուքներուս մէջ կը տեսնաս՝ ուրախութեամբ կը լեցընէ զքեզ . ծափ կը զարնես չարութեանդ յաջողելուն վրայ . բայց ես բաւական է որ այսչափ ատեն քու կրիցդ հեռեցայ, ահա ես կը դառնամ նորէն իմ հայրենական անախս . նայէ գուն ալ, թէ որ կ'ուզես եկու ետեկս : Եթէ պատիժ ալ կրելու պիտի ստիպուիմ, ես չեմ կրնար թողուլ մէկ հայր մը : Նեփթաղիմ ալ խօսք տուաւ Ռուբէնին հետ երթալու . Յակովբայ մէկալ զաւկրներն ալ՝ անոնք ալ յայննապէս ըսին որ ոչ երբէք յօժարութեամբ կ'ուզէին և ընտրեր էին իրենց ծննդեան տեղէն հեռանալու բողբոջին . բարկութենէն դողաց Սիմէոն, բայց վախնալով որ եթէ ինքը մինակ Յակովբայ աչքերուն երևնալու որ չըլլայ՝ հօրը զիմաց ինքը յանցաւոր պիտի սեպուի, խոնարհեցաւ ինքն ալ անոնց կամացը, և ամէնքը մէկէն ճամբայ ինկան դառնալու իրենց հայրենական դաշտերը :

Այն օտարականը որուն հանգիպեր էիր գիշեր ատեն անտառին մէջ՝ եկաւ քու կողմանէդ ըսելու Յակովբայ որ եղբայրներդ Դովթայիմ գնացած ըլլալնուն համար՝ քու դարձդ ալ օր մը աւելի պիտի ուշանար . այս ուշանալուն գոյժը հառաչանքներ հանել տուաւ իմ հօրս և Սելիմայի սրտէն : Դարձիդ համար որոշած օրդ՝ քեզի ընդառաջ եկանք, բայց կարծես թէ չար գուշակութեանց մէջ պաշարուած էին՝ Սելիմա ալ՝ Յակովբ ալ, և արխուր ըութեան մը մէջ ընկղմած կը քալէին : Իրիկուն եղաւ օրը, և դուն չկայիր մէջտեղ : Երկուքն ալ անհանդարտ իրարու երես կը նայէին և չէին համարձակեր սրտերնուն վախը յայննելու իրա-

րու : Անոյշ կերպերով կը ջանայի զբաղեցնել զիրենք , բայց այն առաջին անգամ զիրենք անզգայ տեսայ իմ ժպտաներուս : Աքերչապէս կոխեց մուժն ալ , և իրենք ստիպուած ելան դառնալու անակը : Մթուժեան մէջէն կը քաշէինք . կը լսէի միայն Սելիմայի ողբերը և Յակովբայ հառաչանքները . իմ սիրտս ալ ելած՝ արցունքները կը վազէին աչքերէս :

Հասանք մեր խրճիթը . կը ջանար Յակովբ մը խիթարել Սելիման . բայց հազիւ թէ խօսքերը բեր նէն կ'ելլային . իսկ Սելիմա իր սրտին տագնապէն անմխիթար կը հառաչէր . ահա այս կերպով անյուզինք բոլոր գիշերը առանց աչուրնիս գոցելու :

Հազիւ թէ արևուն առջի ճառագայթները սկսեր էին տեսնուիլ՝ մենք խրճիթէն դուրս ցատքեցինք , անհամբեր աչուրնիս դարձուցած կը նայէինք այն կողմը ուսկից որ կը յուսայինք որ պիտի երևնաս :

Այս միջոցիս իմ եղբայրներս ծանր քալուած քով մը և դաժան լուծեամբ մը գէպ ի մեզի առաջ կու գային , և իրենց հայրենական սահմանները կը մօտենային . Ռուբէն կը հառաչէր , Նեփթաղիմ արցունք կը թափէր . իսկ Սիմէոն իրենց արտամութեանը վրայ կրակ կորած՝ սպառնալից նայուածք մը անկեր էր վրանին : Բայց երբոր հասան այն բլրակին ոտքը՝ որուն վրայ իրենց դաշտերը կ'երկնային , և Յակովբայ խրճիթը՝ ուրիշներուն մէջէն աչուրնին զարկաւ , ամէնքը մէկէն հասած տեղերնին կանկ մը առին . երեսներնուն գոյնը նետեց , և մէկ գող մը վազեց իրենց ջլերուն վրայէն : Նոյն իսկ Սիմէոն գունաթափ կը գողար . այնպէս մը կուգար ամենուն ալ թէ ամենակալն Աստուած այն բլրակին գլուխը կեցած՝ կայծակներու որոտումներով կը խօսէր իրենց սրտին հետ : Երկար ատեն լուռ մնայէն ետև . Ահա կը տեսնաք , ըսաւ իրենց Ռուբէն , որ Յակովբայ խրճիթին է

րևոյթը միայն ի՛նչ տազնապ ձգեց վրանիս . ի՛նչ պիտի ըլլանք հապա , երբոր նոյն խոկ ծերունին գիմացնիս որ տեսնե՛նք . ի՛նչ պատասխան պիտի տանք Յակովբայ . ի՛նչ պիտի ըսենք իրեն երբոր Յովսէփը մեզի հարցընելու որ ըլլայ : Այս անգրաւ դարձութեան վրայ իրենց տազնասը սատոկացաւ , և սարսափը աւելցաւ :

Բայց Միմէոն ուզելով իր և բոլոր եղբարցը արհաւիրքը փարատել . Յովսէփայ զգեստը ահա քովերնիս է , ըսաւ իրենց , արեան մէջ թաթխած տանք Յակովբայ ձեռքը , համոզենք զինքը որ կատարի գազան մը պատուած պիտի ըլլայ իր դաւակը : Հաւանեցան այս խորհուրդին , և կարծես իրենց տազնասն ալ քիչ մը հանգարտեցաւ . Նեփթաղիմ միայն աչուընները արցունքով լեցուած կեցեր կը նայէր Յակովբայ անակին վրայ :

Միմէոն մէկէն առաւ զգեստդ՝ տարածեց գետնի վրայ . ուլ մըն ալ իր մօրմէն յախշտակեց կաթ տալու ատենը . ընդունայն տեղը խեղճ մայրը վազեց շփոթած . Միմէոն մորթեց ուլը և արիւնը վաղցուց քու զգեստիդ վրայ :

Զգեստդ արիւնոտելէն վերջը՝ սկսան խօսիլ թէ ո՞վ տանի Յակովբայ . Միմէոն կ'ուզէր վիճակ ձգել . բայց Ռուբէն դէմ կեցաւ . Ով որ այս դաւաճանութիւնը սկսաւ , ըսաւ , թող ինքը իր ըրածը լմնցրնէ . Նեփթաղիմի վրայ գող մը ինչէր էր մտածելով թէ ի՛նչպէս պիտի համարձակի մէկը տանելու զգեստը Յակովբայ :

Այն ատեն Միմէոն յուսահատ ձայնով մը պուսաց . Տուէք ուրեմն ինձի , ես անձամբ կը տանիմ զգեստը Յակովբայ : Ետքը զգեստը ձեռուըներուն մէջ բռնած ցրցուց եղբարցը՝ որուն վրայէն արեան կաթիլները կը վաղէին , և աճապարելով մը հեռացաւ անոնցմէ . բայց յանկարծ կեցաւ ճամբուն վրայ , կը տեսնուէր որ սաստիկ պատերազմ մը կար

ներսի դին. շատ անգամ ոտուրները գետին կը
զարնէր: Արջասպէս ետ դարձաւ, աւելի գունա-
թափ և աւելի տխուր. անցաւ եղբարցը առջեկն
առանց երեսնին նայելու, և իր ոչխարներուն սր-
հասարանին դռնալով՝ Գնա՛, ըսաւ, տար այս զգես-
տը Յակովբայ: Հովիւը առաւ զգեստը և սկսաւ
երթալ դէպ ի տնակը:

Այս միջոցներուս Յակովբ ալ իր սրտին տագ-
նասներուն չեարենալով դիմանալ՝ դուրս ելաւ
խրճիթէն, որուն դրան դիմացը ուղտ մը կը սպա-
սէր. Սելիմա լալով ետեկն կ'երթար, մէյմըն ալ
յանկարծ հեռուէն հովիւ մը տեսան որ իրենց կու-
գար: Սարսափելով մը պուսաց Սելիմա և դրեթէ
անշունչ ինկաւ գլտորեցաւ ծերունւոյն ոտքին
քով, որ զարմանքէն և սարսափէն շփոթած՝ կու-
զէր օգնել իրեն. բայց երբոր ինքն ալ տեսաւ քու-
արիւնոտած զգեստդ՝ թողուց Սելիման, վազեց
հովուին դիմացը, և իրեն ձեռքէն յափշտակեց ա-
ռաւ այն տխուր յիշատակը: Հովիւը՝ սիրտը ելած՝
չէր կրնար բերնէն խօսք մը հանել. Ո՛վ տէր, պո-
ուսց հայրս, ալ չկայ զաւակս... սրտիս կասկած
ները կատարուեցան... գազան մը վայրենի (*)...

Այս ցաւազին հառաչանքները ընելու ատենը՝
մահուան դեղնութիւն մը պատեց ճակատը. դող
մը ինկաւ դժբաղդ ծերունւոյն վրայ, փութաց հո-
վիւը՝ բռնեց զինքը. նոյն միջոցին եղբարցս բոլոր
ամուսիններն ու զաւկրներն ալ թափեցան հոն.
և քու արիւնոտ զգեստդ և Յակովբայ տագնապ
ները տեսնալով ցաւալից աղաղակ մը փրցուցին.
Իսկ ես՝ ինծմէ դուրս ելած՝ մէյմը Յակովբայ քով,
մէյմը Սելիմայի կը վազէի...:

(*) ԾՆՆԴ. ԳԼ. ԼԷ. 55-54. — Եւ. ծանուր դնա և առէ. Պատ-
մուճանս որդւոյ իմոյ է. գազան չար եկեր զնա, գազան յափշտակեաց զՅով-
ակփ: Եւ պատառեաց զհանգերնս իւր. և քուրձ զգեցաւ ի վերայ միջոյ իւ-
րոյ, և սու գ ունէր ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս բազումս:

Բենիամինն ասոնք պատմելու ատենը՝ Յովսեփայ
և իր հառաչանքներէն ձայնը կորեցաւ. ինկան եր-
կու եղբայր իրարու վրայ՝ գրկեցին զիրար, և եր-
կար ատեն արցունքնին իրարու հետ խառնելէն ե-
տեւ, Բենիամին սկսաւ իր խօսքը առաջ տանիլ.

Յակովբայ զաւելնները քանի որ կը մօտենային
իրենց հայրենական դաշտերը՝ այնչափ ալ սրտեր
նուն տալնապը կ'աւելնար: Ծանր քալուածքով
մը առաջ եկան, անցան իրենց խղճիթներուն դի-
մացէն. ամէն տեղ միայնութիւն մը և չարագու-
շակ հանդարտութիւն մը պատեր էր. այնպէս մը
կուգար իրենց յանցաւոր խղճերուն թէ ամէն տեղ
յայտնուէր տարածուէր է իրենց անօրէնութիւնը,
և թէ իրենց ամուսիններն ու զաւելնները սարսա-
փէն կը փախչին իրենց երեսէն. Միմէոն որ ահա-
մայ իր եղբարցը հետ կուգար, ետ մնացած ա-
նոնցմէ հեռու կը քալէր:

Եւ ահա տեսան իրենց ընտանիքը ժողովուած
Յակովբայ խղճիթին դիմացը. սկսան հոն մօտենալ.
Ռուբէն և Նեփթաղիմ բազմութիւնը ճեղքելով
վազեցին ծերունուցն դիմացը. բայց ուրիշ մէկալ
եղբայրներս՝ աւելի յանցաւորները՝ խառնուեցան
այն բազմութեան մէջ. իրենց հօրը դիմացը կը դող-
զըղային, և չէին համարձակեր աչուրնին վեր վեր-
ցնելու՝ երեսը նայելու: Բայց Միմէոն հեռու կե-
ցեր էր այն ահաւոր տեսարանէն:

Յակովբ երկար ատեն սրտին ցաւերէն ինքզինքը
կորսընցուցած, բացաւ վերջապէս աչուրները. չորս
կողմը իր բազմութիւ ցեղը սլատած դտաւ. տեսաւ
դիմացը Նեփթաղիմը՝ Ռուբէն և ուրիշ մէկալ տը-
ղաքը. բայց դեռ իր սրտին այլայլութեան տագ-
նազներուն մէջ պաշարուած՝ դեռ Յովսեփը կը
փնտռէր անոնց մէջ. իր սիրելի զաւակը կը կան-
չէր. Ուր ես որդեակ, կ'ըսէր, բոլոր տղաքս ահա
հասեր են, ուր մնացեր ես դուն որդեակ իմ. դո՛ւն՝

որ անտնցմէ առաջ սէտք էիր վազել, դ՛նն՝ որ կը փութօայիր միշտ իմ սէրս իմ կարօտս լեցնելու . ո՛ւր ես սիրելի զաւակս , դեռ չէս դար իմ գիրկս , Յովսէփ որդեակ իմ . . . :

Մենք ամէնքնիս լուռ կեցեր էինք . մէյմըն ալ յանկարծ Յակովբ՝ աչուրները քու արիւննազանդ զգեստիդ վրայ դարձրնելով՝ ինքը իր ցաւալից հաւառանքներովը իր խօսքը ընդհատեց . զգեստները սրտաբռտեց , և մոխրի մէջ ինքզինքը ծածկեց : Այս դառն աղաղակներն որ լսեց Սելիմա՝ որ ինչուան այն վայրկեանը ինքզինքը կորսնցուցած ինկեր էր գետին , աչուրները բացաւ , վազեց՝ ինկաւ սլլուէցաւ այն մահագուշակ զգեստին : Մենք իրէքնիս ալ կը սխմէինք այն զգեստը կուրծքերնուս վրայ , մեր արցունքներովը լուսայինք զանիկայ . ձեռուրնիս արիւնով ներկուած՝ սարսափ մը կը սրտեր վրանիս . մեր սրտերուն դառն հառաչանաց ձայները միայն կը լսուէին : Բոլոր մեր չորս դին սրտող բազմութիւնը՝ այս սրտաշարժ տեսարանէն սաստիկ զգածուած՝ խոր լուռութեան և սարսափի մէջ կեցեր կը նայէին : Երկար ատեն այս տխուր հանդէսը տևեցին ետև՝ ամէնքն ալ Յակովբայ չորս կողմը լեցուեցան , և զինքը մխիթարել կը ջանային :

Ա՛հ , թողէք զիս , հառաչեց ծերունին՝ իմ ցաւերուս մէջ . թողէք վազեն արցունքներս , որ Յովսէփս լալու համար կը թափին . հանեցէք դուք ալ ձեր սրտին հառաչանքները իմիններուս հետ մէկտեղ , ողբացէք իմ սիրելի զաւակս , որ զամէնքնիդ ալ իր սրտին սէս կը սիրէր : Ա՛հ , ա՛լ ի՛նչ մնաց ինձի որ Յովսէփիս հետ կորսնցուցած չըլլամ . . . որդեակ իմ , ա՛լ չկաս մէջտեղ . . . Ո՛վ տէր , ի՛նչ ուրիշ ծանր վերք մը կընայիր իմ սիրտս աղգել . . . Առաքինի էր Յովսէփս , այն էր իրեն զարգարանքը . տալուր էր է՛կ ես իրեն սրտին մէջ Աբրահամու և Իսա-

հակայ խնաստուածիւր, ինքը իմ ճերմըկցած մազերուս պարծանքն էր, իմ ծերութեանս մխիթարանք ու հաստատութիւնն էր : Իմ կենացս վերջի միժընցած օրերուն վրայ մէկ նոր արշալոյս մը կը ծագէր . իրմէն միայն՝ բոլոր զաւկըներէս սպասած կարօտս կ'անէի : Ա՛վ սիրելի ամուսինդ իմ Ռաքէլ, որուն անշուշտ սրբազան աճիւնը այս չարաբուշակ վայրկենիս տագնապեալ տակնուվրայ կ'ըլլայ, իմ Յովսէփս ճիշդ քու կենդանի պատկերդ էր . . . Եւ ես ի՛նչպէս չիլամ չողբամ իմ այսպիսի զաւակս . թէ որ ես զինքը լալու չըլլամ, այս քարաժայռներս պիտի սկսին իրեն համար արցունք թափելու : Անմխիթար պիտի լամ ողբամ իմ սիրելի Յովսէփս՝ ինչուան որ երթամ ինչնամ իմ մութ շիրխն :

Ահա ասոնք էին ծերունւոյն ցաւալից հառաչանքները : Բայց յանկարծ դառնալով իմ եղբարցս նայելով բարկութեան կրակ մը աշուրներուն մէջ փայլեցաւ . Անդո՛ւթ զաւկըներ, պոռաց երեսներնէն ի վեր, ձեր դարձը այս ուրախութիւնն էր որ պիտի բերէր ինձի . զձեզ հոս դարձըներու համար իմ Յովսէփս զո՛հ եղաւ . թէ որ դուք ձեր հօրմէն հեռացած չըլլայիք՝ Յովսէփս հիմա դեռ ողջ էր . դուք էք, դուք անգութ զաւկըներ որ զինքը ինձմէ յափշտակեցիք, և իրեն մահուանը դուք էք պատճառ : Այս յանդիմանութիւնները լսելով տագնապներնէն գետին կ'անցնէին :

Սէլխնս այն ազաղակներուն մէջ՝ այս ընդհատ հառաչանքները կը հանէր . Ա՛վ տէր . . . սիրոյ կապերով միանալու օրերս . . . ամուսնութեան հանդիսիս ատենները . . . Ա՛վ մահագոյժ զգեստ, ես որ զքեզ իմ սիրելի ամուսինս զարգարելու համար հիւսեր էի, այսպէս իրեն արիւնո՞վը ներկուած նորէն պիտի տեսամ եղեր . . . և դուն ալ ո՛վ խոր ճի՛թ մեր ամուսնական սիրոյն, դուն զիս՝ իմ սի-

րելի ամուսնոյս նուագարաններուն ձայներովը՝
 ընդունելու տեղը, պիտի տեսնաս ելեր իմ թը-
 շուառ ամուսինս կատարելի դազանի մը ճանկերուն
 մասնուած. ա՛հ, կը կռուի Յովսէփ. կ'իյնայ կը
 դատորի գետին. ահա բզիկ բզիկ կ'ընէ իմ անձկալի
 ամուսինս անողորմ՝ գազանը... իմ սիրելոյս
 մարմնովը իր քաղցը կը լեցընէ... ա՛հ դառն վայր-
 կեան...: Թէ որ հանգիստ մահուամբ մը մեռնե-
 լու ըլլար, թէ որ իմ գրկիս մէջ իր վերջի շունչը
 տալու ըլլար՝ ինչպէս որ գեղեցիկ ծաղիկ մը թու-
 մի, թէ որ հոգին աւանդելու ատեն՝ իրեն վերջին
 հառաչանքը լսած ըլլայի... թէ որ իրեն անշունչ
 մարմինը գտնէ թաղելու երջանկու թիւնը ունեցած
 ըլլայի, ամէն օր կը վազէի կ'երթայի իր շիրիմը
 տեսնալու, պլուելու վրան, մինչև որ իմ հա-
 ռաչանքներս և իմ արտասուացս հեղեղները մըտ-
 նային թափանցէին ինչուան իրեն փափաքելի ա-
 ճիւնին մէջը. ա՛հ, կարելի բան չէր որ իր աճիւնը
 անդգայ գտնուէր, մահը մեզ բոլորովին իրարմէ
 բաժնած չէր ըլլար. և ես երբոր զինքը լալէն դադ-
 րէի՝ մի և նոյն գերեզմանի մը մէջ իրեն հետ կը
 միանայի բոլորովին... Այս հառաչանքներս կ'ը-
 նէր, կուրծքը կը ծեծէր, և մազերը կը փետտէր:

Բայց սահայն Յակովբ՝ Սիմէոնը մէջտեղ չտես-
 նելով՝ հարցուց թէ արդեօք ուրիշ զաւակ մըն ալ
 կորսնցուցած է թէ չէ: Այն ատենը ծերունւոյն
 զիմացը լեցուած բազմութիւնը մէկզի քաշուեցաւ,
 և ահա տեսնուեցաւ Սիմէոնը՝ սրտին տխուր տաղ-
 նապներուն մէջ ընկզմած: Առաջ կանչեց զինքը
 Յակովբ. տարակոյս չկայ որ Աստուծոյ կայենին
 ականջը թնդացուցած ձայնը՝ Աբելը սարաննէլն
 ետև՝ աւելի սարսափ մը չիձգեց անոր յանցաւոր
 սրտին վրայ: Դողաց Սիմէոն, ծնկուրները թուլ-
 ցան, կ'ուզէր փախչիլ. բայց Յակովբ երկրորդ ան-
 գամ կանչեց զինքը: Այնպիսի սրտակառելի ձայնի

մը չկրցաւ դէմ դնել, առաջ անցաւ այլայլած բո-
լորովին: Հասաւ հօրը առջևը, աչուքները գետին
տնկած՝ չէր համարձակեր երեսը նայելու. ամէն
վայրկեան երեսին գոյնը կը փոխուէր:

Այ սպերջանիկ զաւակ, ըսաւ ծերունին, իմ
Յովսէփիս վիճակին վրայ եղբայրներէդ աւելի տե-
ղեկութիւն մը չունիս ամենևին. դուն ալ որ զինքը
չէիր սիրեր, հիմա զքեզ ալ իրեն մահուանը վրայ
յուսահատեալ կը տեսնեմ. բայց չկրցար զաւկիս
օգնութեան հասնիլ. չկրցիր իրեն ուղորմագին
ձայնը. կը վազէր անշուշտ ինքը՝ քեզի ապաւինե-
լու: Ո՞ւր տեղ մեռաւ զաւակս, որ անգութ գա-
զանը պատուեց Յովսէփիս. գոնէ իրեն արիւնաթա-
թախ անդամները չկրցար բերել ինձի:

Միմէոն ետքէն պատմեր էր իր եղբարցը՝ որ այս
ամէն մէկ Յակովբայ հարցմունքներուն այնպէս մը
կուգայ եղեր իրեն՝ որ գետինը ոտքին տակը կը
պատըռտի, և ինքն ալ անդունդներուն մէջ կը գլոր-
տըկի. և թէ հոն առաջին անգամ խղճին սար-
սափելի խայթերէն տագնապեալ՝ քիչ մնացեր է
որ պոռայ թէ Ն'ս, ես եմ այն կատաղի գազանը:

Վերջապէս ելաւ քաշուեցաւ Յակովբ իր խըր-
ճիթը. և միակերպ ցաւագին կը հառաչէր: Այն
ատեն մօտեցայ ես իրեն, և իմ լալս չինայելով՝ կը
ջանայի իրեն արցունքները սրբել: Զիս տեսնե-
լուն պէս, որ անշուշտ քու դէմքդ իմ երեսիս վը-
րայ կենթագրէր տեսնալ, սկսաւ աւելի յորդար-
ցունք մը թափել: Երկար ատեն երեսս նայելէն
ետեւ, գիրկը առաւ զիս, և դէպ ի երկինք վերցընե-
լով. Աստուած իմ, հառաչեց, լսէ մէկ թշուառ
հօր մը սրաին ձայնը. դեռ ամէն բանս չեմ կորսն-
ցուցած. դեռ Բենիամինս ողջ է. իմ Յովսէփիս ե-
րեսին գծագրութիւնն է ահա որ վրան կը տես-
նեմ. ո՞ւր էր թէ առաքինութիւններովն ալ նմա-
նէր անոր, ո՞ւր էր թէ ինձի ըլլար մէկ ուրիշ Յով-

սէփ մըն ալ . . . Բենիամին որդեակ իմ, Թէպէտ
 աղայ ես դեռ՝ բայց այս օրուան յիշատակը չելէ
 մտքէդ . դիտելիք որ իմ Յովսէփիս տեղը պիտի լե-
 ցընես : Եւ դուն ալ, սիրեցեալդ իմ Սելիմա, որ
 պիտի միանայիր այն զաւակիս հետ զորն որ կ'ող-
 բամ անմխիթար, կ'ուզեմ կրցածիս չափ՝ ըրած
 կորուստս դարմանել, ահա ինծի որդեգիր կ'ընեմ
 զքեզ . իմ ազջիկս սեպուիս ասկէց ետեւ . ահա քե-
 ղի կը յանձնեմ Յովսէփայ ոչխարները . բնակէ
 իրեն խրճիթին մէջ . զորն որ ինքը ձևացուցեր
 էր, հոն քեզի հետ երջանիկ օրեր անցընելու :

Ծերունին ասոնք խօսելու ատենը՝ վազեց Սելի-
 մա երախտագէտ սիրով մը սլլուեցաւ Յակովբայ
 ոտուրներուն . ետքը երկուքնիս մէկէն գրկեցինք
 ծերունի հայրս, և մեր հառաչանքներուն մէջ՝
 Հայր, Արդեակ, Դո՛ւստր, ասոնք միայն կը հնչէին :

Ի՞նչ ցաւ էր որ զգաց Սելիմա առաջին անգամ
 որ մտաւ քու խրճիթդ . կարծես Թէ դեռ աչքիս
 առջևն է որ կը տեսնամ Թէ ի՞նչպէս տխուր լու-
 թեամբ մը ծաղկէ սրահները կը ժողլէր սպառ-
 րուն վրայէն՝ որ այն զուարթ բնակարանին զար-
 դարանքներն էին, և անոնց տեղը սև նոճիներով
 կը սպառէր . արևուն ճառագայթները ալ կարծես
 Թէ չէին Թափանցեր այն բնակարանին մէջ, և զե-
 վիւճն ալ անոր վրայի հովանի կանանչութիւնն՝
 ալ չէր շարժեր . դառն լութիւն մը և տխուր մը
 Թութիւն մը տիրեր էր հոն . խրճիթին քովը խո-
 շոր նոճիի ծառ մը կար՝ որ ինքը իր ձեռուրներովը
 անկեր էր . մօտեցաւ անոր, ձեռքը բռներ էր այն
 քնարը՝ զորն որ դուն շիներ էիր ձեր հարսանեաց
 հանգիսին երգերը միշտ հնչեցընելու . հարած ա-
 ջուրներով մը երկար ատեն լութեամբ նայեցաւ
 վրան, ետքը առաւ կախեց նոճիին ճիւղերէն :
 Գնաց ետքէն սափոր մըն ալ բերաւ, որուն մէջը
 քու արիւնոտ զգեստդ ամփոփեր էր, և զեանկեց

նոյն ծառին ոտքին քովը : Եւ ահա այսպէս քու խրճիթդ՝ մէկ շիրիմ մը ձևացուց . ամէն օր կ'երթար այն սափօրին դիմացը , կը հանէր զգեստը , և աչքին արցունքներովը կը լուար :

Բայց Յակովբ իր հայրական սրտին տագնապներուն մէջ ալէկոծեալ՝ ելաւ միայնակ իր խրճիթէն դուրս . մտքին խորհուրդը մէկն ալ չէր գիտեր . կտրեց բոլոր դաշտերը . մէկն ալ իրեն ընկերելու չառաւ . և այսպէս իր հարցը բնակուածէնէն հեռանալով՝ գնաց ինչուան հեռու անտառները՝ ուսկից որ դուն անցեր էիր Դովթայիմ երթալու գիշերդ : Այն ընդարձակ անտառին մէջ թափառական շրջելով , իր սիրելի զաւկին ստուերը կը կանչէր , քու արեանդ նշանները կը փնտռէր . և անվախ մօտենալով ինչուան կատաղի գազաններուն որջերն ալ՝ քու ոսկորներդ կը փնտռէր՝ գոնէ զանոնք թաղելու համար : Այն անգութ վագրեր , կը պոռար ցաւագին , իմ սիրելի Յովսէփս ձեր ճանկերուն մէջ բզբքաւու ատեննիդ՝ ամենևին գութ մը չզգացցիք վրան . բոլոր լավեցիք ձեր որսը , և իմ դժբաղդ զաւակէս ամենևին մաս մը չի թողուցիք ինծի : Բայց թշուառ ծերունին ամէն վայրկեան կարծելով թէ ահա յանկարծ աչքին առջև պիտի ելան իր զաւկին արիւնոտ ոսկորները՝ սարսուռ մը կ'ինջնար վրան և տակնուվրայ կ'ըլլար սիրաը . ընդունայն տեղը երկայն բարակ պտրտելէն ետև խեղճը աշխատուածէնէ յոգնած՝ լքեալ սրտով դարձաւ իր խրճիթը : Այն օրէն ետև իր խրճիթէն դուրս ոտք չիկոխեց , բայց միայն երբոր կ'երթար նուիրելու Աստուծոյ երկրին առջի բերքերը . ցաւն ու տրտմութիւնը բոլոր մեր բնակարանները պատեր էին . կարծես թէ Յակովբ չկար մէջ տեղ . քիչ անգամ կը ժողվէր իր տղաքը՝ որոնք արդէն իրենց կողմանէ ալ կը ջանային փախչել իրենց հօրը տեսութենէն :

Բենիամինն հոս որ հասցուց իր պատմութիւնը՝ Յովսէփ անոր խօսքը կարելով, Այրիկեան մը հանդէնք ըսաւ իրեն. պատմածներդ ինչուան սիրտս կը թափանցեն, զքեզ ալ նոյնպէս սաստիկ զգածուած կը տեսնեմ: Ո՛վ Յակովբ, ո՛վ հայր իմ... ո՛վ սիրելիդ իմ Սելիմա:

Բիչ մը ատեն երկուքն ալ լուռ կենալէն ետև իրենց սրտին զգացմունքներուն մէջ ընկղմած, Յովսէփ դառնալով Բենիամինին ըսաւ. Լմնցուր պատմութիւնդ, ըսէ ի՛նչ եղաւ թշուառ Սիմէոնին վեճակը: Բենիամին խօսքը առաջ տանելով՝ ասանկ իր պատմութիւնը լմնցուց.

Սիմէոն ուրիշ ամէն եղբայրներէս աւելի կը փախէր Յակովբայ երեսէն. օրէ օր սրտին մէջ խղճի ահաւոր խայթերը կը զօրանային: Ամէն անգամ որ իր յուսահատ ընթացքովը Յակովբայ և Սելիմայի խրճիթներուն առջևը կուգար, ծերունի հօրս և դժբաղդ Սելիմայի հառաչանքները ականջները կը թնդացընէին, և իր տագնապեալ սիրտը կը կեղեքէին. արագ ընթացքով մը կը փախչէր անկէց, այնպէս որ կարծես թէ ջրի հեղեղ մը կը քշէր զինքը ետևէն. հեռանալէն վերջն ալ շունչ առնելու համար քիչ մը կանկ որ առնէր՝ մոլքին երևակայութեամբը կարծելով լսել նոյն ցաւագին հառաչանքները, նորէն անընդհատ իր փախուստը կը շարունակէր: Աբրահամու շինած սեղանոյն առջևէն անցնելու ատեն՝ կը կարծէր լսել ամէն անգամ մէկ ահաւոր ձայն մը որ կը պոռար իրեն. Մի՛ պղծե՛ր այս սրբազան տեղերը, գնա՛. պարտէ՛ թափառական, և մի՛ կարծէր որ երկնքի կրակ մը ինչնայ խալըսէ զքեզ: Մեր նախահարցը շերիմներուն որ մօտենար, կը կարծէր տեսնալ զիմացը որ ահա երկրիս ծոցէն կ'ելլեն անոնց վրէժխնդիր ստուերները: Երբեմն ալ մէկ դժնդակ երևութիւն մը սարսափած և երեսին գոյնը նետած բոլորովին՝ իբրև

Թէ մահուան պաշտօնեայ հրեշտակէն՝ մահացու հարուածը ընդունած ըլլար՝ կը պոռար յուսահատ Թէ ահա Յովսէփայ արիւնալից ստուերը կը հալածէ զիս : Սրտին անհնարին տագնապէն կարծէր Թէ գետինը կը դողայ, և լեռներն ու անտառները կը ցնցին : Ինք իր անձին ալ ատելի եղած՝ կ'երթար կը քաշուէր մութ և անկոխ անտառներու խորերը, և հոն գազաններուն ահուելի ձայներուն հետ իր հառաչանքները խառնելով՝ անտառները կը թնդացնէր . եղբայրներս՝ որ երբեմն ետեւն պտըտեր էին ըրածները իմանալու՝ լսեր են որ կը պոռայ եղեր . Կայէ՛ն, Կայէ՛ն, կենդանացար դուն նորէն իմ վրաս . . . Աստուած վրէժխնդիր, եղբայրասպան անօրինի մը դատակնիքը որոտացիր իմ վրաս ալ, տպաւորեր ես իմ ճակատի վրայ ալ ըրած չարիքս . . . Ահա կարծես որ Յակովբ, Սելիմա, և ամէնքն ալ սարսափով կը փախչին երեսէս . ամէնէն հալածեալ՝ կարծեմ Թէ բնուածիւնն ալ իր ձայնը բարձրացուցեր է ինծի դէմ :

Ահա ասոնք էին Թշուառ Սիմէոնի յուսահատ հառաչանքները : Իսկ Յակովբ կարծէր Թէ Սիմէոնի իրմէն հեռու պտըտիլը ուրիշ բանի համար չէր, բայց եթէ իրեն սիրելի զաւկին Թշնամին՝ իր աչքին դիմացէն վերցնելու համար : Սելիմա շատ աւելի լաւ իմացեր էր՝ այս անիրաւ եղբօրդ քու վրագ ունեցած ատելութիւնը . բայց առաքինի սրտերը այս աստիճանի անգուլթ չարութիւն մը չէին կրնար կասկածիլ . սակայն ամէն անգամ որ զինքը կը տեսներ՝ դող մը կ'ինջնար խեղճ Սելիմայի վրայ :

Բայց տես Թէ սէրը ի՞նչ հնարք գտաւ : Խրճիթիգ վրան երկրնցած կնձնիի ծառ մը կար . որ մը Սելիմա արտասուալից աչքերով կեցած ծառին վրայ կը նայէր, մէյմըն ալ յանկարծ ըսաւ . Արդեօք կարելի չէ՞ այս ծառին կոճղին վրայ իմ սիր-

րելի ամուսնոյս գծագրութիւնը տպաւորել : Այս
 ըսելուն պէս մէկէն ելաւ կրցածին չափ քու դէմքդ
 փորագրեց վրան . բայց պարզ անով գոհ չըլլալով
 բոլոր ծառին ճիւղերը կտրրոտեց , անանկ որ միայն
 կողը մնաց մէջտեղ : Ինքը առանձին քու խրճիթիդ
 մէջ այս բաներս ըրեր էր , և մենք բան մըն ալ չէ-
 ինք խմացած . օր մը հայրս և զիս առաւ հոն տա-
 րաւ . զարմանք մը սրտեց զմեզ՝ երբոր տեսանք
 որ այն կնճիի ծառին տեղը կարծես թէ դուն էիր
 որ կեցեր էիր . անմիտութար տրամութեան հառա-
 չանքներ՝ թեթև խնդութեան մը ձայներու հետ
 խառնուած՝ կը հնչեցընէին մեր վշտացեալ սրտե-
 րը . քու դէմքդ , քու հասակդ կը տեսնայինք
 վրան . և մի և նոյն զգացմունքի մէջ զքեզ կը դառ-
 նայինք , ինչպէս որ տեսեր էինք զքեզ մեզմէ բաժ-
 նուելու տարաբաղդ վայրկենիդ . ձեռուըններդ դէպ
 է մեղի երկնցուցած կ'երևնայիր Ծերունի
 հայրս , ուրախութեան և զարմանքի մէջ ինքզինքը
 կորսնցուցածի պէս՝ կը կարծէր թէ քու ստուերդ
 էր որ եկեր էր զմեզ միտութարելու : Իրեքնիս մէ-
 կէն վազեցինք սլլուեցանք քու արձանիդ հետ :
 Ո՛րչափ արցունք թափեր եմ , ըսաւ Սեղիմա , այս
 աշխատութեանս ատեն . քանի որ կը յաջողէր
 ըրածս , քանի որ ձեացուցած գծագրութիւնս նը-
 ման կը տեսնայի սրախս վրայ տպաւորուած սրտկե-
 րին՝ այնչափ ալ դժով և գորովով զգածուած զիս
 կը դռնայի : Ո՛րչափ անգամ երևակայութեամբս
 զինքը դիմացս տեսնելով՝ Ո՛վ սիրելիդ իմ Յով-
 սէփ , կը սրուայի , ո՛ւր ելար գացիր , ինչպէս կը ը-
 ցար թողուլ հեռանալ ինձմէ . և այս հառաչանք
 ներուս մէջ ինքզինքս կորսնցընելով՝ գործիքը ձեռ-
 քէս կ'իյնար : Ահա ասոնք էին որ կը պատմէր մե-
 զի Սեղիմա :

Ալ անկէց ետև շատ անգամ կը ժողվուէինք
 հոն , և աչուընիս քու արձանիդ վրայ տնկած՝ զքեզ

կը յիշէինք և քու վրադ կը խօսէինք միշտ • իսկ հայրս աւելի ստէպ կ'երթար հոն ծածուկ ճամբով մը լալու իր սիրելի մեռած տղան : Այնպէս մը կու գար մեզի որ քու ստուերդ կը պտըտէր մեզի հետ , և քու արձանդ մեր ցաւոց հառաչանքնէրուն զիմաց զգածուած կը փայլէր :

Ես քանի որ հասակս կ'աննէի՝ երթալով քու երեսիդ գծագրութիւնը իմ դէմքիս վրայ ալ կը սպաւորուէր : Ծերունի հայրս և Սելիմա անկէց ետև աւելի գորովանօք մը երեսս կը նայէին • Ահա ճիշդ Յովսէփին ձայնն է , կ'ըսէին մէջերնին , նոյն իրեն աջուրները , ճակատը , մազերը : Շատ անգամ հայրս իր սրտին գորովէն՝ Յովսէփ անունով կը կանչէր զիս :

Անկէց ետև ես ալ քիչ վերաբերութիւն ունէի իմ եղբայրս հետ • իսկ Սիմէոն՝ իմ քեզի հետ ունեցած նմանութենէս՝ կարծես թէ սարսափած՝ և ոչ աչքիս կ'երևար : Նեփթաղիմ միայն ընտանի էր ինծի հետ , և մեր բոլոր խօսակցութեան նիւթը դուն էիր : Օր մը ըսաւ ինծի թէ կ'ուզեմ քեզի մէկ մեծ գաղանիք մը բանալ , և զիս առանձին տեղ մը տանելով՝ պատմեց ինծի քու բոլոր թշուառութեանցդ զիպուածները : Այն ինչ ուրախութիւն էր որ զգացի , երբոր իմացայ որ դուն ողջ ես • բայց ինչ ցաւերով ալ այն ուրախութիւնս տակնուվրայ կ'ըլլար • վասն զի դուն մեզի համար գրեթէ նոյնպէս մեռած էիր : Անհարին տաքնապ մը պատեց սիրտս , վասն զի սէտք էր այս գաղանիքը ծածուկ սրտիս մէջը պահել : Յակովբայ և Սելիմայի իմացընելը կարելի բան չէր , վասն զի ասով իրենց յուսահատ ցաւերը պիտի նորոգուէին և կրկնապատկուէին • և Սիմէոնն ալ բաւական պատժուած էր իր խղճին խայթերէն , և չէի ուզեր հօրս անէծքը թափել խեղճին գլուխը :

Ահ Յովսէփ , եղբայր իմ , ո՛ր էր թէ քիչ մը

աւելի տարիք ունենայի, երբոր Յակովբայ զաւկը ները միաբաներ էին բոլոր քեզի դէմ: Թէ և ինձի ալ քու Թշուառութեանդ վիճակը սպառնալու ալ ըլլային՝ պիտի չգազրէի զքեզ պաշտպանելէն ա նոնց անդութ և չսուած անօրէնութեանը դէմ: Շատ անգամ առանձին անտառները քաշուելով՝ զքեզ կը մտածէի • իմ սիրտս զքեզ կը փնտռէր, աչուըներս ամէն տեղ զքեզ տեսնալ կը սպասէին: Ո՛ր ես արդեօք հիմա, կը հառաչէի միշտ • ամէն տեղ զքեզ կը հարցընէի, երկինքն ու երկիրս զքեզ կը փնտռէի: Շատ անգամ մտքէս անցեր էր Թողու հեռանալ հօրս գրկէն, և վայրենիներուն սահմաններն երթալ զքեզ փնտռել • և Թէ որ Աստուած զքեզ դեռ իմ գիրկս դարձուցած չըլլար, ա՛լ չէի կրնար ես իմ սրտիս փափաքներուն դէմ կենալ:

Այս որ ըսաւ Բենիամին, Յովսէփ բիւր տեսակ գեղեցիկ զգացմանց մէջ ընկզմած՝ ա՛լ չկրցաւ համբերել • ինկաւ սլլուեցաւ Բենիամինի վիզը: Իր սիրտը պատեր էին՝ ցաւը, խնդութիւնը, սէրն, որդիական գորովը, եղբայրական բարեկամութիւն և մէկ առաքինի կարեկցութիւն մը: Երկար ատեն իր սիրելի եղբօրը հետ սլլուած մնաց, չէր կրնար իրմէն բաժնուիլ: Աւերջապէս ոտք ելան, քաշուեցան տեղերնին • և անոյշ քուն մը իրենց բիւր տեսակ սիրոյ զգացմունքներէն տագնապեալ սիրտը հանդարտեցուց:



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Second block of faint, illegible text, also appearing to be bleed-through.

Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Յ Ի Կ

Ե Ր Գ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

2174

ORVILLE H. HARRIS

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Քանի մը որ փոխադարձ բարեկամութեան ա-
նոյշ սերը վայելէէն ետև՝ ըսաւ Բենիամին իր եղ-
բայրներուն • Մենք հոս Յովսէփը գտնելուս վրայ
ուրախացած ժամանակնիս, մոռցեր ենք որ Յա-
կովբ և Սելիմա հոն դեռ կ'ողբան զինքը • պէտք
չէ որ փութանք մեր ուրախութեանը մասնակից
ընելու զիրենք ալ : Այս խօսքիս վրայ մէկէն ճամ-
բու պատրաստութիւն սկսան տեսնալ :

Հասաւ ժամանակը որ ելլեն ճամբայ • կը փա-
փաքէր Յովսէփ ալ որ շուտով դառնան իր հայրե-
նի երկիրը՝ իր հօրը ու սիրելի ամուսնոյն ցաւերը
փարատելու համար • իր սիրտը կը ճզմուէր միայն
տեսնելով որ իր եղբայրներէն պիտի բաժնուէր :
Հապիւ թէ իրենց հետ սիրով պագտուելու ժա-
մանակ՝ պէտք էր զսկուիլ անոնց տեսութենէն •
որչափ փափաքելի էր իրեն ալ անոնց հետ մէկ
տեղ երթալ : Աւերակ դարձած դաշտերը և Նե-
ղոսի գետեզերքը երթալով՝ բոլոր բնութեան հետ

ինքն ալ կը թուշար կը տկարանար : Ո՛վ գեա , հառաչեց սրտէն , է՛րբ նորէն քու առջի ակնքներդ պիտի տեսնեմ . ո՛վ երկիր , է՛րբ քու առջի ծաղիկդ պիտի ծլած տեսնեմ , որ իմ երթալուս ալ քաղցր աւետիսը պիտի ըլլայ . ի՛նչ գեղեցիկ և ի՛նչ ախորժեղի երևոյթ մը աչքիս առջև պիտի բացուի :

Այս զգացմունքներուն մէջ էր , երբոր թագաւորին հրամանը հասաւ որ զինքը կը կանչէր : Եւ ըստ Յովսէփ Փարաւոնի առջև , ճակտին վրայ տրխրութեան ամուս մը պատեր էր : Գուն ինծի խոստացեր էիր , ըսաւ Փարաւոն , որ Եգիպտոսէն չըհեռանաս քանի որ սովը կը տուէ . բայց ինչո՞ւ մեր թշուառութեանցը մասնակից ըլլալէդ , և զանոնք թէթեցրնելէդ ետև մեզի հետ մեկտեղ ետքի երջանկութեան օրերն ալ չվայելես . . . կը հառաչես վայրկեան մը առաջ ընտանիքդ տեսնալու . բայց գիտես որ Եգիպտոս և Փարաւոն չեն ուղեր քեզմէ բաժնուիլ : Ա՛ն իմ կառքերս , հոս բերել տուր քու հայրդ ալ և բոլոր ազգատոհմդ . ահա կուտամ քեզի , մանաւանդ թէ ըսեմ որովհետև քու արդիւնքդ է՝ ահա կը դարձնեմ քեզի Գեսեմայ պտղաբեր երկիրը , որ դուն ինծի ժառանգել տուիր՝ ընդարձակելովդ իմ տէրութիւնս : Եւ ահա այսպէս հոս հօրդ գրկին մէջ՝ դուն նորէն մեր սրաշտպանը կ'ըլլաս . և ամէնքնիս ալ երջանիկ կ'ըլլանք , ես ալ և իմ ժողովուրդս ալ , դուն ալ և քու ազգատոհմդ ալ :

Յովսէփայ սրտին սաստիկ ցաւը փարատեցաւ , մեծ ուրախութիւն մը երեսին վրայ փայլեցաւ . վազեց մէկէն իր եղբայրները գտնալու . անոնք ճամբայ ելլելու ատեննին՝ տեսան որ Յովսէփ ուրախութեամբ լեցուած կը մօտենար իրենց :

Ա՛լ չեմ բռներ զձեզ հոս , ըսաւ իրենց , չեմ ուղեր որ ուշանաք , շուտ ըրէք , մէկէն ելէք ճամբայ . վազեցէք գտնալու հայրս . . . սրտիս ուրախու-

Թենէն շունչս կը բռնուի... ըսէք իրեն որ հոս գայ, իր Յովսէփը իրեն կը սպասէ. Փարաւոն կուտայ իրեն Գեսեմայ սրարարտ երկիրը. շուտ ընեն գան ինքն ալ, Սելիմա ալ, Բենիամինն ալ, իր բոլոր զաւկրներն ալ ու Թունները :

Առատ ընծաներ առաւ եղբարցը. հինգ կառք ալ Եգիպտոսի օղնիւ բերքերէն զարդարեց և խըրկեց Յակովբայ իր հօրը և ամուսնոյն : Ընկերացաւ հետերնին, պագտուեցաւ, արուեցան վերջի հրաժարական բարևներն ալ :

Աչուրներէն դեռ արցունքները չարբած՝ գնաց Մեմփիսի դուռը, և հոն սովին դարման ընելու զբաղած՝ իր ըրած խնամքներուն մէջ մեղմացան իր ցաւերն ալ իր անհամբերութիւնն ալ :

Բայց անդին Յակովբ սիրտը հատած կը սպասէր իր տղոցը դառնալուն. և որովհետև իրենց դարձը օր մը աւելի ուշացեր էր, ուստի իր հայրական սիրտը տակնուվրայ էր. նստած՝ Ժամերն ու վայրկեանները կը համբէր. Սելիմայի հետ արտասուաց նուիրեալ հովանիին տակ քաշուած, և հազարու մէկ տեսակ վախերով սրտերնին սրաշարուած՝ Բենիամինի վրայ կը խօսէին :

Օր մը յանկարծ բոլոր դաշտերը կառքերու ազաղակներէն և ուղտերու արագ վազուածքէն բոլոր Թունդ երան : Վեր ցատքեց Յակովբ, ախանջ դրած մտիկ կ'ընէր, և այն ազաղակներուն մէջ՝ որոշ կերպով իր զաւկրներուն ձայները առաւ. մէկէն դուրս ելաւ ընդառաջ երթալու, և ահա անոնք ալ հասան հոն. այս օր ամէնքն ալ վստահութեամբ համարձակեցան ներս մտնելու և իրենց հօրը ներկայանալու :

Յակովբայ զաւկրներուն սղօթիկին աչուրներուն մէջ ուրախութիւնը կարգէ դուրս կերպով մը կը փալփրէր. կը ջանար ինքզինքը բռնել, բայց իր սրտէն դուրս զեղանելով իր ճակտին՝ իր տե-

սուլթեանը և իր բոլոր դէմքին վրայ կը տարածուէր : Հայր իմ, Սելիմա՛, պոռաց ուրախութեամբ, իմ և բոլոր եղբարցս դարձը՝ մեծ և անակնկալ ուրախութեան մը պզտի մասն է որ կ'ընծայենք ձեզի : Ալ ի՛նչ ուրիշ ուրախութիւն մը կ'ընայիք ինձի վայելել տալ, պատասխանեց Յակովբ տրամուլթեամբ մը . իմ սրտիս ցաւերը միշտ նոյն են . և ձեր դարձը միայն քիչ մը մխիթարեց զիս :

Բայց ամենևին ակնկալուածիւն մը չունիս Յովսէփը նորէն տեսնելու, ըսաւ Բենիամին : - Ի՛նչ յոյս կ'ընամ ունենալ, պատասխանեց ծերունին . կատաղի գազանները կ'ընան իրենց որսը ինձի ետ դարձնել : - Վարելի չէ՞ որ անոնց ճանկերէն խալըսած ըլլայ, կրկնեց Բենիամին : Աչուրներէն կարծես լոյս մը կը ցոլար, կը ջանար իր սրտին չափազանց ուրախութեան զգացմունքները ծածկել, բայց ընդունայն ջանք . արևու ճառագայթներուն պէս որ կը թափանցեն կը ցրուեն թեթև ամպերը՝ իրեն ուրախութիւնն ալ դուրս կը զեղանէր :

Թէ որ հիմա Յովսէփս մեռած չըլլար, ըսաւ ծերունին, կարելի էր որ Աստուած իմ գիրկս չդարձնէր զինքը : Բայց այս ի՛նչ ուրախութիւն է որ վրադ կը տեսնեմ . ոչ երբէք յիշեր էիր Յովսէփը անանց արցունք թափելու, իսկ այսօր բոլոր զաւկրներուս երեսին վրայ ալ ուրախութիւն մը կը փայլի : Արդեօք մեզմէ աւելի երջանկութեան հասար, արդեօք իրեն ստուերը տեսար :

Բոլոր այս խօսակցութեանց միջոցը՝ Սելիմա հառաչանքներ հանելով՝ աչուրները տնկած կեցեր էր իր ամուսնոյն արձանին վրայ : Իսկ Բենիամին իր սրտին զգացմունքները ալ չկարենալով զսպել, Երջանիկ հայր, աղաղակեց յանկարծ, Յովսէփ կենդանի է : Բենիամինի հետ բոլոր մեկալ տղաքն ալ պոռացին . Այո՛, կենդանի է Յովսէփ :

Սելիմա անակնկալ զարմանաց սասաիկ կրքէ մը

այլայլած՝ հառաչանքները դադրեցան շրթուհներէն. սիրտը սաստիկ զգածուած և անշարժ երկբայութեան և յուսոյ մէջ կը տադնասպէր. քար կտրած կեցեր էր, լեզուն բռնուած՝ շունչը պակասած՝ թևերը կ'երկնցընէր, աչուրները Բենիամինի վըայ կը տնկէր՝ կարծես թէ իրեն բերնէն ելած խօսքերը դեռ շրթուհներէն չսուած կ'ուզէր յափը շտակել:

Յովսէփ կենդանի է... ըսաւ Յակովբ, ճշմարիտ է արդեօք... Չըլլայ թէ իմ ծերուածիւնս կ'ուզէք խաբել. չըլլայ թէ միաբաներ էք իմ կենացս ետքի օրերը սուտ յոյսերով մխիթարել: Թէ որ այս է մտուընդի՞ ա՛հ, թողուցէք որ արցունքներս թափին. սիրելի են ինձի իմ ցաւերս, և երևակայեալ երջանկութենէս շատ աւելի ընտրելի են ինձի: Թէ որ կենդանի է, ի՞նչ է որ զինքը կը ստիպէ իր հօրմէն հեռու կենալու:

Ինքը քեզի կը սպասէ, պատասխանեց Բենիամին: Այն հոգեակտոր և առաքինի անձը՝ որ բոլոր Եգիպտոս կը մեծարէ, և որուն որ համբաւը՝ իրեն իմաստութիւնը կը քարոզէր, որուն վըայ որ քու սիրտդ ալ Սելիմայի սիրան ալ կ'սպաւ, որ սիրով մեր ազգատոհմը կը կերակրէր, որ քու ոսկիդ ետ դարձուց քեզի, որ չկրցաւ քու զաւկըներդ ամէնը մէկէն բաժնել հեռացընել իրմէն, որ ուզեց զիս ալ տեսնալ: - Բենիամին, համբերութիւնս կը հատցընես, ըսաւ Յակովբ, լմնցուր խօսքդ, ի՞նչ կ'ուզես ըսել: Ո՛վ Տէր, օրհնեալ ըլլան քու անքննելի վճիռներդ... - Ահա այն անձը, ըսաւ Բենիամին, է ինքն Յովսէփը:

Սելիմա՛ Յովսէփայ անունը լսելուն պէս՝ մեծ հառաչանք մը արձըկեց. բայց սիրտը չկարենալով զիմանալ իր ուրախութեան կըքին սասակութեանը, գոյնը նետեց, այլայլութիւն պատեց վըան, աչուրները մթընցան՝ ինկաւ գլորեցաւ գետին. ծաղ

կի մը նման որ քամիներու և մորիկներու դիմա-
նալէն ետև՝ արևուն ճառագայթներէն գեղեցիկ կը
զարգարուի, նոյնպէս ալ Սելիմա Յովսէփայ ա-
նունը նորէն լսելուն պէս ոգի առաւ, ելաւ կայ-
նեցաւ :

Բայց Յակովբ երկար ատեն մնաց իր լուծեանը
մէջ. զգացմունքներու մէջ ընկղմած, և մտքին մէ-
ջի թեթև ամպերու պէս եղած կասկածներն ալ
ստուգել ուզելով. Աստուած իմ, ըսաւ, իրաւցը
նէ կը դարձնես ինծի իմ Յովսէփայ: Արդեանկք
իմ, կ'ուզեմ հաւատալ ըսածներնուդ. բայց ա-
սանկ կարգէ դուրս հրաշալի գիպուած մը... մէկ
անակնկալ երջանկութիւն մը...:

Եկնէր հայր, վրայ բերաւ Բենիամին, տես քե-
զի խաւրած կառքերն ու ընծաները: Յովսէփ կը
բռնադատէ զքեզ երթալու Եգիպտոս. Թագաւորը
Գեսեմայ պարարտ երկիրը կուտայ քեզի. կաս-
կածներդ կը փարատին: Աստուած որ Յովսէփը
ինչուան Փարաւոնի Թագաւորական աթոռին քով
հասուցեր է՝ ինքը հոն բռներ է զինքը. իմ եղ-
բայրս՝ երկար ատեն թշուառ մնալէն ետև, վեր-
ջապէս այն բարձր աստիճանը հասնելով՝ գերիներ
խրկեր է իր կողմանէ քեզի իմացընելու, որոնք
թերևս ճամբան կորսուեր էն... Մնացածը տեղ-
նիտեղը իր բերնէն կը լսես:

Բենիամինին խօսքը բերանը մնաց, վասն զի Յա-
կովբ Սելիման և իր բոլոր զակրները հետն առած՝
առաջ անցաւ, դողդոջուն ոտուրներովը աճապա-
րեց դուրս ելաւ խրճիթէն: Բայց հազիւ թէ տե-
սաւ Յովսէփայ խրկած կառքերն ու ընծաները՝
մէկ անպատմելի ուրախութի մը երեսին վրայ փայ-
լեցաւ, բոլոր մարմինը՝ սրտին խնդութենէն սկսաւ
դողդողալ. առանց բառ մը բերնէն հանելու՝ երկինք
վերցուց աչուրներն ու ձեռուրները. և քանի մը
կաթիլ արցունքներ՝ երեսին և ճերմակ մօրուքին
վրայէն սահեցան թափեցան:

Ա՛լ ուրիշ փափաք մը չունիմ ես, ըսաւ վերջապէս, որովհետեւ ողջ է եղեր Յովսէփս՝ երթամ տեսնամ մէյմըն ալ զինքը քանի որ գերեզման չեմ մտած: Այս ըսելով և ուրախութենէն դողդրղալով՝ ինկաւ Սելիմայի ուսին վրայ, որ ինքն ալ սրբտին խնդութենէն ինքիրմէ դուրս ելած՝ կը սխմէր ծերունին իր գրկին մէջ: Ուրախութեան աւետարբոլոր դաշտերուն մէջ տարածուեցաւ, դուրս թափեցան ամենուն ամուսիններն ու զաւկըները և Յակովբայ չորս կողմը առին. ամենուն բերնէն Յովսէփ անունը կը հնչէր, և բոլոր դաշտերն ու մօտ անտառները նոյն արձագանդը կուտային:

Յակովբ դառնալով այն բազմութեանը ըսաւ. Այս օրս մեծ հանդիսի օր մըն է ինձի համար, և բերկրալից խնդութեան տեսարան մը իմ վշտացեալ սրտիս համար. դոսայ ես իմ սիրելի զաւակս, դուք ալ ձեր ցանկալի եղբայրը. բայց մեր այսպիսի խնդութեանը մէջ՝ կրնանք մոռնալ զԱստուած՝ որ մեզի սարգևեց նորէն Յովսէփը. քանի որ մեր սիրտը ուրախութեան զգացմունքներու մէջ կը ցնծայ, երթանք մեր անկեղծ նուէրքները տարածելու Աբրահամու աստուծոյն սեղանոյն վրայ, և մեր երկրին առջի բերքերուն հետ նուիրենք իրեն մեր սրտաբուլիս զգացմունքներն ալ:

Այս խօսքիս վրայ բոլոր բազմութիւնը ծերունւոյն ետեւէն փառաւոր հանդիսով մը ելան հեռացան խրճիթէն. ալեղարդ Յակովբայ ճակտին վրայ մէկ վսեմ զուարթութիւն մը կը ցոլար:

Այն դաշտերուն մէջտեղը գեղեցիկ բլրակի մը վրայ՝ արմաւենիներէ և նոճիներէ շրջապատեալ՝ որոնց դագաթները ինչուան ամպերը կը բարձրանային՝ սեղան մը կար հողէ ձևացած և կանանչներով ծածկուած: Ինքն Աբրահամ իր ձեռքովն շիներ էր զանիկայ և անկեր էր այն ծառերը. այն էր իրեն տաճարն ալ՝ Իսահակայ ալ, այն ծառե-

րուն տերևներուն մէջէն ելան բարձրացան երկինք
իրենց սրտին ուխտերն ալ՝ իրենց զոհերուն ծու-
խերն ալ: Խոտմբ խոտմբ թռչուններ՝ որ այն բնա-
կարանը սիրեր էին՝ հոս մէկ յաւերժական ներ-
դաշնակութիւն մը կը հնչեցնէին: Մահականացու-
մը որ այն սրբազան տեղը կը մօտենար՝ սրտին մէջ
բիւր տեսակ վսեմ զգացմունքներ կ'արթննային՝ և
սիրտը երկնային ազգամամբ մը կը լեցուէր. վասն զի
պատկերբի մը պէս կը տեսնար դիմացը՝ գերազոյն
Աստուծոյ մեծվայելութիւնը՝ որ հոն կը փառաւո-
րուէր, այն սուրբ և անկեղծ նուէրքները, այն
սրբազան պաշտաման պատկառելի հիմնադրին յի-
շատակը, այն նուիրական հովանին՝ որուն տակը
երբեմն երկնային հրեշտակներն ալ իրենց ձայնը
խառնէր էին մահականացուաց երգերուն հետ մէկ-
տեղ, և այն գեղեցիկ տեսիլը՝ որ բոլոր աշխարհիս-
րնդարձակութեանը վրայ և անթիւ մեհեաններու
մէջէն՝ միայն այն սրբազան տեղն էր որ ճշմարիտ
Արարչին նուիրուած էր:

Ելաւ Յակովբ այն բլուրը որ ամէն օր իր ար-
ցունքովը թրջէր էր, և որն որ երկնային ոգիներէ
պահպանուած ըլլալով՝ ազատ մնացեր էր բոլոր
աշխարհս փճացնող հարուածէն: Մտաւ ծառե-
րուն մէջ սեղանոյն առջևը. Սելիմա և Բենիամին
իր երկու կողմը կեցեր էին, և բոլոր բազմութիւնն
ալ՝ այն նուիրական տեղոյն չորս դին պատեր էին.
խոր լռութիւն մը պատեր էր հանդիսին վրայ. ա-
մենուն սիրտը ուրախութեամբ լեցուած՝ Յակով-
բայ մաղթանքներուն հետ իրենց անձայն սրտի
նուէրքներն ալ կը միացնէին: Ծերունին երկինք
վերցուց աչուրները, սիրուն ուլ մըն ալ ձեռքը
բունէր էր.

Ո՛վ Աստուած Աբրահամու և Իսահակայ, հա-
ռաչեց, դուն նոյն Աստուածն ես Յակովբայ ալ,
դուն մեր խրճիթները ուրախութեամբ լեցուցիր,

դուն այս իմ սիրտս ալ զուարթացուցիր՝ որ չորցեր ցամփեր էր ցաւոց և դժբաղդ տարիներու հարուածներէն, դուն ահա դարձուցիր ինծի իմ զաւակս ալ՝ իմ Յովսէփս՝ զորն որ լացի երկար ատեն, դուն զինքը կատաղի գազաններէն յափշտակեցիր, քու ամենազօր ձեռքդ փրկեց զինքը մութ շիրիմէն, և հիմա այս մէկ շնորհքը միայն կը խնդրեմ քեզմէ Աստուած իմ, մեռնելէս առաջ ցրցուր ինծի իմ զաւակս, որ գրկիս մէջը մէկ անգամ մըն ալ սխմեմ զինքը՝ ընդունէ ով տէր, հասարակաց երախտագիտութեանը այս նուէրքը՝ և այս վերջին զոհը որ կ'ընծայեմ քեզի այս սեղանոյս վրայ... Սիրուն ծաղիկներ, բուրեցէք դէս ի երկինք ձեր անոյշ հոտերը՝ նագելի՛ թռչուններ՝ հնչեցէք ձեր ձայներն ալ իմ մաղթանացս հետ՝ ո՛վ նոճիներ և արմաւենիներ, ձեր գեղեցիկ շարժմունքներովը իմ ուրախութեանս եղիք թարգման՝ բոլոր բնութիւնը օգնէ իմ ձայնիս՝ և դուք ալ անձկալի՛ զաւակներս ու սերունդս, իմ սրտիս հրճուանաց նուէրքներուն հետ միացուցէք ձերիններն ալ :

Այս որ ըսաւ՝ մորթեց ուլը, վազեց արիւնը սեղանոյն վրայ՝ և ուրախութեան արցունքներ ծերունոյն աչքերէն կաթկրթեցին, և նուիրեալ զոհին արեանը հետ խառնուեցան :

Այն ատենը Սելիմս չկրնալով իր սրտին զգացմունքները սրտին մէջը ամփոփել, ինկաւ սեղանոյն առջևը, գրկեց գորովանօք, և աչուրները երկինք կը նայէին, շրթունքները չէին շարժեր, բայց երախտագիտութիւնը անկէց աւելի զգայուն կերպով մը ինքզինքը յայանած չունէր՝ արցունքները՝ կուրծքը կը թրջէին, և զոհին ծուխին հետ՝ որ ինչուան ամպերը կը բարձրանար, իր սուրբ հառաչանքներուն ձայները կը միացընէր :

Ծաղիկները իրենց անուշահոտ բուրմունքները կը տարածէին. թռչունները իրենց սրտաշարժ եր-

գերովը օգր կը թնդայրնէին, նոճիներն ու արմաւե-
նիներն իրենց գեղեցիկ ճիւղերը կը շարժէին • բո-
լոր բնութիւնն ալ կարծես զգածուած կ'երևնար
ծերունի հօր մը ուրախութենէն, որուն բազմա-
թիւ ազգատոհմն ալ անոյշ երգեր կը հնչեցընէր :

Միմէոնի սիրտը միայն այլայլութեան մէջ կը
տազնապէր • Ո՛վ երկինք, սուտաց սրտէն, արժա-
նի եմ՝ մօտենալու այս սեղանոյս քով, և իմ հա-
ռաչանքներս խառնելու առաքինի ծերունւոյ մը
սրտաբուզի աղօթքներուն հետ : Բայց ահա կ'օրհ-
նեմ զքեզ Աստուած իմ, որ հաճեցար իմ շարու-
թեանս դարման մը ընել • և ուրախութեան արև
մը ծագել՝ որոնց մէջ դառնութիւն մը տարածեր
էի : Դուն ներէ ինձի, և դուն զիս խաղացուր իմ
խղճիս խայթերէն : Ահա ասոնք էին Միմէոնի սըր-
տին հառաչանքներն • բայց այս մտղթանքներուն
հետ չէր համարձակեր սիրտը՝ աչուրները վեր եր-
կինք վերցընել :

Լմընցաւ զոհը և Յակովբ բոլոր իր սերնդեանը
հետ դարձաւ խրճիթը : Փութացին մէկէն Յակովբ
բայ տղաքը իրենց ընտանեացը հետ՝ Յովսեփայ
խրկած պարգևները բերելու թափելու Յակովբայ
և Սելիմայի առջևը • Ո՛վ երջանիկ օր, սուտային
երկուքը մէկէն, սրչափ տարբեր այն օրուրնէ որ
բերին առջևնիս Յովսեփայ արիւնտա զգեստը : Ետ-
քը Յակովբ փառաւոր հանգէս մը ըրաւ իր բոլոր
ազգատոհմին, և այս առաջին անգամն էր որ իր
զաւկին աներևութանալէն ետքը կը հրաւիրէր զա-
նոնք :

Նոյն իրիկունը Սելիմա իր բնակարանը քաշուե-
լով՝ դնաց կեցաւ այն սափորին դիմացը որուն մէ-
ջը իր սիրելի ամուսնոյն զգեստը ամփոփեր էր •
հանեց դուրս, և այն իրիկունը առաջին անգամ ու-
րախութեան արցունքներ վրան թափեց : Ելաւ
ետքէն վար առաւ բոլոր տխուր նոճիի ճիւղերը

որոնցմով պատեր էր իր խրճիթը • ետքը անոյշ քնոյ մը մէջ իր սրտին ուրախութիւնները ընկըլմեցան . . . :

Արշալոյսը հազիւ թէ սկսեր էր բլուրներուն կողերը լուսաւորել, ծերունին սրտին ուրախութենէն արթընցած մէկէն ելաւ, և իր սրտին զգացմունքներուն մէջ քիչ մը ընկղմիլ փափաքելով իր խրճիթին քովն անտառը գնաց քաշուեցաւ : Միտքը Յովսէփայ վրայ՝ և զինքը նորէն տեսնալու ակնկալութիւններով զբաղած՝ անտառին մէկ սրբազան տեղը հասաւ : Մէկ մեծ քար մը կար հոն • Յակովբ տեսնալուն պէս քարը՝ գեղեցիկ յիշատակ մը մտքին մէջը արթընցաւ, որ սրտին ուրախութենէն և Յովսէփը նորէն գրկելու փափաքէն մոռցեր էր ամէն բան • յիշեց Յակովբ որ այն տեղն՝ Աստուծոյ հրեշտակ մը երեցեր էր իրեն և ըսեր էր • Այս երկիրս որ Աստուած առաւ Աբրահամու, ասա նոյնը կուտայ քեզի և քու ցեղիդ ալ : Աներևութացաւ հրեշտակը, և Յակովբ նոյն քարին վրայ իւր և զինի նուիրեց : Իե՛ս կը յիշէր ծերունին այն զիպուածը, և այնպէս մը կուգար իրեն որ նոյն անմահ ձայնը նորէն իր սկանչները կը թնդացընէր, և կը հրամայէր իրեն այն երկրէն դուրս չելլալու :

Նոյն ատենը կարծեց Աբրահամու ձայնն ալ լսել՝ որ կ'ըսէր իրեն • Ի՛նչ է այդ որ կը մտածես Յակովբ, հեռանալու այս երկրէս՝ ուր որ ամենա կայն Աստուած իմ ընթացքս ուղղեց • Թողու այս սեղանը որ ես իրեն նուիրեր եմ, այս խրճիթը՝ որ իմ ձեռուրներովս շիներ եմ • իմ աճիւնս, քու հօրդ և քու ամուսնոյդ աճիւնները • քու ոսկորներդ պիտի չհանգչին անոնց քովը • Ի՛նչ պիտի ըլլան այս բաղմամբիւ յիշատակարաններն որոնք Աստուծոյ շնորհքներուն և մեր երախտապիտութիւն վկայներն են • կ'ուղես ասոնք բոլոր փճացընել, և

քու զաւկրններդ տանիլ օտար աշխարհքներ՝ կուս-
պաշտ ազգերու հետ խառնելու աներևութացնե-
լու: Աստուծոյ անուանը արձայգանգը պիտի չտայ
աշխարհն, և իմ ստուերս ընդունայն տեղ թափա-
ռական պիտի պտըտի փնտռելու իմ ազգս, և ամե-
նակալ Աստուծոյ երկրպագուները:

Սոսկում մը ինչաւ Յակովբայ սրտին • Թէպէտ
մեծ էր սրտին փափաքը երթալու գրկելու իր սի-
րելի զաւակը Յովսէփը, և իր կենաց օրերն անոր
քովը լմնցնելու, բայց իր հայրական սիրոյն վրայ՝
կրօնքը շատ աւելի մեծ ազդեցութիւն ունէր սըր-
տին մէջ: Հառաչանքներ սկսան շրթունքներէն
արձրկուիլ, արցունքներ ինչան լեցուեցան աչուը
ներուն վրայ • Տուեցաւ խեղճ ծերունին քարին վը-
րայ, և արցունքներովը թրջելով կ'աղաղակէր •
Յովսէփ, ա՛հ որդեակ իմ Յովսէփ, ահա գտայ
զքեզ, և գիրկս սխմելու մխիթարութենէն զրկուած
կը մնամ տարաբաղզ ծերունիս • քու ձեռուրներդ
որդեակ, չգոցեն պիտի իմ աչուրներս:

Այս տագնապներուն մէջն էր սիրտը՝ երբոր
հրեշտակ մը հիանալի լուսով մը զարգարուած մօ-
տեցաւ Յակովբայ, անոր փայլքէն լուսաւորեցաւ
սրբազան յիշատակարանն ալ • Ճակտին վրայ պսակ
մը կը փալթիլէր՝ որ կարծես թէ արևուն ճառա-
գայթներովը հիւսուած էր • Իսկ վրայի պատմու-
ճանը նոր արշաղուսոյ մը գեղեցիկ ծիրանի գոյնե-
րովը ներկուած կ'երևար, թևերուն վրայ ոսկւոյ և
շափիւղայի փայլք մը կը ցոլար • մէկ զուարթ խըն-
դութիւն մը, յաւերժական դարնան մը պատկերի
պէս, իրեն դէմքին գեղեցկութիւնը և իր անձին
վսեմ կերպը՝ դուրս կը ցատքեցնէր: Ծերունին
աչուրները վեր որ վերցուց, ճանչցաւ այն հրեշ-
տակը, որ նոյն տեղը Աստուծոյ կողմանէ երևցեր
էր իրեն • Ինկաւ դիմացը երեսի վրայ, և ահով դո-
ղով կը սպասէր լսել նոր պատգամ մը՝ որով ար-
դէն իր սիրտը այլայլած էր:

Փարատէ մտքէդ ամէն տաղնապնէրդ, ըսաւ իրեն հրեշտակը գեղեցիկ և ներդաշնակ անոյշ ձայնով մը . մի վախնար թէ եկեր եմ քու սրտիդ փափաքը արգիլելու, ընդունէ Աստուծոյ քեզի բրած շնորհքը քու առաքինութեանցդ համար, թող ընկղմի սիրտդ ծնողական սիրոյ մէջ, եւ փութա գրկելու քու զաւակդ . բոլոր տիեզերք ամենակալ Աստուծոյ տաճարն է, ամէն տեղ կրնաս դուն սեղան նուիրել իրեն . քու զաւկիդ տեսութիւնը մեծ յիշատակարան մը թող մնայ՝ քու և բոլոր ազգատոհմիդ առջևը Աստուծոյ բարերարութեանցը: Գնա՛ գերագոյն Աստուծոյ ճշմարիտ պաշտօնը ինչուն կուսապաշտութեան աթոռն ալ հասցընելու: Մի վախնար, քու ազգդ՝ օտար ժողովրդեան հետ պիտի չխառնուի . և դուն թէ որ այս բնակութենէս հեռանալուդ վրայ սիրտդ կը տաղնապնէ՛ եկուր ետևէս, եւ այս բլրակին վրայ, և բանամ առջևդ հանդերձեալ ապագայ ժամանակը:

Հնազանդեցաւ ծերունին . հասան բլրակին գագաթը, նայեցաւ Յակովբ և ահա դիմացը ընդարձակ դաշտ մը բացուեր էր, տեսաւ իր զաւկըները բազմացած Եգիպտոսի մէջ ծովու աւազի նման, և Յովսէփայ տունը թագաւորներէ և ժողովուրդներէ փառաւորեալ . և ահա ելաւ մէջտեղ բռնաւոր մը որ ամենուն վրայ մէկէն գերութեան վիճակ մը ձգեց: Այս որ տեսաւ աղաղակեց Յակովբ . Ուրեմն ամէնքն ալ Յովսէփիս թշուառ վիճակը պիտի ունենան . . . բայց ո՞վ է այս գեղեցիկ երիտասարդը որ կը մտիթարէ զանոնք, կը քաջալերէ և սիրտ կուտայ . նոյն ազգի ծնունդ կ'երևնայ, բայց գերութեան շղթաներէ ազատ:

Նոր Յովսէփ մը պիտի ելլայ անիկայ, ըսաւ հրեշտակը . իր ծննդէնէն՝ ջրերու աւանդեալ, թագաւորներու սալաւանները մեծցած, անոնց հպարտութիւնը պիտի խորտակէ և իր ժողովրդեանը փրկիչ

պիտի հանդիսանայ : Բայց դուն ապիս դարձուր
աչուրներդ , և տես հրաշալի տեսարան մը :

Ահա տեսաւ Յակովբ ծով մը որուն փրփրած
ալիքները ինչուան երկինք կը նետուէին . բայց
յանկարծ հանդարտեցաւ բոլորովին . ճեղքուեցաւ
մէջտեղէն . լոյժ ալիքները՝ հաստատուն մարմնոց
պէս երկու կողմանէ պարսպի պէս բարձրացած
մնացին . բազմաթիւ ժողովուրդ մը բացուած ճամ
բէն կը քալէր . ճանչցաւ Յակովբ իր ազգը , ար
հաւիքը մը սրտեց վրան : Մէկէն թնդացին ա
կանջները սրտերազմական կառքերու և զէնքերու
ձայներէն . տեսնուեցաւ մէկ հպարտ թաղաւոր
մը իր կառքն հեծած , որ ահաւոր բանակի մը
գլուխն անցած՝ Խորայելի ցեղին ետեւն կը յարձը
կէր : Բոլոր ծովը կառքերուն աղաղակէն կը գո
ւար . ձիերուն ձայներէն և զօրաց սպառնալից գո
չումներէն օդը կը թնդար : Յակովբայ սարսափը
սիրտը սրտեց . բայց ահա տեսաւ իր զաւկրները
որ ծովեզերքը հասած շարուեցան . իսկ եգիպտա
ցիք դեռ ծովուն մէջտեղն հասած սրտերազմի կը
պատրաստուէին . և ահա ամենակալ Աստուծոյ պատ
գամ մը որոտաց ջրերուն . շղթայակապ փոթորիկ
ներ աղաղակաւ մը յարձըկեցան . երկու պարիսպ
ները կը սասանին , և մէկ մեծ պալատի մը պէս որ
հիմունքներէն կը գլտորի , ալիքները թափեցան
վար , միացաւ ջուրը , և բացուած անդունդը ան
հետացաւ : Տատանեալ ալիքներուն մէջէն հառա
չանաց և յուսահատութեան ձայներ բարձրացան ,
և մէկէն ծովուն երեսը կառքերուն և զէնքերու
կտորուանքներով ծածկուեցաւ . բիւրաւոր զի
նուորներ կատղած ալեաց վրայ տեսնուեցան որ ծո
վուն բռնութեանը դէմ կը կռուէին : Իսկ Աբրա
համու զաւկրները ծովեզերքը սրբազան երգերու
արձագանգներով կը թնդացնէին : Յակովբ՝ զգա
ծուած բոլորովին վեր վերցուց աչուրներն ալ՝ ձե

ուուրններն ալ, և այն երգերուն հետ իր օրհնութեան ձայնն ալ խառնեց :

Փոխուեցաւ տեսարանը, լեռ մը տեսաւ դիմացը բարձրացած՝ որուն գագաթը ինչուան ամպերը կը հասնէր. կրակ կտրած գլխուն վրայ՝ կայծակներ և որոտումներ կը գըլտորին. լեց որ երկնից սրբազան փողը կը հնչէր վրան. ամէն բան յայտնի կը ցուցնէր որ Աստուածութիւնը ներկայ էր հոն : Յակովբայ զաւկըները լերան չորս դին պատերէին : Հարցուց Յակովբ զարմացած. Ի՞նչ է այս մեծ տեսարանը : Ինքն Ամենակալն է, պատասխանեց հրեշտակը, որ իր պատգամները կ'որոտայ. իր օրհնքները կուտայ որ մահկանացուաց սրտին մէջ տպաւորէ. ո՛ւր էր թէ ասկէց ետև չմոռնային մարդիկ Աստուծոյ ձայնը :

Տեսաւ վերջապէս Յակովբ իր աղբը որ իր հարցը բնակութիւնը կը մտնային. Աբրահամու ձեռքով շինուած սեղանը՝ փառաւոր տաճար մը ձևացեր էր. դէպ ի այն սրբազան լեռը խուռն բազմութեամբ կը վազէին ժողովուրդները. նայեցաւ և աս հաճանքացաւ իր հարցը շերիմներուն տեղը : Այս տեսարանիս վրայէն աչքն որ վերցուց՝ հրեշտակն ալ աներևութացած գտաւ : Բայց սիրտը սաստիկ ուրախութեամբ լեցուած՝ ինչաւ բլրէն, և փութաց երթալու և իր զաւկըներուն հրամանը տալու որ պատրաստուին ճամբայ ելլալու :

Բոլոր խրճիթներուն մէջ շփոթութիւն մըն է տիրեց, կառքերը բեռնաւորուեցան : Ասոնց նման փեթակի մը մէջ կը բզզան նոր մեղուններու խումբերը, երբոր թռչունին բացած կը թողուն իրենց ծննդեան տեղը՝ որ երթան ուրիշ տեղ նոր գաղթականութիւն մը հաստատեն :

Ամբողջ օրը այն աշխատութիւններով անցաւ. և երբոր իրիկուան ստուերները սկսան երկըննալ՝ Յակովբ ժողովեց իր բոլոր ազգատոհմը, և հրաման տուաւ որ իր ետևէն գան :

Այն դաշտերուն ծայրը գեղեցիկ անտառ մը կար, ուր որ ձայնի արձագանգ մը չէր լսուեր, և էր խաղաղ հանգարտութեան տեղ մը • մշտադաւար կա նաչուծիւն մը կը ծածկէր գետինը, և ամէն տեսակ ծաղկոյններ մէկ յաւերժական անուշահոտութիւն մը կը բուրեխին հոն : Աբրահամ նահապետը շատ անգամ կու դար հոն հանգչելու, և այն գեղեցիկ տեղը ընտրէր էր իրեն գերեզմանի համար ալ : Հոն կը տեսնուէին իրեն և Իսահակայ շիրիմները • Թէպէտ իրաւ է որ փառասիրութիւնը հոն կոթողներ չէր կանգնած, բայց մէկը հոն մտնելու որ ըլլար՝ պատկառանք մը կուգար վրան, կը կարծէր տեսնալ նոյն խակ առաքինութիւնը այն շիրիմներուն վրայ նստած :

Յակովբ ձեռքը ծաղիկներ բռնած իր ազգատոհմին հետ եկաւ հոն, ուր որ շատ անգամ կ'երթար այցելութեան • սկսէր էր լուսինը անտառին խիտ տերևներուն մէջէն իր արծաթափայլ լոյսը զարնելու • կանկ առաւ ծերունին Աբրահամու շիրմին դիմացը • ամէնքն ալ խոր լուութեան մը մէջ էին :

Ո՛վ ստուեր պատկառելի, ըսաւ ծերունին, ընդունէ իմ վերջին նուէրս • ծաղիկները կը ծլին նորէն, բայց իմ ձեռուրներս մէյմըն ալ պիտի չի թափեն զանոնք այս շիրմիս վրայ : Իմ սիրելի զաւակս գրկելու համար է միայն որ ահա կը թողում զքեզ • վասն զի աշխարհիս վրայ Յովսէփս միայն մնաց ինձի երջանկութիւն մը որ կարենամ վայելել, այնպիսի զաւակ մը՝ որուն վրայ քու առաքինութիւններդ կը փայլին • բայց երբոր մահուան քունը իմ աչուրներս ալ դոցէ, նորէն պիտի միանամ քեզի հետ, և իմ աճիւնս ալ պիտի հանգչի քու աճիւնիդ քովը :

Ծերունին ասոնք ըսելու ատենը, դողդոջուն ձեռուրներովս ալ ծաղիկները թափեց շիրմին վրայ,

և ինկաւ պլլուեցաւ շիրմին . բոլոր իր ազգատոհմն ինչուան ամենէն պզտիկն ալ նոյն վերջին բարևը տուին Աբրահամու շիրմին : Բայց երբոր կարգը եկաւ Սիմէոնի մօտենալու այն շիրմին՝ ուր որ ուրք կոխած չունէր այնպիսի անօրէնութեան մը մէջ իյնալէն ետև՝ գոյնը նետեց , սկսաւ դողգողալ . չէր համարձակեր սխմելու իր գրկին մէջ այն սրբազան ածիւնը . հօրը և բոլոր ազգատոհմին երկիւղը ստիպեց զինքը , ծուեցաւ շիրմին վրայ . բայց մէկէն կարծեց եղկելին որ շիրմը կը դողայ և զինքը ետ ետ կը իջրէ . մագէրը տնկուեցան , և սարսափով մը լեցուած ելաւ քաշուեցաւ մէկգի :

Յակովբ նոյն հանդիսով գնաց Իսահակայ շիրմին դիմացն ալ , և նոյնպէս զգածուած սրտով մը ծաղիկներ սփռեց անոր վրայ ալ . գնաց ետքը Ռաբէլայ շիրմին քով . վայրկեան մը լուծիւն պատեց վրան . եռանդուն զգացմունք մը իր սիրտը կը թափանցէր . Սիրելի ամուսին , հառաչեց , ահա կ'երթամ փեսնալու քու զաւակդ , քու ճիշդ պատկերդ . . . : Այս հառաչանքին հետ ինկաւ շիրմին վրայ , և ձեռուրները ծաղիկներ վրան սփռելու ատեն՝ աչքին արցունքներովը թրջեց շիրմը . ետքը երկար ատեն դէպ ի գիրկը սխմած կեցաւ . ամենուն սիրտը ելաւ . և գետի պէս արցունքները վազեցին Բենիամինի և Սելիմայի աշուրներէն : Երբոր Յակովբ բնութեան այս քաղցր պարտքերը կատարեց , դարձուց վերջին անգամ մըն ալ աշուրները այն շիրմներուն , և այն խաղաղ տեղոյն վրայ , ետքը ելաւ դարձաւ իր խրճիթը :

Գիշերը գեռ իր ընթացքը չէր ընցուցած՝ երբոր Սելիմա անհամբեր ելաւ անկողնէն . բոլոր խրճիթներուն մէջ գեռ լուծիւնը պատած էր . ծերունւոյն քունը չիտուովելու համար՝ զգուշութեամբ մը կը մօտենար իրեն խրճիթին , և ահա տեսաւ որ ծերունին ալ նոյնպէս անհամբեր կ'ելլէր դուրս .

Թուաւ վազեց Յակովբայ գիրկը • շուտով հասան Յակովբայ մէկալ տղաքն ալ, իրենց ամուսիններն ալ, զաւակներն ալ, բոլոր կառքերուն և բեռներուն հետ մէկտեղ :

Այն ատենը Սելլիմա մտաւ վայրկեան մը իր բընակարանը • Բարով մնաս, ըսաւ, ո՞վ խրճիթ նըւիրեալ ցաւերու, բարով մնաս, որ տրամուծեան և արտասուաց միայն եղար բնակարան • Վայելեցի ես քու փառքը • դուն իմ ցաւերուս վկայ, պիտի չըլլաս իմ երջանկուծեանս ալ : Ա՛ռ իմ վերջին արցունքներս ալ, որ իմ տրամուծեանցս յիշատակը կը վազընէ աչուրներէս : Այս ըսելու ատենը աչքերէն արցունքները սկսան կաթկըթիլ • բայց խոր ճիթէն ելլալու ատենը երբոր տեսաւ Յակովբն ու Բենիամինը որ կառքն հեծեր էին, արցունքները կտրեցան, ուրախութիւնը՝ զուարթութիւն մը երեսին վրայ ծագեց • ցառքեց ելաւ ծերունւոյն քովը : Նստան մէկաշնոնք ալ իրենց կառքերը, և բանակը ելաւ ճամբայ, իրենց ետեւէն կուգային բազմութիւն մը ոչխարներու :

Դարձաւ Յակովբ վերջին անգամ մըն ալ նայեցաւ իր խրճիթին վրայ • և թէպէտ իր սիրելի զաւակը տեսնալու համար էր որ կ'երթար, բայց չըկրցաւ առանց սիրտը ելլալու հեռանալ իր հարցը բնակութենէն :

Իսկ Յովսէփ Եգիպտոս անհամբեր կը սպասէր իր ազգատոհմին հասնելուն • առաւօտ մը արթնցաւ յանկարծ, զգաց վրան այնպիսի ուրախութիւն մը՝ որ երկար ատենէ ի վեր ունեցած չէր • Իսկ այն հրեշտակն ալ որ երկնքին և երկրիս մէջտեղը թռչելով կը հրատարակէ ամէն տեղ գեղեցիկ առաքինութիւններն և անոնց փոխարէնները, Յովսէփայ ականջէն վար այս խօսքերս հնչեցուց • Ահա կուգայ Յակովբ :

Յովսէփ վայրկենի մը մէջ զգեստները հագաւ,

կառքը հեծաւ, և արագ ընթացքով մը վազեց դէպ ի դաշտերը. քանի որ կառքը զինքը թուցընեւում կը տանէր, Յովսէփ անհամբեր՝ աչոււնները անկած կը նայէր որչափ որ իր տեսութիւնը կը կտրէր: Եւ ահա տեսնուեցաւ հորիզոնին ծայրէն թանձր փոշիներու ամպ մը. Յովսէփայ կառքին ձիերը թռուչունի պէս սկսան օդը կտրել վազել. իսկ ինքը կը նայէր տեսնալ ամպին թանձրութեանը մէջէն իր սրտին սիրելիները. քանի որ կը մօտենար՝ սիրտը կը նետէր. հասաւ վերջապէս, մտաւ այն ամպին մէջ. աչքը չորս դին կը պտըտցընէր, և ահա աչքին դիմացը եկան իր ծերունի հայրն ու սիրելի ամուսինը... թունդ ելաւ սիրտը... ցատքեց կառքէն, վազեց պլլուեցաւ Սելիմայի վիզը, որ թևերը բացած կը թռչէր Յովսէփայ գիրկը: Երարու պլլուած մնացին երկար ատեն:

Բայց որդիական սէրը բաժնեց զիրենք վերջապէս իրարմէ. վազեցին երկուքը մէկէն օգնելու Յակովբայ կառքէն ինչնալու, որ ծերութեանը պատճառաւ չէր կրնար ցատքել գրկել իր սիրելի զաւակը: Գորովաշարժ տեսարան մը բացուեցաւ. իրեքը մէկէն իրարու պլլուեցան, կարծես թէ մէկ հոգի մըն էր միայն որ իրեք մարմնոյ կենդանութիւն կը շնչէր. երկար ատեն իրարու հետ խառնուեցան իրենց հառաջանքներն՝ արցունքներն և սլաքական սիրոյ խօսքերն: Յակովբ իր թևերուն մէջ սխմելով իր սիրելի Յովսէփը՝ երկինք վերցուց աչոււնները, որոնց մէջ զուարթ երախտագիտութեան զգացմունք մը կը փալկիլէր. Աստուած իմ, հառաչեց... ահա հիմա կը մեռնիմ գոհ սրտով:

Ծերունուոյն այս հառաջանքն որ լսեց Յովսէփ, սիրտը կտրրտեցաւ, և իր ալեգարդ հայրը թևերուն մէջ կը սխմէր. այնչափ թշուառութեանց դէմ դիմանալէն ետև, քիչ մնաց որ սրտին չափա-

զանց ուրախութեանը չկրնալով համբերել՝ պիտի իյնար ընկճուէր • ինքիրմէ դուրս ելած իր սիրելի հօրը և իր ամուսնոյն անուանները կը հնչէր միայն • սիրոյ և որդիական գորովոյ զգացմունքները՝ տակն ու վրայ կ'ընէին իր սիրտը :

Իսկ Սելիմայի լեզուն բռնուած և բոլոր մարմինը գող ելած՝ Յովսէփայ գրկին մէջ սիրոյ հառաչանքներ կը հանէր • երբեմն գետի պէս արցունքները աչքերէն կը վազէին, և երբեմն ցամքած բոլորովին՝ ամէն զգացմունքները սրաին խորը կ'ամփոփուէին :

Չորս կողմերնին առեր էին իրենց բազմաթիւ ընտանիքը, որ զգածուած սրտով այս սրտաշարժ տեսարանին վրայ կը նայէին : Երկար ատեն զերար գրկած կենալէն ետև՝ վերջապէս բաժնուեցան իրարմէ • և անոյշ սիրալից նայուածքներով իրարու կը նայէին • ետքը նորէն իրարու գիրկը կը վազէին : Երբոր այսպիսի ուրախութեան մը առջև սիրոյ հանդէսները կատարուեցան՝ Յովսէփ իր հայրն ու ամուսինը իր կողքին մէջը նստեցուց՝ ինքն ալ մէկ տեղ • նստան մէկալնոնք ալ բոլոր իրենց կողքերուն վրայ, և ճամբայ ելան դէս ի Մեմփիս : Քաղաքն որ հասան՝ բոլոր ժողովուրդը Եգիպտոսի սահմաններէն սկսեալ կը վազէին երկրպագութիւն ընելու այսպիսի մէկ պատկառելի ծերունւոյ մը դիմացը, որ իրենց տէրութեանը ազատարարին հայրն էր : Ինքը Փարաւոնն ալ ուզեց տեսնալ և սպասուել զինքը, ուստի գնաց Յակովբ Յովսէփայ հետ թագաւորին առջև : Ծերունւոյն կերպարանքը առաքինութիւններով և ճերմակ մազերով զարգարուած՝ զարմացուց թագաւորը, ելաւ յարգութեամբ ընդունեցաւ զինքը : Օրհնեց Յակովբ Փարաւոնը • թագաւորը հարցուց իրեն տարիքը • Հարիւր և երեսուն տարի է, ըսաւ, որ պանդուխտ ճանապարհորդ մըն եմ՝ աշխարհիս վրայ • կարճ և

վատալից կենաց ընթացք մը ունեցայ, և իմ հարցս կենացը չափը չհասայ :

Եգիպտոս երթալով իր թշուառութեանցը ծայրը կը հասնէր, և բնութիւնը նորէն իր ամէն զարգերովը կը զարգարուէր, կարծես թէ երջանիկ հարսանեաց մը հանդէսը փառաւորելու : Բացուեցաւ երկինքը և իր օրհնութիւնները թափեց երկրիս վրայ : Հրեշտակ մը՝ իր բարերարութեանց սրաշոճնեայն՝ ինչաւ վերէն. հրաման մը որոտաց ամպերուն ու մրրիկներուն. Վիբոյ փութորիկները շղթայակապ արգիլուեցան, և հարաւային կողմանէ սկսաւ առաջ գալ վսեմ՝ երեսութով մը ամպերու երկայն գօտի մը, որ առատութիւնը գրկած կը բերէր : Եգիպտոսի պահապան Ոգին այս երջանկութեան նշանն որ տեսաւ՝ թռաւ նորէն Նեղոսի աղբիւրները : Եւ ահա երկինքէն ջրի հեղեղները՝ շատ դետերու իրարու միացած տեսարանի մը պէս, թափուեցան երկրիս վրայ. սկսան քարաժայռներուն մէջէն՝ բարերար աղբիւրները վազել, հասանքները սաստկացան, և նորէն իրենց հին ճամբէն վազել սկսան : Ամբողջ Եգիպտոս՝ ընդարձակ ծով մը դարձեր էր, որուն մէջը կղզիներու պէս ցրուած կը տեսնուէին քաղաքներն ու գեղերը :

Երբոր Նեղոս իր սովորական ընթացքը սկսաւ բռնել, բոլոր բոյսերն ու ծաղիկներն ալ հրաշալի կերպով մը սկսան աճիլ. կենդանացաւ նորէն Եգիպտոս, կարծես թէ իր ամէն գեղեցկութիւններովը զարգարուած՝ ջրէն դուրս կ'ելէր, ինչպէս որ կը նկարեն գեղեցկութեան թագուհին՝ որ իր ամէն զարգարանքները վրան առած՝ կ'ելլայ աղբիւրներուն ծոցէն որ զինքը ծնան : Ուրախութեամբ հանգիսազիր կեցեր էին այս տեսացանիս բոլոր Եգիպտոսի ժողովուրդները. սկսան նորէն թրուշունները զարգարուած անտառներու մէջ թրուշրաիլ, ոչխարները գալարացած գաշտերու վրայ

արածիլ . ամէն բան բնութեան նորոգուիլը կը փա-
ռաւորէր . և մարդս ալ իր երգերը անոնց ձայնե-
րուն հետ կը խառնէր :

Այն ատենները Յովսէփ՝ որուն որ բոլոր Եգիպտոսի բնակիչները յանձներ էին իրենց երկիրներն ու ստացուածքնին՝ անոնք բոլոր դարձուց իրենց տէրերուն . Յովսէփ , որ ինքն ալ ատենօք գերի եղած էր , և մարդկութեան իրաւունքը կը ճանչնար՝ չուզէր ամբողջ ազգ մը գերութեան վիճակի մէջ թողուլ : Գիտէր Յովսէփ որ իշխանաց ապահովութիւնը և ժողովրդեան երջանկութիւնը՝ ամփոփուած են իշխանութեան և ազատութեան սքանչելի կապակցութեան մէջ . տուաւ իրենց ոչխարներն ու բոլոր հարստութիւննին , որոնց միայն իբրև աւանդապահ կը սեպէր զինքը :

Ետքը Պետափրէսի հաւանութեամբը՝ իր գերութեան ընկերները խալըսեց իրենց խեղճ վիճակէն . բայց անոնք գերութենէ ազատէլէն վերջն ալ շատ աւելի նախապատիւ կ'ընտրէին գեղացիի վիճակը . քան իրենց փառաց աստիճանները : Գորովանօք կը սիրէին Պետափրէսը , անոյշ էր իրենց ոչխարներուն խնամքը , և ընթացքնին գէպ ի ծաղկած գաշտերն էին :

Բայց Եգիպտոսի ժողովուրդը գոհ չըլլալով իր ուրախութեանը ցրցուցած առջի նշաններովը , երկար ատեն ընդունայն տեղը Նեղոսի աղաչէլէն ետև , հանդիսաւոր կատարեց այն տօնը՝ որ ամէն տարի անոր նուիրուած էր , և գետին ջուրը սրակ սիլ սկսելէն ետև՝ կարծես թէ մոռցուեր էր : Քուրմերը՝ բոլոր ժողովրդեան առջևն ինկած հանդիսով և կրօնական երկիւղածութեամբ մը կը բերէին Ոսիրիսի և Իսիսի արձանները՝ Նեղոսի Եգիպտոսին հետ հարսանեաց հանգէսը ներկայացնելու , որոնց պատկերքներն էին այս արձանները : Շատերը ձեռուրնին սրբազան սափորներ բրու-

նաճ էին, որոնք գետին ջրովը լեցուցած կը սանեին մեհեաններու մէջ սեղաններու վրայ դնելու: Քուրմերն ու ժողովուրդը այս արձաններուն և սափորներուն դիմացը ինկած երկրապոլութիւն կ'ընէին. սխուր ցաւերուն տեղը՝ խաղեր ու հանգէսներ յաջորդեցին և հարսանեաց գեղեցիկ երգերը: Ա՛վ՛Նեղոս, աղաղակեց ժողովուրդը, Ասիրիս, Ավիհաննս, վասն զի այս անուններն են որոնցմով կը փառաւորուիս, ո՛վ հայր ուրիշ աստուածոց, քու յուսահատ ամուսինդ ահա վերջապէս ուրեմն նորէն կը տեսնայ զքեզ. ձեր միութեան կապը յաւիտենական ըլլայ: Ա՛վ ամենակալ աստուածութիւն, մէյմըն ալ մի թողուր երեսէ քու ժողովուրդդ և քու երկիրդ: Առ նորէն ձեռքդ քու սափորդ՝ որ երկարատեն առանց ջրի մնաց, և քու առատութեան եղջիւրդ. և քու բարերարութիւններդ թափէ միշտ մեր վրայ:

Մէկ սարսափելի զոհ մը, հին ատենուան աւանդութենէ մնացած՝ այս հանդիսին վերջ պիտի տար. ծաղկահասակ օրիորդ մը՝ իր առաքինութիւններովը և իր գեղեցկութեամբը նշանաւոր՝ պէտք էր որ ծնողացը գրկէն յափշտակուէր և Նեղոսի ջրերուն մէջ նետուէր: Այս անգամ ալ ընտրուած էր զոհը, և խեղճ օրիորդը բռնած կը բերէին իր զոհուելու տեղը: Բայց ահա Յովսէփ, Փարաւոնի հաճութեամբը, կրակ կտրած սրտին բարկութենէն՝ յանկարծ երեցաւ հոն. մարդասիրութեան զօրաւոր ձայնը հնչեցուց ամենուն ականջին մէջ. ուղեց որ այս բարբարոս զոհը՝ յաւիտեան ջնջուի Եգիպտոսէն: Քուրմերը՝ կարծես թէ իրենց սրաշտած աստուածներէն աւելի գերազոյն աստուածութեան մը պատգամը լսեցին՝ հնազանդեցան առանց դանգատի մը, և զոհը խալըսեցաւ. ժողովուրդը մեղմացած էր Յովսէփայ առաքինութիւններէն և բարերարութիւններէն, զգածուած էր

իրեն ջրցուցած որդիական գթութեան և եղբայրական սիրոյ հանգէսներէն, ուստի Յովսէփայ ձայնին հետ՝ բնութեան զգացմունքին ձայնն ալ լսեց, և այն գեղեցիկ ու անմեղ զոհին ազատութիւնը՝ իրեն իբրև մէկ պարգև մը սեպեց. ուրախ էր որ արիւնը չպղծեց իր հանդէսը. և որպէս զի յուսահատ արտումութիւն մըն ալ այն օրուան ուրախութիւնը չիզառնացրնէ, դարձուց զոհը՝ հօր մը և մօր մը պիւրը, որ արցունքով թրջելով կը սխմէին իրենց ծոցը սիրելի աղջիկնին. ցաւերու մէջ մեռնելու վայրկենին՝ նոր կենդանութիւն մը սկսան :

Երբոր Եգիպտոս Նեղոսի կրօնական պաշտամունքներ կը նուիրէր, ամենակալ Աստուծոյ անունն ալ իրեն նուիրուած տաճարին մէջ կը հրնչէր, և անկէջ սուրբ իղձեր կը բարձրանային դէպ ի երկնից կամարը :

Յովսէփ հասարակաց և բարեկամութե պարտքերը գոհ ընելէն ետև, գնաց իր սրտին անոյշ ըզգացմունքներուն մէջ ընկղմելու : Այն առանձնութեան խրճիթը ուր որ իր թշուառութիւնները լացեր էր՝ գեղեցիկ կանաչութեամբ մը ծածկուած էր. իր բարեկամները նոր ծլած ծաղիկներով զարդարեր էին այն բնակարանը. հոն կ'ուզէր Յովսէփ իր ամուսնութեան կապը կենդանացրնել :

Առաւ Յովսէփ իր ընտանիքը տանելու հոն. Սելիմա ըսաւ ճամբան. Ափսոս որ մեր հայրենական դաշտերուն մէջ քու ձեռքովդ շինած մեր ամուսնութեան խրճիթին մէջ՝ պիտի չկարենանք մեր միութեան երջանիկ կապը հանդիսացրնել : Սելիմայի այս խօսքին պատասխան մը չտուաւ Յովսէփ. բայց երբոր մտան անտառը, Սելիմա հիացած զարմացաւ մնաց տեսնելով դիմացը իրենց խրճիթին ճիշդ պատկերը. Յակովբ առաջ անցաւ, երկրպագութիւն ըրաւ սեղանոյն առջև :

Ելաւ Յակովբ, բռնեց Յովսէփայ և Սելիմայի

ձեռքէն , և առանձնանալով իրենց հետ , ըսաւ Յովսէփայ • Որդեանկ իմ , ես քեզի համար թողուցի հեռացայ իմ հարցս բնակուածենէն • բայց չեմ ցաւիր ամենևին , վասն զի զքեզ տեսայ հոս • իմ կենացս ետքի օրերը՝ քեզմով զուարթացած , քեզի նուիրուած սեպուին , ինչպէս որ գետ մը ծով մանելու մօտ՝ կը խոտորի առողանելու մէկ գեղեցիկ դաշտ մը : Բայց երբոր ձեռքերդ իմ աչուը ներս գոցելու որ ըլլան , ինչո՞ւ օտար երկրի մը մէջ թաղուած մնամ • խօսք տուր ուրեմն ինձի՝ այս հանդիսաւոր օրս , որ իմ աճիւնս ալ տանիս գնես Աբրահամու՝ Իսահակայ և Ռաբելայ աճիւններուն քովը :

Այո՛ , պատասխանեց Յովսէփ՝ աչուըները արցունքով լեցուած • ես քեզի այս վերջի պարտքս հատուցանելէս ետև՝ յուսամ որ մահը երկար առտեն զմեզ իրարմէ հեռու չթողուր • ես ալ կ'ուզեմ որ Եգիպտոսի բուրգերէն և հպարտ շիրմներէն հեռու իմ աճիւնս ալ հանգչի իմ հարցս սրբազան դամբաններուն քով ••• քու շիրմիդ քով : Եւ ահա ասանկ ոչ երբէք բաժնուած կը սեպուիմ իմ հայրենական բնակուածենէս • և երբոր երկիրս բացուի՝ նորէն մեր մարմինները կենդանացնելու , առջի նայուածքնիս իրարու վրայ ձգենք , և պըլլուիմ քեզի հետ հայր :

Սելիմս և ծերունին սաստիկ զգածուեցան : Հարցուց Յակովբ Յովսէփայ թէ Ի՞նչ անակնկալ դիպուած էր որ զքեզ Եգիպտոս բերաւ : Խօսէ յայտնապէս , կ'ըսէր իրեն , լեցուր սրտիս փափաքը • մի վախնար արցունք թափել տալէն , ետքի թափած արցունքներս թող ըլլան :

Կը քաշուէր Յովսէփ , շրթունքները մեծ դժուարութեամբ մը կը ջանային բան մը յարմարցնել • մէյմըն ալ յանկարծ Սիմէոն իր եղբայրներուն հետ անտառին խորէն դուրս ելաւ , լսեր էին

բոլոր եղած խօսակցութիւնները . վազեց Սիմէոն
 պլլուեցաւ ծերունւոյն ոտքերուն, լեզուն բռ-
 նըած կեցեր էր . կը դուար խեղճը և արցունքնե-
 րուն մէջ կը խղզուէր . Յակովբ և Սելիմա՝ Յովսե-
 փայ երեսը կը նայէին, որ իր եղբօրը ողորմ՝ վի-
 ճակէն սարսափած՝ կը ջանար ղինքը հանդարտե-
 ցնել : Բայց Սիմէոն լուութիւնը քակելով՝ Ընդու-
 նայն տեղը կ'աշխատիս, ըսաւ Յովսեփայ . գիտեմ
 որ դու ներեր ես ինձի, բայց ես ասկէց ետև ալ
 չեմ կրնար ղիմանալ իմ խղճի խայթերուս՝ թէ որ
 իմ հայրս և թէ որ Սելիմա ալ ինձի չներեն : Ո՛վ
 դժբաղդ ծերունի, ես եմ որ քու օրերդ կը փու-
 թայի գերեզման ինչեցընելու . կ'ուզէս իմանալ թէ
 ո՞ր անգուժ գազանը իր կատաղութիւնը քու զա-
 կիդ դէմ բանեցուցեր է, ահա այն գազանը քու
 առջևդ կը տեսնաս . . . Յակովբայ գոյնը նետեց :
 Այն ատենը ինկաւ Յովսեփի ծերունւոյն ոտքը, և
 իր աղաչանքներովն ու արցունքներովը՝ եղբօրը
 համար ներումն կը խնդրէր հօրմէն : Ո՛վ տէր,
 պոռաց նախ ծերունին, այսպիսի զաւակ մը ծներ
 է ինձմէ : Բայց ետքը տեսնելով Յովսեփայ ար-
 ցունքները, և դժբաղդ Սիմէոնի տագնապը՝ որ ե-
 րեսի վրայ դետին տարածուած՝ հառաչանքներով
 գետինը կը թնդացընէր, ձեռք տուաւ իրեն : Ո՛տք
 ելիր, ըսաւ Սիմէոնի, քու եղբօրդ օրինակին պէս՝
 ահա ես ալ կը ներեմ քեզի : Նոյն խօսքերը կրկնեց
 Սելիմա ալ : Ոտք ելաւ Սիմէոն, բայց դեռ չէր
 համարձակեր հօրը հետ սրագտուելու :

Ալ բան չէր մնացեր որ իրենց ուրախութիւնը
 դառնացընէ : Եկան ժողվուեցան ամէնքն ալ ա-
 մուսնութեան խրճիթին ղիմացը, ուր որ գիւղային
 հանգէս մը կը սպասէր իրենց : Պետափրէս, Իթո-
 սալ և բոլոր այն դաշտերուն գերիներն ալ հրաւի-
 րուած էին հոն . մէկ մեծ սեղանի մը չորս կողմը
 շարուեցան . մէջտեղը նստած էին Յովսեփ և Սե-

լիմա ծաղկէ սպակներով զարգարուած, և ծերունին ալ՝ որուն ճերմակ մազերը ծաղիկներով սպակուած էին՝ բոլորովին ուրախութեան մէջ ընկող մած էր . նոյն խկ Սիմէոնն ալ մոռցաւ իր խղճին տագնապները :

Հանգիսին առենը՝ Սելիմա Յովսէփայ ձեռքը քնար մը տուաւ . առ այն քնարն էր որ Յովսէփայ շինէր էր իրենց հարսանեաց հանգիսին մէջ երգելու, և Սելիմա ալ խրճիթին նոճիի ծառին ճիւղէն կախեր էր : Խոր լուծիւն մը տիրեց հանգիսին վրայ, և Յովսէփ սկսաւ քնարովը այս ուրախութեան նուագները երգել, թէպէտ սրտին խնդութեան զգացմունքները շատ անգամ իր ձայնը ընդհատեցին :

« Մահուան մթութեան մը մէջ երկար առէն ծածկուած՝ իբրև շերմի մը մէջ արգիլուած, ուրիշ բան չէի երգեր՝ ուրիշ բան չէի հնչեցրն էր, բայց հառաչանքներ միայն՝ և ցաւոց արձագանգներ . ծաղկները բացուելու առէննին՝ իրենց անուշահոտ բուրմունքները կը տարածէին բոլոր օդին մէջ, բայց իմ շրթունքներս չէին երգեր զանոնք . արշալոյսը իր սիրուն գոյներովը կը զարգարուէր, բայց իմ սիրտս անզգայ դարձեր էր . դեռ ողջ ողջ՝ ծաղիկները իմ ցուրտ աճիւնս կը սրտէին, և արշալոյսը իմ շերմիս վրայ կը փայլիլէր... : Բայց դուն ո՞վ Աստուած իմ, մահուան մութը փարատեցիր, իմ կեանքս նորոգեցիր, շրթունքներս բացիր, և դուն այս քնարս իմ ձեռքս տուիր... ընդունէ իմ առջև նուագներս՝ որ խնդութեան են նուիրուած : Ի դուր լեռներն ու անասրատներ իմ ու սիրելեացս մէջ մտան, դուն ո՞վ տէր անասրատները աներևութացուցիր, դուն լեռները դաշտացուցիր : Ահա անտառները քու առջև իրենց հսարտ գլուխները կը խոնարհեցրնեն, և այն Ովկիանոսն որ անասնձ կը փրփրայ՝ քու ձայնիդ դիմացը կանկ կ'առնէ : .. Խըն-

դուժեան հոսանքներ, դուք իմ սիրտս կը լեցընէք . ահա իմ սիրելիներս չորս կողմս առեր են . ուր որ աչուքներս դարձնեմ՝ դիմացս ուրիշ բան չեմ տեսներ , եթէ ոչ խանդակաթ հայր մը , սիրելի ամուսին մը , գորովալից եղբայրներ , և անկեղծ բարեկամներ՝ որ երկար ատեն իմ սիրելեացս կարօտը լեցուցին : Ո՛վ միայնուժեան անտառներ , ուր որ ատեն մը կարծէի տեսնալ սիրելեացս երևոյթները որ կը սարտէին , ահա այսօր ոչ երևալիցուժեան հանդէս մըն է որ կը վայելեմ , ահա կը տեսնամ հոս իմ ծերունազարդ հայրս , չքնաղ Սելիմա ամուսինս , Բենիամինս և բոլոր ազգատոհմս : Ո՛վ խրճիթ նուիրեալ ցաւոց , դուն մեր մտերմութեան գողտր սիրոյն բնակարան դարձար . ո՞վ դալար խոտեր՝ արցունքներովս ռոպեալք՝ պարեցէք ուրախութեամբ . սիրուն ոչխարներ՝ որ իմ տրտմութեանս մասնակից էիք՝ ցառքըրոտեցէք հիմա . . . : Եւ դուն քնար սիրոյ , որ երկար ատեն տըխուր նոճիէ մը կախուած մնացիր , հնչեցուր այսօր սիրոյ նուագներ . քու թելերդ ահա կ'երգեն ոչ իշխանաց փայլքը , այլ Յակովբայ առաքինութիւնները , Սելիմայի ազնուութիւնն ու գեղեցկութիւնը , եղբայրական սէրն ու քաղցրութիւնը , անկեղծ բարեկամութիւնը , սիրուն ծաղկերները , պայծառ վտակները , ներդաշնակ անտառները , և իմ երջանկութիւնս ձեռքդնող ամէն տեսարանները " :

Այս սրտաշարժ երգն որ լսեցին՝ ամենուն աչքերը ուրախութեան արցունքներով լեցուեցան : Յակովբ և Սելիմա որ երկար ատենէ ի վեր չէին լսած Յովսէփայ անոյշ ձայնը՝ գեղեցիկ զմայլման մը մէջ ընկզմեցան բոլորովին :

Քանի մը օր անցնելէն ետև՝ Յովսէփ իր ընտանիքը Գեսեմայ երջանիկ երկիրը տարաւ . թէ որ Յովսէփի միայն իր սրտին զգացմունքներուն կարեւոր հետեւիլ , այն խաղաղ տեղը կը բնակէր ինքն

ալ Յակովբայ իր հօրը քով • իր հովուական գա-
 ւազանը ձեռք կ'առնէր, և իր պալատէն՝ յօժարու-
 թեամբ կ'ինչնար բնակելու անզարդ խրճիթի մը
 մէջ • բայց Յովսէփայ սիրտը թէպէտ անզգայ էր
 հպարտութեան և փառասիրութեան, այլ շատ
 զգայուն էր թագաւորի մը ազաւանքներուն և բո-
 վանգակ Եգիպտոսի արտասուացը • ուստի գրա-
 նուած վիճակին մէջ յանձն առաւ մնալու : Ելաւ
 իր ամուսնոյն հետ դարձաւ Մեմփիս • երկուքն ալ
 մասնաւոր խնամքով յանձնեցին Յակովբ ծերու-
 նին՝ Բենիամինի խնամոցը • և ինքն Յովսէփ ալ
 սաէպ կ'երթար իր հօրը գրկին մէջ՝ հասարակաց
 աշխատութիւններէն հանգչելու :



24

0

2363

2013

